





ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ԱՌ ԳԷՈՐԳԱՅ

ԵՒ

ՈՒՍՈՒՄՆԸՍԻՐՈՒԹԻՒՆ ԱԳԱԹԱՆԳԵՂԵԸՅ ԳՐՈՑ

---

# ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

— ❦ —

Գ Ե

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ ԱՌ ԳԷՈՐԳԱՅ

Ե Ի

ՈՒՍՈՒՄՆԸՍԻՐՈՒԹԻՒՆ ԱԳԱԹԱՆԳԵՂԵԼՑ ԳՐՈՑ



Վ Ի Ե Ն Ն Ա

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1891.

6(2)

# ԱԳԸԹԱՆԳԵՂՈՍ

ԱՌ ԳԵՈՐԳԱՅ ԱՍՈՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԵՒ

ՈՒՍՈՒՄՆԸՍԻՐՈՒԹԻՒՆ ԱԳԸԹԱՆԳԵՂԵԼՅ ԳՐՈՑ

ԳՐԵՑ

Հ. ՅԱԿՈՎԲՈՍ ՏԱՇԵԱՆ

ՄԻԻԹ. ՈՒԽՏԷՆ




Պ. Ի Ե Ն Ն Ը

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Տ Պ Ա Ր Ա Ն

1891.

Ազմու  
136



## Ն Ե Ր Ա Թ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հինգ ծանօթ տպագրութիւնք կան Ազատանգեղեայ գրոց:

1. Առաջին հրատարակութիւնն եղած է ի Կ. Պոլիս, 1709ին՝ այս վերնագրով. «Գիւր+ Ախոսան-նա-նիւան՝ որ ինչի հոմանաւոք Աթաթանգեղոս . . . Յատկաբար լինեան Բանին կենաց Ռիճթի, իսկ ըստ Հայոց ՌՃԾԸ, եւ յամենան մարդի մերասաներորդի: . . . Տպագրեցաւ . . . ի որպարանի եւ յեւոմք Գրէգորի որպրէ որդոց Միգրով Մարդոսանեցոց»: Հրատարակողն է Ազաւնի Աստուածատուր վարդապետ, եւ իւր հրատարակութեան հիմն առնուած է օրինակ մը, որուն համար կ'ըսուի թէ «Տէր Աղեքսանդր Արքայան Կաթողիկոսն մեր իւրով սրբանուէր ձեռամբն գրեալ զօրինակն եւ յղեալ առ նուաստութիւնս մեր եւ հրաման արարեալ զի տպագրեցի»: Տպագրութիւնն եղաւ նպաստիւք Գողթնեցի Գալուստի, «որդի Խոճայ Մուրատի Ազուլեցւոյ Գողթնեաց»: Գիրքը յառաջաբանով եւ յիշատակարանով հանդերձ 429 էջ է, բայց բուն Ազատանգեղոսը կը սպառի յէջն 436 (396) որուն կը յաջորդեն Գոսանո-նիւն մը եւ Գոշանց Բոսղիւլը:

2. Երկրորդ տպագրութիւնը լոյս տեսաւ Կ. Պոլիս, 1824ին՝ այս տիտղոսով. «Աթաթանգեղոս, յորոմ պարսնակի պարսնակն Տրքարոյ . . . : Ի

որից արձանացեալ յասի որեւոր 1824, յՕրբնոցիւն, ի որորունի Պօղոսի Աբաղեան: Էրատարակիչն է Ճանիկ Մահտեսի Սիմէօնեան, «ըստ սրբագիր օրինակին՝ զոր . . . Գեորգ որդերն պալատական բազդատու թեամբ ըստ հնագիր ընտրելագոյն գաղափարի՝ մաքրեալ էր ի վրիպակաց եւ յայլայլութեանց մուծելոց յանհմտութենէ զըջաց եւ յանհոգութեանէ տպագրողաց»: Գեորգ զպրի հիմն առած ձեռագիրը «չունէր յայտնի ցոյց ամի զըջութեան իւրոյ թուականաւ նշանակեալ»: Բովանդակն է 363 էջ, 8<sup>0</sup>, բայց 328—363 զետեղուած են Գառնոնիւն շատորոյ, Թոռլի որանց եւ Յիշարայտուն մը:

3. Այս երկու հրատարակութեանց ընագիրն ո՛չ ամբողջ եւ ո՛չ անաղաւաղ էր: Լաւագոյն հրատարակութիւն մ'եղաւ քիչ մ'ետքն. «Աբաղեան-Քեղուս, Պարսոնիւն շայոց: Ի վենեթիէ, ՌՄՉԴ = 1835, 12<sup>0</sup>. Յառաջաբանով (16 էջ), եւ գոյզն Ծանօթութեամբ տարբերութեանց ձեռագրաց (էջ 661—671), եւ անուանց ցուցակով, բովանդակն 686 էջ: Այս հրատարակութեան համար գործածուած կ'ըսուին 6 ձեռագիրք, որոնց վրայ վարը:

4. Նաեւ այս գոյզն Յառաջաբանէն եւ վարկպարագի ձեռագրաց համեմատութենէն զուրկ է երկրորդ տպագրութիւնը. Աբաղեան-Քեղուս, պարսոնիւն, ի վենեթիէ, 1862, 678 էջ 12<sup>0</sup>:

5. Այս վերջին հրատարակութիւնը դարձեալ ըյս տեսաւ ի Տփղիս իրր «Թէֆ. Անի. շայերէն Գրեթի շարտարայնիւն No. 15.», որպ. Յ. Մարտ. 1883, 584 էջ, 8<sup>0</sup>, 1 բողլի: Ասոր հրատարակութեան նպատած է Յովսէփ Իզմիրեանց:

Այս հրատարակութեանց լաւագոյնն է երրորդը, բայց նաեւ այս քննադատական հրատարակութիւն չէ:



Այս գիրքն եւրոպական լեզուաւ (լատիներէն) առաջին անգամ թարգմանողն եղաւ Սդիլդինկ, որ նաեւ յոյն բնագիրն առաջին անգամ Փլյորենտինոյ Լաբէնդիէնէան զրատան (Թիւ VII, 25) ձեռագրէն հրատարակեց ընդարձակ Ներածութեամբ եւ քննութեամբ եւ ծանօթութեամբք (Acta Sanctorum, Septembris Tomus VIII, Antverpiae, 1762 pp. 295—319, եւ 320—413:) Աւելի ամբողջական եւ լաւագոյն թարգմանութիւնն ըրին իտալերէն լեզուաւ Վենետիկոյ Մխիթարեան Հարք, հանդերձ Յառաջաբանութեամբ եւ ինչ ինչ ծանօթութեամբք այս անուամբ. Storia di Agatangelo, Versione italiana, illustrata dai monaci armeni Mechitaristi, riveduta quanto allo stile da N. Tommaseo. Venezia, Tipografia Armena di S. Lazzaro, 1843. Գաղղիերէն լեզուաւ թարգմանութիւն մ'ալ հրատարակեց V. Langlois, Collection des historiens . . . d'Arménie. Tome I, Paris, 1867. pp. 99—194. Ներածութեամբ եւ ծանօթութեամբք, յոյն բնագրաւ եւ անոր լատիներէն թարգմանութեամբ ըստ Սդիլդինկի: Այս թարգմանութեան մէջ պակաս են վարդապետական մասերը:

Սդիլդինկի հրատարակած յոյն բնագիրը շատ տեղ վրիպակներով լի էր. այս վրիպակներն ուղղեց համեմատելով բնագրի ձեռագրին հետ իտալացի հայերէնագէտը Գէշ (E. Teza, Հմմտ. Հ. Գր. Պամ. Հայ. Գպ. 1886, էջ 203, ծն. 1:) Բայց վերջապէս նշանաւոր գիտնականը Լախարօ հրատարակեց կրկին նոյն յոյն բնագիրն զգուշաւոր համեմատութեամբ եւ յաւելուածներով Վէօթինկէնի Գիտութեանց Ընկերութեան Տարեգրոց մէջ. եւ է շորս մաս. 1) Agathangelus, herausgegeben von Paul de Lagarde, Göttingen, 1887. 88 էջ 4<sup>o</sup>. 2) Die Akten Gregors von Armenien, էջ 89—120. 3) Erläuterungen zu Agathangelus եւն, էջ 121—

149. որուն կը յաջորդեն 4) Յաւելուածք, էջ 150—163: Այս գրոց վրայ քննութիւն մը գրեց E. Nestle, ի թերթին Theologische Literaturzeitung, herausg. von Ad. Harnack, Leipzig, 1888 (XIII), No. 14, S. 355—357. Եւ ձեռագրի տարբերութեանց նոր համեմատութիւն մ'ալ յիշեալ Գէլազազիանական ի պարբերականին Istituto di Scienze, Lettere ed Arti, Padua, 1890. (Ճանախան թրգմ. Բաշմաշէտ, 1890, էջ 376—384:)

Կ. Փ. Նյայման (C. F. Neumann) հայերէնագէտն Ազաթանգեղեայ հատած մը հրատարակեց ի թերթին Journal Asiatique, Paris, 1829, Janvier, 53: Բաւական տարի վերջը Վիեննական շարք մին՝ Հ. Մալախեան Սմոն-էլեան հրատարակած է բաւական ընդարձակ դործ մը գերմաներէն լեզուաւ «Գարձ Հայաստանի ի ձեռն Գրիգորի Լուսաւորչի» անուամբ (Bekehrung Armeniens durch den heiligen Gregor Illuminator, Wien 1844. XIX, 200 S. 8<sup>o</sup>), որ մասամբ բառական եւ մասամբ քաղուածոյ թարգմանութիւն է Ազաթանգեղեայ: Յռոաջաբանութեան (19 էջ) մէջ ջանաց սոյն գրոց վաւերականութիւնն ապացուցանել ճշդիւ այնպէս, ինչպէս փորձած էր նոյնը Հ. Մէլ. Չաճէան (Պատմ. Հայոց, Վենետ. Հա. Ա. 1784, էջ 359—420, Ծանոթութիւնք Բ. Գրոց՝ էջ 613—679, ի մասնաւորի 668—679: ) Սոյն գրոց վերջը դրուած են այլեւայլ ծանոթութիւնք բնագրին իմաստին կամ այլեւայլ բառերու մեկնութեան (էջ 155—200:)

Յիշելու ենք հոս քանի մը մանր հատածներ ալ, որ ըլլա տեղան այլեւայլ գրոց մէջ: Այսպէս սոյն նիւթոյս վրայ անցողակի գրեցին Mons. Placido Sukias Somal, Quadro della Storia letteraria di Armenia, Venezia, 1829, p. 11. — C. F. Neumann, Versuch einer Geschichte der armenischen Litteratur, Leipzig, 1836, S. 18 եւն: Ի մասնաւորի

Ագաթանգեղեայ յիշած զից անուանքն եւ նման բառերու վրայ խօսած է Ալֆրեդ Գուտսքիմի մէկ գրութեանը մէջ, տեղ տեղ հիւսելով նաեւ այլեւայլ ծանօթութիւններ (P. de Lagarde, Gesammelte Abhandlungen, Leipzig, 1866, մանաւանդ՝ էջ 92, 178, 179, 294 եւն.) — Պատմական մասին քննութիւն մ'ըրաւ Հ. Յովհէֆ Գոթֆրէան, Տիեզ. Պոմֆ. Վիեննա, Հար. Բ. 1852, էջ 459—464 եւ 476—480. Իսկ մատենագրական մասին համառօտ հատած մ'իւր գրչէն՝ լոյս տեսաւ յետոյ (Հանրէս Ա՛ն. 1889, Թիւ 2, էջ 24—25): Բաւական ընդարձակ հատած մ'ալ գրած է Հ. Գար. Ջարէ. Հայկուն Հին Դարձեան պատմութիւն, Վենետիկ, Բ. Տպ. 1886, էջ 181—213:

Սակայն սոյն գրոց վրայ նշանաւոր քննութիւն մ'առաջին անգամ հրատարակեց գերմանացի գիտնականն Ալֆր. Կուտշմիտ (Alfred von Gutschmid) ի Թերթին Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft, Leipzig, 1877, S. 1—60; որ նաեւ իբր առանձին տետրակ լոյս տեսաւ նոյն տարին: Այս գրութեան մէկ մասն հայերէն թարգմանուած հրատարակեց Բաղձափէդ 1878, էջ 297 եւն, 1879, էջ 10 եւն, 97 եւն, եւ 237: Թարգմանութիւնն որ Թերթի մնաց, տեղ տեղ բաւական մթին եւ անյաջող է: Թարգմանիչը (Հ. Ներսէս Զնտոյեան) համառօտ տեսութիւն մ'ալ հրատարակեց իւր կողմանէ նոյն Թերթին մէջ (1878, էջ 229—232.) Երկու տարի ետքն ընդարձակ գործք մ'ի լոյս հանեց Կարապէտ Թումայեան՝ այս վերնագրով. G. Thoumaïan, Agathangelos et la Doctrine de l'Eglise arménienne au V<sup>e</sup> Siecle, Lausanne, imprimerie Georges Bridel, 1879, 189 pp. 8<sup>o</sup>. Այս գրութեան գլխաւոր նպատակն է Ագաթանգեղեայ վարդապետական մասը, որ կը գրաւէ գրոց մեծ մասը (էջ 34—182), բայց ի սկզբան նաեւ մատենագրական խնդիրք հա-

մասօտիւք յիշուած են: Գրոց մէջ թարգմանուած է մասամբ բառ առ բառ մասամբ քաղուածաբար Ս. Գրիգորի Վարդապետութիւնը: Բայց շատ բան հեղինակն՝ իբրեւ բողոքական՝ ուրիշ տեսակէտով դատած է: — Գէորդայ եպիսկոպոսի նամակին առ թիւ Ազաթանգեղեայ վրայ ինչ ինչ խորհրածութիւնք բրաւ նաեւ Ռիֆէլ. (Հմմտ. մեր գրութեան մէջ՝ էջ 3, ծն. 6. 24, ծն. 1. 27, ծն. 1 եւն:)

Ընդ մամլով է ընդարձակ գրութիւն Մ'այս գրոց քննութեան ի Հ. Բարսէլ Սարգիսեան (Քննադատութիւն Պատմութեանն Ազաթանգեղոսի, Վենետիկ) Այս գրութեան Ներածութիւնը կանխաւ իբրեւ ճաշակ դրուեցաւ ի Բազմփէշ, 1889, թիւ 1, էջ 6—13. եւ ապա Ազաթանգեղեայ եւ Կորեան բանաբարութեան խնդրոյ վրայ եղած մասը նոյն թերթին մէջ (թիւ 7, էջ 193—199, եւ թիւ 8, էջ 225—232:) Այս մասին նկատմամբ յընթացս մեր գրութեան առիթ ունեցանք խօսելու (Հմմտ. էջ 72—79.)

Ասոնց կը յաջորդէ մեր այս գրութիւնը (Հմմտ. Հարէս ԱՄ. 1890, թիւ 1—12:) Մեր նպատակը չէր այս գրոց կաաարեալ քննութիւն մ'ընել, անոր համար ինչ ինչ խնդիրներ հարեանցի եւ այլ կէտեր ալ բողոքովին զանց առնուեցան: Այսպէսբաղձալի էր մեզ որկարենայինք համեմատութիւն մ'ընել Ազաթանգեղեայ այլեւայլ ձեռագրաց եւ ի մասնաւորի մեր մատենադարանին կրկնփէլը ընտիր օրինակին տարբերութեանց, որուն շատ տեղ քայլ առ քայլ կը համաձայնի ուրիշ օրինակ մը (թիւ 54:) Բայց ի վերջոյ ուրիշ ընդարձակագոյն տեղւոյ եւ ժամանակի թողուեցաւ:

Մեր այս աշխատութեան մէջ հետեւեալ կէտերն ի մասնաւորի դիտողութեան առնուած են: Ներածութեանէս ետքը, յորում գրուած են մեզի ծանօթ ամէն հրատարակութիւնք, թարգմանու-

թիւնք, քննութիւնք եւ ձեռագիրք Ազաթանգեղեայ, կը յաջորդեն տասն մասունք, եւ են՝

1. Թուղթ Գէորգայ առ Յեշուա «Վասն Գրիգորի եպիսկոպոսին որ աշակերտեաց զՀայս» : (Էջ 1—11 :)

2. Համեմատութիւն «Կենսագրութեան Գրիգորի» ընդ Ազաթանգեղեայ : — Կրկին աղբերք Ազաթանգեղեայ գրոց : (Էջ 11—33 :)

3. Համեմատութիւն պատմութեան «Կենսագրութեան Գրիգորի» ընդ Ազաթանգեղեայ : — Թէ ինչ լեզուաւ էր այս կենսագրութիւնք : (Էջ 34—40 :)

4. Խնդիր ասորիէն բնագրի Ազաթանգեղեայ : — Օտարաձեւ անուանք հայ բնագրին : (Էջ 40—55 :)

5. Յոյն բնագիր Ազաթանգեղեայ թարգմանեալ հայ բնագրէ : — Հանգամանք այս թարգմանութեան : (Էջ 56—71 :)

6. Խնդիր բանաբաղութեան Ազաթանգեղեայ եւ Կորեան : — Ժամանակ խմբագրութեան եւ ազգ խմբագրչի արդի Ազաթանգեղեայ գրոց : (Էջ 72—87 :)

7. Պատմական արժէք կամ համառօտ քննութիւն պատմութեան Ազաթանգեղեայ (Ազաթ. էջ 29—35, 12 : ) (Էջ 87—104 :)

8. Շարունակութիւն. (Ազաթ. էջ 35, 13—103, 15 : ) (Էջ 105—122 :)

9. Շարունակութիւն. (Ազաթ. էջ 103, 16—663 : ) — Վկայաբանութիւնք Ս. Գրիգորի եւ Հռիփսիմեանց : — Երկրորդ Գիրք Ազաթանգեղեայ : (Էջ 122—149 :)

10. Համեմատութիւն Պատմութեան եւ տեղեկութեանց Ազաթանգեղեայ ընդ Բուզանդայ : — Համառօտ տեսութիւն հարադատութեան

ընագրի բաղադրեալ Ազաթանգեղեայ: (Էջ 150—159.)

Այս վերջին մասերուն մէջ ստիպուեցանք Ազաթանգեղեայ պատմութեան քննութիւնն ընդարձակ ընել Համեմատութեամբ միւս մասանց, եւ Զանայինք Համառօտ գաղափար մը տալ Հայոց պատմութեան այս մասին ըստ արտաքին պատմագրաց: Ուր կարեւոր երեւցաւ՝ պատշաճ դատեցանք օտար բնագիրները ղետեղել, կամ գոնեայ Հաւատարիմ թարգմանութիւն մը դնել այն մասանց:

Նոս աւելորդ չենք համարիր Ազաթանգեղեայ մեզի ծանօթ ձեռագրաց ցուցակը դնել:

1. Թի- 60 Ա. Կրէն-իւր օրինակ մեր Մատենադարանի: Այս ձեռագրին նկատմամբ բաւական տեղեկութիւնք կը գտնուին յԵ-րոպոս, 1848, Թիւ 6, 8, 9. («Հայկական ձեռագիրներու վրայ»):

2. Թի- 54 մեր Մատենադարանի, 20×14<sup>cm</sup> մեծութեամբ, 21 տող, 245 թուղթք. նօսրգիր՝ ոչ մաքուր, եւ նաեւ գրասխալներ յաճախ, բայց ընթերցուածք ընդհանրապէս ընտիր: Ձեռագիրս «գրեցաւ . . . ի դուռն սուրբ արղըմըսս վկային. ձեռնամբ աստուածատուր եպիսկոպոսիս եւ բանի սպասաւորիս. այսմ ամի թիւին Ռիտի (= 1594)» եւն: Ազաթանգեղեայ պատմութեան սկիզբը պակասաւոր է, եւ կը սկսի վենետ. 1862ի տպագրութեան էջ 12, 14 տողէն: Թուղթ 197—245 գրուած են Չենոբ Գլակ եւ Յովհան Մամիկոնեան:

3. Փ-բէղէ-ն օրինակ (Bibl. Nat. anc. fonds arm. No. 51, fol. 108—291.) Երկու յիշատակարանք (fol. 255<sup>b</sup> եւ 293<sup>a</sup>) կան, որոնցմէ կ'իմացուի թէ «գրեալ ի վարդանայ քահանայէ ի թուականիս Հայոց 2Գ (= 1254), ի քաղաքին Ռիմ, ընդ Տովանեաւ սուրբ տաճարին՝ որ յանուն սուրբ աւե-

տարանչացն Յովհաննու եւ Մատթէոսի, որ էր նա  
Հոգետուն Հայոց», Այս ձեռագիրը հիմն է վե-  
նետական հրատարակութեան:

Վենետական հրատարակութեան համար  
գործածուած են նաեւ յաջորդք (Թիւ 4—8):

4. «Գրչագիր հին գրեալ ի Գերջան, ի  
Թուականիս Հայոց 291թ (= 1350):»

5. «Գրչագիր գրեալ յԱմիթ քաղաքի, ան-  
թուական: Յօրինակէ աստի է վերջին տպ. կոս-  
տանդնուպոլսոյ յամի տեառն 1824»:

6. «Օրինակ է առաջին տպ. կոստ. յամի  
1709»:

7. «Գրչագիր նոր՝ գրեալ ի Թուիս Հայոց  
118109 (= 1697):»

8. «Օրինակ է նորագիր, անկատար, գրեալ ի  
1. հաստան:» (Հմմտ. Յոջր. տպ. 1835):

9. Ձեռագիր Մատենադարանի Լազարեան  
ճեմարանի, Նօրր, 18×12cm, 361 թուղթք, 23 տ.  
Ուրիշ 8 կտոր գրութիւնք կան այս ձեռագրին մէջ,  
որ է Թի- 1167 ըստ նոր Յուցակի (տպ. Մոսկուա,  
1888, էջ 72):

Իջմիածնայ գրատան մէջ ըստ Մայր Յոջրի  
(Տփղ. 1863, էջ 179 եւն) կան հետեւեալք (Թիւ  
10—17):

10. Թի- 1613. «Մեծագիր, բոլորգիր,  
գրեալ ի Թղթի ի Յովհաննայ վանս որ ի կարբի ի  
Թուին 210Բ (= 1293):»

11. Թի- 1614. «Մեծագիր բոլորգիր հին  
ընտիր գրչութեամբ յանապատն յԱկներ», Թու-  
ական չէ նշանակուած:

12. Թի- 1615. «Մեծագիր, բոլորգիր,  
գրեալ ի Բաղէշ ի մենաստանն Խնդրակատար . . .

ի Յակովբ սարկաւազէ ի թուին Հայոց ՌԺԹ (= 1570)»:

13. ԹԻ- 1616. «Քառածալ, բոլորգիր, ի թղթի: Չունի յիշատակարան»:

14. ԹԻ- 1617. «Նօտրդիր. չունի յիշատակարան»:

15. ԹԻ- 1618. Գրեալ «Յէջմիածին ի Յովհաննէս Վարդապետէ ի թուին Հայոց ՌՃՕԳ (= 1705):»

16. ԹԻ- 1619. «Մեծագիր, բոլորգիր, գրեալ ի թղթի ի գիւղն Ալիփուղար ի Թուսայէ եւ ի Գրիգորէ ի թուին Հայոց ՌՃԽԷ (= 1698):»

17. ԹԻ- 1626. «Գրեալ ի թղթի. չունի յիշատակարան»:

Ըստ Լանկլուայի (Collection, II, 102, N. 1) գաղղիացի գիտնականը Brosset էջմիածնի այս ձեռագրաց վրայ մանրամասն տեղեկութիւն տուած է իւր գրոց մէջ. (Rapports sur un voyage archéologique en Georgie et en Arménie. 3<sup>e</sup> Rapport, pp, 42, 45, 56, 59.)

18. Չեռագիր Բարդուղայեաց Ս. Աստուածածնի վանաց Արղնայ. ԹԻ- 212, ուրիշ 10 կտոր գրութեանց մէջ. բայց դժբախտաբար թուականը չենք գիտեր: (Հմմտ. Գ. Սրբաւանդեան, Թորոս Աղբար, Կ. Պոլիս, 1885, Մասն Բ. էջ 392:)

19. Գրեալ «ի Ս. Խաչ, յերկիրս Հիզան քաղաքի, ի թուին ՊՕԱ (= 1402): Ես Յովհանն գրեցի իւն»: (Հմմտ. Ղ. Փէրշապետեան, Նօտարք Հայոց, Կ. Պոլիս, 1888, Թիւ 16, էջ 17:)

20. Չեռագիր գրեալ «ի թուին Հայոց ՋՁ (= 1457) որ եւ ես անպիտան ծառայ՝ սպասաւոր Սրբոյն Թուսայի Առաքելոյ սքանչելագործ սուրբ գերեզմանին. Տէր Աբրահամ վարդապետ, որ ի



յԱղթամար Սուրբ Խաչին . առնէի չորս գումիշ (գոմէշ) եւ չորս եղ, եւն : (Հմմտ. Նօթարք, Թիւ 220, էջ 186—187, ուր նշանակուած է թէ այս յիշատակարանն օրինակուած է «ի 1867. Յունուար 26. ի Վան. ի Բէլոս գիւղն» :

21. Չեռագիր Կ. Եղեանցի, որ է ընդարձակ հաւաքածոյք 18 պատմագրութեանց, որոնց հինգերորդն ի կարգին է «Ագաթանգեղոս, հանդերձ թղթով դաշանց» : Չեռագրին վրայ այս տեղեկութիւնը կու տայ Ս. Մուխամեան (Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն. Բ. Տպ. Ս. Պետր. 1885, Յռջբ. էջ 19—20.) «Թուղթ ձեռագրին է ընտիր բամբակեայ, ողորկեալ եւ ստուար, ունելով երկայնութիւն  $27\frac{1}{2}$ cm. եւ ի լայնութիւն  $20$ cm : Մէն մի երես ի նմա տրոհեալ է յէջս երկուս, որոց երկայնութիւն իւրաքանչիւրոց  $20\frac{1}{2}$ cm. լայնութիւն  $6\frac{1}{4}$ cm. տողք 52» : Չեռագիրն ունի նաեւ զարդագրեր եւ մանրանկարներ, եւ է «գրեալ ի Տիգրանակերտ քաղաքի ի Թուականիս մերում ՌՃԺԻ (= 1668) յԱրրահամ գրչէ, նօտր գրով, յաճախակի՝ վաղեմի ընտիր ուղղագրութեամբ» : Ագաթանգեղեայ պատմութեան վերջը կայ յիշատակարանս, «Աւարտեցաւ եւ կատարեցաւ պատմութիւն սուրբ լուսաւորչինս . . . Ողորմեա քրիստոս աստուած ստացողի սուրբ գրոցս, ամթեցի խօճաթարզի սահակին, եւ ծնօղաց նորին թորոսին եւ մօրն միցի թանային եւ կողակցին մաղթումին եւ որդւոյն գրիգորին, ինձ մեղսաթաւալ արբահամ գրչիս. կարգացողացդ եւ Աստուած ողորմի ստուղացդ . ամէն» :

Աւելորդ է յիշեցընել թէ կը գտնուին անշուշտ այլ ձեռագիրք՝ զորոնք այս ցուցակին մէջ մուծանել մեզի անհնար եղաւ :



# ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

Ա.Ռ.

## ԳԵՈՐԳԱՅ ԱՍՈՐԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

### I.

Ի՞նչ տը Լակարտ, Տոչակաւոր ասորագէտ եւ Տայերէնագէտ գիտնականն իւր Քաղւածոյ + ասորական + կոչուած գրոց<sup>1</sup> մէջ Տրատարակած է ընդարձակ թուղթ մը, զոր գրած է Գէորգ եւ պիսկոպոս Արաբաց առ Յեշուա ճգնակեաց քահանայ յԱնար քաղաքի: Նամակը գրուած է յամի Յունաց 1025, յամսեան մարգաց, ուստի յամի Տեառն 714, Տին ասորերէն լեզուաւ եւ կը բովանդակէ ինն գլուխ այլեւայլ կրօնական եւ մատենագրական նիւթերու վրայ: Մեծ նշանակութիւն ունին մեզի Տամար այս նամակիս Ա, Բ, Գ եւ Ե գլուխները, որոնք ուղղակի կամ անուղղակի Տայոց մատենագրութեան Տեա սերտ կապակցութիւն ունեցող նիւթերու վրայ կը ճառեն: Առաջին երեք գլուխներուն մէջ Գէորգ

<sup>1</sup> P. Lagardii Analecta Syriaca. (Lipsiae.) Londini. 1858. XX. 208 էջ: Գրոցս ասորերէն վերնագիրն է «Գիրք ժողովածոյից Տարց որոց եւ փիլիսոփայից Տեթանոսաց»: Գէորգայ թուղթը գրուած է՝ էջ 108—134, իսկ Տինգերորդ գլուխը, որ այժմ մեզի Տամար նշանակութիւն ունի, կը գրուէ նոյն գրոց 122—128 էջերը:

կը խօսի Հրահատ Զփօն Պարսկին<sup>1</sup> վարուց, գրութեանց ու վարդապետութեանց վրայ, ուստի եւ ուղղակի մեր մատենագրութեան մէջ Զփօն անուամբ ծանօթ գրոց վրայ, որուն հեղինակը մինչեւ մօտաւոր ժամանակներս վրիպմամբ Մծբնայ Ս. Յակոբ եպիսկոպոսը կը համարուէր: Իսկ հինգերորդ գլուխը Գրիգոր Լուսաւորչին «Կենսագրութեան» — ուստի Ագաթանգեղեայ վրայ է: Առաջին երեք գլխոց վրայ, զորոնք այժմէն իսկ թարգմանուած պատրաստ ունինք, ուրիշ պատեհ առթիւ կը խօսինք. այժմ միայն վերջնոյն վրայ ինչ ինչ դիտողութիւններ ընենք, բայց նախ թարգմանելով նամակին այն մասերն, որ մեր խնդրոյն հետ ուղղակի կապակցութիւն ունին:

Խնդրոյս առաւել լուսաւորութեան համար անհրաժեշտ կը համարինք համառօտ տեղեկութիւն մը տալ նամակիս եւ անոր հեղինակին վրայ: Գէորդ «Եպիսկոպոս Արարաց» մականուամբ<sup>2</sup> ծանօթ է. եւ է ութերորդ դարու ասորի մատենագրաց առաջին կարգի նշանաւորներէն, որ մեռած է 740ին: Ասեմանի<sup>3</sup> զԳէորդ «~~ղղափա~~ կ'անուանէ, բայց աւելի հաւանական է թէ յա-

<sup>1</sup> Aphraates Sapiens Persa. այս անուան ընիկ պարսիկ ձեւն է Frabât, նոր պարսկերէն Farhâd, իսկ Ասորիք յունածեւ Afrabât անունը կու տան, եւ միայն Բար-Երէաս Frabât բուն ձեւը կը գործածէ. Frabât է = Հրահատ:

<sup>2</sup> Գէորդ «Եպիսկոպոս Արարաց» կը կոչուի այն պատճառաւ՝ որ եպիսկոպոս էր քանի մը վաշկատուն արարացի ցեղերուն, որոնք մինչեւ Միջագետաց հիւսիսային կողմը սփռուած էին եւ յակորիական աղանդէն էին: Այս «Արարաց» եպիսկոպոսաց գլխաւոր նիստն էր Հիրաս:

<sup>3</sup> Assemani, Bibliotheca Orientalis. I. 494. Հմմտ. I. 167 b.

կորիտեան անդանդէն էր: Ասիկայ յայտնի է նաեւ այն դարագայէն՝ որ Յակոբիտեանց Աթմնաս Բ. պատրիարքին հրամանաւը Սերգիոս Զաբունայա<sup>1</sup> յակոբիտեան եպիսկոպոսէն ձեռնադրուեցաւ, եւ աւելի յայտնի անկէ՝ որ Յակոբիտեանց հրուշակաւոր Սեւերոս պատրիարքին (512—518) Δόγοι ἐπιθρόνοιοι գիրքն իբրեւ աղբիւր ողջագիր վարդապետութեան կը յանձնէ իւր նամակին ութ թերորդ գլխոյն մէջ<sup>2</sup>: Վերջապէս Գէորգ յայտնապէս «Յակոբիտեան» մականուամբ ալ կը յիշուի<sup>3</sup>:

Գէորգայ այս նամակին բնագիրն ամբողջովին միայն Լակարտ հրատարակած է. առաջին երեք գլուխները հրատարակած են նաեւ Բայթ<sup>4</sup> եւ Փորժէ<sup>5</sup>, որ առաջին անգամ լատիներէն թարգմանեց այս գլուխները: Բովանդակ նամակը գերմաներէն թարգմանեց Բիսէլ<sup>6</sup> հանդերձ ծանօթութեամբ, բայց նաեւ ասիկայ շատ տեղեր լոկ քաղերով եւ համառօտելով կը թարգմանէ:

<sup>1</sup> Անդ. II. 335.

<sup>2</sup> Analecta Syriaca, էջ 132, 13, ուր ասորի բնագրոյն մէջ յունական ἐπιθρόνοιοι բառը գործածուած է: Տես Ryssel, Ein Brief Georgs. Gotha, 1883. p. 9—10 եւ 85.

<sup>3</sup> Տես Renan, յուսումնաթերթին Journal asiatique. XIX. էջ 324.

<sup>4</sup> W. Wright, The homilies of Aphraates, the persian Sage. London, 1869. Vol. I. p. 19—37.

<sup>5</sup> Forget, Jac., de vita et scriptis Aphraatis Sapientis Persae. Lovanii, 1882. De Sapiente Persa capita tria, ex Epistola Georgii episcopi Arabum excerpta. p. 1—56.

<sup>6</sup> Ryssel, V., Ein Brief Georgs, Bischofs der Araber, an den Presbyter Jesus, aus dem Syr. übersetzt u. erläutert. Mit einer Einleitung über sein Leben u. seine Schriften. Erweiterter Separatabdruck aus den „Theol. u. Krit.“ Gotha, 1883. (II. 278—371.) 118 pp.

Միայն առաջին ու հինգերորդ գլուխները թարգմանած է անգղիերէն Պ. Հ. Քաւբէր<sup>1</sup>: Աւելորդ է յիշեցնել որ մենք մտադիր եղանք թարգմանութեան աւելի ճշգութեան քան թէ վայելութեան, որ շատ դժուարին ալ է՝ ասորոյն եւ արդի հայերէն լեզուին արտաքոյ կարգի անսմանութեամբը: — Հոս կը գնենք Գէորգայ նամակին հինգերորդ գլխուն թարգմանութիւնը:

«Սրբոյն Գէորգայ Եպիսկոպոսին թանուքեցւոց եւ Տուրքւոց եւ Ահուղիացւոց պատասխանի ինն հարցուածոց, զորոնք հարցուց Յեշուա քահանայ ճգնազգեաց:

ԳԼՈՒԽ Ե.: Ասան Գրիգորի Եպիսկոպոսին որ աշակերտեաց զՀայս: Գրիգորիսն այն որ աշակերտեց զՀայս, ով ուսումնասէր, հումայեցի էր ազգաւ, ինչպէս որ յայտնի է իւր Կենսագրութեան<sup>2</sup> խօսքերէն, բայց տղայութեան ժամանակ Հայոց աշխարհն եկաւ կամ Գիողեթիանոսի քրիստոնէից գէմ՝ յարուցած հայաժանաց կամ ուրիշ մեզի անձանօթ պատճառաւ: Եւ երբ Հայոց երկրին մէջ սնաւ եւ ուսաւ անոնց գիրն ու լեզուն իւր անունը տարածուեցաւ եւ հռչակեցաւ, այնպէս որ Տրդատ թագաւորին մերձաւորներէն եւ ծառաներէն եղաւ, որ այն ատեն կը թագաւորէր Հայոց աշխարհաց վրայ: Եւ թէպէտ իւր քրիստոնէութիւնը պինդ կը պահէր, բայց սակաւուց միայն ծանօթ էր այն: Երբ անոնցմէ ոմանք ծանուցին զայն Տրդատէս թագաւորին, կոչեց զԳրիգորիսս առ ինքն ու հարցուց իմացաւ որ այս այսպէս է, եւ պէսպէս

<sup>1</sup> B. H. Cowper, *Syriac Miscellanies; or Extracts relating to the first and second general councils, and various other quotations, theological, historical and classical.* Translated into english from MS. in the British Museum and Imperial Library of Paris. With notes. London, 1861.

<sup>2</sup> Ասորին ունի բառ առ բառ այսպէս. «որպէս յայտ է ի բանից պատմութեանն որ է վերայ նորա (այսինքն Գրիգորի), ասորաբանութիւն մը, զոր «կենսագրութիւն» թարգմանել պատշաճ համարեցանք:

փաղաքշանքներ եւ սպառնալիքներ ու տանջանք-  
 ներ դործածեց, որպէս զի ուրանայ (Գրիգոր)  
 զքրիստոնէութիւն. բայց անհիկայ յանձն չառաւ:  
 Ի վախճանի գուր մը ձգել տուաւ զինքը, որ ի  
 էր ժամն զեռնովք: Գրոյն մէջ 13 տարի կենալէն  
 ետք ինչպէս կըսէ իւր պատմութիւնը, կամ էթէ  
 քեզ հաճոյ է՝ 3 տարի միայն առնունք, թագաւ-  
 որն ելաւ ի զրօսանս եւ յորսս անասնոց: Եւ յան-  
 կարծակի Աստուած անոր վրայ չար ոգի մ'ա-  
 ռաքեց եւ ցնորեցաւ ու խելքը կորսնցուց եւ  
 իւր մարմինը կը խածատէր: (Այն ատեն) յիշեց  
 թագաւորն զսուրբն՝ իւր կնոջ հոգալովն՝ եւ  
 (մարդ) ուղարկելով հանեց զինքը գրէն, որ եւ  
 աղօթք բրաւ անոր վրայ եւ առողջացաւ: Այս  
 բլլալէն վերջը թագաւորին հրամանաւն եւ սրբոյն  
 հոգալովը Հայոց աշխարհքը քրիստոնէութեան  
 դարձաւ: Յետոյ վասն զի եպիսկոպոսի մը պէտք  
 ունէին՝ թագաւորը կոչելով իւր մարդկան պա-  
 տուականները յանձնեց անոնց զԳրիգորիոս եւ  
 ուղարկեց զանոնք առ Ղեւոնդիոս եպիսկոպոս  
 եւ մետրապոլիտ կեսարիա քաղաքին Գամրաց,  
 որպէս զի զԳրիգորիոս եպիսկոպոս ընէ: Ղեւոնդիոս  
 ընդունեցաւ զանոնք եւ կատարելով ինդիրքին՝  
 արձակեց խաղաղութեամբ ու ինդութեամբ: Այ-  
 նուհետեւ վարեց սուրբը Հայոց աշխարհք, շինեց  
 եկեղեցիներ եւ վանքեր թագաւորին հրամանաւն  
 եւ մեծամեծաց փութովը, եւ անոնց մէջ կարգեց  
 ու դրաւ քահանաներ եւ սարկաւագներ՝ քննելով  
 անոնց օրէնքներ եւ կարգերս: Ինչ-  
 պէս իրեն (ի դէպ) թուեցաւ: Եւ յետոյ երբ  
 Նիկիոյ սուրբ սիւնհոյոսը գումարեցաւ, նաեւ  
 ինքը Սիւնհոյոս գնաց սրբոյն Ղեւոնդիոսի հետ,  
 որ զինքը ձեռնադրած էր եպիսկոպոս: — Այս  
 է պարզ եւ համառօտագոյն պատմութիւն (ի  
 վերայ) Գրիգորիոսի ուսուցչին Հայոց:

«Բայց արժան է, ինչպէս մեզ կ'երեւի, որ  
 յառաւել հաւատարմութիւն մեր խօսքին՝ ա-  
 իս Բուն քաղէն այս մարդուն կենսութիւնը,  
 որ այսպէս է. Այն ժամանակն որ կ'իշխէր  
 Հռոմայեցոց Գիսկղետիանոս, եւ Պարթեւաց  
 ու Հայոց կ'իշխէր Տրդատէս, լսեց Տրդատէս որ  
 իւր պալատան մէջ կայ մարդ մը Գրիգոր ա-  
 նուամբ, որ իւր գիրք չի պաշտեր, այլ քրիստո-  
 նէից կրօնքէն է: Արեւց զանհիկայ եւ ջանաց սա-  
 սանեցընել շատ մը սպառնալեօք, Բիչ մ'ետքն

այ. (կ'րսէ նոյն կենսագրութիւնը<sup>1</sup>). 'Այն ատեն սկսաւ թագաւորն ըսել անոր. Օտար եւ անաշխարհիկ եկար մեր քով եւ շատ պատուոյ ու փառաց արժանացար մեզմէ. արդ այժմ՝ ինչպէս կը յանդգնիս պաշտել աստուած մը՝ զոր ես չեմ պաշտեր, 'Էւ շատ վերջը (կ'րսէ). 'Իսկ սուրբը 13 տարի մնաց այն զեռնայից գրին մէջ՝ ուր ձգուեցաւ՝ պահուելով Աստուծոյ բարութեամբն ի չար զեռնոց, 'Էւ յետոյ (կ'րսէ). 'Հրամայեց թագաւորն որ գումարուի իւր բանակը, որպէս զի որսի ելլեն: Բայց երբ այս եղաւ եւ կառքերը լծուած էին եւ ելաւ (թագաւորն) իւր արքունական կառքը նստելու, առաքեցաւ անոր վրայ Աստուծոյ բարկութիւնը եւ հարուածեց գանձիկայ չար ոգին եւ գետին տապալեց կառքէն վար երեսի վրայ, եւ սկսաւ յիմարիլ եւ իւր ատամամբ իւր մարմինը խածատել եւ ուտել: 'Էւ յետոյ (կ'րսէ). 'Իսկ սուրբ Գրիգորիոս ծուներ կրկնելով յերկիր՝ աղաչեց զԱստուած ամենակարող որպէս զի բժշկութիւն տայ թագաւորին, եւ ահա ձայն մը լսուեցաւ երկնքէն որ կ'ըսէր. Գրիգորիէ, զորացիր եւ քաջ լեր, որովհետեւ քեզի հետ եմ մինչեւ ցվախճան. շինէ ինձ եկեղեցիներ եւ կանգնէ ինձ տուն բնակութեան իմ սրբոցս եւ բարձրացուր զեղջիւր նոցա: 'Էւ այն զոր աղօթեցիր՝ ահա առիկ լսեցի, եւ ինչդուստմբդ զոր ինչդեցիր՝ ահա տուեալ քեզ: 'Էւ երբ այս ամենն ըսուեցաւ առ սուրբն, դարձաւ թագաւորին եւ շօշափեց անոր ձեռքերն ու ոտքերն, եւ մարդկան բնութեան դարձուց զօրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, 'Էւ յետոյ դարձեալ (կ'րսէ). 'Բայց երբ լսեց թագաւորն ու բախացաւ եւ փառաւորեց զԱստուած, եւ հրամայեց որ գումարուին իւր շահագաց<sup>2</sup> եւ մեծամեծաց մէջ զբանականագոյններն ու երիցագոյնները, եւ երանելոյն Գրիգորիոսի հետ երթան Ապագոսիկիոյ աշխարհը Աեսարիա քաղաքը, որպէս զի երանելին առնու շուտով քա-

<sup>1</sup> Փակագծեալ մասերը մեր յաւելուածն են բնագրին մասը պարզելու համար:

<sup>2</sup> Ասորին կը գործածէ յունական Σατοράτης բառը, զոր Էւզոտի թարգմանելիքն է բուզանդ «սատրապ» կը գործածէ շատ անգամ (Հմմտ. Բուզանդ, Գիրք Գ. ԳԼ. Գ—Ե. էջ 67, 73 եւ 79,) զոր Հայկազնեան Բառարկոյ մէջ փոխուած «սատրապեա» եզրով կը գտնենք՝ շղիաներ ինչ պատճառաւ:



Հանայութեան կարգը եւ դառնայ ի Հայս: Եւ որոնք որ գնացին եւ մտան ի Կեսարիա, ներկայացան երանելոյն Ղեւոնդիոսի եպիսկոպոսի տեղւոյն, եւ երբ այս ամենայն պատկեցին սնոր՝ զՔրիզորիոս եպիսկոպոս ձեռնադրեց ժողովելով առ ինքն իւր (Իշխանութեան) տակն եղած եպիսկոպոսները, Այս սահաւս զրինք հոս Գրիզորիոսի ընդհանրապէս պարտութիւնն: Այլ թէ Նիկիոյ սիւնհոդոսին 318 եպիսկոպոսներէն մին էր, յայտնի է սիւնհոդոսին արձանագրութիւններէն, ուր կը պատմուի վասն Ղեւոնդիոսի եպիսկոպոսին Կեսարիայ Կապադովկացոց թէ ներկայ եղաւ սիւնհոդոսին: Ղեւոնդիոսի այս գործքին կը վկայէ նաեւ սուրբն Գրիզորիոս Աստուածարան որ իւր հօր պատանաց վրայ (խօսած) ծառին մէջ կ'ըսէ՝ թէ մինչ Ղեւոնդիոս առ Արիանգաւ անցեալ յառաջանայր աշակերտեաց զիւր հայրն եւ մկրտեց ու քրիստոնեայ բրաւ:»

«Հայոց Գրիզորիոսի վրայ այս ամէն ըսուածներէն յայտնի է արդէն՝ թէ որ ժամանակի մէջ կ'ապրէր եւ թէ չէր այն երեք սուրբ Գրիզորներէն մին, որոնց մէկն Աքանչելագործ կը կոչուի, միւսն է եպիսկոպոս Նիւսիոյ եւ երբորդը Աստուածարան կոչուածը, այլ թէ կրտսեր է ժամանակաւ քան զԱքանչելագործը, բայց երիցազոյն քան միւս երկուքը, որ այսպէս կը ցուցուի (Առաջին լսի՝ «որ այսպէս է:») Գրիզոր Աքանչելագործ որ Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքին եպիսկոպոսն էր, հռչակաւոր եղաւ (կամ «ծանօթացաւ») Ալեքեղիանու օրերը եւ էր այն եպիսկոպոսներէն մին, որոնք յԱնտիոք գումարեցան ընդդէմ Պաւղոսի Սամսատացոյն եւ զայս կը ցուցրնէ Եւսեբիոս երբ իւր Եկեղեցական Պատմութեան Գ. Գրոց ԻԶ գլխոյ մէջ կ'ըսէ. «Այլ եկեղեցեաց հովիւք ամէն կողմերէ գումարեցան (ի մի վայր)՝ քրիստոսի հօսին ապականիչ գայլուն համար եւ ժողովեցան Անտիոք քաղաքին մէջ, որոնց մէջ առաւել նշանաւոր էին Փիրմիղիանոս Կեսարեայ Գամրաց, Գրիզորիոս եւ Թէոդորոս եղբայրք, որ հովիւք էին Պոնտոսի եկեղեցեաց, Հեղենոս Տարսոնի եկեղեցոյն, եւ Նիկոմաս Իկանոնի եւ Երուսաղէմի եկեղեցոյն ալ Հեմենէոս եւ Թէոտեկնոս՝ Կե-

<sup>1</sup> Ասորին յունարէն πεπραγμένα բառը կը գործածէ:

սարեայ Պաղեստինի եւ Մաքսիմոս, որ Բոսորայի եղբարց կ'առաջնորդէր փառաւորապէս եւ ուրիշ շատերը, զորոնք անկարելի է թուել, (Գարձեայ կ'ըսէ նոյն գրոց) ի՞նչ գլխոյն մէջ. երբ թագաւորեց Վաղինոս, ամս ԺԷ, Աղաւգիոս մէկ տարի եւ անկէ ետքը թագաւորութիւնն աւաւ Աւրեղիանոս, որուն ժամանակ շատ մ'եպիսկոպոսներ Անտիոք սիւնհոդոսի գումարեցան, որուն մէջ յայտնեցաւ եւ դատապարտեցաւ ամէնէն Պաւղոսի օտար վարդապետութիւնն, որ Հերետութեան գլուխ եղաւ: 7

«Արդ Աւրեղիանու թագաւորութենէն եւ այն ժողովէն, որ աթուղնկէց ըրաւ զՊաւղոս Սամոսատացի, մինչեւ Աոստանդիանոս հաւատացեալ թագաւորը եւ Նիկիոյ ժողովը՝ են ամբ 55, որ այսպէս (կը ցուցուի): Աւրեղիոս թագաւորեց 6 տարի, Թէթիկոս 6 ամիս, Պրոքոս 6 տարի, Աուրոս եւ իւր որդիքը 2 տարի, Գիոկղեաիանոս 20 տարի, Աոստանդիանոս մինչեւ Նիկիոյ ժողովը 20 տարի, եւ այսպէս կ'ըլլայ ի միասին՝ 55 տարի, ինչպէս ըսինք: Այսպէս ալ Նիկիոյ սիւնհոդոսէն մինչեւ ցժողովն սուրբ որ գումարեցաւ ի Ա. Պողոս Թէոդոս մեծ թագաւորին օրերով, որուն ներկայ էր աստուածային այն զոյգը, այսինքն Գրիգորիոս Նիւսիոյ եպիսկոպոսն եւ Գրիգորիոս Աստուածաբան՝ եպիսկոպոս Սեսիմոնի եւ Նազիանդոս, են դարձեալ 55 տարիներ, որ այսպէս (կ'ըլլայ): Առնունք Աոստանդիանոս Յաղթողէն 11 տարի Նիկիոյ ժողովէն ետքը, եւ իւր որդւոցը Աոստանդիանոսի, Աոստանդիոսի եւ Աոստասայ՝ 25 տարի, Յուլիանու՝ 2 տարի, Յովինիանու՝ 1 տարի, Աղեսնտինիանու եւ Աղէսի ընդ Գորդիանու՝ 14 տարի, Գորդիանու եւ Աղեսնտինիանու փոքրկան՝ 1 տարի, Թէոդոսէն ալ 1 տարի, եւ այսպէս կ'ըլլայ 55 տարի, ինչպէս ըսինք: Արդ յայտ յանդիման է թէ այս հայ Գրիգորիոսն յիշեալ երեք Գրիգորներէն տարբեր է, ինչպէս վերն ըսինք: 1: 7

«Իսկ նկատմամբ այն միւսոյն զոր գրած էիր

<sup>1</sup> Յաջորդ մասը լոկ վասն ամբողջութեան կը թարգմանենք. բայց մտադիր կ'ընենք նաեւ որ Հայոց Եկեղեցական պատմութեան նկատմամբ հետաքրքրական քանի մը կէտեր կան այս մասին մէջ:

(Ասորին. «բսած էիր») ինձի՛ թէ էթէ հաւատացեալ էր այս Գրիգորիոս, ապա ինչ է այն կարծիքը, զոր սորվեցուցած է Հայոց որ ջուր չխառնեն պատարագի բաժակին մէջ. — գիտցիր որ կրնար անիկայ իրեններուն հրամայել որ ջուր չխառնեն գինւոյ մէջ, թէեւ հաւատացեալ ըլլար կամ ոչ հաւատացեալ, վասն զի այսօր իսկ կան շատ մ'ոչ հաւատացեալք, որոնք պատարագի բաժակի գինւոյ մէջ ջուր կը լեցընեն: Գարձեալ նոյն Գրիգորիոսն ամենեւին չէ պատուիրած որ ջուր չխառնեն գինւոյ մէջ, կամ որ մէկը չհաղորդուի (Ասորին՝ ողի մի առցէ որ զպատարագ) բայց միայն յարութեան սուրբ տօնին՝ բաց ի քահանայից եւ սարկաւազաց եւ տղայոց մանկանց, կամ որ պատկեր չդնեն իրենց եկեղեցեաց մէջ, թէպէտ եւ այս ամէնն անոր (Գրիգորի) կը վերագրեն: Բայց նոյն իսկ էթէ նոյն Գրիգորն գրած ըլլար այս ամէն օրէնքները, ինչպէս իրենք կը հաստատեն, պէտք էր գէթ խորհիլ որ այն իրենց Գրիգորիոսը մեծ եւ առաւել չէր քան զսուրբ առաքեալս որք աւանդեցին գրեթէ յամենայն եկեղեցիս որ ի ներքոյ երկնից ջուր լեցընել խորհրդոյ բաժակին գինւոյ մէջ, Պետրոս եւ Պաւղոս յԱնտիոք եւ ի Հռոմ, եւ ի գաւառս, Պաւղոս եւ Յովհաննէս յԵփեսոս եւ ի Բիւզանդիա եւ անոնց իշխանութեան ներքեւ գտնուող տեղեաց մէջ, Ղուկաս եւ Մարկոս յԱղեքսանդրիա եւ յԵգիպտոս եւ շրջակայ ամէն տեղերը եւ անոնցմէ բոլից եկաւ այս աւանդութիւնը ֆրիստոնէից ամէն եկեղեցեաց մէջ մինչեւ ցայսօր: Արդ մենք չորս ատուանինք եւ պատրիարքներ որոնք կը վկայեն թէ պէտք է ջուր խառնել պատարագի բաժակի գինւոյ մէջ, իսկ իրենք ուրիշ վկայ չունին բայց միայն իրենց սովորութիւնը: Իսկ նկատմամբ անոր որ հայազգի մը քեզմէ պահանջեր էր, ինչպէս որ գրած էիր, թէ ցուցուր ինձ աւետարանէն թէ Տեառն մերոյ իւր աշակերտաց տուած բաժակին մէջ ջուր կար կամ թէ պէտք է ջուր լեցընել յայն, դուն ալ իրմէ պահանջէ որ քեզի ցուցընէ աւետարանէն՝ թէ ջուր չկար այն բաժակին մէջ եւ թէ պէտք չէնք ջուր խառնել խորհրդոյ բաժակին մէջ: Բայց թերեւս ըսէ մէկը. Աւետարանին մէջ գրուած է թէ Տէրն մեր ըսաւ իւր աշակերտացը՝ թէ ճշմարտիւ

կրտսեմ՝ ձեզի թէ մէյ մ'ալ պիտի չխմեմ՝ սիբերոյ որթոյն, մինչեւ որ ձեզի հետ Աստուծոյ արքայութեան մէջ նոր խմեմ զայն, եւ ըսէ թէ՝ «ի բերոյ որթոյն ըսելովն յայտնի է թէ անպակ գինի էր բաժակին մէջ եւ ոչ ջրախառն գինի: Այլ թող լսէ: Ինչ ուրեմն, յԱրքայութեան Աստուծոյ կամ յարութենէն ետքը երբ իւր աշակերտաց հետ կերաւ եւ խմեց մեր Փրկիչը տնօրինարար իւր յարութիւնը ստուգելու համար երբ մնաց իրենց քով 40 օր, ինչպէս գրուած է, անխառն խմեց ինքն եւ իւր աշակերտներն ամէն առտն որ կերան եւ խմեցին. եւ սվ է այնչափ յիմար որ այսպէս ըսէ, բայց այն միայն որ կրտսեմ է ջուր չկար բաժակին մէջ զոր առաւ Տէր մեր եւ մատոյց եւ օրհնեց եւ խմեցին անկէ իւր աշակերտներն, այլ միայն գինի: Բայց արդ եթէ ուղէ մէկն ըստ պատշաճի ջրել իրենց այս դարովելի կարծիքը, եւ զայն ամենայն, զորոնք վերը յիշեցի, շատ խօսքերու եւ բնդարձակ գրութեան պէտք կ'ունենայ, այլ մեք զայս ժամանակին թողլով՝ քու գրածիդ ուրիշ մէկ զլուին անցնիք:»

Այս նամակիս արժէքն ոչ այնչափ այն է՝ որ նոր ծանօթութիւն ու նոր լոյս կը սփռէ Ազգածանգեղեայ պատմութեան վրայ, այլ այն որ ըստ բաւականի նպաստամատոյց կ'ըլլայ մեզ Ազգածանգեղեայ աղբերաց քննութեանը: Այս նկատմամբ առաւել յարգ ունի նամակին այն մասը, զոր Գէորգ «կենսագրութեան խօսքերէն» կը քաղէ: Բնականապէս ի վկայութիւն կոչած վեց հատակոտորներով չենք կրնար՝ ոչ միայն պայծառ այլ եւ ոչ ըստ բաւականի ճշգրիտ գաղափար կազմել այն գրութեան վրայ, զոր Գէորգ առջեւն ունեցած է եւ զոր «Պատմութիւնն որ է վերայ նոր» (== կենսագրութիւն) կ'անուանէ. եւ թէ ինչ յարաբերութիւն ունի այն գրութիւնն մեր Ազգածանգեղեայ հետ՝ մանաւանդ թէ եւ ոչ այնչափ,

որչափ առ ժամս մեզի բաղձալի էր: Բայց եւ այս սակաւ տողերն ըստ բաւականին կ'օգնեն Ազաթանգեղեայ եւ անոր աղբերաց վրայ ինչ ինչ զխտորութիւններ ընելու, որով եւ նպաստամատոյց կ'ըլլան հայ մատենագրութեան կրնձնեալ մասանց միոյն հետազօտութեանը:

## 2.

Առաջին խնդիրն որ կը յառնէ՝ այն է թէ Վէորգայ յիշած վկայութիւնքն ի՞նչ աղբիւրէ առնուած են, եւ կամ յայտնի եւս խօսելով արդեօք այն «կենսագրութիւն» որմէ քաղած է Վէորգ, ունի՞ նմանութիւն մեր Ազաթանգեղեայ հետ, եւ թէ ի՞նչ աստիճանի է այս նմանութիւնը: Պատասխանը զժուարին չէ, եթէ համեմատենք այս վկայութիւններն Ազաթանգեղեայ մէջ գտնուած նման խօսքերուն հետ: — Բնականապէս ոչ ամէն վկայութիւն բարձր կրնանք գտնել առ Ազաթանգեղեայ. բայց նաեւ այն սակաւ խոտորմունքն որ յերեւան կ'ելլեն ի համեմատութեան, մեզի առիթ կու տան Ազաթանգեղեայ աղբիւրներն ուղտնելու: — Լաւագոյն կը համարինք աստ գէժ՝ առ գէժ դնել Ազաթանգեղեայ եւ Վէորգայ համեմատական մասերն, որով առաւել որոշ գաղափար կրնանք կազմել այս երկու բնագրաց իրարու հետ ունեցած փոփոխ յարաբերութեան վրայ: Վէորգայ վկայութիւնք հոս գրաբար գրուած են, որպէս զի աւելի յայտնի տեսնուի Ազաթանգեղեայ հետ ունեցած նմանութիւնը կամ տարբերութիւնը:

ԱԳԱԹԱՆԳԵՂՍՍ<sup>1</sup>

(Էջ 43, տող 13—44, 3.)

«(Ընդ ժամանակս ընդ այնոսիկ իշխանն Յունաց ի հալածել կայր զեկեղեցի Աստուծոյ) Իսկ իրբեւ զգացեալ Տրդատիոս վասն Գրիգորի թէ քրիստոնէական պաշտաման հաղորդ է, այնուհետեւ պատուհասակոծ առնէր զնա եւ ազգի ազգի արհաւիրս արկանէր ի վերայ նորա. (բազում անգամ ի բանտս եւ ի կապանս տանջանօք նեղէր զնա թողուլ ի բաց լինել նմա յերկրպագութենէն քրիստոսի, ի հնազանդութիւն դառնալ նմա գիցն սնտոեաց եւ պղծութեանն պաշտամանն) ր

## ԳԷՈՐԳ

(LAS. 123,30 — 124,5.)

«(Ի ժամանակին զի ունէր զթագաւորութիւն Հռոմայեցւոց Գիսկղետիանոս, իսկ զՊարթեւացեւ զՀայոց արքայութիւն ունէր Տրդատէս). լուաւ Տրդատէս եթէ է ի պալատան իւրում այր մի Գրիգոր անուն, որ զգիս իւր սչ պաշտէ, այլ ի քրիստոնէից պաշտամանէ անտի է: Չնա կոչեցեալ ջանայր յաճախ սպառնալէօք արհաւիրս արկանել ի վերայ նորա: ր

Յայտնի կը տեսնուի հոս որ այս երկու բնագիրք ի միջոցին բառ առ բառ նոյն են, բայց սկիզբն ու վերջն աւելի կամ պակաս աննման: Հաւանական է որ Գէորգայ տեսած բնագրին մէջ Ագաթանգեղեայ համեմատ էին այս մասերն՝ վասն զի ասոր նման տարբերութիւնք կը տեսնուին նաեւ այն վկայութեանց մէջ, զորոնք Գէորգ ուրիշ գրքերէն (զոր օր. Եւսեբեայ Եկեղեցական պատմութենէն) յաճախ յառաջ կը բերէ: Տարակոյս չկայ որ Գէորգ գիտմամբ ամփոփած է այս հատածին վերջը, մինչդեռ հայն

<sup>1</sup> Հոս կը յիշեցնենք որ մեր գործածածն է վենետիկոյ 1862ի տպագրութիւնը: LAS համառօտութեամբ կը նշանակենք Լակարտի Analecta Syriaca գրոց էջերը: Համեմատութեանց մէջ գրուած փակագիծք կը նշանակէ՝ որ այն մասն պակաս է միւսին մէջ կամ դէմ շատ տարբեր:

“ ազգի ազգի արհաւիրս ” ըսածը կը մեկնէ մանր մասանց իջնալով, զորոնք Գէորգ վասն Համառօտութեան, որուն շատ մտադիր եղած է<sup>1</sup>, եւ աւելորդ համարելով ի բաց թողուցած է: Մեր այս խօսքը լոկ ենթադրութիւն չէ: Գէորգ ուրիշ գրոց վկայութեանց վերջն ալ նման կերպերով կ'ամփոփէ: Եւսերեայ Եկեղեցական պատմութենէն<sup>2</sup> Բ— — Բ— — յառաջ բերածին վերջն այսպէս կը համառօտէ. “ Եւ այլք բազումք, զորս թուել որ ոչ կարէ. ” — ուր Եւսերեայ մէջ այս խօսքն է. “ Եւ զայլոց անթիւ բազմաց, որ վասն նորին իրաց ի նմին քաղաքի անդ հանդերձ երիցամբք եւ սարկաւազօք գումարեցան,

<sup>1</sup> Գէորգ ինքնին կը խոստովանի որ մտադիր եղած է իւր նամակն ըստ կարի համառօտ գրելու: Ահաւասիկ իւր խօսքը, զոր կը գտնենք այս նամակիս սկիզբն, ուր յետ ջատագովելոյ իւր նամակին յայտարարեմն, (որուն պատճառն էր յաճախութիւն գործոց “ ի ներքս եւ արտաքոյ վանաց ” եւ հիւանդութիւն ) կ'ըսէ. (LAS. 109, 10—20.) “ Այժմ այնու զի եղեւ ինձ սակաւ ինչ ոգի առնուլ յերկոցունց (այսինքն ի գործոց եւ ի հիւանդութենէ) վստահացեալ եթէ զօրացուցէ Տէր զսկարութիւն իմ առ այս ի ձեռն սրբոց աղօթից եղբայրութեան քոյ, արարից պատասխանի հարցուածոց քոց, ի մտի այսպէս եղեալ զի ըստ գլխոց ինչ զմի մի ի նոցանէ յիւրաքանչիւր տեղուջ կարգեցից, զի մի' մինչ զամենայն բանս իւրաքանչիւր ի հարցուածոց քոց ի գրել կարգիցեմ ” կարի իմն երկայնաձիգ ճառքս վնիցին եւ ոչ ուրախութիւն ինչ վնիցի ի յաճախութենէն (Ա— — րին է “ վասն յագութեանն ”): Զի եւ բանից առաւելութիւն՝ ստէ իմաստունն յատուածականս՝ Բարսեղ, այն իսկ է ի բնէ, զի սակաւուք զբազումս ճանուցէ ”: — “ Նոյն այս հինգերորդ գլխուն վերջն, ուր պատասխան կը գրէ Յելուա Հայոց բաժակի խնդրոյն նկատմամբ ըրած հարցմանն, այսպէս կը համառօտէ իւր խօսքը. “ Եթէ ուրուք կամք իցեն ջրելոյ, որպէս արժանն է, զայս խոստան կարծիս նոցա եւ զայլան՝ զոր ի վեր անդր յիշեցար, բազում բանից պետք են եւ առանձինն գրոց. այլ մեք թողեալ զայս առ ժամն ի միւս այլ գլուխ անդր հարցուածոց քոց անցցուք: ” Նման խօսքեր կը գտնուին նամակիս այլ եւ այլ կողմերէ:

<sup>2</sup> Տես LAS. 125, 29. Ի վկայութիւն կոչուած մասը կը գտնուի Եւսեր. Եկեղ. Պատմ. Գիրք Է. Գլուխ ԻԸ:

չէ ինչ դժուարին զՏամար տալ. այլ նշանաւորագոյնքն ի նոցանէ սորա էին: Եւ յսպէս կրնար վարուիլ նաեւ Ազաթանգեղեայ Տատուածին հետ ալ. թող որ ըստ ինքեան ալ աւելորդ էին այն վերջին բառերն եւ հարկ չկար զանոնք ալ օրինակել:

Միտ դնենք դարձեալ՝ որ Աւսերեայ պատմութեան յիշեալ տեղը Վէորդ կ'ընթեռնու՝ «Վրիգորիոս եւ Թէոդորոս որ եղբարք էին եւ հովիւք եկեղեցեաց Պոնտոսի»: Արդ յոյն օրինակաց եւ ոչ մին այս ընթերցուածն ունի, այլ ամէնքն ալ Γρηγόριος δέ και Ἀθηγόδορος ἀδελφοὶ τῶν κατὰ Πόντον παροικιῶν ποιμένες. (Վրիգորիոս եւ Աթեոգորոս եղբարք հովիւք եկեղեցեացն Պոնտացեաց:) Չայս այլազգ չենք կրնար մեկնել եթէ ոչ այնու թերեւս՝ որ Վէորդ ի յիշողութենէ գրած է այս վկայութիւնը, եւ կամ՝ հարեւանցի ընթերցած: Նոյնն եղած կրնայ ըլլալ նաեւ Ազաթանգեղեայ յիշեալ Տատուածին սկիզբն, ուր երկու բնագիրք — ասորին առ Վէորդայ եւ հայն — չեն միաբանիր: Այս նաեւ կարծող թէ Վէորդ ըստ կամի աւելցուցած ըլլայ սկզբան այն քանի մը տողը, որպէս զի խօսքը կապակցութիւն ունենայ<sup>1</sup>: Չիարդ եւ իցէ՝ վերոյիշեալ Տատուածորն յէականս այնպէս կը միաբանի Ազաթանգեղեայ հետ, որ չենք կրնար այն սահաւ տարբերութեանց Տամար ուրիշ բնագիր մը փնտուելու պէտք զգալ:

<sup>1</sup> Ա. յսպէս Ryssel, V, Ein Brief Georgs. Gotha. 1883. էջ 65. ծան. 1:



Առաջին համեմատութիւնը ցուցուց, որ Ադամանգեղոս ծանօթ է Գէորգայ. յաջորդ համեմատութիւնը աւելի պիտի հաստատեն զայս, բայց միանգամայն պիտի ցուցնեն թէ ինչ տեսակ գրութիւն մըն էր սոյն «Ադամանգեղաւը»:

ԱԳԱԹԱՆԳ.

(Էջ 50,6—50,10.)

«Այր մի օտարական եւ անաշխարհիկ եկիր յարեցար ի մեզ, եւ զիարդ իշխեսս պաշտել զԱստուածն զայն զոր ես ոչ պաշտեմ»:

ԳԷՈՐԳ.

(LAS. 124,5—124,8.)

«Օտարական եւ անաշխարհիկ առ մեզ եկիր, (եւ բաղում՝ նատուոյ եւ փառաց հաղորդ եղեր ի մէնջ,) արդ այժմ՝ զիարդ իշխեսս պաշտել զԱստուածն զայն զոր ես ոչ պաշտեմ»:

Այս վկայութիւնն անժխտելի եղանակաւ կը ցուցնէ այս երկու գրոց միեւնոյն աղբերէն բղխած ըլլալը: Գէորգայ քով «եւ բաղում պատուոյ եւ փառաց հաղորդ եղեր ի մէնջ» խօսքը մեծ նշանակութիւն մը չունի, եթէ նաեւ ընդունինք՝ որ Գէորգայ յաւելուած չըլլայ: «Օտարական եւ անաշխարհիկ» բառերն ուրիշ խորհրդածութեան մ'առիթ կուտան, ինչպէս քիչ մ'ետքը կը տեսնենք:

ԱԳԱԹԱՆԳ.

(Էջ 103,11 եւ 105,11.)

«Էւ եղեւ նա յայնմ վիբապի ամս երեքտասան...: Իսկ յայն վիբապ՝ ուր ընկեցին զնա, պահեալ լինէր նա կենդանի շնորհիւ Տեառն մերոյ»:

ԳԷՈՐԳ.

(LAS. 124,8—124,10.)

«Իսկ երանելին մնաց ի զեռնալից վիբապին, յոր անկաւ, ամս երեքտասան, պահեալ ի չար զեռնոց բարութեամբն Աստուծոյ»:

Տարակոյս չկայ որ այս վկայութիւնն ալ միեւնոյն աղբիւրը կը ցուցնէ. բայց նաեւ առիթ

կու տայ ուրիշ հետազօտութեան մ'ալ. այսինքն՝ այս հատածին համեմատութենէն ըստ բաւականի կ'իմացուի՝ թէ որչափ ուղղութեամբ դատած է գերմանացի գիտնականը Աուդշմիտ<sup>1</sup>, որ երկու-աւելեք<sup>2</sup> կը տեսնէ Ագաթանգելեայ մէջ, մին պատմական եւ միւսն առաւել եկեղեցական եւ վկայաբանական ուղղութեամբ գրուած: Այս տողերուս համեմատութեամբ կը հաւատարմանայ գերմանացի գիտնականին ըրած դիտողութիւնը: Ասան զի, ինչպէս հատածիս համեմատութիւնը կը ցուցնէ, Գեորգայ յիշած հատածին համապատասխանող նախադասութիւնքն առ Ագաթանգելեայ քովէ քով չեն, այլ իրարմանջատեալ: Ամբողջ էջ<sup>2</sup> մը կը բաժնէ այն երկու նախադասութիւնները: Արդ այս միջանկեալ էջը պարտական է նիւթոյն նկատմամբ, եւ ի մէջ այլոց, «սէգն Տրդատայ սիգալով գետոց թմբերն աւերելը» կը պատմէ, ուստի ի հարկէ Հայոց ընտանեկան կենաց նշխարներով լի հատած մըն է, որուն մէջ վայաբանական եւ ոչ առող մը կը գտնուի: Ո՞վ կրնայ ուրեմն մեղադրել զմեզ՝ եթէ ըսենք որ այս միջանկեալ էջը պարտական աղբերէ է, իսկ մնացեալը (— որով Ագաթանգելոս եւ Գեորգ կէտ առ կէտ կը միաբանին իրարու —) վայաբանական աղբերէ. որով կը հաստատուի նաեւ այն կարծիքը՝ թէ Ագաթանգելոս այնպէս

<sup>1</sup> Alfred Gutschmid, «Agathangelos», յուսումնաթերթին Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft. 1877. I. 1—60. Այս գրութեան մէկ մասին հայերէն թարգմանութիւնը հրատարակեց Բաղմուկեան, 1878, էջ 229, 297, եւ 1879, էջ 10, 97 եւ 237:

<sup>2</sup> Էջ 103, 13—105, 1:


որդէս ունին՝ մէջ առջէն՝ երկու աղբիւրներէ քաղուած բաղադրութիւն մըն է: Եթէ այս այսպէս է, ցուցուած կ'ըլլայ նաեւ՝ որ Գէորգայ տեսած բնագիրը վկայաբանական աղբեր նմանութիւն ունէր եւ ոչ պատմականին<sup>1</sup>:

Եթէ ներեալ է ենթադրութիւն մ'ալ ընել՝ կրնանք ըսել թէ Ագաթանգեղեայ այլեւայլ աղբիւրներէ քաղուած ըլլալուն նշան մըն է նաեւ այն՝ որ յիշեալ վկայաբանական տեղւոյն մէջ եւ այլուր «երեքտասան ամ»<sup>2</sup> կը գրուի Գրիգորի վերապին մէջ մնալուն ժամանակը, իսկ ուրիշ տեղեր «հնգետասան ամ», այսպէս Աւտայի պատմութեան եւ այն խօսակցութեան մէջ զոր Ագաթանգեղոս առ Խոսրովիդուխտ ուղղուած պատասխանւոյն մէջ իշխանաց բերանը կը գնէ, — պարբերութիւն մը, որուն վկայաբանական աղբերէն չըլլալուն թերեւս վկայեն իւր ընտանեւանութեամբք հիւսուած նախադասութիւնքն<sup>3</sup>:

<sup>1</sup> Անկարելի չէ գուցէ, որ առաւել մտադիր աչք մը Ագաթանգեղեայ գրոց մէջ Գէորգայ այս հատածին ուրիշ առաւել համեմատական խօսք մը կարենայ գտնել: Եթէ խօսքեր շատ կը գտնուին, բայց եւ ոչ մին՝ որչափ կրցանք համեմատել՝ առաւել նման է քան մեր վերջ յիշած հատածը: Այս «նման» խօսքերէն մին կը գտնենք յէջն 179, 26 — 180, 9. «Կամ թէ կեցցէ արդեւք միօրեայ մարդ յանհնարին վերապի անդ յայնմիկ, յորում թաղեալն կայի եւ ի մէջ օձիցն իրբեւ ի շեղջի . . . : Սակայն մեծաւորն ողորմութիւն Տեառն պահեաց զիս կենդանի:» Այս խօսքերը կը գնէ Ագաթանգեղոս Գրիգորի Լուսաւորչի բերանը:

<sup>2</sup> Մեր մասենադարանի հին կրկնագիր Ագաթանգեղեայ մէջ սոյն տեղն է՝ «չորեքտասան ամ», իսկ այլուր փոխանակ «հնգետասան» գրելու, կը գրէ միշտ «հինգետասան»:

<sup>3</sup> Ագաթ. էջ 166, 8 — 166, 19: «Արդ իրբեւ լուան մարդիկն՝ սկսան ծիծաղել զբանիքն զոր ասաց. սկսան խօսել ընդ նմա եւ ասեն. Եւ զոր ուրեմն մոլեգնեցար,



(Էջ 164,4—164,19.)

(LAS. 124,11—124,15.)

«Ապա յետ այսորիկ ժամ տուեալ որսոյ՝ ամենայն զօրացն ածել կուտել զպառականն, (խուճապական սփռեալ, երազազ տուեալ, թակարդ ձգեալ<sup>1</sup>), կամեցեալ որս առնել, երթեալ ի դաշտն փառական շեմակաց: Այն ինչ ի կառս էլեալ կամէր թագաւորն ըստ քաղաքն ելանել, անդէն վաղվաղակի պատուհասի Տեառնէ ի վերայ հասանէր. եւ հարեալ զթագաւորն այսոյն պղծութեան՝ ի կառացն ի վայր կործանէր. եւ անդէն մոլեգնել սկսաւ, եւ իւրովի ուտել զիւր մարմինն:»

Լաւ պէտք է մտադիր ըլլալ այս հատածիս, որ թէեւ նոյն աղբերէ առնուած է երկու գրոց մէջ ալ, բայց մատնանիշ կ'ըլլայ մեզ թէ ինչպէս կը գրէ հայ Ագաթանգեղոսն, եւ ինչպէս ասորին: Այս տողերուս համեմատութիւնն կրնայ թերեւս համոզել զանոնք՝ որոնք զԱգաթանգեղոս ասորի բնագրէ մը թարգմանութիւն կ'երազեն, թէ սոյն մատեանս այժմու հանգամանաց մէջ թարգմանութիւն չի կրնար ըլլալ:

զէւ ուրեմն հարաւ ի քեզ. զիսորդ է՝ զի այս հնգետասան ամ է զի ընկեցին զնա յանհարին խոր վերապն, եւ զուսեսն էթէ կենդանի է. արդ եւ ոսկրոտին իսկ սէր իցեն. զի նոյնօրին իբրեւ իջուցին զնա անդր՝ յօձիցն իսկ տեսնեն նոյն ժամայն աստակեալ իցէ:»

<sup>1</sup> Փակագծեալ խօսքը ճոխարանու թիւն է հայոցն, որ աղքատ ասորոյն քով պակսելու էր: Նոյն իսկ յոյն թարգմանիչը պարզած ու համառօտած է այս ճոխ նախադասութիւնը:

## ԱԳԱԹԱՆԿ.

## ԳԷՈՐԳ.

(Էջ 550,8. 553,3. 567,5. (LAS. 124,16—124,24.)  
573,23—574,10.)

«Իսկ երանելին Գրիգորիոս յաղթածս կացեալ խընդրէր յամենապարգեւէն Աստուծոյ... զհարուածոցն բժշկութիւն... (553,3.) Յանկարծակի եղեալ ձայն սաստկութեան, բոմբիւն որոտման... եւ իջեալ այր մի ի կերպարանս լուսոյ, կուեսց զանուն իմ եւ ասէ. (567,5.) Պինդ կաց, քաջ լեր, զգոյշ լեր, զի գործ ի ձեռն եկեալ հասեալ է քեզ... շինեսջիր զտաճար անուանն Աստուծոյ՝ որ ցուցաւ ի տեղւոջն... եւ զվկայարանս սրբոցն... (573,23—574,10.) Իսկ երանելին Գրիգորիոս ծունրս կրկնեալ ամենատեառն բարերարի մարդասիրին Աստուծոյ... համբարձեալ զբազուկս հանապազատաբաժս յերկինս, ամենայն ժողովելոցն եւ թագաւորին բժշկութիւն հայցէր: Ապա դարձաւ առ թագաւորն, շնորհելովն ֆրիստոսի զոտս նորա եւ զձեռսն բժշկէր:»

«Իսկ սուրբն Գրիգորիոս ծունրս կրկնէր յերկիր եւ աղաչէր զԱստուած զամենակարողն զի տացէ բժշկութիւն թագաւորին: Եւ ահա ձայն յերկնից լսելի եղեւ առ նա որ ասէ. Գրիգորիէ, զօրացիր եւ քաջ լեր, զի ընդ քեզ եմ մինչեւ ցվախճան: Շինեսցես ինձ եկեղեցիս եւ կանգնեսցես ինձ տուն ընկութեան սրբոց իմոց եւ բարձրացուցես զեղջիւր նոցա: Եւ վասն այնր զոր աղաչեցեր զիս՝ ահա լուեալ (լիցի) քեզ եւ զինդրուածն զոր խնդրեցեր յինէն ահա տուեալ իմ քեզ: Եւ իբրեւ ասացաւ այս ամենայն առ սուրբն, դարձաւ առ արքայն եւ զձեռս եւ զոտս նորա շօշափեաց եւ դարձոյց ի ընութիւն մարդկան զօրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի ֆրիստոսի:»

Այս հատածը դժուարին է միաբանել եւ ցուցնել հաւաստեալ Ագաթանգեղեայ մէջ այնպիսի տեղ մը, որուն նոյնութիւնն անտարակուսելի ըլլայ, ինչպիսի են, կարծենք, վերը դրուած վկայութեանց համապատասխանող հատածները: Ագաթանգեղեայ մէջ չենք գտներ միահամուռ Գէորգայ յիշած այս հատածին մա-

սերը, այլ մասն մասն ցրուած կը գտնենք նման  
 խօսքեր Երրորդ գրոց սկիզբը: Եթէ Գէորգ  
 հաւատարմաբար եւ առանց կցկցելու գրած է  
 այս վկայութիւնն, այն ատեն յայտնի նշան է թէ  
 նախնական Ագաթանգեղեայ եւ կամ գէթ անոր  
 աղբերաց մէջ կար նման հատած մը, զոր Ագա-  
 թանգեղեայ հաւաքողն ի բաց յապաւած է, եւ  
 կամ գուցէ այլեւայլ աղբիւրներէ քաղած եւ  
 մուծած է այս հատածին մասանց մէջ շատ  
 մ'ուրիշ խօսքեր, որով միեւնոյն հատածիննման  
 ուրիշ խօսքեր Ագաթանգեղեայ 550 — 575  
 էջերուն մէջ ցրուած եւ իրարմէ բաժնուած կը  
 գտնուին, իսկ միահամուռ եւ ոչ տեղ մը: Այս  
 ալ կրնայ դիւրաւ մեկնուիլ՝ եթէ ընդունինք թէ  
 այլեւայլ աղբիւրներէ քաղագրուած է Ագա-  
 թանգեղեայ մատեանը: Առանց որեւիցէ կուու-  
 նի չէ այս ենթադրութիւնը. վասն զի այս հա-  
 տածիկներն իրարմէ անջատող ընդարձակ մասերը  
 մեզի շատ կասկածելի կ'երեւան: Ասոնց մեծ մասը  
 կը կազմէ Գրիգորի բերանը դրուած *Խեփան* մը  
 պատմութիւնը: Այս տեսիլը չի կրնար ըստ մեզ  
*Նախնական Ագաթանգեղեայ վերաբերիլ*. գէթ  
 այնպիսի տեղ մը եւ այնպիսի եղանակաւ մու-  
 ծուած է հոս, որ ակնյանդիման անկապակցեալ կը  
 մնայ բովանդակ խօսքը: Ագաթանգեղոս կը պատ-  
 մէ (էջ 551) թէ թագաւորն եւ այլ հարուա-  
 ծեալք «սկսան թաւալել անկանել առաջի նորա  
 եւ խնդրել բժշկութիւն»: Ի՞նչ պատասխան կը  
 դրուի հոս Ղուսաւորչին բերանը: Բողորովին ան-  
 կապակցեալ խօսք մը. «Եւ ես ընդ ձեզ իբրեւ

զմի ի ձէնջ խնդրեցից զձեր բժշկութիւնն. մար-  
դասէր Աստուածութիւնն ողորմեսցի ձեզ: Բայց  
քննեցրո՞ւք շինեցե՞ք զվայրանն, զի հանգոսցո՞ւք  
զվայրան Աստուծոյ...: Իսկ նոցա խնդրեալ զի  
փութով հրամայեսցէ՝ որպէս եւ կամեսցի զինչ  
եւ կամիցի առնել: Իսկ նորա րեւել գործեալ նոցա՝  
ասէ: Եւ կը դրուի այս տեղ 16 էջ տեսիլ մը:  
Ի՞նչ կապ ունին հոս բժշկութեան խնդրոյն հետ  
վկայարան շինելու յորդորակն եւ մանաւանդ ան-  
կապակցեալ եղանակաւ մուծուած տեսիլը: Ա-  
մենայն ոք կը տեսնէ որ այսպիսի կցկտուր խօսք  
մը շատ կասկածաւոր է. իսկ տեսլեան այս սկզբ-  
նաւորութիւնը՝ «Իսկ նորա տեսիլ պատմեալ  
նոցա ասէ», յաւելուած մըն է լոկ, որպէս զի  
յետագայ յաւելեալ տեսիլքը կերպով մը կա-  
պուի նախընթաց խօսքին հետ:

Տեսիլքը կը վերջանայ այս խօսքերով՝ «Եւ  
զայս ասացեալ, շարժումն եղեալ, ընդ առաւօ-  
տանայն ծածկեցաւ տեսիլն»: Ա՞յլ չի տեսներ որ  
հոս լմնցաւ այս միջանկեալ եւ անկապակցեալ  
հատուածը: Սակայն կարծես թէ որպէս զի այս  
ամէն մասերուն յետին յաւելուած ըլլալուն  
աւելի բացայայտ նշան մ'ունենանք, Ագաթան-  
գեղեայ խմբագրողը ճշգիւ յիշեալ վերջաւոր-  
ութենէն ետքը՝ էբբէ- նոր հարած կը գրէ զար-  
մանալի անկապակցութեամբ (էջ 508, 4).  
«Արդ ամենարարն, ամենաստեղծն, ամենահաս-  
տիչն... խրատեաց զձեզ...: Արդ եւ դուք  
զասացեալսն հրամանացն փութացարուք: Ե-  
տրդ եկո՞յք շինեցո՞ւք զվայրանն, փոխել զվկայան

ի հանգիստ. եւ սորա փոխեսցեն զձեզ ի նորոգութիւն: Եւ զայս ասացեալ՝ հրամայեաց զի զնիւթ շինուածոյն վաղվաղակի պատրաստեսցեն:» Այս խօսքն անհրաժեշտ կապ ունի 16 էջ յառաջ (ուստի բովանդակ տեսիլքին հատածէն անմիջապէս յառաջ) գտնուող հատուածին հետ, զոր վերը յիշեցինք, ուր թագաւորին բժշկութիւն խնդրելուն անկապակցեալ պատասխան մը տրուած էր, յորդորելով որ վկայարան շինեն. նոյնը հոս ալ կը տեսնենք: Ուստի այս երկու հատածք իրարու շարունակութիւն են եւ իրարմէ չեն անջատուիր. եւ այսպէս բովանդակ տեսլեան հատածը կասկածելի յաւելուած մըն է: Անշուշտ Ագաթանգեղեայ հաւաքողը տեսլեան նկարագրութիւնն ուղած է տեղ մը պատուաստել, եւ առանց միտ գնելու այնպիսի տեղ մը գրած է՝ որ միեւնոյն խօսքին շարունակութիւնն ընդհատած է, որով ի հարկէ ՃԳ. հատածն բոլորովին անկապ կը մնար: Արժեք է անշուշտ որ «իսկ նորա տեսիլ պատմեալ նոցա՝ ասէ» աւելցրնելով՝ կրնայ իւր պատուաստը բարեբել. բայց չէ յաջողած:

Արնանք իբրեւ հաւանական ընդունելի՝ որ նախնական Ագաթանգեղեայ մէջ հոս՝ կար Գէորգայ յիշած վկայութեան նման խօսք մը, զոր յետոյ խմբագրողն ընդլայնած ըլլայ կամ յանձնէ եւ կամ ուրիշ աղբիւրներէ քաղելով, որով ծագած են՝ ըստ մեր կարծեաց՝ ՃԱ — ՃԶ.

<sup>1</sup> Այսինքն ՃԱ — ՃԶ հատածներուն մէջ կամ անոնց տեղը:



Հատածները: Գէորգայ մէջ կը կարգանք յերկնից ձայն գալու պատմութիւնը. նման խօսք մը, որ նախնական Ագաթանգեղեայ մէջ կար, կրօնայ առիթ առած ըլլալ ճշդիւ հոս գրուած անկապակցեալ «Խեղճ» յօրինմանն, որուն մէջ բնական է որ նախնական բնագրին շատ խօսքերը զետեղուելու էին<sup>1</sup>: Նախնականին «շինեսջիր ինձ եկեղեցիս» խօսքը կրնար հիմն ըլլալ վկայարանաց պատմութեան (էջ 568—572) գրուելուն, որ կրկնութիւն է յետոյ (ի ճօ) — անշուշտ ի բնական տեղոջ — գրուած պատմութեան: Ի վերջապէս Գէորգայ Հատածին բժշկութեան պատմութեան մէջ միայն «Խեղճ» — յետոյ բժշկութիւնը յայտնի կը գրուի. ասիկայ կրնար հիմն ըլլալ էջ 573 գրուած ոտից ու ձեռաց մասնական բժշկութեան<sup>2</sup>: Այսպէս ուրեմն ՃԱ — ՃԶ.

<sup>1</sup> Նոյն խոսք տեսնենք այլեւայլ մասերն իրարու հետ կապ չունին, բայց մասնաւոր էջ 567, որ կարծենք նախնական բնագրին կը վերաբերէր:

<sup>2</sup> Իւ որովհետեւ «Խեղճ» — յետոյ բժշկութիւնը պատմութեամբ հարկ էր որ ուրիշ Հատածներ ալ գրուէին, որոնց մէջ միւս մնացեալ մասունքը բժշկուէին, կը գտնենք իրօք Ագաթանգեղեայ մէջ բժշկութեան աստիճանաորութիւն մը եւ երէտ այլեւայլ մասնական բժշկութիւններ. (էջ 550, 574 եւ 580): Իրենք կարծենք որ նախնական բնագրին մէջ վերջինը միայն ըլլալու էր, անշուշտ նաեւ այն շատ տարբեր կերպարանօք: Այս բժշկութեանց հետ անհրաժեշտ կապուած էր թագաւորին խոզադէմ կերպարանաց ստորագրութիւնը, զոր արդեամբք ալ իւրաքանչիւր բժշկութեան սկիզբն այլեւայլ ձեւով կրկնուած կը գտնենք, որով 548—582 էջերու մէջ 6 անգամ կը կրկնուի այս ստորագրութիւնը: Գուցէ յանդուգն հետեւութիւն մ'ալ հետեւեալը համարուի: Այս այլեւայլ բժշկութեանց յետին պատուաստ ըլլալու նշան կրնայ ըլլալ սա խօսքը (էջ 550, 7). «Իսկ երանելին Գրիգորիոս յազօթս կացեալ ինդրէր յամենապարգեւէն Աստուծոյ — Դէն — Դէն» ոչ զկերպարանացն հարուածելոց բժշկութիւն, այլ զԴոյնն ունիւրբնութիւն շարքապիտանն զԴոյնն զԴոյնն», Այս պարբերու-

Հատածները՝ ընդլայնում են նախնական բնագրին, որով հոս տեղ Գէորգայ վկայութեան նման խօսք մը կը գտնենք առ Ագաթանգեղեայ՝

Թիւնը նոյն է Գէորգայ յիշած խօսքին հետ, եթէ նօտագիրք ի բաց յապաւուին, որոնք կրնային յաւելեալ ըլլալ որպէս զի այն կասկածաւոր մասնական բժշկութիւնները կապուէին նախընթաց եւ յաջորդ խօսքին հետ:

Իսեւլ որ Գէորգայ յիշած վկայութեանց համապատասխանող Ագաթանգեղեայ մասերն ոչ միշտ ճշգրտութեամբ կը նշանակէ, աստ եւս չգտնելով համապատասխանող պարբերութիւն մը, այլեւայլ մանուածապատ շրջաններու կը դիմէ: Իսեւլ կը կարծէ որ Գէորգայ այս հատածին համապատասխանող մասն էրկո՝ աղբիւրներէ միայն կարելի է հաւարել. առաջին մասն՝ Ագաթանգեղոսէն, իսկ մնացեալն ալ կը կարծէ որ լատիներէն գտնուած Լուսաւորչի կենսագրութենէ մը միայն, զոր Բուլանգեանը հրատարակեցին: (Հմտ. Acta sanctorum Septembris, Tomus VIII. cap. 111. § 36. p. 411.) Այս կենսագրութեան մէջ կը կարգանք. „Et eum complexet orationem, apprehendens manum regis signo crucis facto eum a daemonio liberavit.“ Արդ իսեւլ կը կարծէ որ Գէորգայ յիշած խօսքին վերջին մասին համապատասխանող միայն այս խօսքը կը գտնուի, ուստի թէ Գէորգայ տեսած աղբիւրն այս կենսագրութիւնն ալ գիտէ: Արիշ հետեւութիւններ ալ կը հանէ իսեւլ. այսպէս, թէ այս լատիներէն կենսագրութեան բնագիրն յունարէն ըլլայ, զոր Գէորգ տեսած է, եւ թէ թերեւս նաեւ այս յունարէն բնագիրը հայերէնէ մը թարգմանուած ըլլայ. եւ որովհետեւ (կը յաւելու իսեւլ) Գէորգ յայտնի կ'ըսէ թէ Քէ կենսագրութենէն քաղած է, կը հետեւի որ թէ Ագաթանգեղոս եւ թէ այս լատիներէնը միեւնոյն հասարակաց — հայերէն կամ յունարէն — աղբերէ ըղխած են, եւ այլ այսպիսի ենթադրութիւններ: Ասոնք մեր այս խնդրոյն համար ամենեւին նշանակութիւն չունին, վասն զի այն հիմն, որուն վրայ յեցեալ են, այսինքն թէ Գէորգայ այս հատածին նման խօսք մը միայն լատիներէն կենսագրութեան մէջ կը գտնուի, սխալ է: Լատիներէն այս յիշեալ հատածն ամենեւին չի նմանիր ասորոյն, զէթ Ագաթանգեղեայ այն խօսքը զոր մենք վերը Գէորգայ հատածին համեմատ դրինք, շատ աւելի նման է քան թէ այս լատիներէնը: Այս լատիներէն գրութեան յունարէն բնագիրը հրատարակեց Բօլ տը Լակարտ իւր Ագաթանգեղեայ յոյն թարգմանութեան հրատարակութեանն՝ իբրեւ յաւելուած՝ Die Akten Gregors von Armenien անուամբ (էջ 89 — 120) եւ այն՝ երեք ձեռագրաց համեմատութեամբ: Գունարէն կենսագրութիւնը հրատարակած է նաեւ J. — P. Migne, Patrologiae Cursus completus. Series graeca CXV: Symeonis Logothetae cognomento Metaphrastae opera omnia, Tomus 11, pp. 943 — 996.

Եթէ նաեւ այս ամենայն ընդունելու չըլլանք, գէթ այն չենք կրնար ուրանալ որ այս հատածներն իրօք յաւելուածներ կը բովանդակեն, եւ թէ հոս ալ կը գտնենք «յէ-այլ ողբէ-ընէր» հետքեր: Ասան զի միայն այնու ենթադրութեամբ՝ թէ Ագաթանգեղեայ այլեւայլ աղբիւրները միեւնոյն դէպքն ի հարկէ սակաւ ինչ այլայլութեամբ կը բովանդակէին եւ թէ հաւաքողն զանոնք ի մի ձուլած է, — այսու ենթադրութեամբ միայն կը մեկնուի այն պարագայն որ այս հատածներուն մէջ միեւնոյն դէպքերն այնչափ անգամ կը կրկնուին այլեւայլ կերպարանօք: Այսպէս եւ կամ այնպէս՝ Գէորգայ այս յիշած Ագաթանգեղեայ հատածը մեծ նշանակութիւն ունի անոր աղբերաց քննութեանը: Եթէ Գէորգ աւելի ընդարձակօրէն քաղած ըլլար իւր տեսած բնագիրը, աւելի հետաքրքրական հետազօտութեանց նիւթ կը գտնէինք: Մենք այս վեց մանր հատակոտորոց քննութեամբը միայն կրցանք ցուցնել ծանրակշիռ կէտ մը, որուն առաւել քննութիւնը կը թողունք անոնց, որոնք մասնաւորաբար կը զբաղին Ագաթանգեղեայ քննութեամբը:

Յաջորդ հատածին համեմատութիւնը կը հաստատէ զայն՝ որ հետեւցուցինք նախընթաց եւ մանաւանդ հինգերորդ հատածին համեմատութենէն: Հոս ալ այլեւայլ աղբիւրներու հետքեր կը նշմարուին. եւ որովհետեւ Գէորգայ յիշած այս վերջին հատածը բաւական երկար է, առիթ կու տայ մեզի փոքր ի շատէ տեսնելու՝ թէ

որ աղբիւրին աւելի նման էր ասորականը, պատմականին թէ վկայաբանականին: Բայց հարկաւ նաեւ հոս չենք կրնար այս քանի մը տող վկայութեանց քննութեամբն աւելի կարեւոր եւ հետաքրքրական հետեւութիւններ հանել, մանաւանդ թէ եւ ոչ զայն ամենայն որ ցայժմ ըսուեցան եւ զոր պիտի ըսենք այս հատածին նկատմամբ՝ իբրեւ անարարակաւ առաջի դնել: Ահաւասիկ այս վերջին հատածին համեմատութիւնը:

## ԱԳԱԹԱՆԳ.

(Էջ 596,16. 597,25. 603,1  
604,5 - 8)

«Իսկ թագաւորն վաղվաղակի փութով եւ երկիւղիւ մեծաւ խնդութեամբ հոգացեալ գումարեալ զգլխաւորսն նախարարացն, զկուսակալս աշխարհին... (597,25.) առաքեաց զնոսա ի կողմանս Ապպադովկացւոց ի քաղաքն Աեսարացւոց զոր ըստ հայերէն լեզուին Մաթաք կոչեն, զի տարեալ զԳրիգորն քահանայապետ կացուցեն իւրեանց աշխարհին... (603,2.) Գային հատանէին ի քաղաքն Աեսարացւոց եւ անդ տեսանէին զկաթողիկոսն սուրբ Ղեւոնդիոս... (604,5.) Իւ եղեալ ժողով բազում եպիսկոպոսաց ի քաղաքն Աեսարացւոց՝ զի ձեռնադրեսցեն զսուրբն Գրիգորիոս եւ աւանդել ի նա զպատիւ խոնարհութեան քահանայութեան Բրիտոսի:»

## ԳԷՈՐԳ.

(LAS. 124,24—125,1)

«Իսկ իբրեւ լուաւ թագաւորն՝ ուրախ եղեւ եւ փառաւորեաց զԱստուած, եւ հրամայեաց զի ժողովեսցին որք տեղեկագոյնք եւ երիցագոյնք իցեն ի նախարարս (շահապս) իւր եւ ի մեծամեծս, եւ երթիցեն ընդ երանելոյն Գրիգորի ի Ապպադովկիա ի Աեսարիա քաղաք որպէս զի առցէ երանելին վաղվաղակի զկարգ քահանայութեան եւ դարձցի յաշխարհ Հայոց: Իւ որք չորսնն եւ մտին ի Աեսարիա, յանդիման եղեն Ղեւոնդիոսի սրբոյ եպիսկոպոսի տեղւոյն: Իւ նորա լուեալ զայս արար եպիսկոպոս զԳրիգորիոս գումարեալ եւ ամեալ զիւրեւ զեպիսկոպոսունսն որ ընդ իւրով իշխանութեամբ (ասորին «ձեռամբ») էին:»

Հոս ալ կը տեսնենք թէ երկու բնագիրք այնպէս կը միաբանին՝ որ ուրիշ աղբիւր մը փրնտուել ի զուր է<sup>1</sup>. Բայց այսու տարբերութեամբ՝ որ ասորւոյն միահամուռ գրածը չենք գտներ ի միասին մէկտեղ առ հայ Ազաթանգեղեայ, այլ ընդհատեալ ուրիշ հատածներով: Այս հատածին համեմատութիւնը կը ցուցնէ նաեւ հայոյն եւ ասորւոյն տարբերութիւնը: Անտարակոյս հոս հայն աւելի պարսկէն աղբիւրը կը ներկայացնէ, իսկ ասորին վայսֆունսկէն աղբիւրէն քաղած կ'երեւայ: Չայս կը ցուցնէ նաեւ այն պարագայն՝ որ Գէորգայ հատածին համապատասխանող մասերը հայ Ազաթանգեղեայ քով գրեթէ տասն էջերու մէջ բաժնուած են իրարմէ մէջընդմէջ ընդհատելով այնպիսի պարբերութեամբք, որոնք պարսկէն նկարագիր ունին եւ որոնց մէջ կան այնպիսի մասեր (զոր օրինակ Հայոց վարչական եւ աւատական հանգամանաց նկատմամբ տեղեկութիւններ), զորոնք մատենագիր մը դիւրաւ յանձնէ կարկատել չէր կրնար: Այսպէս (էջ 596—597) կը գտնենք Հայոց նախարարական դասակարգութեան ցուցակն, որ կ'ընդհատէ վերը յիշուած հատածին մասերը: Յայտնի է որ այս նախարարաց դասակարգն այն-

<sup>1</sup> Իհսէլ այս խօսքն ալ չգտնելով Ազաթանգեղեայ մէջ՝ կը ստիպուի դարձեալ լատիներէն կենսագրութեան դիմել: (Cap. IV. § 38. p. 412.) Թողլով զայն՝ որ լատիներէն կենսագրութեան այս հատուածն աւելի նմանագոյն չէ Գէորգայ խօսքին, նոյն իսկ լատիներէն կենսագրութեան այս հատածն Ազաթանգեղեայէն քաղուած է, ինչպէս նաեւ բովանդակ այն լատիներէն դրութիւնը յունարէն Ազաթանգեղեայէն է: Լատինականին այս հատածը կը գտնուի Ազաթանգեղեայ մէջ՝ էջ 603, 16—21. շմտ. Ryssel, 66, ծ. 2:

չափ նշանաւոր եղած էր հին Հայոց մէջ, մինչեւ Ստեփանոս Սիւնեցի իւր պատմութեան մէջ (Գլ. Թ.) կ'աւանդէ՝ թէ Շապուհ արքայից արքայն այս հատածին ցուցակին համեմատ դասաւորեց Հայոց նախարարներն իւր արքունի սեղանին ժամանակ: Յաջորդ էջերուն մէջ (598 — 608) գրուած է պատճէն հրովարտակին՝ զոր գրած է Տրդատ առ Ղեւոնդիոս, որ նոյնպէս պատմական աղբիւրէն պիտի ըլլայ: Ընդհանրապէս խօսելով՝ այս հատածին համեմատութիւնը կը ցուցնէ՝ թէ այն մասերուն մէջ զոր երկու բնագիրք ալ միասին ունէին, պատմականն աւելի ճոխ եւ ընդարձակ էր քան թէ վկայաբանականը:

Ազատանգեղեայ այլեւայլ աղբիւրներէ բաղադրուած ըլլալն աւելի կը ստուգուի, եթէ քաջ կշռենք այս գրոց այլեւայլ իրարու հակասական տեղերը. եւ անժխտելի կը ցուցուի՝ երբ տեսնենք թէ բաց ի նախնական Ազատանգեղոսէն՝ ծանօթ են խմբագրին Արրիւն, Քուզանդ, Ս. Բարսղի պատարագամատոյցն եւ այլ գրութիւններ: Թողլով այժմ՝ այս վերջին երեք աղբիւրները՝ տեսնենք միայն հակասական մասերը:

Այլեւայլ գրութիւններէ խմբագրել եւ ի մի ձուլել չէ այնչափ դիւրին, մանաւանդ երբ նման հատածներ գտնուին այլեւայլ գրոց մէջ, որով դիւրաւ շատ մը կրկնութիւններ, աւելաբանութիւններ եւ նաեւ խօսքի ու պարբերութեանց ընդհատումներ կը սպրդին խմբագրեալ գրութեան մէջ: Ազատանգեղեայ գրութիւնն այսպիսիներով լի է, թէեւ մաս մ'ալ հեղինա-

կին ճոռումաբան յորդութեան արդիւնքն է: Ա-  
հաւաստիկ քանի մ'այսպիսի կէտեր:

Ագաթանգեղոս կը պատմէ թէ թագաւորը  
հրամայեց Գրիգորի պսակ եւ թաւ ոստ նուիրել  
Անահտայ. երբ Գրիգոր յանձն չառաւ, յայ-  
տնուեցաւ իւր քրիստոնեայ ըլլալն. — զոր ար-  
դէն այլուր յայտնի հաստատած էր Ագաթանգե-  
ղոս<sup>1</sup>: Սակայն արդի Ագաթանգեղեայ այս տեղն  
անմիջապէս կը դրուի քանի մը էջ վիճաբանու-  
թիւն Գրիգորի եւ Տրդատայ մէջ<sup>2</sup>, եւ անմիջապէս  
կ'աւելցուի<sup>3</sup>. «Խօսել սկսաւ թագաւորն եւ ասէ.  
Քանիցս անգամ որոտալ է թեղ իրապ եւ պարտէր, զի  
մի երկրորդեացեալ առաջի իմ զհաստուածս բա-  
նիցդ առասպելաց՝ զոր յօրեալ եւ ուսուցի ես,  
զոր ոչդ վայելէ քեզ խօսել:» Այս խօսքն յայ-  
տնապէս օտար աղբիւրէ մըն է, վասն զի Ագա-  
թանգեղեայ գրութեան հետ չի համաձայնիր, եւ  
յայտնապէս յոյն կամ ասորի վկայաբանութենէ  
մը քաղուած է: Ագաթանգեղոս կը պատմէ<sup>4</sup> թէ  
թագաւորն «չատ աղաչեաց զԳրիգոր վասն հա-  
նապազորդ առ նմա կալոյ, զի ընդ ինքեան շըր-  
ջեցուցէ.» բայց Գրիգոր «ոչ հաւանեալ չառ-  
նոյր յանձն», այլ «յանապատ տեղիս հաճեալ  
բնակութեամբ. . . մինչեւ յօր քրիստոսակոչ

<sup>1</sup> Ագաթ. տպ. Վենետ. 1862. էջ 43. «Թաքուցաներ  
զանձն, եւ զայն ինչի վեր ոչ հաներ թէ ոյր, կամ ուստի,  
կամ որպէս կամ զիւրդ. զանձն ի ծառայութեան տուեալ  
ի հնազանդութեան պաշտեր առաջի նորա», Նախնական  
Ագաթանգեղեայ մէջ այսպէս էր, ինչպէս տեսանք Գեոր-  
գայ նամակին սկիզբները: էջ 43, 14 չի յարմարիլ հօն:

<sup>2</sup> Ագաթ. էջ 51—60:

<sup>3</sup> Ագաթ. էջ 60, 14—20:

<sup>4</sup> Ագաթ. էջ 638, 16 եւն:

Հանգստեանն իւրոյ՝ — այնպէս որ իւր տեղ Հայոց արքեպիսկոպոս գրուեցաւ Արիստակէս<sup>1</sup>, եւ սակայն քիչ մ'ետքը կ'աւելցուի. «Ապա եւ ինքն իսկ մեծն Գրիգորիոս ելանէր զտեղեօքն կարգելովք, եւ զգաւառօքն աշակերտելովք յաշխարհին Հայոց՝ եւն, եւ այս երեք անգամ կը կրկնուի<sup>2</sup>:

Արդէն գրոցս այս վերջին մասերն աղբւրաց խառնակ բաղադրութիւն մըն է, որուն պատճառաւ գրեթէ իւրաքանչիւր էջին մէջ կը կրկնուի յառաջ անգամ մ'ըսուածը: Արդէն յիշեցինք վկայարանաց շինութեան եւ թագաւորին բժշկութեան պատմութեանց այլեւայլ ձեւով կրկնուիլը. նոյնը կը տեսնենք բովանդակ երրորդ գրոց մէջ: Գիւաց գնդերու երեւալն ու պատերազմիլն ու աղաղակելն եւ «ի կողմանս Հիւսիսոյ» եւ «ի Աաւկաս» փախչելն երեք անգամ կը կրկնուի<sup>3</sup>, առ նուազն տասն անգամ<sup>4</sup> թէ Գրիգոր լուսաւորեց զՀայս եւ մնոտի պաշտամանց ունայնութիւնը ցուցուց, նոյնչափ անգամ ալ թէ եկեղեցիներ շինեց եւ քահանաներ դրաւ ամէն կողմ ու ամէն գեղ<sup>5</sup>, եւ թէ ժողովուրդը կրթեց եւ մանկտին ուսոյց<sup>6</sup>, այնչափ անգամ ալ Տրդատայ բարեպաշտութիւնը կը գովուի. եւ այլ անթիւ

<sup>1</sup> Ագաթ. էջ 642—643:

<sup>2</sup> Ագաթ. էջ 643, 3—8. 645, 14—20. 656, 3:

<sup>3</sup> Ագաթ. էջ 584—586. 590—591. 608—609:

<sup>4</sup> Ագաթ. էջ 579, 10—23. 581, 18—583. 587, 4—26. 589, 14—590. 591, 21—593. 9. 593, 14—24. 618, 15—620. 623, 23. 628, 15—629. 637 եւն:

<sup>5</sup> Ագաթ. էջ 587—88. 611, 19. 620, 26. 624—625. 627, 9. եւն:

<sup>6</sup> Ագաթ. 587, 25—588. 625, 6. 626—627. 636—638 եւն. եւն:



կրկնութիւններ: Այսչափ կրկնութեանց արդիւնքն այն եղած է՝ որ բովանդակ գրութեան մէջ պատմութեան թելն գրեթէ ամէն քայլափոխին կ'ընդհատի իրարու նման խորհրդածութիւններով: Օրինակ առնունք միայն ճԸ. հատածին յաջորդող մասը: Ագաթանգեղոս կը պատմէ՝ թէ հրաման առաւ Գրիգոր Առաքելոսի թագաւորէն որ մեհեանները կործանէ, եւ սկսաւ կործանել նախ Երազամոյն Տիւր դից մեհեանը: Այս կտորը՝ գեղեցիկ եւ ընտիր *դասական* աղբիւրը կը ներկայացընէ. հոս անմիջապէս կցուած է *Վայսաբանիան* աղբիւրէն ընդարձակ մաս մը դիւաց պատերազմաց եւ մկնդաւորաց վրայ<sup>2</sup>: Այս յաւելուածով գոհ չըլլալով՝ կը յաւելու երկու ընդհանուր եւ վերացեալ իմաստով կտորներ ալ<sup>3</sup>, թէ «Առ հասարակ ամենեցուն սերմանեալ զաստուածպաշտութեանն բան» եւն. եւ թէ «Առնոյր այնուհետեւ զԱրշակունեաց որերն ի վարժս վարդապետութեան» եւն: Հագիւ այս չորս էջ միջանկեալ յաւելուածէն ետքը նորէն կը սկսի ընտիր *դասական* աղբիւրը,<sup>4</sup> որ շատ գեղեցիկ եղանակաւ կը միաբանի չորս էջ յառաջ եղած պատմութեան հետ, եթէ այն միջանկեալ *Վայսաբանիան* կտորները ջնջենք: Հոս (էջ 589—591) պատմական աղբիւրը կը շարունակուի, բայց նաեւ ասոր մէջ մուծուած կտոր կայ վկայաբանական կրկնութիւններէն<sup>5</sup>, որ

<sup>1</sup> Ագաթ. էջ 583, 19—584, 16:

<sup>2</sup> Էջ 584, 20—586:

<sup>3</sup> Էջ 587:

<sup>4</sup> Էջ 588, 22—589, 12:

<sup>5</sup> Էջ 590, 21—591, 6:

ուրիշ ձեւով կը դրուի դարձեալ յաջորդ էջերուն մէջ, ուր վերջապէս (էջ 593, 9 եւ 25) դարձեալ կը սկսի պատմականը: Հատած ՃԹԱ. ընտիր աղբիւրէն է ամբողջ, բայց մէջը հիւսուած է Հրեշտակին երեւման միջագէպն,<sup>1</sup> որ այլուր ալ կը կրկնուի,<sup>2</sup> եւ այլ յաւելուածք՝ մինչեւ որ ՃԹԳ կը սկսի ընտիր աղբիւրն էջ մը միայն շարունակուած: Եթէ այսպէս մտադիր աչօք հետազօտենք բոլոր Ագաթանգեղեայ գրութիւնը, դժուար չէ շատ տեղ յայտնապէս զանազանել երկու աղբիւրները, թէեւ տեղ տեղ շատ խառնուած ըլլալով՝ դժուարին է որոշել իրարմէ:

Անտարակոյս ընտիր աղբիւրէն են նախարարաց ցուցակները<sup>3</sup>: Բայց վասն զի բաւական տարբերութիւն կայ այս երկուքին նախարարաց դասաւորութեանը մէջ՝ անդէպ չէ թերեւս Լակարտի<sup>4</sup> կարծիքը թէ «յլեւայլ ժամանակներ գրուած են, վասն զի մատենագրի մ'այսպիսի իրաց մէջ կամաւ փոփոխութիւն ընեն՝ դիւրաւ ընդունելի չէ, մանաւանդ որ Ագաթանգեղեայ ճշգիւ այս մասը պատմական նշանակութիւն ալ ունեցաւ<sup>5</sup>: Լակարտ կը կարծէ դարձեալ՝ թէ առաջին ցուցակին դասաւորութեան կարգը «նշանանութեան ժամանակէն էր, այնու որ «մարդպետութեան» իշխանութեան գոյութիւնը կը յի-

<sup>1</sup> Էջ 596, 1—16:

<sup>2</sup> Էջ 608 եւն:

<sup>3</sup> Ագաթ. էջ 596—597 եւ 650:

<sup>4</sup> Agathangelus, Anhang III. S. 161—162.

<sup>5</sup> Հայոց նախարարաց դասաւորութեանց նկատմամբ տես Վ. Վրդանիւնց, Հիւսուածք. Հար. Գ. Վիեննա, 1877, էջ 28—39:

շուի: Բայց այս է ճշմարիտ, վասն զի չորրորդ դարու վերջերն ալ զեռ կար այս, ինչպէս գիտենք Բուզանդայ գրքէն: Պատմական աղբիւրէն է ԺԲ. հատածն, ուր գրուած է Տրդատայ հրովարտակն ճշգիւ հեթանոսական ոգւով գրուած եւ Հայոց գիցաբանութեամբ հիւսեալ<sup>1</sup>. այս հրովարտակէն ետքը կայ տասն տող միջանկեալ կրկնութիւն մը Տրդատայ քաջութեանց<sup>2</sup>, եւ անմիջապէս կը յաջորդէ ուրիշ հրովարտակ մ'որ  
 ...նոյն վրայէն յետոյ է ճշգիւ: Աուզմիտ իրաւամբք այս երկրորդն ուրիշ գրէ ելած կը համարի: Արջապէս Ագաթանգեղոյ գրոց յետոյ անշուշտ նախնականին մէջ շատ այլապէս ըլլալու էր, իսկ բովանդակ վերոյիցինն որ յայտնապէս յունական կամ ասորի Ս. Հօր մը գրոց թարգմանութիւնն է կամ բանաբաղութիւն մը, նախնականին մէջ անշուշտ կը պակսէր. եւ արդէն շատ թոյլ են այն անցումներն որով կապուած է այս երկրորդ գիրքն առաջին եւ երրորդ գրոց հետ: Բայց այս մասին վրայ քիչ մ'ետքը:

Յայս վայր բտուածներէն տեսանք իբրեւ հետնակն թէ Ագաթանգեղոս այլեւայլ գրոց բաղադրութիւն մըն է, եւ թէ Գէորգայ տեսածն Ագաթանգեղոսն է, բայց ոչ արդին, այլ թերեւս նախնականներէն մին: Այժմ կը մնայ տեսնել թէ այս ասորալեզու Ագաթանգեղոսն ինչ աղբիւր ունի պատմութեան նկատմամբ հայոցն հետ. եւ թէ յունիսն աւելի նման է թէ հայոցն:

<sup>1</sup> Ագաթ. էջ 105—110:

<sup>2</sup> Ագաթ. էջ 110, 7—17:

## 3.

Տեսանք որ ասորին եւ հայն թէ եւ նոյն գիրքը կը ներկայացընեն, բայց ոչ միեւնոյնը, այնպէս որ հայն աւելի ճոխ է քան ասորին: Թէ իրօք տարբեր էր ասորին հայ Ագաթանգեղոսէն *հոգեւորական նկատմամբ*, յայտնի կը տեսնուի Գրիգոր Առսաւորի վարուց համառօտագոյն ծրագրէն, զոր Գէորգ յիշեալ «կենսագրութենէն» քաղելով կը պատմէ<sup>1</sup>: Ասորին կը պատմէ՝ որ Գրիգոր Առսաւորի *հոգեւորական* էր ազգաւ, բայց ի տղայութեան Հայաստան եկած եւ հոն սնած: Ճշգիւ հակառակը կ'աւանդէ Ագաթանգեղոս, որ Պարթեւ եւ այն՝ Արշակունի կը դնէ զԳրիգոր, եւ ի մանկութեան Ապագովկիա փախած եւ հոն սնած: Գրիգորի վերապէն հանուիլն ըստ ասորւոյն՝ թագաւորին *հոգեւորական* հոգալովն եղած է, իսկ ըստ Ագաթանգեղեայ արքայաքեռ խոսրովի գիտոյ հոգալովն: Աւերջապէս Գէորգ զԳրիգոր Առսաւորի *հոգեւորական* ժողովոյն ներկայ կը դնէ ընդդէմ բացայայտ վկայութեան Ագաթանգեղեայ:

Զարմանալին այն է՝ որ այս տարբերութեանց ոմանք համեմատ են նոր քննադատութեան հետեւութեանցը: Զոր օրինակ ըստ ասորւոյն Գրիգոր Պարթեւ կամ Արշակունի չէ, այլ Հռոմայեցի: Ասոր հետ կը միաբանի Աուգւստինոս, որ կը համարի իբրեւ «*հոգեւորական*» թէ Գրիգորի եւ Տրդատայ մանկութեան անցից ի-

<sup>1</sup> LAS. 122, 24—123, 28.

րարու հետ ունեցած աղերսն ըստ Ագաթանգեղեայ՝ պատմական չէ: Ըստ Կուղչմիտի տեսութեան՝ Խոսրովու մահն իւր իսկ Էդիբայնի լուսնը՝ բնականապէս Պարսից սատարութեամբն եղած է. բայց Խոսրովու մահուամբը Հայոց քաղաքական դիրքն անմիջապէս չփոխուեցաւ, ուստի եւ ոչ Պարսիկք շուտով տիրեցին Հայաստանի, այլ Տրդատ յաջորդեց իւր հօրը տեղ ի տղայութեան: Հազիւ բաւական ետքը յաջողեցան Պարսիկք մերժել զՏրդատ՝ որ դեռ անչափահաս էր, եւ թէ այն ժամանակին Արքայից արքայն ոչ թէ Արտաշիր էր, այլ Շապուհ: Տրդատ յետոյ նորէն ձեռք ձգեց իւր հայրենի աթոռը: Յիշենք որ մեզմէ հնգետասան դար յառաջ Եղիշէ՝ Հայոց եպիսկոպոսաց եւ իշխանաց առ կայսր ուղղած նամակին մէջ՝ կը գրէ (էջ 123) ճշդիւ ասոր համեմատ. «Նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ է հայրստան մարդաստղիտը հօրեդիբայնի՝ ապրեալ սնաւ յերկրիդ Յունաց եւ ի ձէնջ թագաւորեալ տիրէ հայրենի աշխարհիս»: Ահաւասիկ հաստատուն կռուան մը անգրագոյն քննութեան Հայոց պատ-

1 «Ի հօրեդիբայնի իւրոց» (այսինքն Տրդատայ, ուստի յեդիբայն խոսրովու), որովք հայրստան կ'անուանուին, այսինքն Տրդատայ եւ ոչ թէ իրենց հայրը, — ուստի զխոսրով մեռցուցին: Մանրամասն քննութիւն մը թերեւս կարենայ որոշ աստիճան մը միաբանել զԱգաթանգեղոս եւ զԵղիշէ: Եղիշէի այս հատածին մտադիր եղած է Հ. Յ. Գաթրճեան, Տիեզ. Պոմ. Հտր. Բ. էջ 464. ծ. 1. որ կը յաւելու «Հօրեդիբայն անուամբ առ հասարակ ազգականս արդեօք ակնարկիցէ, եթէ այլ ինչ հիմն պատմութեան՝ այլակերպ յԱգաթանգեղեայ»:

մութեան կնճռեալ մէկ մասին, զոր կրկտել չէ տեղւոյս:

Ընդհակառակն այս տարբերութեանց ումանց մէջ անտարակոյս առաւել իրաւունք ունի Ագաթանգեղոս քան ասորին: Այսպէս է Գրիգորի Նիկիոյ ժողովոյն ներկայ գտնուելուն պատմութիւնը, որուն մէջ Ագաթանգեղոս բացայայտ ուղիղ է, իսկ ասորւոյն պատմածն անհաւանական: Նիկիոյ սիւնհոգոսին արձանագրութիւնքն ի կողմն են Ագաթանգեղեայ:

Հետաքրքրական է գիտնալ թէ ասորի Ագաթանգեղոսն հայոյն աւելի նման եւ մերձաւոր է՝ թէ յունին: Ինդրոյն լուծման գոհացուցիչ մեկնութիւն մը չի կրնար տրուիլ, վասն զի չունինք առջեւնիս առատ նիւթ համեմատութեան եւ հետազոտութեան առաջարկեալ խնդրոյն: Սակայն եւ այնպէս այս քանի մը հատածոց համեմատութիւնը կը ցուցնէ՝ որ ասորին հայոյն աւելի համեմատ է քան յունին: Ահաւասիկ քանի մը համեմատութիւնք, որ մեր ըսածը կը հաստատեն: Ասորւոյն «Ի պաշտամանէ քրիստոնէից է» խօսքը չէ այնչափ նման յունին որ կ'ըսէ<sup>1</sup>. «ὅτι χριστιανὸς ὑπάρχει (զի քրիստոնէայ գտանի) այլ աւելի նման է հայոյն՝ «քրիստոնէական պաշտաման հաղորդ է»: Շատ աւելի բացայայտ կը ցուցնէ 2<sup>ր</sup> հատածը: Ասորւոյն «օտար եւ արանց աշխարհէ» կը համապատասխանէ

<sup>1</sup> Agathangelus und die Akten Gregors von Armenien, neu herausgegeben von Paul de Lagarde. Göttingen, 1887 (1888), p. 12, 90. Յաջորդ վկայութեանց մէջ ՐԼ համաօտութեամբ կը նշանակենք այս մասեանը:

բարեբան, մինչ յոյնը<sup>1</sup> Ἀνθροπος ξένος καὶ ἀπερίστατος (մարդ օտար եւ անօգնական) կ'ըսէ: Նշանաւոր է նոյնպէս որ մինչ հայն եւ ասորին միաբան կ'ըսեն՝ «Եւ եղև նա յայնմ զիրապի ամս երեքտասան», յոյնը միեւնոյն տեղը բողբոջին պլազդ է, եւ կ'ըսէ<sup>2</sup> Καὶ ῥιφείς ἔμεινεν ἐν ἐχείνῳ τῷ χρημνῶ ἔτῃ δεκατέσσαρα (եւ արկեալ մնաց յայնմ խորխորատի ամս չորեքտասան): Այսպիսի մանր տարբերութիւնք այլուր եւս կը տեսնուին, յորս հայն եւ ասորին կը միաբանին ընդդէմ յունին: Այսպէս հայն եւ ասորին ունին՝ «Զիւրդ իշխեսս պաշտել զԱստուածն զոր ես ոչ պաշտեմ», ուր յոյնը կ'ըսէ ըստ յունարէնի ոգւոյն<sup>3</sup>, Πῶς τοῖμας σέβειν θεὸν τὸν μὴ παρ' ἐμοῦ προσκυνούμενον (զիւրդ իշխեսս պաշտել զԱստուածն ոչ երկրպագեալ յինէն)։ — Եւ այլ այսպիսի մանր օրինակներ, որոնցմէ հաստատուն հետեւութիւն մը հանել զժուարին է: Իսկ նաեւ ոչ որ կրնայ արգելուլ զմեզ կնթագրելու՝ թէ ուրիշ շատ մեծագոյն տարբերութիւնք պիտի երեւային անշուշտ, եթէ համեմատութեան առատ նիւթ ունենայինք: Սակայն պէտք ալ չկայ այս կերպով ցուցնելու՝ որ

<sup>1</sup> PL. Agath. § 20, p. 14, 58. (Հայ' 50, 6, 7.)

<sup>2</sup> PL. Agath. § 54, p. 29, 25. (Հայ' 103, 11.)

<sup>3</sup> PL. Agath. § 22, p. 14, 59. (Հայ' 50, 9, 10.) —

Հոս մտադիր կ'ընենք որ Լակարա իւր հրատարակութեան մէջ ի լուսանցս թանձր թուանշաններով նշանակած է նաեւ հայերէն բնագրին էջերը, ուստի մենք յաջորդ վկայութեանց մէջ յաճախ միայն ղենետկոյ 1862ի տպագրութեան էջերը նշանակելով կը շատանանք:

Գէորգայ տեսածը չէր սլոժմու յունարէն Ագաթանգեղոսն, որ լոկ թարգմանութիւն է հայոյն, վասն զի արդէն ցայժմ ըսուածներէն ակնյանդիման է՝ որ այն ասորին յէականս երբեմն կը տարբերէր յԱգաթանգեղեայ, եւ կամ ըսենք՝ չէր այն ասորի բնագիրն արդի Բաղարէալ Ագաթանգեղոսին, այլ նախնական Ագաթանգեղոսներէն մին:

Հատ հաւանական է որ ասորերէն լեզուաւէր այն բնագիրը՝ զոր Գէորգ ընթերցաւ եւ որմէ քաղեց: Ասոր նշան է անշուշտ այն պարագայն՝ որ Գէորգայ խօսքերն այնպէս մը կը ցուցնեն, թէ այն «կենսագրութիւնը» ծանօթ բան էր նաեւ Յեշուայ, ուստի եւ ընդհանրապէս Ասորեոց: Չենք կրնար ուրանալ թէ կարելի էր նաեւ որ յունարէն ըլլար. վասն զի Գէորգ քաջ հմուտ է յունական լեզուին եւ յոյն Հարց մատենագրութեան: Բայց եւ այս կարծիքը կարելիութեան սահմանէն անդին չ'անցնիր: Մենք միշտ աւելի հաւանական կը կարծենք՝ որ ասորերէն ըլլայ:

Ասորի Ագաթանգեղոս մ'ենթադրելն ի հարկէ կը յարուցանէ հին խնդիր մը՝ թէ մի գուցէ նաեւ հայ Ագաթանգեղեայ բնագիրն ասորի ըլլայ եւ հայերէնը լոկ թարգմանութիւն յասորեոյն<sup>1</sup>: Խնդիրն այնու առաւել ծանրակշիռ կ'ընեայ՝ որ նաեւ Վահարտ իւր հրա-

<sup>1</sup> Խնդիրը միայն ասորի բնագրին նկատմամբ կրնայ յուզուիլ, վասն զի անտարակուսելի է՝ որ մեր ունեցած յոյն օրինակը թարգմանութիւն է հայ բնագրէն, որուն վրայ քիչ մ'եւորք:



տարակած յունարէն Ագաթանգեղեայ մէջ հետ-  
 քէ կը գտնէ ասորի քնարէ մը թարգմանուած  
 ըլլալու, եւ զասոնք մանրամասն կը թուէ այն 43  
 էջ ծանօթութեանցը մէջ, զորոնք իւր Ագաթան-  
 գեղեայ հրատարակութեան վերջը կցած է<sup>1</sup>:  
 Այս խնդիրն ըստ ինքեան ուղղակի կապակցու-  
 թիւն չունի մեր խնդրոյն հետ. վասն զի տեսանք՝  
 որ Գէորգայ գործածած ասորի բնագիրը չի կրը-  
 նար նախնական բնագիրն ըլլալ ո՛չ հայոյն եւ ո՛չ  
 յունին: Սակայն աւելորդ չէ անգամ մ'ալ զբա-  
 ղիլ հոս այս խնդրով, որուն նկատմամբ արգէն  
 այնչափ կարծիք յայտնուած են:

Լակարտի գտած հետքերն երկու տեսակ  
 են. նախ այնպիսի հետքեր, որոնք չէ թէ ուղ-  
 ղակի հայ բնագրին յասորւոյն թարգմանուած  
 ըլլալը կը ցուցնեն՝ այլ յունին յասորւոյն, այ-  
 նու որ այս հետքերն միշտ յոյն լատինացի-  
 մէջ կը տեսնուին: Բայց նաեւ այս բաւական է.  
 եթէ մի անգամ ցուցուի՝ որ յոյնն իրօք ասորի  
 բնագիր մը կ'ենթադրէ, որմէ թարգմանուած է,  
 հայոյն ալ յասորւոյն թարգմանուած ըլլալը  
 կրնայ գէթ ենթադրուիլ: Երկրորդ կարգի հետ-  
 քերն, որոնք ուղղակի հայ Ագաթանգեղեայ  
 թարգմանութիւն մ'ըլլալը կը ջանան ցուցնել,

<sup>1</sup> P. Lagarde, Agathangelus. Erläuterungen zu A-  
 gathangelus, էջ 121—149, որուն կը յաջորդեն չորս յաւե-  
 րուածք: Ասորի բնագրին հետքերուն քննութիւնը կը  
 գտնուի 127—129 էջերուն մէջ: Իսկ ուղղակի հայ բնագրին  
 մէջ գտնուած հետքերը գրուած են 135—149 էջերուն՝ այս-  
 ինքն յատուկ անուանց ցուցակին մէջ, յորում Լակարտ  
 աստ անդ կը յաւելու թէ այս ինչ անուան ձեւն ու վեր-  
 ջաւորութիւնն ասորի բնագիր մը կ'ենթադրէ, եւն:

աւելի ծանրակշիռ են մեզի համար, զորոնք յաջորդ տողերուն մէջ մանր պիտի կրկաննր: Ի հարկէ այս երկու խնդրոց հետ կը կցի երրորդ մ'ալ, այն՝ թէ յոյն իրօք հայ բնագրէն թարգմանուած է թէ ոչ: Արջապէս կը քննենք համառօտութեամբ այս գրոց բանաբաղութիւններն ու պատմական արժէքը: Կարգաւ տեսնենք զասոնք:

#### 4.

Յունական թարգմանութեան մէջ գտնուած ասորի բնագրի մը հետքեր երեք են, որոնց երկուքին վրայ ընդարձակ կը խօսի Վահարտ:

1. Առաջին հետքն է հետեւեալը: Ագաթանգեղեայ մէջ (593, 10) կը կարգանք՝ թէ «Փութացեալ հասանէր ի գաւառն Գերջան»: Յունական թարգմանութեան ֆ ֆ—էլե—մէրն այս տեղ կը կարգայ μετὰ δὲ ταῦτα ἔσπευδεν ὁ ἅγιος Γρηγόριος καταλαβεῖν καὶ τὴν τῶν Ζερανιτῶν πατρίδα, — ուստի փոխանակ Δερζανιτῶν = Գերջանացոց — հոս Ζερανιτῶν = Զերանացոց կը գրուի: Վահարտ այս Ζερανιτῶνի մէջ կը գտնէ ասորւոյն հետքը, զոր սակաւ ինչ ընդարձակօրէն պարզել կը ջանանք, որպէս զի նաեւ ոչ ասորագէտ ընթերցողը լաւ ըմբռնէ խնդրոյն էութիւնը: Ինչպէս որ, կ'ըսէ Վահարտ, երբ Գիոսկորիդէսի արարական թարգմանութեան մէջ ἐλαφύβοσχον բառը ܠܝܘܒܝܥ, թարգմանուած կը գտնենք, կը հետեւցնենք անմիջապէս՝ որ այս թարգմանութիւնն ոչ թէ յոյն բնագրին վրայէն է, այլ ասորի օրինակէ մը,

վասն զի *عبدان*, ասորերէն՝ *عبدان* (= ճարակ  
 եղջերուի) բառին ընդօրինակութիւնն է, նոյնպէս  
*Ζερανετων* կը հետեւցնենք ասորի բնագիր  
 մը, երբ *ܘܢܢܐܢܐ* որ յոյն թարգմանիչը փո-  
 խանակ *زنا* (= Գերզանացիք) տեսնելու՝ իւր  
 առջեւն ունեցած ասորի բնագրին մէջ *زنا*  
 (= Զերանացւոց) տեսած է, *ܘܢܢܐܢܐ* միան-  
 գամայն՝ որ մինչ առաջին ընթերցման մէջ ը  
 (= Գ) արմատական է, երկրորդին մէջ թարգ-  
 մանիչն այդ ը (= Գ) ոչ - արմատական կարծած  
 ըլլայ, այլ լոկ իբրեւ սեռականի նախգիր<sup>2</sup>:

Բայց շի բաւեր այս ենթադրութիւնը  
 միայն: Վասն զի նախ ձրի կ'ենթադրուի որ այս  
 անուան մէջ *ܘܢܐ* գրերն՝ անշուշտ գրողին վրիպե-  
 լովն՝ փոխուած եղած ըլլան չէ, որմէ ծագած  
 ըլլայ *ܘܢܐ* - *ܘܢܐ* ընթերցուած մը, զոր յոյն  
 թարգմանիչը թարգմանած ըլլայ *Ζερανετων* այն  
 ը (= Գ) գիրը սեռականի նշան կարծելով:  
 Գարծեալ պէտք է *ܘܢܐ* տակաւին՝ որ այն  
 ենթադրեալ *ܘܢܐ* - *ܘܢܐ* ընթերցուածին սկիզբն  
 յունին *πατρις* բառին համապատասխանող ա-  
 սորի բառը, որ *status constructus* (բաղադրեալ  
 պարագայ) կոչուած ձեւն ունենալու էր ըստ ին-  
 քեան, (ըսենք՝ օրինակողին վրիպելովն) *status*  
*emphaticus* (որոշեալ պարագայ) ձեւին պէտք  
 էր աղաւաղած ըլլալ, եւ կամ թէ այն յոյն

<sup>1</sup> Ընթերցողաց դիւրութեան համար ասորերէն բա-  
 ռերն արարացի նշանագիրներով կը գնենք:

<sup>2</sup> Ասորերէն լեզուն մեր սեռական հոլովման համա-  
 պատասխանող պարագայն կը կազմէ բառի մը սկիզբը ը = Գ  
 գրոյն յաւելուածով:

[Թարգմանիչն՝ որ Ագաթանգեղեայ պէս գիրք մը  
 կրցաւ [Թարգմանել, ճշգիւ հոս « շատ քիչ ասո-  
 րերէն » հասկընար: Բաց աստի « ի գաւառն Գեը-  
 ջան » ասորերէն հարկաւ պիտի ըլլար (عاجزانيا),  
 որմէ ԲՂ գրերուն ի շք փոխուելովն իսկ չէ կարելի  
 Զէրանայոց ձեւ մը հանել: Աւստի եւ այս ամե-  
 նայն են[Թարգրութիւնք են լոկ եւ ոչ աւելի ինչ.  
 եւ այս են[Թարգրութեանց մի միայն պատճառն  
 ոչ այլ ինչ է՝ բայց միայն այն, որ կամայ [Թէ  
 ահամայ կ'ուզուի Չերαυιτῶνէն ասորի բնագիր  
 մ'երազել: Աւելորդ է այսպիսի լոկ քամածին են-  
 [Թարգրութեանց դէմ՝ խօսիլ: Կոյն իսկ ինքն Ա-  
 կարտ իմացած է իւր այս են[Թարգրութեանց ան-  
 հիմն ըլլալը: Եթէ նաեւ այս են[Թարգրութեանց  
 հիմնական ըլլալն ընդունինք, կարելի է միայն  
 զայս հետեւցընել [Թէ Բայն Երան [Թարգմա-  
 նութիւնն յասորւոյն է, վասն զի հայը « Գեր-  
 ջան » ունի այս տեղ: Եւ որովհետեւ աներկէայ է  
 [Թէ յոյնն է հայոց [Թարգմանուած է, ինչպէս  
 քիչ մ'ետքը կը տեսնենք, զուր են այս ամենայն  
 են[Թարգրութիւնք: Ի վերջոյ փոխանակ Ակարտի  
 հետ են[Թարգրութեանց ան[Թիւ կոյտ մը հաւա-  
 քելու, շատ աւելի բնական է Բ Բայն են[Թա-  
 րգրութիւն ընել, այսինքն [Թէ յունարէն օրինակը  
 հոս աղաւաղեալ ըլլալու է, մանաւանդ որ Բ  
 Բէ է յոյն ձեռագիրը:

2. Աւելի ծանրակշիռ չէ երկրորդ հետքը:  
 Ագաթանգեղեայ մէջ կը կարդանք<sup>1</sup>. « Զի քո

<sup>1</sup> Հայ էջ 88, 15. LA. § 44. p. 25, 67.

իսկ են շարժ+ եւ քեզ լիցին երկրորդ+ , զոր  
 յոյն թարգմանիչն ալ կը թարգմանէ *δοῦλοι γὰρ  
 σοῦ ὑπάρχοντες, καὶ σοῦ προσχυνηταὶ γένωνται.*  
 Արդ Վահարտ այս խօսքին մէջ ասորի բնագիր  
 մը կը նշմարէ: Ըստ Վահարտի՝ այս խօսքն «տրա-  
 մաբանօրէն ուղիղ» է. ուստի կ'ենթադրուի՝ որ  
 անշուշտ բնագիրը լաւ գրած պիտի ըլլար, այլ  
 թարգմանիչը սխալ թարգմանած. եւ որովհե-  
 տեւ հոս հայն ու յոյնը կը միաբանին, կը հե-  
 տեւի որ այն «տրամաբանօրէն ուղիղ» բնագիրն  
 ուրիշ մը — ուստի ասորալեզու — մ'ըլլալու  
 է: Բայց յորձմ' է այս «ուղիղ տրամաբանու-  
 թիւնը»: Վահարտ կը կարծէ՝ որ այս խօսքը  
 «տրամաբանօրէն» ըլլալու էր՝ «զի քո իսկ են  
 Գործ+ (եւ ոչ՝ շարժ+) եւ քեզ լիցին երկրորդ-  
 գութ», ուստի եւ յունին մէջ ոչ թէ *δοῦλοι* այլ  
*ἔργα* պէտք էր ըլլալ: Արդ այս ամենայն լաւ կը  
 մեկնուի, կ'ըսէ Վահարտ, եթէ ասորի բնագիր  
 մ'ընդունինք. վասն զի ասորերէնի մէջ *داج* թէ  
 Գործ+ = *ἔργον* եւ թէ շարժ+ = *δοῦλος* կը  
 նշանակէ (առաջինն՝ Բար, իսկ՝ վերջինը՝ Բեդ  
 կարգալով), ուստի եւ հոս այն (ենթադրեալ)  
 բնագրին մէջ *داج* էր, եւ թարգմանիչը սոյն  
 բառն սխալմամբ «քո ծառայք» թարգմանած է,  
 մինչ պէտք էր «քո գործք» թարգմանել:

Նոյնպէս կը մեկնէ Վահարտ Ագաթան-  
 գեղեայ ուրիշ մէկ խօսքն ալ<sup>1</sup>. «Հայեաց Տէր ի  
 ժառանգութիւն քո եւ ի Գործ+ ձեռաց քոց»:

<sup>1</sup> Հայ՝ էջ 154, 16. LA. § 82, p. 42, 94:

ուր յոյնը քիչ մ'այլազգ է. ἴδὲ ἐπὶ τὰς δοῦλας σου καὶ τὰ ἔργα σου. Հոս ալ ըստ Ղափարտի՝ «ի գործս» պէտք չէր ըլլալ, այլ «ի ծառայս»։ Այսպէս ուրեմն ցուցման բովանդակ զօրութիւնն յայնմ է որ «տրամաբանօրէն ուղիղ» չեն այս խօսքերը, ուստի կը ստիպուինք զիմեւ պատկապատ միջոցներու, որպէս զի մեկնենք՝ թէ բնագրի մը «տրամաբանօրէն ուղիղ» խօսքը թարգմանիչը չէ հասկըցած ։

Բայց նախ այս հիմնական յառաջադիրը՝ թէ այս խօսքերն տրամաբանօրէն ուղիղ չեն, — սխալ է։ Ղափարտ միտ չէ գրած Ագաթանգեղեայ այս հատածին ընդհանուր իմաստին. վասն զի եթէ միտ գրած ըլլար, կ'իմանար՝ որ հոս «զի .քո խկ են շառչ» խօսքը Վայն կրնայ «տրամաբանօրէն ուղիղ» ըլլալ, եւ ոչ թէ «քո են շառչ», ինչպէս Ղափարտ կը կարծէ։ Ագաթանգեղոս այս հատածին մէջ կը խօսի թէ ինչպէս մարդիկ Քրիստոսի «արեամբ փրկեալք եւ ազատեալք յիշխանութենէ խաւարի» իւր «շառչ» են։ Հոս «գործք» ամենեւին չի յարմարիր։ Ո՞վ չի գիտեր գարձեալ, — որուն Ղափարտ միտ գրած չէ, — թէ երկրորդ խօսքն Ագաթանգեղեայ չէ, այլ է հռոմէի Ստեփանոս<sup>1</sup>, ուստի եւ ամէն ենթադրութիւնք՝ թէ ուղիղ չէ այս խօսքն եւ այլ նմանք, ի զուր են։ Եթէ միտ զնէր Ղափարտ այս պարագային, նոյն խկ այս խօսքը կը ստիպէր զինքն որ զուր տեղ ասորա-

<sup>1</sup> Սղմ. 2թ. 16. խկ ասորականն է զ. 16 :

կան հետքեր չմնառէ: Ասան զի սաղմոսաց այս  
խօսքն առ յունական Ազաթանգեղեայ բառ առ  
բառ կը միարանի Աթմանանից հետ, իսկ հայ  
Ազաթանգեղոսն ալ (որ «ի գործս Յեւոց քոց»  
դնելով յունէն քիչ մը կը շեղի) Աթմանա-  
նից հայ թարգմանութեան կը համապատաս-  
խանէ, այնպէս որ եւ ոչ նշանախեց մ'անգամ  
կը տարբերի: Իսկ ասորին, որմէ քաղուած պիտի  
ըլլար այս վկայութիւնն, եթէ նախնական բնա-  
գիրն՝ որմէ թարգմանուեցան յոյնն ու հայն՝ ա-  
սորական ըլլար, բոլորովին այլազգ է: Անտոնի  
Բազմայեզուեան Ս. Գրոց հրատարակութեան  
մէջ Աեշիաթայի այս հատածն է՝ «երեւեցին  
ծառայից քոց գործք քո:» Աստի եւ այս վկայ-  
ութեանց համեմատութիւնն անգամ կը ցուցնէ  
որ զուր է եւ այս ասորական կարծեցեալ հետքը:

3. Ահարաի յիշած երրորդ եւ վերջին  
հետքը յիշուելու անգամ արժանի չէ, եւ ինքն  
իսկ իմացած է իւր ցուցման անբաւականու-  
թիւնը: Ահարա միտ դնելով՝ որ յոյն թարգ-  
մանութեան մէջ Յունաստանի անունը յա-  
ճախ յօնւն կը թարգմանուի, կը հետեւցնէ որ  
ասիկայ ասորի բնագրոյ մ'ազդեցութիւնն է,  
վասն զի Ասորիք զՅոյնս շեղէն շին կոչեր, այլ  
միշտ ܐܘܪܝܘܬܐ, այսինքն ܕܘܢܝܘܬܐ = Յոյնք: Բայց  
եթէ Ասորիք ܕܘܢܝܘܬܐ կ'անուանեն զշեղէնս, չի  
հետեւիր որ նաև Հայք այնպէս չեն անուա-  
ներ, եւ թէ յօնւն թարգմանութիւնը չի կրնար

<sup>1</sup> Biblia sacra polyglotta, edidit Brianus Wal-  
tonus. Lond. 1657. III. 232, յասորական բաժնի:

և այ բնագրին ազդեցութիւնն ըլլալ: Ա՛յլ խընդիր է՝ թէ արդեօք Հայոց զՀեւլէնս Յոյն կոչելն ասորական ազդեցութիւն է թէ ոչ: Բայց թէ յօնա թարգմանութիւնն ի հարկէ ասորի բնագիր մը չ'ենթադրեր, այն յայտնի բան մըն է: Հայոց մէջ Հեւլէն անունն սակաւածանօթ է, եւ սովորական գործածականն է Յոյն անունը: Թէ որչափ սակաւածանօթ էր Հեւլէն անունը Հայոց, յայտնի է (ի մէջ անթիւ այլոց) Եզնկայ միայն խօսքերէն, որ իբր այն թէ անլուր անուն մը գրած ըլլայ Հեւլէն կոչելովն, ըստ բնագրին, որմէ թարգմանած է Եզնիկ այս մասը, անմիջապէս կը յարէ մեկնութիւն մը՝ թէ այն Հեւլէնք « Յոյնք » են<sup>2</sup>:

Այսպէս ուրեմն անհիմն են այն հետքերը, զորոնք Լակարտ յոյն թարգմանութեան մէջ կը տեսնէ: Լակարտի այս կարծեաց «-դուլի կը հակառակի այն ալ՝ որ յոյնն իրօք հայ բնագրին վրայէն թարգմանուած է, որուն վրայ այժմ կարծենք չի կրնար կասկած ըլլալ: Բայց նախ քան զայս ընդարձակ ցուցնելը, հարկ է հետազօտել այն հետքերն ալ, զորոնք Լակարտ ուղղակի հայ բնագրին մէջ կը նշմարէ:

<sup>2</sup> Եզնիկ, Եղծ. Գ. էջ 206 «Կարգեալ հասաներ յԵզնկոտացիս եւ ի Բարեւոնացիս եւ ի Փաիւզացիս եւ ի Փիւնիկեցիս գործ գրօշագործութեան եւ խորհուրդք նորմ. եւ ապա ի Հեւլէն», «-ր էն Յոյն», առ Կեկրոպեաւ: «Հոս բնագրին մէջ է միայն «... ապա ի Հեւլէն», առ Կեկրոպաւ...» Էջ 207. «Եւ Հեւլէն» իւլէն Յոյն» յառնէ միտջէ, որում Հեղինոս անուն էր յԵլլագացւոց աշխարհին: Միայն Եզնկայ փոքրիկ մատենական մէջ Յոյն» 12 անգամ կը գործածուի, իսկ Հեւլէն 2 անգամ միայն, եւ այն՝ Հեւլէն անունը Հայոց մեկնելով:



Լակարտ հայ բնագրի մէջ կը գտնէք քանի մը նշաններ, որոնք ըստ իւր կարծեաց կը ցուցնեն որ սկզբնական բնագիր չէ հայն, այլ թարգմանութիւն: Այս նշաններն են գրեթէ ամէնն ալ Ագաթանգեղեայ մէջ գտնուած յատուկ անուանք, որոնց վերջաւորութիւնը օտար լեզուներէ առնուած կ'երեւայ: Զասոնք Լակարտ իւրրեւ ապացոյց կը բերէ ի մէջ: Օտար բնագրի նշան են ըստ Լակարտի՝ Տրդատէ, Տրդատէ, Ռդատէ, Արմէ, Արդդդդ, եւն, որոնք օտար լեզուաց վերջաւորութիւնները կը ներկայացընեն: Սակայն այսպիսի հետեւութիւն մը շատ հիմն չունի միշտ, եւ նաեւ նշան է դոյզն ծանօթութեան հայ մատենագրութեան: Մեր մատենագրութիւնը դար մ'ետքը ծնած է նոյն իսկ Հայոց քրիստոնէութեան ընդհանուր դարձէն. այս եւ ասկէ յառաջ երկար դարերու միջոցին մէջ Հայք սերտ յարաբերութեան մէջ էին իրենց դրացի ազգաց հետ. — հոս կրնան նկատուիլ միայն Յոյնք եւ Ասորիք. — եւ այս միջոցին մէջ (մատենագրութենէն յառաջ) տիրած են մեր լեզուին մէջ շատ օտար եւ օտարայեանուանք, այնու առաւել՝ որ մեր նոյն դարուն հովուաց ու հովուապետաց բաւական մասն յոյն եւ ասորի էին, ինչպէս յայտ է ի պատմութենէն: Այսպէս այն օտար եւ օտարաձեւ անուանք այնպէս ընտելական էին մեր նախնեաց, որ յաճախ կը տեսնենք Քէ-նոյն անուան երկու ձեւերն ալ — յոյնն ու ասորին — Քէ-նոյն գրոց մէջ անխտիր գործածուած: Մանաւանդ թէ յաճախ

կը հանդիպինք այսպիսի անուանց նաեւ հոն, ուր անկարելի կ'երեւար<sup>1</sup>: Յաճախ յոյն բնագրէ մ'եղած թարգմանութեան մէջ կը գտնենք խառնիխուռն ցրուած անուանց ձեւեր, եւ ընդհակառակն ասորի բնագրաց թարգմանութեան մէջ յոյն անուանց, եւ այն՝ երբեմն միեւնոյն իջին մէջ<sup>2</sup>:

<sup>1</sup> Այս առաւել կը տեսնուի այն գրոց մէջ, որոնք յասորւոյն թարգմանուած են, ինչպէս Եփրեմ, Չզօն, Լարուբնայ եւ այլք: Եթէ ուրիշ օրինակք պահուէին, բաւեր միայն Չզօնի անուանց քննութիւնն զմզ համոզելու: Ահաւասիկ այն գրոց մէջ գործածուած անուանց կրկին — ասորի եւ յոյն — ձեւերէն քանի մը հատը. Աբայար, Ահար եւ Ախար — Եղիսէ, Եղիշա — Թուրէն, Հոուրիւ — Թերեկա, Երեփկա — Ովսէ, Հոշա, եւ Խոշա — Սէմ, Շէմ — Քիրամ, Խիրամ — եւ այլ այսպիսի անթիւ պէսպիսութիւնք: Նոյն գրոց մէջ հետաքրքրական է տեսնել մէկ կողմանէ Հայոց անլուր ասորի ձեւեր — ինչպէս Ղոյղէ, Ծրաուիթ, Խոծար, Խոզգէ, Վաշթէ, Կաւուս, Ծուր, Սկեղ, Ծաար, եւն — միւս կողմանէ բնիկ յունական եւ կամ Հայոց ընտելական ձեւեր քննելն — նոյնքով — ինչպէս Նարագ (ասորին = Նադար), Արիուգ (աս. = Արի(հ)ու), Գոմոր (աս. = Եջօ), Սեգօր (ասորին = Ծաար), Արբարսաթ (ասորին է = Արփարշար), Նոյ, Արէլ Էզեկիա եւ այլ անթիւ նմաններ, թողլով նաեւ ի բաց այնպիսի անուանք, որոնք թերեւս մեկնուին իբր թէ թարգմանուին ուղած է ազգայնացընել ասորի բնագրին ինչ ինչ անունները, այսպիսի են օրինակի համար Արշաիթ (Ասորին է ܐܪܫܐܝܬ), Արաաշէս (ասորին է ܐܪܫܐܝܬܐ), Հապուհ, Գարեհ, Տիգբոն, եւն: Միթէ կարելի է ասոնց համար Չզօն յունարէնէ թարգմանուած համարիլ, կամ մանաւանդ ինքնագրութիւն մը կարծել, վասն զի Տիգբոն, Հապուհ, Գարեհ . . . ոչ յունէն եւ ոչ յասորւոյն կրնան թարգմանուիլ: Եփրեմայ մատենագրութիւնքն ալ քննութեան հետաքրքրական նիւթ կը մատուցանեն այս նկատմամբ:

<sup>2</sup> Քանի մ'օրինակ տեսանք արդէն նախընթաց ծանօթութեանց մէջ: Հոս կը յայտնուին քանի մը հաս ալ: Թէ Ոսկերեքանի Եսայեսայ մեկնութիւնը յունականէն թարգմանուած է, չի կրնար երկբայութեան տակ ձգուիլ, եւ սակայն այն թարգմանութեան մէջ կը կարգանք ի մէջ այլոց Ամուրհացիք, Բիշան, Եղիշեա, Իղաիշ, Ծուրացիք, Հաուղ, Շիլովհա, Շմաւոն եւն: Իւ երբ Ոսկերեքանի Պաղոսի թղթոց մեկնութեանց մէջ կը կարգանք Հաուղ, Շիղա, Ահոզ, Եղիշայ եւ այլ նմաններ, չենք կրնար հե-

Եթէ գոհ չենք այս ընդհանուր դիտողութեամբք, միտ զնենք որ նման օտարաձեւ անուանք կը գտնուին յաճախ մեր մատենագրութեան այնպիսի գրոց մէջ ալ, որոնք թարգմանութիւն չեն, եւ որոնց իրօք հայ հեղինակաց գործքն ըլլալն անտարակուսելի է: Նաեւ ազգային անուանք կը գտնենք օտարաձայն վերջաւորութեամբ. սակայն ասիկայ նշան չէ թարգմանութեան: Երբ Եղիշէի մէջ բովանդակ Հայոց եպիսկոպոսաց եւ իշխանաց առ կայսր ուղղած նամակին մէջ կը կարդանք. (էջ 123) «Նախնին մեր Տրգապի» եւ նմանները, կրնանք հետեւցընել թէ Եղիշէ կամ նոյն իսկ Հայոց այս նամակը թարգմանութիւն ըլլայ յարմար: Նոյն է Ագաթանգեղեայ մէջ ալ: Եղիշէ (որուն անունն ասորաձեւ է, բայց այնու նաեւ միակ հայկական եղածն է,) կ'ըսէ (էջ 44). «Մի հաւատայք առաջնորդացն ձերոց, զոր նախնիքն անուանէք», զոր կը գտնենք նաեւ յէջն 280 եւ 318: Էջ 344. «Յռափսոնեան տանէն Բարիկ եւ Յոնն», Ո՞վ չի տեսներ որ հոս Յոննան է *يونس* (= Յովհաննէս): Ահաւասիկ նշան մ'ալ թէ որ-

տեւցընել թէ ասորի բնագրէն է թարգմանութիւնն: Եփրեմ, որ խիտ առ խիտ լի է անսովոր եւ անընդեւ ասորաձեւ անուամբք — զոր օրինակ Ովյաշ, Յովաշ, Ամոծիա, Ոխողիա, Յահօվրամ, Ուռիա(Եղեսիա), Նծրին(Մըծրին), Ղաւթ, Շմուէլ, Շըմշըն(Սամփսոն), Աշեր, Ախիա, Ծարփաթ, եւն — կարծես մոռցած իւր ասորականութիւնը միեւնոյն իջին մէջ երբեմն այս ասորաձեւ անուանց ձգի. հակառակ մեզի ընդելական անունները կը զնէ: Աւելորդ էր նաեւ այսչափ մանրամասն իջնալը, վասն զի ով որ փոքր ի շատէ հմուտ է հայ մատենագրութեան, ինքնին իմացած է մեր թարգմանչաց այս դիպաց մէջ բռնած ընթացքը:

չափ տիրած էին շայոց մէջ օտար նաեւ սովորական անուանք, որուն նշան է բաց յայոց Գործէն խորխուռնեաց իշխանին անունը (Եղիշէ, 71, եւ 160,) որ է ասորերէն ܩܘܪܝܫܐ բառը, որ կը նշանակէ «Սուրբ»: Խորենացւոյ մէջ կը կարգանք (Գ, 1Գ, էջ 446) «Գրիգորիոս Նշննէ», սակայն Խորենացի թարգմանութիւն չէ: Կորիւն Մաշթոցի աշակերտաց միոյն անունը կը յիշէ ղէ-ննէ (էջ 16, տպ. Վենետ. 1833) եւ ղէ-ննէ (էջ 21): Աւելորդ է այլեւս այսպիսի վկայութեանց դիմել:

Այսչափ ընդհանրապէս խօսելէն ետքը՝ տեսնենք ի մասնաւորի այս անուանց մէկ քանին զոր լակարտ իբրեւ նեցուկ կ'առնու իւր ենթադրութեան: Լակարտ երբ Վրննէ անուան համար կ'ըսէ թէ «*ης վերջաւորութիւնը յայտնի կը ցուցնէ որ հայ Ազաթանգեղոսն սկզբնագիր չէ*», շատ կը վրեպի: Վրննէ եւ այլ այսպիսի անուանց շատերն ինչ լեզուի եւս պատկանին նախնաբար, մի միայն ձեւն են հայ լեզուին մէջ, զոր ի հարկէ պիտի գործածէին թէ հեղինակը եւ թէ թարգմանք: Նշննէս Ռշննէս թէեւ ըլլայ «այլայլախառն ձեւ մը», ինչպէս կ'անուանէ Լակարտ<sup>1</sup>, սակայն յաճախ գործածական է նախնեաց քով քան զհայաձեւն Արիստակէս<sup>2</sup>: Վրի-

<sup>1</sup> PL. Agath. 136, 19. Ռշննէս = *P' staxης*, eine hybride Form. Armenier und Griechen haben kein Wort mit R an, *Aθ* erklärt sich wie *زج* = *زج*.

<sup>2</sup> Ազաթանգեղոս վեց անգամ Ռշննէս յիշելով, եւ ոչ անգամ մը Արիստակէս կ'անուանէ: Նշննէս Խորենացի ութ անգամ Ռշննէս կը յիշէ եւ հազիւ երկու-

պական է նոյնպէս Կողմերու վերջնական անունէն հանած  
ցուցումը: Լակարտ կ'ուզէ հետեւցընել որ «հայ  
Ազաթանգեղոսը բնագիր չէ, վասն զի այս գաւ-  
առին ազգային Գործարար անունը չի գործածուիր  
երբեք Ազաթանգեղեայ մէջ. (515, 7 չհաշու-  
ելով.) այլ միշտ յունական անունը (Կապպա-  
դովկիա) կը դրուի:» Այս ի հիմանց սխալ է. եւ  
Լակարտ կ'իմանար իւր վրիպակն եթէ մտադիր  
ըլլար հոս հայ բնագրին: Յոյն թարգմանութեան  
մէջ արդեամբ չորս անգամ Καππαδοχία կը  
դրուի եւ անգամ մը միայն Καππαδόχων (Կապ-  
պադովկացոց): Բայց հայոյն մէջ Կողմերու վերջնական  
միայն «նշան» կը գտնենք (515, 17), որմէ  
քիչ մը յառաջ արդէն Գործարար ալ գրուած է  
(515, 7), զոր Լակարտ ըստ հիշուի է-  
րանց Կողմերու չի հաշուեր: Ընդհակառակն Կողմերու  
վերջնական բերք անգամ<sup>1</sup> կը յիշուի, որովհետեւ  
Գործարար անսովոր է հայ ականջաց: Լակարտ  
առանց միտ դնելու հայ բնագրին՝ այս սխալ  
հետեւութեան հասած է: — Ազաթանգեղոս  
Կորդուաց գաւառին անունը քիչ մ'այլայլու-  
թեամբ Կորդովիտ<sup>2</sup> կ'անուանէ: Լակարտ հոս կը  
պնդէ թէ «Կորդովտաց» ձեւն յունական անուան

անգամ Արեւմտեան: Բուզանդ երկու անգամ կը յիշէ Արեւ-  
մտեան ձեւը: Կը թողում յիշել զայլ:

<sup>1</sup> Յունական թարգմանութեան մէջ Կողմերու վերջնական  
նշան չըջուած է Կողմերու վերջնական անուամբ: Այսպէս հայոյն  
(42, 22) «ուսանէր ի կեսարիայ Կապպադովկացոց քաղա-  
քին» կը թարգմանուի ἐπαιδευέτο ἐν πόλει Καισαρείας τῆς  
Καππαδοχίας. Նմանապէս միւս տեղերն ալ:

<sup>2</sup> Ազաթ. էջ 597, 4 «իշխանն Կորդովտաց աշխար-  
հին», ուր յոյնն է ὁ ἔκτος ἀρχὼν ὁ τῆς Κορδοβιτών

վրայէն ձեւուած է: Ներուի ըսել՝ որ հակա-  
ռակն է հաւանականը: « Կորդովտաց » ձեւին ուղ-  
ղականն է հարկաւ Կորդովիա, որ հայկական է:  
Յայտնի է որ հայկական աշխարհագրական ա-  
նուանց շատերուն վերջը « ովիա » (անշուշտ =  
հովիտ) վերջաւորութիւնը կը տեսնուի<sup>1</sup>: Աւեր-  
ջապէս պէտք է պատասխանել նաեւ Լակարտի  
ուրիշ մէկ առաջարկութեան: Ազաթանգեղեայ  
մէջ կը յիշուի Աժր-դի-դի-անունը<sup>2</sup>: Արդ Աժր-  
դի-դի-դի չէ ուղղական յունարէնի մէջ, այլ «ե-  
-մի-մի»<sup>3</sup> է, ուրեմն կը հետեւի որ « հայ կարծե-  
ցեալ բնագիրն յունական հոլովմանց վերջաւո-

չօրօս. Բաց աստի միայն տեղ մը կը յիշուի նոյն գաւա-  
ռին անունը Կորդիք ձեւով (628, 9). « Առ Կորդուք մինչեւ  
յամուր երկիրն Մարաց », Հոս ալ — միտ դնէ Լակարտ  
— յոյն թարգմանը նմանապէս կը թարգմանէ իջոս Նոօ-  
սիօրաօն (Նոր-Շիրական) զիս շաւ Կործոնտօն շաւ տիս  
օչսօրատիս շօրօս տօն Միժօն.

<sup>1</sup> Այսպէս են զոր օրինակ Աղիովիա, Կորայովիա,  
Արժիշովիա, եւն: Կորդով-դի-դի գաւառը շատ մ'այլեւայլ  
յորջօրջուցներ ունի. Կորդի-դի (Բուզանդ, էջ 159, 209. Եղի-  
չէ, էջ 163), Կորդի-դի (Խոր. էջ 272), Կորդով-դի-դի (Խոր.  
173), Կորդով-դի (Բուզանդ, էջ 21, 22, 42, 123 եւն. Խոր.  
72, 237, 315. Եղիչէ, 18, 19, 87):

<sup>2</sup> Ազաթ. 607, 5—8: Այս կտորին վրայ ետքէն ալ  
առիթ կ'ունենանք խօսելու, եւ տեսնելու հայ բնագրին  
նշանները յունին մէջ:

<sup>3</sup> Յունարէնի մէջ սյս անուան ուղղականն է Ἀφρο-  
δίτη, զոր Ափրոդիտ թարգմանուած կը գտնենք տեղ տեղ,  
ինչպէս Ոսկեր. ի մեկնութեան Պաւղ. Հատ. Ա. 858, յորմէ  
կը կազմուի « փրոդիտական », վերագիրը: Անծանօթ չէ նա-  
եւ « փրոդիտեան », ձեւը, զոր ինչ ինչ տեղեր կը գտնենք,  
զոր օրինակ Ոսկերեւանի մեկնութեան Պաւղոսի թղթոց.  
Հատ. Բ. 1862, էջ 492 եւ Ոսկերեւանի մեկնութեան Մատ-  
թէի, Հատ. Գ. 1826 էջ 70: Բայց խորհանգրոյն (Բ. Ժբ,  
էջ 183) « առեալ պատկերս զՄիտսի . . . զԱժր-դի-դի-դի », եւ  
(Գ. ԻԷ, էջ 445) « Արտեմեայ եւ Աժր-դի-դի-դի », ըսելովն ի  
հարկէ չի հետեւի Աժր-դի-դի ձեւը: Արդեօք աժր-դի-դի-  
մէջ կապ մ'ունի Ափրոդիտէս ձեւին հետ: Կարծենք թէ ոչ:

րութիւնը պահած է, որ ապաքէն չէ նշան բնագիրը ըլլալուն:»

Ճշգիւ ասոր հակառակը կը ցուցուի՝ եթէ համեմատենք նոյն իսկ հոս տեղ յոյնը հայոյն հետ: Հայոյն «Երկրորդ մեհեանն անուանեալ Աստղիան գից, սենեակ վահագնի կարգացեալ ըստ յունականին, որ է ինքն Ա՛ր՛ր-՛րէ՛րէ՛»<sup>1</sup> խօսքը կը գտնենք թարգմանուած, ó τρίτος βωμός Ἀστέρος θεῶν καὶ τῶν Ἡρακλέους ἐλέγετο κληθεῖς, κατὰ δὲ τοὺς Ἑλληνας Ἀφροδίτης, ուր յունին մէջ Ἀφροδίτης կարծենք գտնեն հայուն Ա՛ր՛ր-՛րէ՛րէ՛» ըլլալուն պատճառաւ այս վերջաւորութիւն առած է: Լակարտ մոռցած է հոս բաց աստի, որ ցանցառ չեն նաեւ գէպքեր, որ յունական անուանց սեռականը ուղղական է մեր մէջ: Ո՞վ չի գիտեր որ յունարէնի մէջ Ζεός է ուղղականն, իսկ սեռականն է Διός: Սակայն հայերէնի մէջ հակառակն է, այսինքն Գիօս է ուղղական, թէեւ Չէս եւս տեղ տեղ կը գտնենք գործածուած: Հայք Ζεός անունը Արամազդ եւ Որմիզդ ալ կը թարգմանէին՝:

<sup>1</sup> Ահաւասիկ քանի մ'օրինակ: Ոսկեր. Պաւղ. Ա. էջ 302 «մեռաւ Գիօս», եւ «սպեն թէ մեռաւ Գիօս»: «Եթէ այսպէս իցէ որպէս առարեալ ասէ, ապա անմահ Չէս, շրէ-Գիօսն ինչէն է-հայերէն Արամազդ»: էջ 301. «Ի կրեւասցւոց քաղաքին շիրիմ ինչ էր Գիօս, այնինչ է Արամազդ», «շիրիմ շնեցին անսուրբ կրեւացիքն Գիօս, զոր Հայն Արամազդ ստէն»: Գրծ. Առաք. ԺԳ. 11 «Կուէին զբաւնարաս Գիօս, եւ զՊաւղոս շերմէս», «Պատկեր Գիօսն գիտէ եւ խորենացի (էջ 183 եւ 189), թող զայլս: — Ափրօ-գիտէս կրնայ այնպէս մեկնուիլ, ինչպէս Գիօսնոսս, զոր կը կարգանք Ոսկերեւանի Եսայեայ մեկնութեան մէջ (Վենետ. 1880, էջ 274). «ՉԳիօսնոսս, սսեն, թէ այսպէս շահապետ է», «ՉՀէրթէսայ» նորանշան Տօլոմէ (291) շերմէսէս կամ նման մը կ'ենթադրէ, եւ վերջապէս պէտք ենք մտա-

Վերջապէս կը յիշենք ամբողջութեան համար Լակարտի քանի մ'այլ անուանց նկատմամբ բրած գիտողութիւնները:

Ազամթանգեղեայ մէջ կան քանի մ'անուանք, որոնց սկիզբն ու ծագումն դժուարին է այժմ գտնել. ասոնք, կը կարծէ Լակարտ, «ասորի բնագրէ մը սխալ ընթերցուած ըլլալու ձեւն ունին». այսպիսի են՝ Աշէի-ն- (630, 6. 650, 11.), որ البينوس ձեւէն սխալ կարդացուած պիտի ըլլայ ըստ Լակարտի. Ար-ի- (630, 15.) «որ յայտնապէս յոյն ձեւով կ'երևայ». Բարշի- (589, 3.) بر شمين անունէ մը («որ սակայն անհասկանալի է ինձ» կը յաւելու Լակարտ). Ագ-բէ- (630, 14.) اجفيس (ج = ڤ) ձեւէ, եւ վերջապէս Աիի-ն- (42, 19. 45, 18. 46, 20 եւ 24. 47, 6.) նոյնպէս ليقينيس = ليقينيس անունէ մը սխալ ընթերցուած կ'երևայ: — Սակայն այս մեկնութիւնը չի բաւեր: Այս անուանց շատերը նաեւ այլուր կը գտնենք ճշգրտայս ձեւերով. զոր օրինակ Բուզանդ հինգ անգամ (էջ 9, 45. 226. 263. 264.) կը յիշէ Աշէի-ն- ձեւը. անհնար է ենթագրելն իսկ թէ այս երկու մատենագիրք ալ սխալ ընթերցած են միեւնոյն բնագիրը: Բաց աստի միեւնոյն ա-

դիւր ըլլալ որ «զիկան ի գլ-ն-ն-ը կերպարանաց» առ Սկիւր. Պաւլ. (Ա. 302) կը գտնենք, որուն յունարէնն ուղղական է ըլի Πάν. Ուրիշ նման դէպքերը գտնից կ'առնեմ: Յոյն բնագրի նշան են (Ոսկ. Եսայ. էջ 273) «Այրերա՛ օդոց թիկունս իցէ» եւ «ԴԱԻԻ-ն-՝ թէ ձիթենեաց (չահապեա իցէ)»: Աւետարանի թարգմութեան հետեւեալ խոսքը (Մարկ. Ե. 20.) «սկսաւ քարոզել ի Գիլ-ղալի» ἤρξατο κηρῶσαι ἐν τῇ Δεκαπόλῃ. եւ այլն:



նունը շատ անգամ կրկնուած է Ագաթանգեղեայ մէջ, եւ անկարելի է կարծել որ միշտ անմտադրութեամբ ընթերցման մէջ սխալած ըլլայ: Գարձեալ Բարձրագոյն եւ այլք ոմանք՝ տարակուսական ձեւ են. յոյնը ունի Βαρσαμήνης, նոյնը կը գտնենք առ Խորենացւոյ (Բ. գլ. ԺԳ.) Բարձրագոյն ձեւով: Վերջապէս Արքեպիսկոպոսական է, եւ անշուշտ պիտի ըլլայ գոնեայ Արքեպիսկոպոս, ինչպէս յոյն թարգմանութիւնը Αικεναυός ունի: Իսկ Արքեպիսկոպոսական ալ կրնայ ըլլալ, սակայն իւր այս ձեւովը մեզի համար դեռ եւս անձանօթ անուն մը կը մնայ: Աւրիշ անուանց մէջ ալ այսպիսի ինքնուրոյն ձեւեր կը տեսնուին, որոնք օտար բնագրէ սխալ թարգմանութիւն չեն միշտ. զոր օրինակ շայոց սովորական « Կոստանդինոս » ձեւը, որուն բնիկն է Constantinus, Յուստինէ = Justina, եւ այլք՝ որոնք ճշգիւ այնպէս կազմուած են՝ ինչպէս Աղբիւնոս, Արքեպիսկոպոս, եւն: Ի վերջոյ դիտենք՝ որ մեր նպատակն էր ցուցնել թէ հայ եւ յոյն բնագրաց մէջ Ահարարի գտած Բարձրագոյն հետքերը տակաւին հաստատուն կռուան մը չունին: Բայց չենք ուզեր ըսել թէ անհնար է Ագաթանգեղեայ մէջ աստ կամ անդ ասորական ազգեցութիւն նշմարել: Յայտնի է որ հայ խմբագրողը կրնար առջեւն ունենալ ասորի աղբիւրներ, եւ շատ մասեր Բարձրագոյն քաղել, որով եւ այսպիսի ազգեցութեան մ'ենթարկուիլ:

## 5.

Թէ յոյն թարգմանութիւնը հայ բնագրէն է, ամենեւին տարակոյս չկայ: Ահարտ կը ջանայ ցուցնել զայս նաեւ այնու՝ որ յոյն թարգմանութեան մէջ Ս. գրոց վկայութիւնք ճշգիւրստ հայ բնագրին են եւ ոչ ըստ Եօթանասնից յունական թարգմանութեան: Բայց այսպիսի ցուցմանց պէտք չկայ: Ով որ քիչ մը մտադրութեամբ կը համեմատէ այս երկու բնագիրները, յայտնի կը տեսնէ որ յունին բնագիրը հայն է: Մեր նպատակը չէ հոս երկարագոյնս զբաղելու այս խնդրովս. մենք համառօտիւք միայն նշանակենք քանի մը կէտեր, որոնք հայ բնագիր մ'ըլլալն աներկբայելի կ'ընեն:

Մեծ մտադրութիւն պէտք չէ տեսնելու համար որ յունին մէջ կան այնպիսի տեղեր, ուր թարգմանիչը հասարակ հայերէն քաղցր յատուկ անուն կարծելով՝ գիր առ գիր փոխադրած է ի թարգմանութեան: Ագաթանգեղեայ մէջ կը կարգանք<sup>1</sup>. «Սկսանէր Խոսրով թագաւորն շայոց գումարել զզօրս Աղուանից եւ Վրաց եւ Բանու զբրոնս Ալանաց եւ ղերոյ պահելն»: Հոս «ղերոյ» գերանունն անդէպ է, եւ ասոր տեղ յատուկ անուն մը պիտի գրուի անշուշտ: Ով ալ չի տեսներ որ «զճորայ» ըլլալու է փոխանակ «ղերոյ» գերանունն: Սակայն զարմանալին այն է՝ որ այս սխալ ընթերցուածն այնպէս հին է, որ յոյն թարգմանիչն ալ «ղերոյ» կարգացած է իւր

<sup>1</sup> Ագաթ. էջ 30, 19. PL. § 10, p. 8, 62.

Ժամանակին, եւ այս դէպքով յարող սնունդ կար-  
ծած է, նաեւ այս բառին սկիզբն եղող «ե-»  
շարհագրի ալ արմատական համարելով [Ժարգ-  
մանած է *ἀνοίξαι δὲ καὶ τὰς κλεισούρας τῶν Ἀλα-  
νῶν καὶ τοῦ λεγομένου Καιζουάρου πύργου.*  
(Երաց եւ զդրուես Ալանաց եւ զամրոցին որ Էն-  
կե-ըն-ըն-<sup>1</sup>): Եթէ իրական է այս դիտողու-  
թիւնը<sup>2</sup>, սոյն բառը միայն բաւ է հաստատելու  
[Ժէ իրօք յոյնը հայէն բղխած է:

Կը գրէ այլուր Ագաթանգեղոս<sup>3</sup>. «Ապա  
երթեալ հասանէր յամուր տեղին յանուանեալ  
յԱնի:» Հոս Ագաթանգեղոս իւր մասնկաց յոր-  
դութեամբը սայթաքեցուցած է զյոյն [Ժարգ-  
մանիչը, որ վերջին յնախդիրն արմատական կար-  
ծելով [Ժարգմանած է պարզմտութեամբ. *ἐξελθὼν  
ἐπορεύθη εἰς ὄχυρότατον τόπον, καλούμενον Ιανί.  
εἰς τὴν εἰς τὴν ἑσπερίαν ἑσπερίαν ἢ ἑσπερίαν*<sup>4</sup>:

Ագաթանգեղեայ 606—607 էջերը շատ  
նեղութիւն տուած են [Ժարգմանչին, այնու-  
գլխաւորաբար՝ որ այս էջերու ւ մէջ խիտ առ խիտ  
յիշուած Հայոց դիցանուանց համապատասխանող

<sup>1</sup> Կարեւի է որ Καιζουάρου բաղադրութիւնը լոկ  
գրչաց արդիւնք ըլլայ, եւ [Ժերեւս նախնական [Ժարգմա-  
նութեան մէջ ըլլար այս խօսքն այսպէս. «... καὶ τοῦ λεγομέ-  
νου...», ... καὶ Ζουάρου πύργου, *հնչակէս Ապարու Կառաջ-*  
*արկէ ընթեանուր:* Բայց այսու խնդիրը չի փոխուիր Ասան-  
գէ Զουάρου միջոց «*դիւրս*» դերանուան նմանութիւն մ'ունի:

<sup>2</sup> Կուսմիշմիս (էջ 8) կը կարծէ՝ որ Զուարոս ըլլայ  
անյաջող տառադարձութիւն մը Ճորայ անուան, ուստի  
եւ ոչ [Ժէ «*դիւրս*», սխալ ընթերցման արդեցութիւն:

<sup>3</sup> Ագաթ. էջ 590, 6. PL. § 132, p. 67, 81.

<sup>4</sup> Դժուարին է ընդունիլ [Ժէ հոս Իանի ըլլայ երբ  
= Հանէ անուան, եւ [Ժէ նախնաբար այսպէս եղած ըլ-  
լար հոս Ագաթանգեղեայ մէջ:

յունական անուններ պէտք էր գտնել, որ դիւրին չէր միշտ: Հետաքրքրական են մանաւանդ հետեւեալները: Թարգմանիչն ընթեռնելով այսխօսքը, «Երրորդ մեհեանն անուանեալ Աստուծոյ զհայրս, սենեակ Աստուծոյ կարգացեալ ըստ յունականին, որ է ինքն Ափրոզիտէս» — միտ չէ դրած որ Աստուծոյ ի մեզ կը թարգմանուի՝ Յունաց Ափրոզիտէ(ս), ինչպէս արդէն Ագաթանգեղոս նշանակած է, այլ ուզած է Աստուծոյ անունն ալ թարգմանել, եւ մտադիր ըլլալով որ Աստուծոյ աստղ բառին նուազականն է, թարգմանած է զայն Ἀστὴρ = աստղ բառով՝ այսպէս. ὁ τρίτος βωμὸς ἀστέρος θεῶν. (Խորանն երրորդ աստղ աստղոս): Հոս բաց ի ἀστέροςէն հայ բնագրին ազդեցութեամբն է որ θεῶν (աստուածոց) դրուած է, վասն զի հայերէնի մէջ «դից» անեզական էր, որ յայտնագոյն եւս կը տեսնուի՝ երբ յաջորդ «սենեակ Աստուծոյ»

<sup>1</sup> Ահաւաստիկ քանի մ'օրինակ: Գրուածն ընծայութեան (Վեհեա. 1832). Գ. էջ 50, 9 կը կարդանք. «Իսկ կէսքն բնաւ, որ իգամնքն էին, կնոջ մարդոյ սրբուծե պատկեր կուսս ի բարձունս կացուցեալ Աստուծոյ անուն եղեալ՝ յերեւելոյ անտի ախաին երկիր պապանէին», Ոսկերեան, Մեկն. Եսայեայ (Վեհեա. 1880, էջ 291—292). «Յորժամ եւ զՀերմեսայ եւս զանուանուոյն ի դիս լսիցես՝ եթէ գող էր, եւ Աստղիկ՝ պոռնիկ: Ոսկեր. Մեկն. Մատթէի. (Հա. Գ. էջ 70.) «ՁԱփրոզիտեան ցանկութեան ասեմ, այսինքն զԱստղական»: Միայն մտադրութեան արժանի է որ սրբիչ տեղ մ'այնպէս կը յիշուի իբր թէ Ափրոզիտ եւ Աստղիկ այլեւայլ դիք ըլլան, վասն զի Ոսկեր. Մեկն. Պաւլ. Հա. Ա. (Վեհեա. 1862, էջ 858, 16) կը գտնենք. «ՁԱփրոզիտ պաշտեմ, առէ, է- զԱստղիկ կամ զԱրէս»: Բայց եւ հոս նոյն դիքն է որ Ափրոզիտ կը կոչուի եւ Աստղիկ. այս յայտնի կ'ըլլայ եթէ միտ դնենք յոյն բնագրին՝ որ ἀλλὰ τὴν Ἀφροδίτην, ἀλλὰ τὸν Ἀστρον կ'ընթեանու: Նաեւ Հայկազնեան մեծ Բառագրոց մէջ այս հատուածն կը յիշուի այս ձևով. «ՁԱփրոզիտ պաշտեմ առէ՝ զԱստղիկ»: Ասկէ բղտած է «աստղիտ» վերագրքը: Հմմտ. Ոսկ. Մեկն. Պաւլ. Հա. Բ. էջ 492 եւն:



Գաւառ ի վաղաբնակաց, զոր եւ Նորաստեղծն կոչեն,  
 ի նիստս թագաւորաց Հայոց<sup>1</sup>: և շու յոյն թարգ-  
 մանիչը լաւ համարած է գրել, Τότε οὖν ἐλλθουσαι  
 φθάνουσιν τὰ ὄρια τῆς Ἀρμενίας, εἰς Ἀραράτ  
 τὴν πατριδα καὶ Οὐαλαρσαπάτ τὴν καλουμένην  
 Νέα ν πόλιν, κεκτισμένην εἰς οἰκητήριον τῆς τῶν  
 βασιλέων Ἀρμενίας. Այս խօսքին մէջ Οὐαλαρ-  
 σαπάτ անունը վաղաբնակիցն ճշգրիտ ընդօրինա-  
 կութիւնն է, մինչ զեռ ակելի յունական ձեւ մըն  
 է Οὐαλεροχτίστη, ինչպէս թարգմանուած կը  
 գտնենք 11 անգամ: Իսկ Նորաստեղծ հոս յունա-  
 րէնի թարգմանուած է նέα πόλις, ուր այլուր  
 Նոր-Շիրական անուան մէջ ընդհ հայ ձեւը պա-  
 հուած է Նորսիրախէօն եւ Նորսիրախօն<sup>2</sup>  
 ձեւերով: Նման երեւոյթ կը տեսնուի 623 էջին  
 թարգմանութեան մէջ, ուր Աստուրայ գիր, վա-

<sup>1</sup> Ագաթ. էջ 122, 24—123, 2. PL. § 66. p. 34  
92—94.

<sup>2</sup> Յունական ձեւագրին մէջ աղաւաղեալ է երկու  
 տեղն ալ այս անուան ճշգրիտ ուղղագրութիւնը. (Ագաթ.  
 650, 15 = PL. § 164, p. 83, 93 եւ Ագաթ. 628, 8. PL. §  
 152, p. 77, 73.) Առաջին տեղն, ուր հայոյն մէջ «Ի Նոր-  
 Շիրական կողմանէն» կը կարդանք, յոյն ձեւագրին մէջն է  
 ἀπὸ Νορσισαχέων μερῶν, իբր այն թէ Նոր-Շիրակ ըլլար ան-  
 նունը: Տարակոյտ չկայ որ հոս լակարտ մեծաւ իրաւածք  
 Նորսիրախէօն փոխած է, ըստ որում առաջինն լոկ աղա-  
 աղ գրութիւն մըն է, որուն մէջ աչ դուրս ինկած է: Քայց  
 ինչիբէ է, արեւօք նոյնպէս իրաւացի էր երկրորդ տեղն ալ  
 Նորսիրախէօն փոխելը: Հոս մինչ հայն «առ Նոր-Շիրական  
 երկրաւ» է, յոյն ձեւագրին ունի ἕως Νορσισαχέων γῆς, իբր  
 այն թէ Նոր-Շիրակ ըլլար անունը: Անտարակոյտ հոս ալ  
 անուան սօսածօն գրերն աղաւաղութիւնն են, եւ ըլլալու էին  
 սօսածօն, քայց սկզբան Նօ գրերը (փոխանակ Նօք ըլլալու)  
 ուղղագրին կրնան ըլլալ: Ասան զի նաեւ հայ անունը Նոր-  
 Շիրական եւ Նոր-Շիրական ձեւերով ականդուած է: Հմմտ.  
 փերջնոյտ համար բուզանդ Գ. ծ, էջ 159. եւ Ե, թ, էջ  
 209. — Ասուան այս աղաւաղութիւնը նշանակութիւն  
 չունի մեր ինչորոյն համար:

նորոգողիք եւ նորոգող կարգաւ թարգմանուած են: Այս հատածը նշանաւոր է այնու՝ որ բովանդակութեամբ խիտ առ խիտ արտուղութեամբ լի ըլլալով, անթարգմանելի է այս կերպարանաց մէջ յոյն՝ բայց մանաւանդ ասորի լեզուին:

“Վիշապաքաղ Վահագնի”՝ Քարբեայ լեւրան սնարքն եղող Յաշտիշատու մեհենին նկատմամբ կը կարդանք Ազաթանգեղոսի մէջ հետեւեալը<sup>1</sup>. “Աթերորդ պաշտօն հռչակեալ, անուանեալն Վիշապաքաղն Վահագնի<sup>2</sup>, յաշտից տեղիք թագաւորացն Հայոց մեծաց, ի սնարս լերինն Քարբեայ<sup>3</sup> ի վերայ գետոյն Եփրատայ, որ հանդէպ հայի ի մեծ լեառնն Տաւրոսի, որ եւ անուանեալ ըստ յաճեալորո՞ւմն տեղեացն Յաշտիշատ:” Աննշանակ եւ գոյզն բան չէ՝ երբ յոյն թարգմանութեան մէջ այս վերջին նախադասութիւնն այսպէս կը կարդանք. *ὁ εἰρημένος τόπος, διὰ τὰς πολλὰς θυσίας Πολύθυτος. (Տեղի որ վասն բազում զոհիցն շնորհ կոչէր):*

Կեկնութիւնը գիւրիին է: Թարգմանիչն ունէր իւր ունիւնն՝ բնութիւն յընէն հասկնալով, եւ հոս ստուգարանութիւն մ'ըրած է քաղաքիս անուան, որուն արդէն Ազաթանգեղոս առաջնորդ

<sup>1</sup> Ազաթ. 606, 16—24. PL. § 140, p. 71, 46—49.

<sup>2</sup> Այս հետաքրքրական տեղը յունական թարգմանութեան մէջ կը գտնենք թարգմանուած. *προσηγορεύετο δὲ ὁ βωμὸς ὀγδοῦν σεβάσματος, τὸν εὐφημοτάτου δρακόντοπνίχτου Ἡρακλέους.*

<sup>3</sup> Յոյն թարգմանութեան մէջ այս լեւրան անուանքի մ'այլազգ է. վասն զի հոն կը կարդանք. *τόπος θυσίων βασιλέων Ἀρμενίας μεγάλης ἐν τοῖς Χαρχαρεῶν ὄρεσιν: Աստի եւ փոխանակ քարքէ անուան հոս քարքար կը գրուի: Տեղւոյս չէ հետաքրքուել թէ որն է ճշգրիտ ձեւ անուանս:*

եղած էր: Թարգմանիչը Յաշտիշատ անունը յաշտ  
 եւ շտ բառերէ բաղադրեալ կարծելով ի հար-  
 կէ πολύθυτος = զոհաշատ պիտի թարգմանէր:  
 Ասկէ աւելի բացայայտ նշան չենք կրնար փրն-  
 տուել: Փոյթ ալ չէ որ այս ստուգաբանութիւնը  
 չէ ուղիղ ըստ բրտի լեզու-սփիտ-իւն<sup>1</sup>. բաւ է  
 ըսել թէ ամէն հայագէտ այսպէս կրնար իմա-  
 նալ եւ պիտի իմանար անշուշտ: Եթէ թ. դա-  
 րուս մէջ այսպիսի հասկըցողներ կան իրօք, զար-  
 մանք չէ որ Ը. կամ Թ. դարու մէջ ալ ըլլային:  
 Յիշենք վերջապէս յԱգաթանգեղեայ հատուած  
 մ'ալ<sup>2</sup>, յորում կ'ըսուի թէ «Նախ դիպեալ ի  
 ճանապարհի երաշոյոյ երաշնդան պաշտաման  
 Տէր Կէն Կէնի գիտութիւն քրմացն՝ անուանեալ  
 զիւան գրչի Որճչի ուսման ճարտարութեան  
 մէհեան:», Ահաւասիկ բնիկ Ագաթանգեղեան  
 կամ Բուզանդեան գրչէ ելած հատած մը, որ  
 թարգմանուած չի կրնար ըլլալ: Յոյնը հոս շատ  
 նեղ ինկած՝ կը թարգմանէ. Ἀπιουσι δὲ αὐτοῖς  
 ὑπήντησε τόπος προσαγορευόμενος ὄνειροπόλων,  
 ὄνειροδειχτῶν σέβασμα δαίμονος Γραμματέως  
 καὶ γνώσεις ἱερέων. Τρίδις ἐκέκλητο βωμὸς  
 Ἀπόλλωνος· χαρτουλαρίων Διὸς διδαχῆς εὐμα-  
 θήτου ἱερέων. Պէտք իսկ չունինք յերկար խո-  
 սելու այս տեղ, ուր յայտնապէս կը տեսնուի՝

<sup>1</sup> Հոս շտ՝ չէ մեզի ծանօթ շտ = բազում բառը,  
 այլ գոյական մը որ քանի մ'անուանց մէջ կը տեսնուի,  
 որպէս Արտաշտ: Ըստ Աւհարտի բնիկ հայկական ձեւ չէ  
 շտ, եւ այլըլտած է փոխանակ շտ ըլլալու = քանի: Հմմտ.  
 PL. Agath. 136 եւ Armenische Studien, Göttingen, 1877  
 էջ 22, 280.

<sup>2</sup> Ագաթ. էջ 584, 8—14. PL. § 128, p. 65, 20—23.



Թէ կրնա՞ր արդեօք հայ Ագաթանգեղոսը թարգմանութիւն ըլլալ: Ագաթանգեղեայ այս խօսքն իրօք որ եւ է լեզուի անթարգմանելի է, վասն զի բնիկ հայու մը գրչէն ելած բախառութեամբք եւ արտուղութեամբք լի հասած մըն է. որուն կը համոզուինք եթէ համեմատենք յոյնը, որ չկարենալով թերեւս աւելի պատշաճօրէն թարգմանել, այլեւայլ նախագասութեանց բաժնած է զայն՝ փոխելով տեղ տեղ բնագիրը, եւ որ աւելի ծանրակշիռ է՝ դից անուանք եւս փոխուած են: Տէ՛ր եղած է *Τριδης*, եւ բոլորովին տեղափոխուած ուրիշ տեղ դրուած է. եւ այստեղ ճշդիւ բոլորովին նոր խօսք մը յօդեր է թարգմանիչը: Երազարացի երազարացի բառերուն դիրքը փոփոխուած է եւ արդէն թէ *ὄνειροδρακτῶν* երազարացի բառ առ բառ թարգմանութիւն է: Գու՛ր, որ հայոյն մէջ Տիւր դից կը կցուի անմիջապէս, յունին մէջ եղած է իբրեւ անուն ուրոյն դից, ըստ որում Տիւր անունը հոն դուրս ինկած է. եւ վերջապէս *Ὀνείρι* = *Διὸς* թարգմանուած է: Այս հատածն գոնեայ հայոյն նախնականութիւնը կը ցուցնէ: — Այս խօսքէն անմիջապէս յառաջ կը յիշուի Երազարացի տեղի<sup>2</sup>, զոր յունին մէջ կը գտնենք այսպէս թարգմանուած *ἐν τοῖς λεγομένοις τόποις ὄνειροδρακτῶν*. Հայն հոս ազգային

<sup>1</sup> Այսինքն «Եւ յերթալ նոցա դիպեցաւ նոցա տեղի որ կոչէր Երազարուշակ, Երազարացի պաշտօն դից Գուր եւ գիտութիւնք քրմաց: Տէրդէ՛ կոչէր բազինն Արազա՛նէ. դիւան Գիսյ ուսման ճարտարութեան քրմաց»:

<sup>2</sup> Ագաթ. էջ 584, 7. PL, § 128. p. 65, 20. — Մտադրութեան արժանին այն է՝ որ հայոյն մէջ «Երազարացի տեղին» է. իսկ յոյնը յարնակի է:

Տեառքերրահան անուն մը կը ներկայացընէ: Երազամոյն կարծենք կը նշանակէ որ այն տեղ մէջեան էր ապագայն գուշակող դից, որ կը մեկնէր երազներն, ըստ որում՝ Երազ եւ մոյն՝<sup>1</sup> բառերէ կազմուած կ'երեւայ:

Անշանակ բան չէ, երբ յոյն [Թարգմանութեան մէջ՝<sup>2</sup> կը կարդանք. Ὁ ἀρχιεπίσκοπος, εἰσπορευόμενος ἐν τῷ αὐτοῦ παλατίῳ πάντοτε, ὁ καλούμενος Εὐσέβιος. (Արքեպիսկոպոսն, որ մտանէր միշտ ի պաղատն նորա, որ կոչէր Եւսեբիոս:) Սակայն Ազաթանգեղեայ միտքն այս չէ. վասն զի անոր նպատակը չէ ըսել [Թէ Եւսեբիոս՝<sup>3</sup>

<sup>1</sup> Մոյն ցանցառ բառերէն է մեր լեզուին, որ [Թէ իրր ուրոյն գոյական եւ [Թէ բարգուժեանց մէջ կը գտնուի քանի մը տեղ նախնական մատենագրութեան մէջ: Իւր նշանակութիւնն ըստ բառականի յայտնի է: Ոսկեր. մեկ. Պաւլ. (Հա. Բ. էջ 558) կը կարդանք. «Չմոյն ամոյն աւանել», ուր յոյն «խաթարել» է, որմէ կազմուած է յեւթնդարեան մատենագրաց մէջ յիշուած գոյականներէն բառը: Առակաց մէջ (ԺԷ. 22) կը կարդանք «Սիրա ուրախ բարեմոյն առնէ», սյսինքն քաջասողջ, բարեկեաց, ինչպէս կ'իմանանք՝ եթէ Համեմատներ յունին հետ, որ կ'ըսէ. Καρδία εὐφροαινομένη εὐεχτεῖν ποιεῖ, բայց աւելի բացայայտ լատինականը կ'ըսէ, Animus gaudens aetatem floridam facit: Վերջապէս նաեւ կազմութեամբ Երազմոյնի ճշդիւ նման է հօրմոյն բառը, որուն «բարեհայր» նշանակելն անտարակոյս է Մակարայեցուց (Բ. Մկ. Ժ. 10) մէկ խօսքէն, ուր կը կարդանք. «Բայց վասն հօրմոյն Անտիոքայ անօրէն գաւակի, ցուցցուք Համառօտ», Յոյն բնագրին մէջ փոխանակ հօրմոյն բառին կը գտնենք Անտիոքայ մականունը Ե-դ-դ-դ՝ սյսպէս. Νυνὶ δὲ τὰ κατὰ τὸν Εὐπάτορα Ἀντιόχον, υἱὸν δὲ τοῦ ἀσεβοῦς γενόμενον δηλώσομεν. Հաս ուրեմն Անտիոքայ Εὐπάτορ = Եւպատոր անունը [Թարգմանութեամբ է հօրմոյն, իսկ Եւպատոր կը նշանակէ «բարեհայր»: Նոյն նշանակութիւնն ունի անշուշտ Ազաթանգեղեայ ուրիշ խօսքը (20, 19) «Վասն հօրմոյն քաջութեանն Տրդատայ», Երազամոյն ուրեմն բարի-երազց մեկնիչ դից վերագրին էր:

<sup>2</sup> PL. § 165, p. 83, 6: Հայ Ազաթ. 651, 26—652, 2:

<sup>3</sup> Հաւանականագոյն է որ նախնարար Եւսեբիոս էր Ազաթանգեղեայ մէջ, եւ ոչ Սեղրեւարոս, ինչպէս ունի

միշտ արքունական պալատը կը մտնէր, այլ թէ  
 դրան էլիսկոսէր էր: Անոր համար հայ բնագրին  
 մէջ այս խօսքն է. « Հայրապետան մեծ արքե-  
 պիսկոպոսն աշխարհահոյս դրան: » Յայտնի է որ  
 թարգմանիչը սխալ հասկըցած է աշխարհահոյս  
 դրան (= արքունիք) ասութիւնը, եւ ճորձ բա-  
 սին զօրութեամբն ստեղծած է εἰσπορευόμενος  
 թարգմանութիւնը:

Տեսանք որ յոյն թարգմանիչը մեծ ճար-  
 տարութեամբ հայերէն անուանք անդամ թարգ-  
 մանած է: Ասիկայ ի հարկէ ամէն տեղ կարելի  
 չէր: Արնային գտնուիլ շատ մ'անուանք եւ ազ-  
 գային տիտղոսք եւ նմանիք, որոնց համապատաս-  
 խանող յունական յորջորջմունք դժուար էր  
 գտնել, եւ կը ստիպուէր թարգմանիչը կամայ թէ  
 ակամայ անոնցմէ ոմանք ընդունիլ իւր թարգ-  
 մանութեան մէջ: Քնական է որ նաեւ անմտա-  
 դրութեամբ ալ այսպիսի բառեր սպրդէին այն  
 թարգմանութեան մէջ: Գէթ ստոյգ է որ յոյն  
 թարգմանութեան մէջ ցանցառ չեն այսպիսի  
 խօսքեր, որոնց մէջ թարգմանիչն հայ բնագրին  
 բառը դարձադէպ օրինակելով գոհ եղած է, որով  
 իւր ազբիւրը՝ յորմէ թարգմանած է՝ անժխտելի  
 եղանակաւ կը ցուցուի: Գնենք ասոնց մէկ քա-  
 նին, որոնք առաւել նշանաւոր կ'երևուան:

Ագաթանգեղեսյ մէջ կը կարդանք՝ թէ  
 « Հրամայեաց կատարել անդ ամ յամէ ի տեղւոյ՝ »

1862ին տպագրիւր: Յունական օրինակին կը համաձայնին  
 Փարիզեան օրինակն եւ մեր մատենագարանին ընտիր օրի-  
 նակը:

<sup>1</sup> Ագաթ. 611, 3-6. PL. § 142. p. 72, 94-96.

Ժողովել ամենեցուն ի յիշատակ սրբոցն, որ օր  
 եւթն էր Սահման ամսոյ: Ահաւասիկ հայկական  
 ամսոյ անուն մը. յոյն թարգմանիչը պատշաճ  
 կը տեսնէ չփոխել իւր բնագրին այս անունը,  
 այլ կ'ընդունի իւր թարգմանութեան մէջ այդ  
 «Սահմի, բառը՝ բնականապէս յաւելով անմիջա-  
 պէս մեկնութիւն մը յոյն ականջաց համար օտար  
 բառին. եւ այսպէս՝ կը թարգմանէ հետեւեալ  
 եղանակաւ. Προσέταξεν ἐπιτελέσαι κατ' ἔτος ἐν  
 τῷ τόπῳ ἑκαίενω τῆν τῶν μαρτύρων μνήμην ἐβδόμῃ  
 τοῦ μηνὸς Σαομί κατὰ χώραν λεγομένου, κατὰ δὲ  
 Ῥωμαίους Ὀχτωβρίου. (Կարգեաց կատարել ամ  
 ըստ ամէ յայնմ տեղոջ զյիշատակ մարտիրո-  
 սացն յեւթներորդում ամսոյն Սահմի [= Սահմի<sup>1</sup>]  
 բառ քարթւոյ աշխարհին, իսկ ըստ Հռոմոց  
 Ոկտորբեայ:) Հոս թարգմանիչն իւր բնագիրը  
 կը յայտնէ ոչ ընդ այնու որ Սահմի բառն օրինա-  
 կած է, այլ եւ այնու, որ կը յաւելու յայտնա-  
 պէս՝ թէ այս Սահմի բառն է ըստ քարթւոյ աշ-  
 խարհին<sup>2</sup>: Երբ թարգմանիչն ինքնին կը ցուցնէ

<sup>1</sup> Յոյնը հայոյն հ գիրը շիրնալով ճշգիւ նշանակել,  
 գոհ եղած է Սահմի փոխելով, որմէ մերձաւոր ձեւ չէր  
 կրնար գտնուիլ: Այսպիսիք կը տեսնուին ուրիշ տեղեր ալ,  
 ուր պէտք կ'ըլլայ հայկական ինչ ինչ անուններ յունական  
 գրերով նշանակել եւ որոնք այն գրերով ճշգիւ չէին կրնար  
 նշանակուիլ: Այսպէս «Աշոցաց գաւառին» կը գտնենք  
<sup>2</sup> Ἀσοῦνηνών πατριδος թարգմանուած. Արծրունեաց =  
 Ἀρσοουρουνων, Բագայառիճ = Βαγααριζ, Ծաղկեղ =  
 Σουδαίων, Կաղարջաց = Καλαροῶν, Ճիղք = Σίλβαροι,  
 Մանայարք = Μαγαρόχ, Շահապիփանի = Σααπιανῶν,  
 Վահէփահեան = Οὐανήϊος (որ գրեթէ անձանաչելի եղած  
 է), Աւտա = Αὐταίας, եւ վերջապէս «Չէր գաւառի»  
 թարգմանուած կը տեսնենք Χερῶς τῆς πατριδος, որ նշա-  
 նաւոր է այնու՝ որ հ = χ գրուած է:

<sup>2</sup> Ուրիշ անգամ ալ առիթ ունեցած է թարգմա-

իւր բնագիրը, ո՞վ կրնայ այնուհետեւ ժխտել այսպիսի իրողութիւն մը:

Գարձեալ մեծ նշանակութիւն ունի մեր խնդրոյն համար այս նկատմամբ Ազատանգեղեաց 650—651 էջերուն մէջ զրուած նախարարաց ցուցակը, որ թէեւ բաւական խանգարեալ է յոյն թարգմանութեան մէջ, սակայն եւ այնպէս մեզի բաւական ապացոյց կը մատակարարէ ասոր հայ բնագրէն թարգմանուած ըլլալուն: Վասն զի յոյն թարգմանիչը ճշդիւ այս տեղ հայերէն բաղմամբիւ բառեր եւ իշխանաց եւ նախարարաց հայկական տիտղոսներ իւր թարգմանութեան մէջ մուծած է: Հայոյն « զթագադիր Ասպէտ » կը գտնենք թարգմանուած յունիսն մէջ τὸν στέφανο-  
τα τὸν βασιλέα ἄρχοντα, Ἄσπετ λεγόμενον. (Զիշխանն որ թագ զնէր թագաւորին, որ Ասպետ [= Ἄσπετ] անուանեալ:) Ուստի հայերէն ասպետ բառն օրինակուած է երկու տեղ<sup>1</sup>:

Երկու անգամ<sup>2</sup> կը հանդիպինք հայ բնագրին մէջ « զիշխանն Մաղխաղութեան » անուա-

նիչն հայ ամսոյ անուն մ'օրինակելու: Բայց չէ ուզած: Ազատանգեղոս (163, 16) կը գրէ « Ի քսան եւ ի վեց ամսոյն հոգի կատարեցաւ սուրբն Հովսէփսիմե. » յոյն թարգմանիչն հոս τοῦ μηνὸς Σεπτεμβρίου թարգմանելով գոհ եղած է:


<sup>1</sup> Ազատ. 650, 21. PL. § 164. p. 83, 95. Եւ դարձեալ էջ 596, 25. PL. § 135. p. 68, 46. Հոս հայն է « չորրորդ իշխանն թագապապ՝ իշխանութեանն --դէտն--թէ--ն. » այս տեղ ալ յոյնը նոյնպէս հայերէն բառը կը գործածէ. ὁ τέταρτος ἄρχων ὁ τὸ διάδημα ἐξουσίαν ἔχων ἐπιδησαι τῷ βασιλεῖ, ὁ λεγόμενος Ἄσπέτων. Միւս գնելու է որ հոս « ասպետութեան » = Ἄσπέτων զրուած է, որով --թէ--ն = օն է ըստ թարգմանիչին: Բնականապէս սխալած է թարգմանիչն յայտմ:

<sup>2</sup> Ազատ. էջ 597, 19. PL. § 135. p. 69, 53. Եւ Ազատ. 650, 25. PL. § 164. p. 83, 96.

նակոչութեան, եւ երկու անգամ ալ թարգմանիչը հայերէն բառը գործածելով կը թարգմանէ շոն օրչոնտա Μαλχαζιτων եւ օրչոն օ տօϋ Μαλχαζιτων<sup>1</sup>: — Նոյնպէս “զիշխանն Սպասկապետութեան<sup>2</sup>” կը գտնենք թարգմանուած շոն օրչոնտա Σπασκαπετεων, ուստի “սպասկապետութեան” բառն յունիս մէջ մուծուած:

Այս ամենայն տեսնելէն ետեւ՝ զարմանք չէ նաեւ այնպիսի խօսքեր գտնել, որոնց մէջ հայերէն անուանք անփոփոխ կը գրուին յոյն թարգմանութեան մէջ, առանց միտ դնելու որ Յոյնը նոյն անուան համապատասխանող ուրիշ մը կը գործածեն: Ահա ասիկա քանի մ’օրինակ: Ագաթանգեղոս ճոխութեամբ կը նկարագրէ<sup>3</sup> թէ ինչպէս “Գեան Երուսաղիմ յարուցեալ գայր դարիւ եւ դարիւ, սառնահալ, ջրակուտակ, ձիւնասոյղ, ձիւնախաղաղ բազմութեամբն յաւուրս իւրոյ պղտորութեանն”: Յոյնը պարզմտութեամբ թարգմանած է. ὁ γὰρ ποταμὸς Ἐρασάχ πλημμυρῶν μέχρσι τῆς κρηπίδος ἔρρεσεν χτλ<sup>4</sup>. Ուրեմն թարգմանիչը մոռցած է որ Երուսաղիմ հայկական հնչումն է, իսկ Յոյնը Ἀράξις կ’անուանեն այս գետը, եւ այսպէս հայ անունը մուծած է իւր գրոց մէջ

<sup>1</sup> Նկարա իրաւամբ կ’ըսէ նկատմամբ այս բառին թէ սեմական կերպարանք ունի:

<sup>2</sup> Ագաթ. 650, 1. PL. § 164. p. 83, 98: Այս բառը “սպասկապետութեան” բառերէ բաղկացեալ է: Ըստ Նկարաի սպասիկ =  է: Յոյն բնագրին մէջ փոխանակ Σπασκαπετεωνը կը գրուի Πασκαπετεων, ուստի սկզբն - գիրը դուրս ինկած է: Հոս ալ ἔων = ութեան:

<sup>3</sup> Ագաթ. 40, 5. PL. § 15. p. 11, 53.

<sup>4</sup> Այսինքն “Ձի գեան Երուսաղիմ յարուցեալ մինչեւ ցափն հոսերն”:

Ἐρασάχ δέτιοϋ: Բայց ինչո՞ւ զուր տեղ *α δ'* աւելցուցած է թարգմանիչն այս անուանս: Գուցէ այն պատճառաւ որ Ἐράσχ վերջաւորութիւնը խժալուր դար յոյն ընթերցողաց: — Միտ գնելու է որ «դարիւ եւ դարիւ» ասութիւնը շատ ճշդիւ թարգմանած է յոյնը<sup>1</sup>:

Միտ չէ գրած թարգմանիչը նոյնպէս՝ որ Մատթ. հայկական անուն է եւ անծանօթ Յունաց. եւ սակայն Ագաթանգեղեայ<sup>2</sup> «Ճանապարհ կալեալ ի վեր ի բարձր լեառն Մասիս», խօսքը թարգմանած է պարզմտութեամբ. προσελθὼν ὁ βασιλεὺς ... εἰς ὑψηλότατον καὶ μέγα ὄρος, Μασίς λεγόμενον. Այսպիսի են ի մէջ այլոց Ναπάτ = Նոպտ<sup>3</sup>, փոխանակ ըստ Յունաց Νιφάτης. Եկեղէաց գաւառ<sup>4</sup> կը տեսնենք թարգմանուած εἰς

<sup>1</sup> Մեր արդի բառագրոց մէջ «դարիւ - ե - դարիւ» ասութեան «վէտ վէտ» նշանակութիւնը կը արուի: Կարծենք ոչ իրաւամբ: Գոյ կը նշանակէ բարձրաւանդակ, գահ եւ փախք. բաց աստի՛ ասին (թէ ճոփու եւ թէ գետոյ) ուստի եւ «դարիւ եւ դարիւ» կրնայ նշանակել միայն՝ թէ ջուրը մինչեւ ցափն բարձրացած կը հոսէր կամ՝ «զափամբ քերելով»: Բաւական է հոս յիշել միայն Յեսուայ գրոց (Գ. 15) մէկ խօսքն՝ որ այնպէս ճշդիւ Ագաթանգեղեայ խօսքին հետ կը համաձայնի, որ կարծենք Ագաթանգեղոս հոս Ս. Գրոց այս խօսքին նմանած է: Յեսուայ գրոց թարգմանութեան մէջ կը կարդանք. «Յորդանան լցեալ գայր դարիւ եւ դարիւ որպէս յաւուրս հնձոց ցորենոյ.» հոս յոյն բնագիրն, ունի ὁ δε Ἱορδάνης ἐπληροῦτο καὶ ὄλην τὴν κορηπίδα αὐτοῦ κτλ. (Իսկ Յորդանան լցեալ էր մինչեւ ցափն ամենայն եւս.): Աւելիագայն աւելի բացայայտ Jordanis autem ripas alvei sui tempore messis impleverat. Ուրեմն «դարիւ եւ դարիւ» վէտ վէտ դժուարաւ կրնայ նշանակել:

<sup>2</sup> Ագաթ. 576, 12. PL. § 124. p. 63, 48.

<sup>3</sup> Ագաթ. 613, 9. PL. § 143. p. 73, 18.

<sup>4</sup> Ագաթ. 49, 15. PL. § 21. p. 14, 51. Յոյն թարգմանիչը հոս անձիշդ եղանակաւ թարգմանած է: Հայոյն խօսքը՝ «եկին հասին յԵկեղեաց գաւառ, ի գիւղն Երիզայ, ի մէհեանն Անհատական», այնպէս հասկըցեր է որ կարծես չէ թէ Երիզայ գիւղն Եկեղեաց գաւառին մէջ կ'իյնայ, այլ

τὴν Ἐκελισσηνὴν λεγομένην πατρίδα. **Յոյնք**  
 Ἐκελισσηνὴ **չեն** **կոչեր** **զԷկեղեաց**, այլ **Ἀχιλι-**  
**σηνὴ**<sup>1</sup>.

Ագաթանգեղեաց խօսքը<sup>2</sup> թէ՛ «**Մինչև** **առ-**  
**աշխարհաւն** **Խաղտեաց**» թարգմանուած է մέχρι  
 τῆς **χώρας** **Χάλτων**. **և** **սահայն** **Χάλτων** **Խաղտեաց** **մի-**  
**բառական** **թարգմանութիւնն** է. **Յոյնք** **այս** **գաւ-**  
**առը** **սովորաբար** **Χάλυβες** **կը** **կոչեն**<sup>3</sup>: Այսպիսի  
 են **Μασαχουτων** (= **Մասքթաց**) **և** **նոյն** **խի-**  
**թորցոմ**, որ **Հայկական** **ձեւն** է, **ըստ** **որում** **յու-**  
**նական** **Եօթանանից** **թարգմանութիւնը** **Յորգամά**  
**կ'աւանդէ**<sup>4</sup>:

Նշանաւոր են այն անուանք, որոնց մէջ  
 Հայկական վերջաւորութիւնք անգամ պահուած  
 են ի թարգմանութեան **և** որոնք յոյն ական-  
 ջաց խորթ են: Այսպիսի են **Ἀτραπαταχάν** =  
 Ատրապատական<sup>5</sup> մինչև **ն** **Յոյնք** **Ἀτροπατηνὴ**

Եկեղեաց գաւառը Երեզոյ գիւղին մէջ, վասն զի կը թարգ-  
 մանէ ἤκασιν ὁ βασιλεὺς τε καὶ ὁ στρατὸς εἰς τὴν Ἐκελισσηνὴν  
 λεγομένην πατρίδα ἐν τῇ κώμῃ τῇ καλουμένῃ Ἐροζ.  
 (Եկին թագաւորն **և** **բանակն** **յեկեղեաց** **կոչեցեալ** **գաւա-**  
**ռէ** **էրոզ** որ **կոչի** **Երէզ):** Աւստի **Հայոցն** «**ի** **գիւղն**» **ըսածն**  
**Հոս** **ներգոյական** **իմաստով** **առած** է: Այս ալ **Հայ** **բնագիր**  
**մը** **կ'ենթադրէ:**

<sup>1</sup> Տես ի մէջ այլոց Strabonis rerum geographi-  
 earum libri XVII. Amster. 1707. T. II. p. 799 (527).

<sup>2</sup> Ագաթ. 627, 26. PL. § 152, p. 77, 69.

<sup>3</sup> Strab. T. II. p. 996 (678) **և** 826 (549).

<sup>4</sup> Լակարտ ընդարձակ ծանոթութիւն մ'աւելցուցած  
 է թորգոմ անուան նկատմամբ (էջ 140—143), զոր 1853ին  
 «աստուածաբանից» Համար արդէն գրած էր. նոյնը **Հոս**  
**կը** **կրկնէ** «**Հայոց**» **Համար:** «**Բնականագէտ**, **կը** **յաւելու,**  
**ասոնք** **չսեն** **պիտի** **ինչպէս** **անոնք** **ալ** **չսեցին:**» **Բովանդակ**  
**ցուցման** **կենդանն** է **թէ** **թորգոմ** **անուան** **թ** **գիրն** **ի** **Հարկէ**  
**յուսէն** **միայն** **կրնայ** **ըլլալ**, **ըստ** **որում** **թ** = **ϑ** չէ:

<sup>5</sup> Ագաթ. 628, 12. PL. § 152, p. 77, 73: Ագաթ.  
 էջ 159, 10 «Ատրապատական» **անունը** **չի** **գտնուիր** **յուսին**  
**մէջ:**



կամ <sup>1</sup> Ἀτροπάτης կ'անուանեն<sup>1</sup>: Հետաքրքրա-  
կան է նոյնպէս «ի Φωγισακωρῶν քαζαφ<sup>2</sup>,  
խօսքը Φαταχαρανής<sup>3</sup> πόλεως [Թարգմանուիլը  
եւ նմանները:

Այսչափ ասպացոյցք կարծենք [Թէ եւ ոչ  
փոքրիկ կասկած մը կը [Թողուն այսուհետեւ, եւ  
այլ եւս չի կրնար խնդրոյ տակ ձգուիլ այս իրո-  
ղութիւնը՝ [Թէ հայն իրօք հիմն է յոյն [Թարգ-  
մանութեան: Ասիկայ ալ (յիշենք ի վերջոյ) ուղ-  
ղակի ընդդէմ է Ղահարատի կարծեաց, որ յու-  
նական [Թարգմանութեան մէջ ասորի բնագրի  
հետքեր կ'ուզէ գտնել:

<sup>1</sup> Strab. T. II. 794 (523).

<sup>2</sup> Ագաթ. 628, 4. PL. § 152. p. 77, 70.

<sup>3</sup> Ի վերջոյ աւելորդ չէ դիտողութիւն մը: Բաւական  
տանն է որ սկսուած է մադարութիւն ըլլալ խնդրոյ մ'ալ,  
այսինքն [Թէ մեր նախնիք ինչպէս կը շեշտէին հայերէն  
բառերը: Յոյն [Թարգմանութիւնն հօս ալ բաւական զօ-  
րաւոր կռուան մը կ'ըլլայ այլուստ ցօցօւածն հաստատե-  
լու՝ [Թէ արդէն Թ. դարուն (որմէ յտևջ է անշուշտ այս  
[Թարգմանութիւնը) ծանօթ էր բառի մը վերջին վանկը  
շեշտելու արդի սովորութիւնը: Ասան զի յոյն բնագրին  
մէջ հայերէնէ փոխ առնուած բառերուն եւ անուանց վեր-  
ջին վանկը միշտ շեշտեալ կը տեսնենք: Այսպէս են Iaví  
= Անի, Ἀραοάτ = Արարատ, Ἀτραπατακάν = Ատր-  
պատական, Οὐαλαροσαπát = Վաղարշապատ, Σαομί =  
Սազմի, Βαγαοριζ = Բաղայառիճ, Μαναόρχ = Մանայ-  
արք, Ἀυταίας = Աւտայ, Ἀσπέτ = Ասպետ, Ἐραοάχ =  
Երասխ, Μασίς = Մասիս, Ναπάτ = Նպատ, Θοργώμ  
= Թորգոմ, եւն: Աւելորդ է իբրեւ բացատրութիւն յի-  
շէլ զանոնք՝ որ յունական լեզուի առողանութեան օրինաց  
համաձայն գրուած են. զոր օրինակ Ζουάρον = Չիւրոյ,  
Σουδαίων = Ծաւուէից, Χάλτων = Խաղտեաց, Ἐρηζ =  
Երիզայ, Νοροισάων = Նորիշրական: Ահաւասիկ կէտ մը  
անդրադոյն քննութեան, որ կրնայ բանասիրութեան հա-  
մար ոչ սակաւ ծառայութիւն մատուցանել:

## 6.

Ագաթանգեղեայ ամբողջ գիրքն այլեւայլ աղբիւրներէ հաւարեալ խմբագրութիւն մըն է, ինչպէս կանխաւ ըսինք: Հարկաւ հետաքրքրական էր գիտնալ թէ ինչ աղբիւրներ գործածած է հաւարիչն, եւ ինչ քանակաւ ինչն էր կանայս գրոց մէջ: Բայց այս նկատմամբ շատ քիչ բան գիտենք այժմ, եւ այն՝ մեծաւ մասամբ ենթագրութիւնք են: Թողլով այս ամենայն մէկդի, տեսնենք համառօտիւ թէ այս նկատմամբ ինչ աղբիւր ունի սոյն մատեանն ուրիշ հայ գրութեանց հետ: Արյուսանք թէ ուրիշ առթիւ աւելի հիմնական եղանակաւ կրնանք զբաղիլ այս խնդրով:

Արեան եւ Ագաթանգեղեայ մէջ շատ կտորներ կան իրարու բառ առ բառ համապատասխանող<sup>1</sup>: Այս կէտն ի վաղուց ծանօթ էր. եւ առհասարակ Արիւն կը համարուէր բանաբաղը: Առաջին անգամ Առաքիլ (էջ 25) յայտնեց հակառակ կարծիքը: Սոյն խնդրով զբաղեցաւ մօտերս նաեւ շ. Բարսեղ Վ. Սարգսեան<sup>2</sup>, որ ճանչնալով հանդերձ գերմանացի գիտնականին

<sup>1</sup> Այսպէս են՝ Ագաթ. էջ 581, 17—582, 23 — Աոր. էջ 13, 5—23; Ագաթ. 584—585 — Աոր. 7—8; Ագաթ. էջ 628, 15—636, 23 — Աոր. էջ 22, 12—24, 38; Ագաթ. էջ 636, 24—637, 10 — Աոր. էջ 12, 33—13, 4; Ագաթ. էջ 651—652, 654—655 — Աոր. էջ 17; Ագաթ. էջ 657, 18—659 — Աոր. էջ 21, 37—22, 10 եւ 26, 13—24; Ագաթ. էջ 661, 20—662, 22 — Աոր. էջ 28, 18—37; Այլ բաղմաթիւ մանր բանաբաղութիւնները զանց կ'առնեմ նշանակել:

<sup>2</sup> Լուծուիլ բանաբաղութեան Արեան կամ Ագաթանգեղոսի, հանդերձ վաւերաբանութեամբ ընդարձակ պատմութեան Ս. Մեսրոփեայ. Բաղմաթիւ, 1889, Յուլիս (էջ 193—199) եւ Օգոստոս (էջ 225—232):

կարծեաց հաւանականութիւնն՝ երրորդ եւ միջին ճամբայ մ'ուզեց բռնել, բայց արդեամբք հետց ծանօթ կարծեաց պաշտպան հանդիսացաւ: Ըստ իս առանց երկրայութեան է թէ Կորիւն չէ բանաբազին, այլ Ազաթանդեղոսի վերջինննն խմբագիրը, ուստի եւ Ազաթանդեղոս այս կերպարանաց մէջ Կորիւնէն ետքը մատենագրուած է: Կը շատանամ՝ հոս միայն քանի մը նշանաւոր կտորները համեմատելով:

ԱԳԱԹԱՆԳ.

(636, 24—637, 10)

«Յայնմ ժամանակի երանելի ցանկալի եւ անպայման սքանչելի լինէր երկիրս Հայոց. որպէս եւ Մովսէս յանկարծ ուրեմն օրէնստոսոյց հերբայականին՝ ամենայն մարգարեական դասուն, եւ կամ իրելու յառաջագէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդուն հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի. սոյնպէս է՝ եկեալ հասեալ երեւեալ՝ հայարարաւ հայերէնախօս գտաւ. »

ԿՈՐԻՒՆ

(12, 33—13, 4)

«Յայնմ ժամանակի երանելի եւ ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում անկարծ ուրեմն օրէնստոսոյց Մովսէս՝ մարգարեական դասուն, եւ յառաջագէմն Պաւղոս՝ բովանդակ առաքելական գնդոմն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ է յեւեբէոց հասարակեցոյց հայերէնախօս գտան. »

Այս հատածն ակներև բանաբաղուածիւն մի է Կորեան գրքէն: Հոս բովանդակ խօսքն կապակցեալ եւ ճշմարիտ է, վասն զի կը պատմուի թէ ինչպէս բովանդակ սուրբ Գիրքը՝ Մովսէսէ գրքերէն սկսեալ մինչև Պաւղոսի եւ այլոց առաքելական թղթերն ի Սահակայ եւ ի Մեսրոպայ (՝ ձեռն երկուց հաւասարելոց) հայերէն խորհրդանշան. («Հայարարաւ հայերէնախօս

գտաւ յ)։ Ազաթանգեղեայ խմբագիրն միտ չղնելով այս պարագաներուն՝ կարծեր է որ «ի ձեռն երկուց հաւասարելոց» խօսքը «սոյնպէս եւ սա» փոխելով կրնայ կապակցեալ ընել այս բանաբաղուծիւնը։ Բայց ի զուր. բովանդակ հատածն անկապ է հոն նախընթաց եւ յաջորդ մասերուն նկատմամբ. անկապ են բոլորովին՝ որպէս եւ Մովսէս, եւն խօսքերը՝ յաջորդ «սա եկեալ . . . հայերէնախօս գտաւ» պարբերութեան մասին հետ. եւ վերջապէս *Դարձակ-սահման* է թէ Գրիգոր Առասուորիչ արդեամբք կրնար այնպէս «յանկ-բժ հայերէն-խօս» գտնուիլ, որ ի մանկութենէն յունականաւ սնած էր։ Այս հատածը միայն բաւական է Ազաթանգեղեայ խմբագրութեան նկատմամբ ցարդ ըսածնիս հաստատելու։

Աորիւն կը յաւելու ապա՝<sup>1</sup> թէ «Էր այնուհետեւ սրտալիր ուրախութիւն եւ ակնավայել տեսիլ հայերէոյն։ Քանզի երկիր, որ համբաւուցն անգամ օտար էր կողմանցն այնոցիկ. . . վաղվաղակի ամենայն իրացն եղելոց խելամուտ լինէր։ . . . Ի կողմանց եւ ի գաւառաց հայաստան աշխարհին յորդեալք եւ դրդեալք հասանէին ի բացեալ աղբիւրն գիտութեանն Աստուծոյ։» Այս խօսքն առ Աորեան գեղեցիկ եղանակաւ կապակցեալ է, եւ կը նկարագրէ հայերէն Ս. Գրոց *Խարճեան-Բեան* յառաջ բերած արդիւնքները։ Ազաթանգեղոս բառ առ բառ քաղած է այս մասն ալ, սակայն ոչ թէ նախընթացին իբրեւ շարունակութիւն, ինչպէս արդեամբք է առ

<sup>1</sup> Աոր. էջ 13, 5։

կորեան, այլ բոլորովին անկապ եղանակաւ մու-  
ծած է եւ այլուր<sup>1</sup> :

Ի պատմութենէ գիտենք որ Մեսրոպայ գիր  
դասնէն վերջը՝ աշակերտաց խումբ մ'ասորա-  
կան եւ այլ խումբ մ'ալ յունական ուսման հա-  
մար առաքուեցաւ : Կորիւն կը պատմէ այս խօս-  
քերով<sup>2</sup>. « Չտարեալն ընդ իւր յերկուս բաժա-  
նեալ, զոմանս յասորի դպրութեանն կարգէր, եւ  
զոմանս յունական դպրութիւն : » Ագաթանգեղոս  
զայս ալ քաղեր է<sup>3</sup> առանց միտ դնելու ժամա-  
նակագրական վրիպակին, ի նոյն կցելով ուրիշ  
մաս մ'ալ կորեան Աղուանից նկատմամբ ըսած էն :  
Սակայն մի առ մի թուել այսպիսի կտորները՝  
չատ հեռու կը տանէր զմեզ մերնպատակէն. ուս-  
տի համեմատենք միայն այս հետեւեալն ալ :

ԱԳԱԹԱՆԳ.

(661 20—663, 4.)

ԿՈՐԻՒՆ

(էջ 28, 15—37.)

« Եւ արդ քանզի ըստ օ-  
րինակի գրելոցս առ ի մէնջ՝

« Ըստ օրինակի գրելոցս  
առ ի մէնջ՝ հարքն ի կափա-

<sup>1</sup> Ագաթ. էջ 581—582 :

<sup>2</sup> Կոր. էջ 9, 32 :

<sup>3</sup> Ագաթ. էջ 626, 8. « Եւ զնոսս յերկուս բաժա-  
նեալ, զոմանս յասորի դպրութիւն կարգեալ, եւ զոմանս  
ի Հելլէն », եւ կը կցէ. « Որ եւ անդէն յական թօթափել  
փայրենամիտքն եւ դատարկասունքն եւ անանարարոյ աշ-  
խարհքն՝ մարգարէութեալ եւ արտելաշանօթ եւ արտ-  
բանաշարանութիւնն, եւ ամենայն անանգելոցն Աստու-  
ծոյ ոչ ի իք անտեղեակք » : Այս հատածը բառ առ բառ  
քաղուած է կորեան գրքէն, էջ 19, 18 : Հոս դարձեալ  
Ագաթանգեղոս խմբագիրը միտ չէ դրած անպատեհու-  
թեան. վասն զի կորեան քով յարմար են այս խօսքերն  
որ Ս. Գրոց թարգմանութեան նկատմամբ են, ըստ որում  
կ'ըսէ կորիւն թէ « փաղապարհի զաստուածային գրոց թարգ-  
մանութիւնս ի գործ արկանէր, որով . . . մարգարէութեալ  
եւ արտելաշանօթ եւ արտարանաշարանութեալ, » եղան : Ագա-  
թանգեղոս խմբագիրն յանդէսս եւ ակամայ մատնած է  
հոս ալ ինք զինքը :

է ի մարտն զարմարու մն) զարման: Ոչ էթէ ի հին համբաւուց տեղեկացեալ եւ մատեանագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մեղէն իսկ ակնատես կերպարանացն եւ առնթմերակաց հոգեւոր գործոցն եւ լսողք շնորհապատում վարդապետութեան<sup>1</sup>, եւ նոցին արբանեակք ըստ աւետարանական հրամանացն. ոչ սուտապատում ճարտարախօսեալ առ ի մերոց բանիցն, այլ զյաճախագոյնս թողեալ . . . զհամառօտն կարգեցաք. որք ոչ զի միայնոյ ընդ միայն, այլ յորժամ Քրիստոսն զմատեանդ ընթեռնուցուն՝ յայտնի է, եւն: 7

րումն (իմ ի կատարումն) զարման: Ոչ էթէ ի հին համբաւուց տեղեկացեալ եւ մատեանագրեալ զայս կարգեցաք, այլ որոց մերիսկ ակնատես եղեալ կերպարանացն՝ եւ առնթմեր հոգեւորական գործոց, եւ լսող շնորհապատում վարդապետութեանն, եւ նոցին արբանեակ ըստ աւետարանական հրամանացն: Ոչ սուտապատում ճարտարախօս եղեալ առ ի մերոց բանից զի զիմն իմոյ կարգեցաք, այլ զյաճախագոյնս թողեալ . . . զհամատարն (՞) կարգեցաք, որք ոչ միայն զի, այլ եւ որ զմատեանսն ընթեռնուն յայտնի է, եւն: 7

Երկար խորհրդածութեանց պէտք չկայ. երկու բնագիրներն ինքնին բաւական են ցուցնելու թէ որն է բանաբաղը: Արեւան քով սկըզբնաւորութիւնն իմաստ ունի, առ Ագաթմանեանիցն է անիմաստ ընդօրինակութիւն: Արիւն ամենայն ճշմարտութեամբ կ'ըսէ՝ թէ « Ոչ սուտապատում ճարտարախօս եղեալ . . . զի զիմն իմոյ կարգեցաք » . այս բառն Ագաթմանեանիցն անյարմար տեսած կ'երեւայ եւ դուրս թողուցած (գոնեա ըստ այժմու օրինակաց գատելով): Բայց նշանաւոր է այն որ Արեւան ամենայն բնականութեամբ « ոչ միայն զի, այլ եւ որ զմատեանսն ընթեռնուն յայտնի է » խօսքն՝ Ագաթմանեանիցն ուղած է փոխել իւր կեղծեալ Մեկենասին ուղղե-

<sup>1</sup> Այս խօսքը կրկնուած է նաեւ այլուր. Հմմտ. էջ 22, 5-12:

լով խօսքը, բայց անմտադրութեամբ « Բեռ » բառն ընդօրինակած է, եւ այսպիսի « Բեռ միայնոյ Բեռ-բեռ » անհեղեղ նախադասութիւնն ստեղծած :

Բայց այս կարգի դիտողութեանց ալ պէտք չկայ : Կորիւն կ'ըսէ թէ « ականատես » է, եւ է արդեամբք : Ազատանդեղոս օրինակած է այս կտորն, եւ սակայն այս գրոց վերջին ձեւը տուողն արդեամբք չէ ականատես, թէեւ կ'ուզէ ձեւնալ այնպէս : Շատ եւ շատ տեղ ինք զինք մատնեւ է : Մանաւանդ թէ յայանապէս կը խոստովանի այլուր<sup>1</sup> թէ այս ամենայն պատմութիւններն ընթերցած է : Ահա իւր խօսքը . « Ընթերցեալ զԹորգոմեայ ազգիս զՏայաստան աշխարհիս զաստուածապարգեւ աւետեաց աւետարանին քարոզելոյ բանին կենաց, որպէս կամ զխարդ ընկաւան, կամ . . . : Եւ վասն նորին լուսաւոր վարդապետութեանն եւ հրեշտակակրօն վարուցն առաքինութեանն . . . որ եւ իստորումն ու Քրիստոսի գործեալ է վկայ ճշմարտութեան », եւն : Ուրեմն Գրիգորի վարքն եւ այլն կարգապէս է, եւ ոչ թէ ականատես է մեր

<sup>1</sup> Ազատ. էջ 24, 11 : — Էջ 657, 18 կը կարդանք . « Ապա յեա այսպիսի գործոյ սկսեալ երանելոյն Գրիգորի ծառս յաճախողոյնս դժուարապատումս, առակս խորիմացս դիւրալուրս յարմարեալ ի գորութենէ եւ հիւթոյ գրոց մարգարեականաց, լի ամենայն ճաշակօք, եւն » : Այս ալ Կորիւնէն է (էջ 21, 37—22, 11) բառ առ բառ, որ սոյնը կը պատմէ Սահակայ վրայ : Թէեւ շունինք այժմ առ ձեռն Սահակայ անուամբ ծառեր, բայց զիտեք որ Սահակ « զեկեղեցական գրոց գումարութիւնն՝ կանխաւ յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ, եւ բազում եւս շնորհապէս » որքոյ զճշմարիտ զմաստութիւնն, : Իսկ Ս. Գրիգոր լուսաւորչի ընծայուած Յաճախապատում գրոց անոր գործք շեղալը կարծեմք պէտք իսկ չկայ հաստատելու . եւ արդէն այս կարծիքն սոյն բանարաղեալ հատածին վրայ հիմնեալ է :

Ի՞նչ-ի՞նչ: Ար յայտնէ նաեւ (էջ 13, 6) թէ « Ի  
 Ինչ-ի՞նչ է ինչ-եւ եւ Ինչ-ի՞նչ է Ինչ Բերեալ զկարգ  
 պատմութեան՝ իրրեւ կարգս պատմութեան բե-  
 րեալ ըստ օրինին ըստ ժամանակի իրացն եղե-  
 լոց: » Այստեղ կը մատնուի բովանդակ խաղը:  
 Աարծենք թէ նոյն իսկ հոն՝ ուր կը ճգնի  
 այս խմբագրիչն իւր անձն ու ժամանակը կեղ-  
 ծել, հետքեր կը գտնուին այս անձին հայ ըլլալը  
 հաստատելու: Ագաթանգեղոս կը գրէ<sup>1</sup>. « Արգ  
 հրաման հասեալ առ իս «Տ» Ագաթանգեղոս ո՞ր  
 ի քաղաքէ ի մեծն Հոռոմայ, եւ վարժեալ հայերէնի  
 «Ինչ-ի՞նչ» հոռոմարէն եւ յունարէն «Ինչ-ի՞նչ»  
 «Ինչ-ի՞նչ» եւն: » Այս կտորն ըստ իս բացայայտ  
 է: « Ագաթանգեղոս «Տ» » « ո՞ր ի քաղաքէն » ա-  
 ստութեան կերպերը բաւական որոշ են. հոռոմա-  
 րէն եւ յունարէն վերջինները (դպրութիւն) « ո՞ր վար-  
 ժեալ հայրենի արուեստիւ » է, ապա ուրեմն  
 հայերէն լեզուի եւ գրչութեան հայերէն արուես-  
 տին ալ հմուտ: Աւրեմն 406էն շատ վերջը հասանք  
 նաեւ հոս. բայց արդէն կորեան գրքէն եղած  
 բանաբաղութիւնք<sup>2</sup> շատ աւելի յետս մղեցին զմեզ:

<sup>1</sup> Ագաթ. էջ 18, 26—19, 10 եւն:

<sup>2</sup> Ագաթ. էջ 628, 15—636 բանաբաղութիւն է,  
 ինչպէս նշանակեցինք: Հոս ի մէջ սլոց կը կարդանք. « Եւ  
 Իարձեալ բազում եւ անհամար գունդս գունդս վարժանաց  
 ի շէն- եւ յանձնս, դաշտականս շինակեացս եւ վտան-  
 կեացս, անձաւամուտս եւ արգելականս հաստատէր: . . .  
 Առեալ զոմանս ոմանս յաշակերտացն յիւրաքանչիւր Ին-  
 ձաւանաց եւն, » եւ ասոր նման շատ խօսքեր, որոնք կորեան  
 յարմար են, բայց ոչ Ս. Գրիգորի ժամանակին, մինչ գի-  
 տենք որ Ս. Բարսեղ է որ նոյն կողմերը կարգաւորեց վա-  
 նականները. բայց արդէն բոլորովին անտեղի է այնչափ բազ-  
 մութիւն մենաստանաց եւ այլն ի Հայս՝ Տրդատայ օրով:



Ինչպէս կանխեցինք ըսինք, Կորեան եւ Ագաթանգեղոսի գրոց բանաբաղուածեան խնդրէն բոլորովին այլազգ հետեւութիւն հանեց չ. Սարգսեան Ա., որ թէեւ կ'ընդունի թէ այս Ագաթանգեղեայ հատուածք անկապ են, իսկ առ Կորեան կապակցեալ, այսպէս կը վերջացնէ իւր հետազոտութիւնը. Կորիւն է խմբագրող եւ թարգմանիչ Ագաթանգեղեայ, եւ ինքն է որ այս եւ նման յաւելուածները առ այս գրոց մէջ կամ թարգմանաբար կամ յանձնէ շարադրելով. եւ յետոյ՝ երբ սկսաւ գրել Մեսրոպայ պատմութիւնը՝ միեւնոյն տեղերն ու հատածները կրկնեց հոս ալ<sup>1</sup>: Հոս խնդիրն այլեւայլ է: Այլ խնդիր է թէ խմբագրողը Կորիւնն է թէ ուրիշ մէկը: Բայց մնացեալ մասն ինձ անբնական կը մնայ. կ'ընդունուի թէ շատ բան Կորեան քով ի բնական տեղոջ է, իսկ առ Ագաթանգեղեայ պատուաստեալ միայն, եւ սակայն կը կարծուի նաեւ թէ Ագաթանգեղեայ վերջնական խմբագրութիւնը կանուխ է քան Կորեան գիրքը: Այս մասին դժուարին է համամիտ ըլլալ, քանի որ ստոյգ է ինձ համար՝ թէ Ագաթանգեղոս է «հէշ» տեղ բանաբաղը Կորիւնէն:

Ագաթանգեղեայ եւ Բուզանդայ գրոց մէջն ալ շատ տեղ նմանութիւնք կան եւ հատուածք՝ նաեւ բառ առ բառ<sup>2</sup>: Անտարակոյս է կարծենք որ հոս ալ Ագաթանգեղեայ խմբագիրն

<sup>1</sup> Բուզանդ, 1889, Օղոստոս, էջ 230:

<sup>2</sup> Ագաթ. էջ 658, 12 = Բուզ. Գ. զ. էջ 13: (Հմմտ. Ի. Մ. «Փատաստոս Բուզանդ... Արեւնա», 1890, էջ 34.) Հմմտ. Ագաթ. ՃԺԱ — ՃԺԳ եւ Բուզ. Գ. գ — Ե, Ե.Ն. Ե.Ն.:

է հաւաքիչը: Կան բանաբաղումիւնք նաեւ Ս. Բարսղի († 375) պատարագամատուցին հայերէն թարգմանութենէն<sup>1</sup>. բայց այս եւ այլ նման խնդրոց վրայ զանց կ'առնեմ խօսիլ, ինչպէս նաեւ ուրիշ առթի կը թողում հետազօտել թէ ինչ ազդեցութիւն ունեցած է Ազատանդեղեայ գիրքը մեր մատենագրութեան մէջ:

Կան ուրիշ նշաններ ալ, որ սոյն գրոց խմբագրչին հոյ ըլլալը կը հաստատեն: Յիշեցինք արդէն թէ Յուդիշաօ անունը յաշո եւ շաօ բառերու լուծելով՝ կ'ըսուէր. «Յուդից տեղիք թագաւորացն . . . որ եւ առնանէալ ըստ յաճախապաշտման տեղեացն՝ Յաշտիշատ»<sup>2</sup>: Կշանաւոր է նոյնպէս այս խօսքը<sup>3</sup>. «Գրիգորիոս ասէ. Ասն գիցն թէ ասես՝ զոր կոչես դու ասորա՞ն, ստոյգ իսկ են հասորա՞ն. վասն զի հասորալ են իմարդկանէ»<sup>4</sup>: Այս բառախաղն այլ եւս երկբայութեան տեղի չի թողուր: Կոյնպէս բազմաթիւ գից եւ տեղեաց անուանց թարգմանութիւնք եւ մեկնութիւնք կը ցուցնեն թէ հայագէտ էր խմբագիրն: Այսպէս Բագուան, Կեսարիա եւ այլն կամ կը մեկնուին կամ կը լեռնագրուին հոյերէն<sup>4</sup>: Յանցառ չեն նաեւ այն տեղիք որոնց մէջ յայտնապէս «աշխարհ» հայոց, «հայաս-

<sup>1</sup> Հմմտ. Հանրէն Աճօրիւն, Գ. (1889), թ. 2:

<sup>2</sup> Ազատ. էջ 606, 18—25:

<sup>3</sup> Ազատ. էջ 63, 1—5:

<sup>4</sup> Յիշենք միայն (էջ 598, 1). «Քաղաքն Կեսարացոց, զոր ըստ հոյերէն լեռնին Մաժար կոչեն», — Ազատ. 612, 6. «Բագուան, որ անուանեալ կոչի ի պարթեւական լեզուէն Գիշա՞ն», Հմմտ. 594, 1: — Ազատ. 650, 13. «Գշորեսին գահերէցսն իւրոյ տաճարին, որ Բորալի կոչին», եւ այլն:

տան աշխարհ»<sup>1</sup>, «Թորգոմայ ազգի»<sup>2</sup>, «երկիր»  
Հայոց» ըսելով՝ իւր հայրենիքը կը նշանակէ<sup>1</sup>:  
Բաց աստի ստուգիւ հայ մըն է գրոց հեղինակն,  
որ իւր հայրենեաց բովանդակ երկիրն թղա-  
ւեւ քլաւ չափած է եւ հմուտ է ամենայնիւ նոյն  
երկրին աշխարհագրութեան, դիցաբանութեան,  
սովորութեանց եւն. մինչդեռ օտարաց վրայ ե-  
ղած քանի մ'ականարկութիւնք որչափ շփոթու-  
թեամբ լի են<sup>2</sup>:

Ագաթանգեղեաց մատենին մանրակրկիտ  
քննութիւնը կը ցուցնէ թէ որչափ տեղեր կան,  
որոնք հազիւ թէ հինգերորդ դարու մէջ կրնային  
գրուիլ. եւ որչափ բան կայ անմիաբան եւ  
անյարմար այն ժամանակին որուն մէջ կ'ուզէ  
գրուած ըլլալ Ագաթանգեղոս. զասոնք կրկտել  
չէ տեղւոյս<sup>3</sup>. քանի մը հատն ալ արդէն նշանա-  
կեցինք: Ըստ իս շատ ժամանակ անցած ըլլալու  
էր որ Տրդատայ նման թագաւորի մը վրայ ժողո-  
վորդեան բերանն այնչափ բազմութիւ եւ անհե-  
ղեգ զըոյցները կազմուէին (որոնք նախնական  
բնական զրուցաց այլակերպ փոփոխութիւնքն են,) եւ  
Տրդատայ վրայ «առակք» յօրինուէին<sup>4</sup>: Ս.

<sup>1</sup> Հմմտ. Ագաթ. 20, 26, 21, 5, 18, 24, 12, 25, 12, 14, 26, 1, 185, 20 եւն եւն:

<sup>2</sup> Այսպէս՝ Տրդատ ու իս դրաւ կ'ըսէ «յամս աս-  
տուածասէր Ասորանքեաց», շփոթելով ընդ Արստանդիանոս-  
սի, ինչպէս այլուր ուղիղ կը գրէ: Էջ 645, 24. «Թագաւ-  
որեաց Արստանդիանոս . . . յերկրին Սպանիացւոց եւ Իս-  
լեաց», փոխանակ «Գաղղիացւոց», եւ այլ նմանիք:

<sup>3</sup> Այս նկատմամբ առաջին անգամ իւր կարծիքը  
յայտնեց Հ. Յովսէփ Վ. Գաթրճեան, Տէլէգրաֆիս պար-  
տիսիս. Հարթ Բ. (Վիեննա 1852), էջ. 463:

<sup>4</sup> Ագաթ. 103, 22: «Վասն այսորիկ պատշաճեցան  
բանքս այս ի բանս կարգի առակաց, թէ Իբրեւ զսէգն

Գրիգորի բերան կը գրուի խօսք մը՝ թէ մեր նախնեաց մտերմություններն ազատեց զմեզ Աստուած<sup>2</sup>։ Յայտնապէս կ'ըսուի թէ Հռիփսիմեանց պատմութիւնը շատոնց ծանօթ էր եւ կը պատմուէր<sup>3</sup>, եւ այս խօսքը Գրիգորի բերանը կը գրուի՝ հազիւ վերապէս ելած։ Ս. Գրիգորի մահը յայտնի կը յիշուի քանի մը տեղ<sup>4</sup>, եւ թէ եւ Տրդատայ մահը չի յիշուիր յայտնապէս, բայց խօսքերը կ'ակնարկեն եւ զայս, մանաւանդ թէ յայտնապէս «երանելի» (= լուսահոգի) կը կոչուի. թող որ բովանդակ գրութեան կերպը վաղուց մեռեալ թագաւորի մը ներքոյն է։ Նաեւ Արիստակէսի նկատմամբ գրուածներուն եղանակը զասիկայ արդէն մեռած կ'ենթադրէ<sup>5</sup>։

Հատ նշանաւոր է Գրիգորի տեսիլը, որ այս ձեւին մէջ միայն եւ միայն է գարու կիսուն կրնար գրուիլ։ Ար յիշուին հոս որ սուրբ աւազանէ ծնեալ «լուսակիզն» հօտերը ծնան եւ բազմացան «չբազում շամանակս» անցան տարիներ, եւ «ի յետին շամանակս» ելան գայլք ասոնցմէ,

Տրդատ, որ սիգայրմն աւերեաց զթումբս գետոց, եւ ցամաքեցոյց իսկ ի սիգալ իւրում գյորձանս ծովուց.:

<sup>2</sup> Ագաթ. 77, 23. «Այ թողեր զմեզ բնգվայր ի մեզս հորոն մերոց, եւ ի մտերմություններն նախնեաց մերոց եւն.:

<sup>3</sup> Ագաթ. էջ՝ 178, 14. «Զմահ իւրեանց եղին կնիք հաւատարիմ . . . որոց ահաւասիկ եւ հարտ է փքի ներս գարմն.:

<sup>4</sup> Ագաթ. 638—639. «Յանապատ տեղիսն հաճեալ բնակութեամբ . . . մինչեւ յոր քրիստոսակոչ հանգստեանն իւրոյ վախճանին.:

<sup>5</sup> Յիշեր միմիայն տեղ մը. (էջ 642, 10—25.) «Ապա աղաչեաց երանելի թագաւորն Տրդատ զսուրբ Գրիգորիսս, զի . . . ձեռնադրեացէ տացէ նմա եպիսկոպոս զսուրբ որդին իւր . . . զստասակէս . . . Որ սուսեւ էն ամս զհայրն վերագոյն երեւեցուցանէր եւն.», Հմմտ. 639—640 եւ այլուր։

սկսան կոտորել, եւ « եղևն արևան ճապաղիք ».  
 « Տեղեղ » ելաւ « Տրեղէն » եւ տարաւ գայլերը,  
 « այսինքն որ գնան ի ճշմարտութենէ անտի եւ  
 յուխտէ քահանայիցն՝ լինելոց են գայլք, եւ  
 հանեն ճաղճախիս արևան ի գառանց, այսինքն  
 ուխտին եւ քահանայութեանն, եւ խոռովութիւն  
 ժողովրդոց: » Տեսլեան ձեւով՝ բայց և դարու-  
 կիսուն շայոց կրօնական ճգնական պատերազմ-  
 ները կը յիշուին հոս. « Տեղեղն » արդեամբք  
 Աւարայրի ճակատն է: Բայց դեռ չէ վերջացած  
 այս ճգնաժամն, դեռ պէտք կայ յորդորի՝ թէ  
 « իսկ որ համբերէ միամտութեամբ ի գառանցն  
 . . . թեւս առնուցուն եւ յարքայութիւնն Քրիս-  
 տոսի վերանան՝: Արօնական վէճերու արձագանքք  
 են նաեւ դեռ եւս խողազէ՛՛ թագաւորին բե-  
 րան դրուած խօսքը թէ « Տայցնս մեզ զն-դէն  
 վարդապետութիւնն », որ այնպէս անկասկ  
 անդէպ է այնտեղ <sup>2</sup>:

Ուշ ժամանակի նշան է այն պարագայն՝  
 որ քանի մը տեղ արդէն կ'ընդհատուին  
 Ս. Գրիգոր եւ այլք, (այսպէս Ղեւոնդիոս <sup>3</sup>). Բայց  
 աւելի որոշ է Ղեւոնդեայ առ Տրդատ գրած թըղ-  
 թին այս խօսքը <sup>4</sup>. « Հաստատեալ կայցէ վկայու-  
 թիւն ի մէջ երկուց կողմանցս, զի պարգեւարաշ-

<sup>1</sup> Ա.գ.թ. 557—567. մանաւանդ էջ 558, որուն մեկ-  
 նութիւնը գրուած է էջ 566: Էջ 561—562 գրուած է այն  
 մարտիրոսաց նահատակութեան տեսիլն եւ մեկնութիւնը:

<sup>2</sup> Ա.գ.թ. էջ 183, 4:

<sup>3</sup> Ա.գ.թ. էջ 603, 4. 643, 1. «Նստաւ յ-ն-ի-ն-ի-ն-ի-ն շայոց մեծաց:», Այս ի հարկէ 374էն վերջը  
 միայն կրնար գրուիլ. համտ. էջ 657, 10: «Նոյնն ըսելու ենք  
 չ-յը-դէ-ր-բառին համար: (էջ 651, 25):»

<sup>4</sup> Ա.գ.թ. 617, 10—16:

խուժիւն նորոգեալ քահանայապետութեանդ ձերոյդ նահանգիդ առ ի մէջ կայցէ անշարժ յեկեղեցւոյս Ասարու<sup>1</sup> : Այս տողերը հարկաւ Ասարու եկեղեցւոյն հետ Յուսկան (Բ.) ժամանակները յուզուած ձեռնագրութեան խնդիրներէն շատ ետքը գրուած են : Հոս Ագաթանգեղոս այն դէպքը կ'ակնարկէ, ինչ որ կը գանենք պատմուած Բուզանդայ քով<sup>1</sup>. Եւ խմբագրիչն այս խօսքերով ի կողմն կ'երևէ Ասարու աթոռոյն իրաւանց, այնպէս ինչպէս ըրած է Բուզանդ :

Ագաթանգեղեայ խմբագրիչն իւր աղբիւրներն ընդհանրապէս շատ ճշգրութեամբ գործածած է. ասոր ամենամեծ ապացոյց են Արեան գրքէն առած կտորներն, որոնք ճշգիւ կը միաբանին սկզբնագրին հետ : Այս իրաւունք կուտայ ենթադրելու՝ թէ միւս ամէն աղբիւրներն ալ առանց խարդախելու գործածած է : Հարկաւ շատ մասեր ալ այն աղբիւրներէն բառ առ բառ թարգմանած պիտի ըլլայ, ուստի եւ Ագաթանգեղեայ մէջ բաւական մաս կայ թարգմանօրէն յօրինեալ :

Հռիփսիմեայ վկայաբանութիւնը յունական վկայաբանութենէ մը քաղուած կ'երեւայ, եւ այս յայտնի է Հ-ի<sup>1</sup> անուան բառախաղէն, որ միայն յունարէնիւ կրնայ մեկնուիլ : Այսպէս՝ կ'ըսուի<sup>2</sup>. « Մանաւանդ դու, Հռիփսիմէ, ըստ ա-

<sup>1</sup> Բուզանդ, Ե. Իթ :

<sup>2</sup> Ագաթ. 139, 5 : Յոյն թարգմանութեան մէջ այս բառախաղն աւելի որոշ է (PL. § 75, p. 38, 47.) *Εἰ δὲ μάλιστα, Πιρίμη, κατὰ τὸ ὄνομά σου ἀληθῶς ἐξῆροῦρης* : Արնայ մեկնուիլ այս խօսքն այնու՝ թէ հեղինակը կամ

նախորդ քում արդարեւ ընկեցեալ եղեր<sup>2</sup> : Յայտ է թէ Քիփիչի անունը ՚ριπτω (ընկենում) բայէն է<sup>1</sup> : Ս. Գրիգորի վկայարանութիւնն ալ Տին վկայարանութեան մը համեմատ ձուլուած է, եւ շատ մաս անկէ բառ առ բառ առնուած . որուն նշաններ կան շատ<sup>3</sup> : Արդապետութիւնն ուրոյն գիրք է, որուն սկզբնաւորութիւնը հիւսուած է Ագաթանգեղեայ առաջին գրոց վերջերը . վերջաւորութիւնն ալ ճշգիւ սորական ձեռագրաց սովորական վերջարանով կ'աւարտի<sup>3</sup> . «Աստարեցաւ վարդապետութիւն սրբոյն Գրիգորի եւն<sup>4</sup>» : Շատ մասեր ենթագրել կու տան թէ Եղեսեան դպրոցէն էր այս վարդապետութեան հեղինակը . ասոր նշան են նաեւ ասորական ինչ ինչ ասութիւններ («ցանկել զխրամատութիւն», «պոռնկել ի գիտ» եւն եւն<sup>5</sup>) : «Եւթներորդ դարու»

խմբագրիչը յունագէտ էր, եւ կրնար այսպիսի բառախաղ մ'ընել, թէեւ միշտ յունարէնի անտեղեակ հայ մեծամասնութեան համար հարկաւ անըմբռնելի կը մնար այս բառախաղը :

<sup>1</sup> Թէ ստուգիւ վկայարանութիւն մ'է Ագաթանգեղեայ այս մասը, յայտնի է անկէ որ սկզբնաւորութիւնն (էջ 112, 18. «Եւ եղեւ ընդ ժամանակսն ընդ այնոսիկ, եւն») եւ վերջաւորութիւնը (էջ 163, 24. «Արդ ի քսան եւ ի վեց ամսոյն հոռի կատարեցաւ, եւն») ճշգիւ ըստ վկայարանութեանց են :

<sup>2</sup> Այսպէս Առաւորչի բերան կը գրուին (82—83 եւն) այս խօսքերը «Տէր զօրացո՞ զժողովո՞յն . . . զի յաջիւնոյն թշնամոյն . . . մի թողուր զժողովո՞ր քո եւն», : Այսպիսի խօսքեր լի են այն աղօթքին մէջ՝ որով Ս. Գրիգոր շարչարանաց ժամանակ համբերութիւն կը խնդրէ իւր անձին համար : Այլ նշանք ալ չեն պակասի :

<sup>3</sup> Ագաթ. էջ 538, 24 :

<sup>4</sup> Ագաթ. էջ 254, 440 եւն : — «Պղծագունդ այսոց», հետ «անուշահոտ ողբ», հրեշտակաց (էջ 243, 2) արեւելեան հեղինակի նշան է, ինչպէս նաեւ այն՝ որ կը ստիպուի հակառակ գրել «մարմնեղէն թեւաւոր», հրեշտակաց գաղափարին, որ հին Հայոց եւ Պարսից գաղափարաց համեմատ է :

նկատմամբ ըսուածը նոյն է ընդ Զդօնի<sup>1</sup>, [թէ եւ յունական շարք քով ալ նոյնպիսի կարծիք կան: Ըսորի հեղինակի գրչէն է այս խօսքը.<sup>2</sup>

“ Զի նչ իցէ որ ասէ՝ Բանն, միթէ քորքաւ ըկ իցէ ”. յայտնի է որ ասորերէն է ܕܐܝܢ ܐܝܢܐ, իսկ ܕܐܝܢܐ (դուսար ձայնի) = Բան: Սակայն նաեւ յոյն մատենագիրք եկեղեցւոյ գիտեն λόγος πρῶτος αἰώνος ասուածիւնը: Տեղ տեղ ալ յունական կերպարանք ունի սոյն վարդապետութիւնն քան ասորական. եւ արդէն այս ալ ܐܘܪܘܫܝܡ ܕܐܝܢܐ մըն է, որ յայտնի է անկէ՝ որ խմբագիրն մէջը շատ կտորներ հիւսած է խօսքն ուղղելով առ հայ ժողովուրդը, յիշեցրնելով Հռիփսիմեանց վկայութիւնն եւն<sup>3</sup>: Ազաթանգեղոս կը սէ<sup>4</sup>. “ Եւ զայլոցն անուանս, [թէ եւ կամիցի որ, ոչ կարասցէ շորթել: ” Արնար Լնթագրուիլ [թէ հոս ասորի բնագրին մէջ ըլլար ܕܘܟܘܢ (գիտել), եւ խմբագրին ܕܘܟܘܢ (շարժել) ընթերցած ըլլայ: Սակայն յոյն [թարգմանիչը τῶν δὲ λογίων τὰ ὀνόματα δυσθέρητα [թարգմանելով՝ շորթել չէ ընթերցած<sup>5</sup>. եւ արդէն մեր մատենագարանին մի օրինակը (ԹԻՒ 54.) Բն-ել կ'ընթերցու:

Անքերնք խօսքերնիս կրկնելով մեր հանած հետեւութիւնը՝ [թէ Ազաթանգեղոս ܐܘܪܘܫܝܡ ܕܐܝܢܐ է այլեւայլ աղբիւրներէ, եւ այս խմբա-

<sup>1</sup> Ազաթ. 64 եւ 498: Հմմտ. Զդօն, տպգր. Կ. Պ. 1824, էջ 36:

<sup>2</sup> Ազաթ. էջ 313, 9:

<sup>3</sup> Ազաթ. 218, 361, 382, 400 եւն:

<sup>4</sup> Ազաթ. էջ 630, 22:

<sup>5</sup> PL. § 153, p. 78, 96:



գիրն հայ եկեղեցական մի է Ե դարուն կէսերը, որ հմուտ էր յոյն եւ ասորի (կ'երեւայ թէ նաև պարթև) լեզուաց, ուստի նոյն ժամանակի Հայոց կրթեալ դասէն: Իւր աղբիւրներն ընդհանրապէս լաւ գործածած, եւ շատ մասեր Բարձրաձէն է միայն: Շատ չի տարբերիր մեր կարծիքէն այն կարծիքն, որ կ'ընդունի թէ այս գրոց մեծ մասն նախնաբար յունարէն գրուած է, ապա (ասորի) ձեռք մը կերպարանափոխ ըրած, եւ ի վերջոյ հայ մը մասամբ թարգմանելով եւ մասամբ յանձնէ յօրինելով խմբագրած է այս մատեանը: Ազատանգեղեցայ պատմական եւ գիտնական արժէքն պատահաւոր թիւս կը հետազօտենք. սակայն այս եւ այլ ամէն խնդրոց մանրաքննն հետազօտութիւնը կը թողունք անոնց, որ մասնաւոր եղանակաւ Ազատանգեղեցայ խնդրով կը զբաղին:

### 7.

Հայոց դարձին պատմութիւնն աւանդած են մեզ Ազատանգեղոս, Խորենացի եւ Զենոբ, որոնք աղբիւր են միւս այլ հայ պատմագրաց այս ժամանակի պատմութեան, թէպէտ ասոնցմէ անկախ՝ ակնարկութիւնք կը գտնուին Բուզանդայ, Եղիշէի եւ այլոց քով: Զենոբ այժմու կերպարանաց մէջ կ'ենթադրէ զԱզատանգեղոս, նոյնպէս նաև Խորենացի, որ թէև ուրիշ աղբիւրներ ալ կը գործածէ այս մասին մէջ, բայց նաև էական աղբիւր մ'ալ համարած է զԱզատանգեղոս. ուստի եւ այս ժամանակի պատմու-

Թեան երաշխաւորութեան մեծագոյն մասն այս գրոց վրայ է, այնպէս որ Հայոց դարձին պատմութեան քննութիւնն՝ է միանգամայն Ագաթանգեղեայ գրոց վաւերականութեան քննութիւն: Այս մտօք են մեր այս գիտողութիւնք. ուստի ի բաց կը մնան մեր հետազօտութեանէն այն կէտերն՝ որ Ագաթանգեղեայ գրութեան մէջ չեն գտնուիր:

Ագաթանգեղեայ գրոց վաւերականութիւնն առաջին անգամ խորին գիտողութեանց ենթարկեց Բոլանդեանն Սդիլդինկ<sup>1</sup>, որուն սուր գիտողութեանց շատերը ցայսօր իսկ զօրութիւն ունին, թէպէտ եւ հեղինակը սոյն գրոց բնագրին եւ անոր հայ մատենագրութեան մէջ բռնած գրիցն անծանօթ էր: Իւր գիտողութեանց հետեւութիւնն է՝ թէ այս գրոց մէջ կայ շատ բան ճշմարիտ եւ յարգի, բայց նաեւ շատ բան սուտ կամ առասպելական. եւ ինք զասոնք իրարմէ զատելու ալ ջանաց: Գժբախտաբար այս հեղինակին հետեւող չգտնուեցան շատերը, որոնք այս նիւթոյս վրայ գրեցին<sup>2</sup>: Այլազգ ալ անհնար էր. վասն զի այնպիսի հաստատուն եւ անվիճելի հեղինակութիւն մըն էր իրենց համար <sup>3</sup>Տրդատայ քարտուղարը, որ յայտնապէս կ'ըսուէր<sup>3, 4</sup> Առաջին աղբիւր պատ-

<sup>1</sup> Acta Sanctorum Septembris Tomus VIII. (Antverpiae, 1762) pp. 295—319, եւ յէջն 320—413 Ագաթանգեղեայ յոյն բնագիրը հրատարակելով՝ հանդերձ ծանօթութեամբ:

<sup>2</sup> Հմմտ. Չամեան, Պատմութիւն Հայոց, Հատոր Ա. Վենետ. 1784, էջ 359—420, եւ ծանօթութիւնք Բ. գրոց՝ էջ 613—679: Հմմտ. նաեւ Աւգերեանի, Ինճիճեանի գործերը, եւն:

<sup>3</sup> Հ. Մ. Վ. Աւգերեան, Լիակատար Վարդ եւ Վկայարանութիւն Սրբոց: Հօր. Գ. Վենետ. 1812, էջ 48 եւն:

մութեանս է ժամանակակից եւ ականատես ատե-  
նագւպիրն Տրդատայ Ագաթանգեղոս, . . . նմին իրի  
աւելորդ է մեղ կրկին հետազօտել, և կամ յայ-  
տնագոյնս. « Զբովանդակ պատմութիւն . . . հաս-  
տատութեամբ ունիմք յերկուց ժամանակակից եւ  
ականատես վկայից՝ յԱգաթանգեղոսէ եւ ի Զե-  
նորայ. վասն որոյ զհարօրէիս այլ-սորէս անն-  
թեան՝ » :  
Այսպէս նաեւ այլք :

Այս դարուս մէջ երկու հեղինակք իրարմե-  
անկախ եւ առանց իրարու գրութեանց ծանօթ  
ըլլալու՝ այս միեւնոյն նիւթոյ վրայ զբաղեցան եւ  
գրեթէ նոյն հետեւութեան հասան : Առաջինն՝  
Հ. Յ. Վ. Գաթրճեան՝ իւր Տիեզերիսն Պարսն-  
թեան երկրորդ հատորին մէջ ջանաց ընդհանուր  
պատմութեան հետ միաբանել հայ պատմութեան  
այս մասերը<sup>2</sup>, եւ ապա ուղղակի Ագաթանգե-  
ղեայ պատմական վաւերականութեան քննու-  
թիւն մ'ընելով՝ հասաւ այս հետեւութեանց :  
1. Գրոցս մէջ կը նշմարուի սակաւ ինչ անտե-  
ղեկութիւն թէ քաղաքական դիպաց եւ թէ ե-  
կեղեցական հնախօսութեան ժամանակին, որուն  
մէջ գրած կը հռչակէ ինք զինք : 2. Աւելաբա-  
նութիւն եւ չարիազանցութիւն շատ տեղ : 3.  
Նորանշան եւ զարմանալի բաներ պատմելու ցան-  
կութիւն. այսպէս շատ բան ըստ Ս. Գրոց ձեւած  
է, ինչպէս՝ Հռիփսիմեայ կոխը, Տրդատայ խողա-  
կերպ ըլլալը, Ս. Գրիգորի վերայ ձգուելու պա-

<sup>1</sup> Անդ, էջ 70 եւն :

<sup>2</sup> Վիեննա, 1852, էջ 167—180, բայց մանաւանդ էջ  
459—464, եւ 476—480 :

բագայքն եւն: — Սակայն կը յաւելու թէ այս խիստ բանազատութիւնը մինչեւ հոս միայն կրնայ յառաջանալ եւ ոչ յառաջ, ուստի եւ չի կրրնար «ընդ երկրորդական ինչ հանգամանաց՝ զէական մասունս պատմութեան Հայոց ջնջել<sup>1</sup>» կամ, ինչպէս յետոյ գտուեց<sup>2</sup>, Ղլգաթանդեղոս «այն բազմութիւ վկայարանութեանց կարգը պէտք է դասել՝ որոնց նահատակներուն գոյութիւնն ստոյգ, բայց պատմութիւնը սակաւ մասամբ կամ ըստ գոյացութեան մինակ ստոյգ է»:

Ճշգիւ քսանեւհինգ տարի վերջը գրեթէ նոյն կարծիքը յայտնեց Աութումիս<sup>3</sup>, որուն հանած հետեւութիւնն է՝ թէ սոյն գրոց մէջ կայ էրէտ գլխաւոր ուղղութիւն ունեցող աղբիւր, (բայ ի կորեան գրքէն եւն.) 1. Գաթաճիան աղբիւր մը կամ Վարդ Գրէտորէ, որուն մէջ են Ղլգաթանդեղեայ պատմական մասերը<sup>4</sup>. եւ այս աղբիւրն ընդէ է եւ Գաթաճիան, թէեւ կան մէջը շատ մթութիւնը եւ վրիպակը եւս: 2. Վիպագաթաճիւնն Ս. Գրիգորի եւ Հովսիփեանց<sup>5</sup>, որ

<sup>1</sup> Ընդ, էջ 476—477. § 118:

<sup>2</sup> Հմմտ. Հնդէն Ընդէն, Գ. (1889) Թ. 13, էջ 43:

<sup>3</sup> Agathangelus, S. 47—60.

<sup>4</sup> Այս աղբիւրն կը վերաբերին ըստ Աութումիսի. § 6 (25) — § 25 (57). § 51 (97) — § 57 (106). § 127 (577) — § 131 (583). § 132 (584) — 134 (590). § 141 (602) — 144 (608). § 144 (608) — 144 (609). § 149 (616). § 150 (619) — 152 (623). § 154 (626) — 155 (627). 155 (629) — 156 (629) § 158 (633) — 162 (642). § 168 (652) — 171 (656). — Այս տեղ § կը ցուցընէ յունական թարգմանութեան հասածներն, իսկ փակագծի մէջ գրուած թուերը հայ բնագրին (հին) ազգաբնութեան էջերը:

<sup>5</sup> Ղլգայարանական մասերն են ըստ Աութումիսի § 28 (57) — 53 (97). § 57 (106) — 111 (547). § 121 (564) — 121 (565). § 122 (566) — 126 (574). § 127 (575 — 577). §

պատմական մեծ արժէք մը չունի: 3. Տէրիւ  
Գրիգորի<sup>1</sup>: Մեծաւ հմտութեամբ ջանաց հեղին-  
ակն անջատել իրարմէ՝ թէ որ մասը պատմա-  
կան է եւ որը լոկ վկայարանական: Վերջապէս  
Տրդատոյ պատմութեան վրայ բաւական ընդար-  
ձակ «Գրոհ» մը հիւսած է Հ. Գ. Վ. Ալիշան  
խը նորատիպ մեծագործ Այրարատի մէջ<sup>2</sup>, ուր  
շատ հետաքրքրական դիտողութիւնք կան, թէ եւ  
դրուագին ընդհանուր նկարագիրն աւելի ներ-  
բողական է: Ար թողում յիշել ուրիշ երկրոր-  
դական գրութիւններն այս նիւթոյս նկատմամբ:

Թէպէտ այս քննութիւնք բաւական պար-  
զեցին Հայոց պատմութեան այս նշանաւոր կէտին  
միտարութիւնը, բայց դեռ շատ բան կայ լուսա-  
որելու եւ պարզելու, եւ մեզ ալ «ցանկալի էր  
ի սկզբանս հանդիպիլ քաջի պատմաբանի»<sup>3</sup>. ուս-  
տի եւ այս նկատմամբ որեւէ հետազոտութիւն  
միշտ հետաքրքրական է, թէ եւ քիչ բան նոր  
բովանդակէ: Իսկ մեր նպատակն է՝ ինչպէս ըսինք՝  
պատմաբանական հետազոտութիւն ընել Հայոց  
պատմութեան այս մասին, այլ լոկ այնչափ՝ որ-  
չափ կապ ունի այս ինդիքն Ազգութանդեղեայ  
գրութեան հետ. ասով կարծենք կ'ամբողջանայ

131 (583) — 132 (584). § 134 (590) — 140 (602). § 144  
(608). § 144 (609). § 145 (610) — 148 (616). § 149 (617)  
— 150 (619). § 153 (623) — 153 (624). § 158 (634). § 161  
(639) — 162 (641). § 163 (641) — 168 (652): Տէրիւ Կն'  
§ 111 (548) — 121 (564). § 121 — 122 (568). § 126 — 126  
(575). § 152 (623):

<sup>1</sup> Ասոնց նկատմամբ հմտ. Garabed Thouma-  
ian, Agathange, etc. Lausanne, 1879. pp. 16—33.

<sup>2</sup> Հ. Գ. Վ. Ալիշան, Այրարատ, Բնաշխարհ Հայաս-  
տանեայց: Վննակի, 1890. էջ 372—393:

<sup>3</sup> Անդ, էջ 373, բ. 16:

սոյն գրոց նկատմամբ մեր ձեռնարկած համառօտ ուսումնասիրութիւնը:

Ազատանդեղոս իւր պատմութիւնը կը սկսի Արտաւանայ կործանմանէն (էջ 29). եւ իւր այս պատմական մասը հասցնելով մինչեւ էջ 49 կը սկսի Ս. Գրիգորի նահատակութեանց նկարագրութիւնը: Այս մասին մէջ կը պատմէ Ազատանդեղոս. 1. Արտաւան սպանուեցաւ յԱրտաշէ որ Սասանայ որդին էր, եւ Պարթևք հնազանդեցան: 2. Գոյժ եկաւ առ Խոսրով, որ էր երկրորդ տէրութեանն Պարսից (Արշակունեաց), զի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն  $n$ : 3. Արշակեց Խոսրով ի վրէժ Արտաւանայ արեան ընդդէմ՝ Արտաշէի, եւ այս պատերազմները տեւեցին 10 տարիէն աւելի: 4. Խոսրով նենգութեամբ Պարսից՝ կը սպանուի, եւ Տրդատ Յունաստան կը փախչի: 5. Տրդատ Հռոմայեցւոց օգնութեամբ կը տիրէ հայրենի աթոռոյն: Այս կէտերը նշանաւոր մասերն են Ազատանդեղեայ այս մասին պատմութեան, զոր բաւական մանր պարագայներով կը պատմէ: Այս ամենայն համեմատելով ընդհանուր պատմութեան հետ՝ կը տեսնենք՝ որ 1. ճիշդ եւ պատմական են. բայց եւ 2. Մթին եւ հարեւանցի, շատ դէպքեր ի մի ձուլուած, միով բանիւ՝ պատմութիւն բայց ոչ ակնհայտի եւ ոչ շահանակի, այլ է լրոյ պատմագրող հեղինակի: 3. Եթէ Ազատանդեղեայ մանրամասնութիւնք համեմատուին օտար պատմութեան հետ՝ փոփոխակի զերար կը լրացընեն եւ կը լուսաւորեն:

Նախ՝ շատ գեղեցիկ վկայութիւն մըն է՝  
 թէ հայ Արշակունիք երկուրէք գահ էին յետ  
 պարթեւական Արշակունեաց: Այս ցեղը շատ մը  
 գահակալ ճիւղերու բաժնուած էր, գլխաւորու-  
 թիւնը մնալով բուն կենդրոնական ճիւղին՝ Պար-  
 թեւ-Արշակունեաց: Պատմութեան այս մասը  
 հետազօտել աւելորդ համարելով<sup>1</sup>, կը յիշե-  
 ցնենք միայն որ սոյն կարծիքն ընդհանուր էր, եւ  
 ծանօթ նաեւ Հայոց մէջ. եւ արդէն բուզանդ իւր  
 «Մաղքթաց» թագաւորներն Արշակունի գիտէ,  
 եւ թէ «Նոցա եւ Հայոց թագաւորացն մի աղ-  
 գաւորութիւն էր տոհմին բնութեան»<sup>2</sup>:

Հայ բնագրին մէջ մանրամասն չլին յի-  
 շուիր Արտաւանայ եւ Արտաշրի պատերազմները,  
 բայց յոյն թարգմանութեան մէջ կայ ընդար-  
 ձակ մաս մ'այս տեղ. որուն վրայ յետոյ կը խօ-  
 սինք: Ըստ Հայոցն այս դէպքն եղաւ այսպէս.  
 «Ընդ նուազել ժամանակի թագաւորութեանն  
 Պարթեւաց, ի բառնալ տէրութեան յԱրտաւա-  
 նայ որդւոյ Վաղարշու, ի սպանանել զնա Արտա-  
 շրի որդւոյ Սասանայ, — որ էր նախարար ոմն ի  
 Ստահր գաւառէ . . . արդ իբրեւ յետ մահուն՝  
 հասանելոյ գուժիս այսորիկ առ Խոսրով թա-  
 գաւորն Հայոց . . . թէպէտ եւ վաղ լուեալ զբօթն,  
 ոչ ինչ ժամանեաց հասանել յամբողջ գործոյն

<sup>1</sup> Հմմտ. այս նկատմամբ A. Gutschmidt, die Ge-  
 schichte Irans und seiner Nachbarländer. Tübingen 1888,  
 VII, 172 S. Այս գիրքն արժանի է որ թարգմանութեամբ  
 ծանօթանայ հայ հասարակութեան, ինչպէս նաեւ ուրիշ  
 նշանաւոր գործք մ'ալ սասանեան պատմութեան՝ Th.  
 Nöldeke, Tabari's Geschichte der Perser. Leyden, 1879.

<sup>2</sup> Բուզանդ, Գ. գլ. ք. էջ 14, 7 (տպ. վէճեա. 1832)

պատերազմի իրացն պատրաստութեան:» Միջանկեալ եւ անկապ երեւցող նախագասութենէ մը վերջը<sup>1</sup>, զոր քիչ մ'ետքը կը տեսնենք, կը շարունակուի՝ թէ «Արդ ի միւս եւս ի գլուխ տարւոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել . . . գումարել զզօրս Աղուանից եւ Վրաց, եւ բանալ զգրունս Ալանաց եւ զհերոյ պահակին, հանել զզօրս Հոնաց, ասպատակ զնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչեւ ի դրունս Տսրոնի: Աւար առեալ զերկիրն . . . եւն»: Միեւնոյն ճոխութեամբ կը պատմէ մատենագիրը միւս մասերն ալ այս պատերազմին:

Արտաքին պատմութենէն գիտենք Հայաստանի Գ. դարուն սկիզբներն ունեցած վիճակը: Կարակալա շումայեցւոց ինքնակալը (211—217 Յ. Բ.) արեւելք արշաւած էր. եւ խաբէութեամբ իրեն կանչեց զԱրգար Աւոհայաստանի վերջին քրիստոնեայ թագաւորն, եւ Աւոհայաստան եղաւ նահանգ շումեական պետութեան: Նոյնպէս կ'ուզէր ընել զՀայաստան, եւ յարմար առիթ համարելով այն պարագայն՝ որ Հայոց Սանատրուկ թագաւորը գժտած էր իւր որդւոց հետ՝ կանչեց զինքն հաշտեցրնելու պատրուակաւ, բայց քովն արդեւեց զանիկայ: Հայք զէնք առին, եւ չարաչար խորտակեցին զշումայեցիս՝ որոց զօրավարն էր Թէֆլէֆոս անձնապահապետ կայսեր<sup>2</sup> (216 Յ. Բ.): Կարակալա Պարթեւաց

<sup>1</sup> Ագաթ. էջ 30, 9—15:

<sup>2</sup> Գէնի Կոմիտաս, ՀԵ, 12 եւ 21. «Եւ զթագաւորն Հայոց, քանզի գժտեալ էր ընդ որդիսն իւր, թղթովք աս



դէմ պատերազմ գրգռեց ճշգիւ նոյն ատեն, եւ ի սկզբան յաջողութեամբ մտաւ Պարթեւաստան, աւարեց Մարաստանի մեծ մասը, առաւ զԱրբեղա եւ Պարթեւաց Արշակունեաց գերեզմաններն աւերեց, եւ ապա դարձաւ Եդեսիա ձմերելու. բայց քիչ մ'ետքը սպանուեցաւ (217 Յ. Ք:) Այս պատերազմին մէջ Հայք Պարթեւաց կողմն էին, այնպէս որ Սպարտիան «Տայկական եւ պարթեւական պատերազմ» կ'անուանէ զայն<sup>1</sup>, եւ արդէն Հռոմայեցիք Հայաստանի մէկ մասն այրեացաւեր ըրած էին: Կարակալայի յաջորդը՝ Մակրինոս չկրցաւ Արտաւանայ դէմ դնել եւ Մծբնայ քով երկու անգամ մեծապէս պարտեցաւ, եւ ստիպեցաւ խաղաղութիւնը գնել: Իսկ Հայոց Տետ խաղաղութիւն ընելով ազատ թողուց Հայոց դշխոյն՝ որ 11 ամսէ ի վեր բանտարկեալ էր, թագ զրկեց Տրդատ (Բ.) թագաւորին Հայոց՝ որ յաջորդեց իւր Տօր տեղ, զոր Կարակալա բանտարկած էր եւ այնպէս մեռած բանտի մէջ: Տրդատ ետ առաւ ի Հռոմայեցւոց իւր երկիրները (218 Յ. Ք):<sup>2</sup>

ինքն կոչէր պատճառեալ թէ զերկպառակութիւնն լուծանիցէ. այլ արար ընդ նմա՝ որպէս եւ ընդ Արգարու: Բայց ոչ եկին Հայք ի Հնազանդութիւն, եւ գրգռեցան ի մարտ պատերազմի: . . . Առաքեաց զԹէոկրիտոս զօրու ի վերայ Հայոց, որ կռփեալ չարասար պարտեցաւ ի նոցանէ:»

<sup>1</sup> Սպորտիանոս, ի Կարակալա, 6: Հմեռ. Գիտն, ՀԻ. 18:

<sup>2</sup> Գլխն Կարեւոս, ՀԻ. 27. «Եւ պատերազմին որ գրգռեալ էր ընդդէմ Հայոց, զորմէ բանք եղեն ի վեր անդր՝ վաղվազակի լինէր կատարած. քանզի առ Տրդատ զթագարքայութեան, որ առաքեցաւ առ նա. եւ մայր իւր՝ զօրունէր Տարանտաս ամիսս 11 ի դիպահուց՝ արձակեցաւ, եւ յետս տուաւ ամենայն կապուս կողոպուտ Հայաստան աշխարհին եւ ամուրքն զոր գրաւեալ ունէր Հայք իւր (Տրդատայ) ի Գամիրս: Բայց զի զարձաթն՝ զոր ամ ըստ ամէ առնոյր ի

Արեմն Խոսրովն առ Ագաթանգեղեայ՝ այս թուէն վերջն ըլլալու է. եւ արդեամբք այս Տրդատ սահաւակեաց եղաւ, եւ մեռաւ յամի իրրեւ 221 (Յ. Բ.:

Խոսրովու ատենն եղաւ այն մեծ փոփոխութիւնն որ Արեւելից ճակատագիրն որոշեց, այսինքն Սասանեան հարստութեան կանգնիլը (226 Յ. Բ.:

Հոս կը սկսի Ագաթանգեղեայ պատմութիւնն, որուն ճշգիւ միարան է եւ արտաքինն. ըստ որում գիտենք թէ Արտաշիր Արտաւանայ յաղթելէն վերջը զիմեց ի Միջագետս եւ յԱսորիս, եւ իւր զէնքերը դարձուց Մարաց զէմ: Նուաճեց այն երկրին մեծ մասն եւ ապա յարձակեցաւ Հայաստան, ուր փախած էին Արտաւանայ որդիքն եւ բազմութիւն մ'ի Մարաց: Արտաշիր յաղթուեցաւ չարաչար եւ փախաւ, եւ փութաց նոր զօրք ժողովելու: Այսպէս Գիոն կասիոս<sup>1</sup> (229 Յ. Բ.:

Հոսմայեցոց՝ ոչ ընկալաւ, այնր պատճառք Գաղթինացիք էին՝ որ յարձակեցան ի Գաղիա. եւնի: — Հմմտ. Հերոդոտէն, Գ. 14 եւն: Յոսէոս կողոտէոս, ի Մակրինոս, եւն:

<sup>1</sup> Գիոն կոտէոս, 2. 3 եւ 4. «Պարսիկ ոմն Արտաշիր անունն, յանազատ տոհմէ, յինքն գրաւէր զիշխանութիւն Պարթեւաց եւ տանէր առ Պարսիկս եւ թագաւորէր ի վերայ նոցա: Ի նմանէ սերեալ եկեալ սսեն եւ զտճմ խոսրովու: Թեո մահուան Աղեքսանդրի Մակեդոնացոյ զիշխանութիւն Պարսից եւ Պարթեւաց եւ զայլոց ազգաց ունէին Մակեդոնացիք՝ պայտառք նորա, մինչ չէ. զփմեանս կործանեալ մարտի պատերազմաւ: Այլ մինչդեռ այսպէս փախտեալ էին՝ Արշակ Պարթեւ յանձնէ ի բաց թօթափել մտարեբեր զուծ Մակեդոնացոց, եւ եկաց արքայ Պարթեւաց, որք որդի ի հօրէ սսին զթագաւորութիւնն, որոց վերջին եկաց Արտաւան: Այս Արտաշիր Պարսիկ՝ յորժամ յաղթեաց Պարթեւաց երեքումբք պատերազմօք, եւ սպան զթագաւոր նոցա զԱրտաւան... ի Հայս յարձակէր. ուստի մերժեալ ի բնակչաց անտի, եւ ի Մարաց եւ յորդոց Արտաւանայ՝ որ դաշնաւորք էին նոցա, դարձաւ ի փախուստ»

Այս լիութի միաբանութեան հետ՝ կան նաեւ դոյզն անմիաբանութիւնք: Ըստ օտարաց՝ Արտաշիր նախ արշաւեց ի Հայս. ըստ Ագաթանգեղեայ այնպէս կ'երեւայ թէ նախ խոսրով արշաւանաց սկիզբն ըրաւ: Բայց այս կրնայ մեկնուիլ այսպէս: Ագաթանգեղոս կը գրէ՝<sup>1</sup>. « Թէպէտ եւ վաղ լուեալ զբօթն, ոչ ինչ խափանեաց հասանել յամբովկ գործոյն պատերազմի իրացն պատրաստութեան: Յետ այնորիկ Գործեալ լինէր յերոցն եղեւոյ մեծաւ տրտմութեամբ, զի ոչ եհաս նմա գործել գործ. ի մեծ տրտմութենէն եւ յիրացն վճարելոյ Գործեալ անցեալ եկեալ լինէր յաշխարհ իւր: » Այս խօսքն ըստ ինքեան անկապ է, եւ անըմբռնելի է թէ ինչ կը նշանակէ « դարձեալ անցեալ եկեալ լինէր յաշխարհ իւր » նախադասութիւնը, մինչդեռ վերն յայտնի ըսաւ թէ « ոչ ժամանեաց յամբովկ գործոյն պատերազմի »: Կարծենք թէ այս տողերուս մէջ պակաս է Ագաթանգեղեայ բնագիրը, ուր կը պատմուէր անշուշտ Արտաշրի արշաւելն ի Հայս, եւ թէ խոսրով՝ թէ եւ չէր պատրաստուած՝ ստիպուեցաւ գոնէ պաշտպանողական դիրք մ'առնուլ, եւ թերեւս ձմեռուան ժամանակը կրցաւ դառնալ իւր տեղն (ի հարկէ « մեծաւ տրտմութեամբ եւն ») եւ պատրաստուիլ յաջորդ տարւոյն իւր արշաւանաց<sup>2</sup>:

որպէս ոմանք համարին. քանզի այլք դառնալ ասէն յետո՛յ զի յաճախագոյն եւս զօրս գումարիցէ: Երկիւղալի եղև այրն, զի զօրու ծանու սպառնայր ոչ միայն Միջագետաց, այլ եւ Ասորոց. եւն: »

<sup>1</sup> Ագաթ. էջ 30, 5—15:

<sup>2</sup> Ագաթ. էջ 30, 16 (ուր յայտնապէս կ'ըսուի. « ի վասն եւս ի գլուխ տարւոյն եւն. ») — 33, 25:

Հայոց [Թագաւորին օգնականաց մէջ կը յիշուին Աղուանք, Ափինք, Ճիղբք, Հոնք<sup>1</sup>, Կասպք “եւ այլ եւս որ ի սմին կողմանց” եւ Վերք: Այս պարագայն երաշխաւորութիւն կ’առնու ուրիշ ան[թիւ նուագներէ՝ որոնց մէջ Հայոց բանակին մէջ կը գտնենք այս ազգերը: Բայց զարմանքն այն է՝ որ չի յիշուիր [Թէ Մարտ եւ Արտաւանայ որդիք փախած էին ի Հայս (ըստ Գիոնի Կասեայ), մանաւանդ [Թէ կը յեղձեղուի [Թէ Արտաւանայ ազգակիցք չՏետեւեցան Խոսրովուհրաւէրին<sup>2</sup>, այլ Արտաշրի հնազանդեցան: Թերեւս ասոնց աղօտ յիշատակութիւն մ’ըլլայ Ագաթանգեղեայ ուրիշ մէկ խօսքը<sup>3</sup>, ուր բաց ի յիշեալ ազգերէն՝ կը յիշուին “եւ որ ասորէն ասորէն եկեալ հասեալ էին ի [Թիկունս:”

“Իսկ ի գալուստ ասորի ասորի, կը յաւելու Ագաթանգեղոս<sup>4</sup>, զոր բազում կուտէր յոյժ, գումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր, եւ եւս բազում քան զնոյն ասպատակ տիրեալ զկողմամբքն Ասորեստանի եւն:” Եւ ի վերջոյ կը յայտնէ<sup>5</sup> [Թէ “Ասորի ստէպ ստէպ զայս օրի-

<sup>1</sup> Ագաթ. էջ 30, 23. եւ 104, 25: Կրթութիւնի այս անուան նկատմամբ բրած գիտողութիւնը յետոյ կը տեսնենք:

<sup>2</sup> Ագաթ. էջ 31, 25—32, 22. “Զի [Թէպէտ եւ էր ինքն ի մեծի արամութեան վասն բնութեան եղբայրութեան ազգասոհման, զի հնազանդեցան եւ ի ծառայութեան մասին համբարձելոյ [Թագաւորութեան Ստահրացոյն, եւ ընդ նմին միամտեցան. զի էր Խոսրովու եւ գեպան արաբեալ՝ զի իւրեանց տոհմայինքն ի [Թիկունս եկեացեն... սակայն տոհմքն եւ ազգայեաքն եւ նախարարքն եւ նահապետքն Պարթեւաց ոչ լինէին ունկնդիր. զի միամտեալ եւ հաւանեալ եւ նուաճեալ էին ի տէրութիւնն Արտաշրի եւն:”

<sup>3</sup> Ագաթ. էջ 32, 23—33, 2:

<sup>4</sup> Ագաթ. էջ 34, 24:

<sup>5</sup> Ագաթ. էջ 35, 8:

նակ աւար առեալ, աւերէին զամենայն երկիր սահմանացն՝ որ ընդ Պարսից թագաւորութեամբ եւ իշխանութեամբ էր<sup>7</sup>: Այսու կը փակուի Խոսրովու արշաւանաց պատմութիւնը:

Եթէ համեմատենք արտաքին պատմութեան հետ՝ կը գտնենք որ պատերազմը չէր լինցած Արտաշրի 229ին կրած պարտութեամբը: Պարսիկք նորէն զօրացած կը շարունակէին աւերել զՄիջագետս, եւ Աղեքսանդր Սեւերոս ստիպուեցաւ պատերազմի ելլել Պարսից դէմ՝ (230 — 234): Սեւերեայ բանակն երեք առաջք բաժնուած էր. մին ի Միջագետս, միւսն Պարսկաստան մտաւ, եւ երրորդն եկաւ յօգնութիւն դաշնակից Հայաստանի եւ մտաւ ի Մարաստան: Հերոդիանու<sup>1</sup> պատմածը ըստ մասին միաբան է Ագաթանգեղեայ. վասն զի կը գրէ այս պատմագիրը թէ այս արշաւանքը յաջող չեղաւ. եւ զօրաց երրորդ բաժինը՝ որ շատ նշանաւոր եղաւ ընդդէմ՝ Արտաշրի բրած յաղթութեամբք՝ ստիպուեցաւ ետ դառնալ, եւ քաշուեցաւ Հայ-

<sup>1</sup> Հերոդ. 2. 4, 5. «Յերիս առաջս բաժանէր զզօրս խորհրդով բարեկամաց իւրոց. եւ զմին առաքէր դէմ եղեալ ի հիւսիսական կողմանս՝ երթալ յաշխարհ Հայոց որ բարեկամ Հռոմայեցւոց թուէր, եւ (անտի) արշաւել յերկիր Մարաց:... Բարուք էր խորհուրդ Աղեքսանդրի, որպէս թուէր. այլ վրիպեցաւ ի խորհրդոյն. քանզի զօրն՝ որ առաքեցաւ ընդ Հայս, հազիւ հազ եւ դժուարուանցեալ ընդ դժնդակ եւ դժուարին լերինս աշխարհին, (թէպէտ եւ՝ զի դեռ եւս ամառն ի վերայ կայր՝ դիւրագոյն իմն էր ճանապարհն,) թափեցաւ յաշխարհն Մարաց, առ յաւարի եւ այրեացաւ արար զբազում գիւղս, եւ կուտէր զկապուս եւ զկողսպուս: Այլ իբրեւ ազգ եղեն իբրն արքային Պարսից, հաս ի թիկունս օգնականութեան՝ որչափ եւ մարթէր, այլ ոչ զօրէր ամենեւին վանեալ վկանդել զՀռոմայեցիս. եւն<sup>7</sup>»

աստանի լեռներն՝ ուր շատ վտանգեցաւ: Բայց ըստ Լամբրիտեայ<sup>1</sup> եւ այլոց պատմագրաց, Աղեքսանդրոս շքեղ յաղթութիւն ըրաւ Պարսից դէմ, եւ ետ առաւ Միջագետաց այն մասերը՝ զոր Հեղիոգարաղոս թշնամեաց ձեռք թողուցած էր: Սակայն Գերմանաց ըրած խլրամունքը զինքն ստիպեցին չոտմ դառնալ (234 Յ. Բ.), եւ Պարսիկք ընկձած ըլլալով խաղաղութիւն ըրին, եւ հանդարտ կեցան ցամն 238: Հայ գունդ մ'ալ իբրեւ դաշնակից գնաց Աղեքսանդր Սեւերոսի հետ պատերազմելու ընդդէմ Գերմանաց<sup>2</sup>: Այսպէս Ագաթանգեղոս (յէջն 34, 24—35, 7) այս արշաւանքը կը պատմէ:

Այս թուէն ետքն դնելու է կարծենք այն

<sup>1</sup> Եղ. Լամբրիտի, յԱղեքսանդր Սեւերոս, 55. «Այս մեծաւ պատրաստութեամբ դիմեր ի Պարսս, եւ յաղթէր Արտաշէրի որ հարստագոյն յոյժ էր ամենայն արքայից,»: Եւ ծերակուտի արձանագրաց մէջ կը գտնենք (առ Լամբր. 56) թէ «Չրագումն ի Պարսից ըմբռնեցաք եւ վաճառեցաք: Չաշխարհս Միջագետաց որ Լքեալն էին ի դժնգակ գազանաբարոյ արանց, վերստին կալար: ՉԱրտաշիր արքայ հզոր՝ արդեամբք եւ անուամբ՝ դարձուցաք ի փախուստ եւն,»: Նոյն պատմագիրը կը գրէ քիչ մ'ետքը (58) թէ «Յաջողութեամբ ի գլուխ ելին իբրքն եւ ի Մաւրիտանիա Տինդիտացոց ի ձեռն Փուրեայ Աեղտեայ, եւ ի Լիւրիկէ ի ձեռն Վարեայ Մակրինեայ խնամուոյ նորա, եւ ի Հայս՝ ի ձեռն Յունեայ Պաղմատեայ,»: — Հմմտ. Զոսիմոս, Ա. 18, 19:

<sup>2</sup> Եղ. Լամբրիտ. աճա, 61. «Այլ ամենայն բանակն՝ զոր ապա տարաւ Մարսիմինոս ի Գերմանիա՝ Աղեքսանդրոս էր, եւ այն մանաւանդ՝ ի Հայոց, յԱռհայեցոց (Osdroenos) եւ ի Պարթեաց,»: — Հերովդիանոս, Ե, 2. «Այսպէս կարգեալ եւ յարգարեալ զիրոն՝ ժողովէր զամենայն զօրոն, եւ անցեալ աներկիւզ ընդ կամուրջն՝ ել թայր ի պատերազմ ընդդէմ Գերմանացոց: Չհետ գնացին նորա ամբոխ բազմութեան եւ գրեթէ ամենայն զօրն չոտմայեցոց, եւ նետաձիգք Մաւրուսացոց անթիւ ի բազմութեան, եւ աղեղնաւորք Սառհայեցոց եւ Հայոց, յորոյ կէսը հնազանդեալք էին, եւ կէսը բարեկամք եւ զինակիցք, եւ ոմանք ի Պարթեաց վարձկանք կամ գերեալք, կամ ինքնակամ փախուցեալք եւ եկեալ ծառայէին չոտմայեցոց,»:

որոնք տարիները զոր Ագաթանգեղոս կը հաշուէ, ինչպէս վերը յիշեցինք: Առթիւնս եւ այլք կը համարին թէ այս տասն տարիները կը համարատասխանեն 328—238 տարիներուն, սկսելով Արտաւանայ առաջին արշաւանքէն ի Հայս: Բայց կարծենք թէ այս չէ Ագաթանգեղոս միտքը, որ արդէն՝ ինչպէս ցայս վայր բերած վկայութեանց մէջ տեսնուեցաւ՝ «ի գալուստ ասին Գրգիս», «է Գրգիս եւս ի գլուխ տարւոյն» ըսելով կը բաժնէ այն տարիները: Այս ժամանակի փոփոխութիւնը զմեզ մեծ դժուարութենէ մը կ'ազատէ, ինչպէս քիչ մ'ետքը կը տեսնենք:

Այս արշաւանաց առաջին չորս տարիները շատ նշանաւոր դէպք մը պատահած պիտի չըլլայ, մանաւանդ որ մինչեւ 238 հանդարտ եւ խաղաղ կեցան Պարսիկք՝ Հռոմայեցւոց դէմ ձեռնարկութիւն մը չընելով: Սակայն քիչ մը վերջը յաջորդեց զԱրտաշիր՝ Շապուհ Ա. (241—272 Յ. Բ.) եւ սկսաւ պատերազմ ընդդէմ Հռոմայեցւոց, գուցէ Խոսրովու Հռոմայեցւոց դաշնակցին արշաւանքներէն գրգռեալ: Գեռ Գորգիանոս կայսրը (238—244 Յ. Բ.) արեւելք չհասած՝ Մծբին եւ Խառան անուեցան: Սակայն Գորգիանոս ետ առաւ զանոնք, ջախջախեց Պարսից զօրութիւնը քանի մը յաղթութեամբ եւ Տիգրանի վրայ արշաւել կը սպառնար: Միջագետաց մէջ Աբորա գետի քով տրուած ճակատով ստիպուեցաւ Շապուհ փախչիլ իւր տէրութեան խորքը: Սակայն քաջ արքայն սպանուեցաւ հոն Փիլիպպոս Արարացիէն (244)

որ կայսր հրատարակուեցաւ<sup>1</sup>. եւ այս վերջինն ստիպուեցաւ խաղաղութիւնը գնել Շապհէն (244 Յ. Ք.) ըստ Եւագրեայ<sup>2</sup>, այս դաշանց մէջ Հայաստան ազատ թողուեցաւ Պարսից առջեւ. ասոր համամիտ է եւ Զոնարաս<sup>3</sup>, բայց սա կը յաւելու թէ երբ Հռոմայեցիք արանջեցին՝ Փիլիպպոս ջրեց դաշանց այս մասը: Եւս վերջին կէտը լոկ առասպել համարեցան ոմանք<sup>4</sup>, բայց այլք՝ թէ եւ չափազանցուած, սակայն ոչ անհիմն<sup>5</sup>: Կրնանք ըսել թէ գոնեայ ազատութիւն տրուեցաւ Պարսից՝ Հայոց դէմ՝ գործելու, եւ արդեամբք այս ժամանակէ վերջն է Խոսրովայ մահը:

Խոսրովայ արշաւանաց պատմութիւնը համաձայն գտանք ցայսփայր արտաքին պատմութեան հետ. ուստի եւ Ազաթանգեղեայ այս մասը ճշգրիտ պատմական է: Միայն թէ չի յիշուիր՝ ինչպէս այլուր նոյնպէս ալ հոս՝ Բաղայայտ Հռոմայեցւոց օգնութեան հասնիլն. բայց կարծենք թէ աղօտ յիշատակութիւն մը կայ այս խօսքերուս մէջ վերջին պատերազմաց նկատմամբ՝ թէ «մանաւանդ զի եւ զԵր+ Տաճկաց ի թիկունս եկեալ

<sup>1</sup> Յոսիպոս Կարեանցի, ի Գորգիանոս Գ., մանաւանդ 26. ուր կը յիշէ թէ «յետ զԱրտաշաշէն (Artaxanse) առնելոյ՝ առ եւ զԵնտիոք եւն. 1. 2. Էրոտիտն. Է, 8 եւն.:

<sup>2</sup> Եւագր. Եկեղ. Պատմ. Ե. 41. է:

<sup>3</sup> Յովհաննէս Զոնարաս, Տարեգիրք, թ. 19. «Գարձեալ Փիլիպպոս կալու զարքայութիւն Հռոմայեցւոց... արար խաղաղութիւն ընդ Շապհայ արքայի Պարսից տուեալ նմա զՄիջագետս եւ զՀայաստան: Եւս իբրեւ ետես թէ զկծեցան Հռոմայեցիք ընդ կորուստ աշխարհացն, յետ սակաւ ժամանակի ջրեալ զԳալինս խաղաղութեան՝ առ զնոսս յետս.:

<sup>4</sup> Եւսպէս Tillemont, Hist. des emp. III, 264, ed. Bruxelles, 1693.

<sup>5</sup> Կարեանց, Agathangelus, էջ 48, ճն. 1:



էին<sup>1</sup> : Կարծենք թէ պէտք է իմանալ հոս « զօրք  
ճաճկաց », ասու թիւնը Հռոմայեցւոց այն բանակին  
նկատմամբ՝ որ յԱսորիս եւ ի Միջագետս կը գոր-  
ծէր, կամ թերեւս Փիլիպպոսի Արտաշէսի գնդերը  
նշանակէ. այս նշանակութեամբ բոլորովին կը  
հաստատուի այն հաշիւն՝ որ դրինք, այսինքն  
Խոսրոփայ արշաւանաց վերջին տարին իբր 244  
Յ. Ք. զնկելով :

Հ. Յ. Վ. Գաթրճեան<sup>2</sup> այս ամենայն յիշե-  
լէն վերջը կը յաւելլու թէ Պարթևներն այլազգ կը  
պատմէ այս անցքերն. այսինքն թէ Արտաւան  
Գ. յետ մահուան Տրդատայ Բ. թագաւորեցուց  
զիւր եղբայրն Արշակ<sup>3</sup> Հայոց վրայ, որուն քով փա-  
խան Արտաւանայ որդիքը : Այս պատմութիւնը  
թէեւ չ'ընդունիր նոյն նշանաւոր քննիչը, բայց կը  
յիշէ նաեւ զարմանօք՝ թէ « պատմէ նա զայն ի-  
բրեւ ի Հայոց պատմութենէ » : Սակայն Պրոկո-  
պիոսի խօսքերը՝ թէեւ մթին՝ բոլորովին այլազգ  
ալ կրնան հասկցուիլ, այսինքն սոյն խնդրական  
մասն Արշակայ՝ Հայոց Արշակունեաց հիմնադրին  
վրայ առնելով : Պրոկոպեայ խօսքն է<sup>3</sup>. « Թագաւ-

<sup>1</sup> Ագաթ. էջ 35, 3—5 :

<sup>2</sup> Տիեզ. պատմ. Հար. Բ. էջ 179 եւ ծան. 1 :

<sup>3</sup> Պրոկոպիոս, Վասն Հինուածոց Յուսիսիանու.  
Գիրք Գ. 1. Βασιλεὺς μὲν ὁμογενῆς πάλαι τοῖς Ἀρμενίοις  
καθίστατο, ἢ περ τοῖς ἀναγοραψαμένοις τῶν ἱστο-  
ριῶν τὰ ἀρχαιότατα δεδιήγηται... Πάροθοι δὲ Μα-  
κεδόσιν ἐπανασιάντες καὶ τῷ πολέμῳ περιγενόμενοι ἐξή-  
λασάν τε αὐτοὺς ἐνθρόνδε καὶ τὰ μέγροι ἐς Τύρον ποταμὸν  
ἔσχον, ἕπ' αὐτοῖς τε τὸ λοιπὸν ἐς ἔτη πεντακόσια ἔκειτο  
τὰ Περσῶν πράγματα, ἕως Ῥωμαίοις ὁ Μαμαίας Ἀλέξαν-  
δρος βασιλεὺς γέγονε. καὶ τότε τις τῶν ἐν Πάροθοις  
βασιλέων τὸν ἀδελφὸν τὸν αὐτοῦ Ἀρμενίοις βα-  
σιλέα πατεροτήσατο Ἀρσάκην ὄνομα, ὥσπερ ἡ

որ էր երբեմն Հայոց անդատին ի նոցունց ազգէ, որպէս վկայէ Տնոցն պատմութիւն: Քանզի իբրև կործանէր (χαλλελλε) Աղեքսանդր Մակեդոնացի զԹագաւորն Պարսից, կացին մնացին Պարսք ընդ լծով: Այլ Պարթևք ապստամբեալք ի Մակեդոնացւոց՝ տարան զյաղթութիւնն եւ վտարեցին զնոսա ի բաց եւ հասին կալան մինչև ցգետն Տիգրիս: Հանդարտեցին Պարսիկք ընդ իշխանութեամբ սոցա ամս հինգ հարիւր, մինչև ցժամանակն՝ յորում Աղեքսանդր որդի Մամեայ Թագաւոր եկաց Հռոմայեցւոց: Եւ յայնչա՛ մի ո՞ն իւրեանցն Պարսիկաց զէլէոյր էւր շարժի կարգէր արքայ Հայոց, որդէս ուէ էսի պարսնութիւնն Հայոց: Զի մի որ կարծիցէ զԱրշակունիս ի Հայոց սերեալ, որք (Արշակունիք) զամս հինգ հարիւր մնացին խաղաղութեամբ եղբայրութեան ազգատոհմին. (ξυγγενές διαγέγονε.) Արքայն Հայոց ի մեծ Հայս նստէր, եւ անդատին ի կանուխ ժամանակաց հնազանդ էր ինքնակալին Հռոմայեցւոց եւն, : Հոս <sup>u</sup> յայնչա՛ ու պէտք է Պարթևաց պետութեան կանգնուելու ժամանակին վրայ առնուլ. եւ ասոր կը ստիպեն կարծենք նաեւ յաջորդ խօսքերը: Ուստի կարծենք եւ ոչ Պրոկոպիոս անմիաբան է յայսմ, որուն ձայնակից են նաեւ Զոնարաս՝ եւ այլք:

τῶν Ἀρμενίων ἰστορία φησί. μὴ γὰρ τις Ἀρμενίων τοὺς Ἀρσαζίδας οἰέσθω εἶναι. κτλ.

<sup>1</sup> Զնաբն Տարեգիրք, ԺԲ, 15 սյսպէս կը պատմութեանդար. «Արտաշիր պարսիկ, սյր յանձանօթ եւ յաննչան տոհմէ, զՊարթևաց արքայութիւնն առ Պարսիկս տանէր եւ իշխէր նոցա, յորմէ ասն սերեալ զազդ խոսրովայ: (Հմմտ. Գրիսն, 2. 3, 4.) Քանզի յեա Աղեքսանդրի

## 8.

Այսուհետեւ կ'անցնի Ագաթանգեղոս<sup>1</sup> Խոսրովայ մահն եւ անոր հետեւեաճ դէպքերը պատմելու:

1. Պարսից թագաւորը (անունը չի յիշեր) վարանաճ՝ ժողովեց իշխանները Հայոց թագաւորին դէմ դաւաճանութիւն նիւթելու, զոր յանձն առաւ “գլխաւոր նահապետ” “Պարթեւաց տէրութեանն”, որոյ անուն էր Անակոր եւ “հատուածի պատճառաւ” Հայաստան եկաւ: 2. Քիչ մ'ետքը՝ (‘իբրեւ եկին հասին աւուրք ջերոտ հարաւահողմն դարուն զբանցն բանալոյ”) որսի ժամանակ սպանուեցաւ Խոսրով Անակայ: Բայց նաեւ իւր ցեղը կոտորեցաւ, միայն երկու փոքր մանկունք ազատեցան: 3. Պարսից թագաւորն եկաւ տիրեց Հայաստանի, (անորոշ ժամանակ): 4. Խոսրովու որդին Տրդատ Յու-

Մակեդոնացւոյ պայազապ նորա Մակեդոնացիք գերկայն ժամանակ տիրեցին Պարթեւաց եւ Պարսից եւ այլոց ազգաց, եւ ընդդէմ՝ միմեանց դուռացեալ պատերազմաւ զմիմեանս եղծանէին: Իբրեւ նոքա այսպէս վատթարէին՝ նախ Արշակ (Ασασίδης) պարթեւ ի բաց թօթափէր ի նոցանէ, եւ տիրէր Պարթեւաց, եւ որդի ի հօրէ առին զարքայութիւնն. յորոց վերջին եղեւ Արտաւան, զոր պարտէր այս Արտաշիր երեքուամբ պատերազմօք եւ ի մատանեակ արկեալ սպանանէր: Ապա դիմեալ ի Հայս՝ ի պարտութիւն մատներ ի Հայոց, ի Մարաց եւ յորդոցն Արտաւանայ, եւ զօրաժողով լեալ ջանայր յինքն վտարել զՄիջագետս եւ զԱսորիս, եւ սպանայր գրաւել անդրէն զամենայն աշխարհս, որ երբեմն ընդ Պարսից իշխանութեամբ էին: Իբրեւ ի Գամիրս կոյս արշաւէր Արտաշիր պարսկական զօրու եւ պաշարէր զՄծբին, հրեշտակութիւն արձակէր Աղէքսանդրոս ի խաղաղութիւն: .. . Եւ յերիս առաջս զզօրսն բաժանեալ, յերից կողմանց ի Պարսս արշաւէր (Աղէքսանդրոս): Բազումք սպանան ի Պարսից, բայց եւ շատք կորեան ի Հռոմայեցւոց, ոչ եթէ ի թշնամաց, այլ ի դառնայն յետս ընդ լերինս Հայոց, եւն:

<sup>1</sup> Ագաթ. էջ 35, 13—42, 16:

նաստան փախաւ : — Այս է համառօտ պատմութիւն Պարսից Հայաստանի տիրելուն, որ՝ ինչպէս պիտի տեսնենք, ճիշդ է, բայց նաեւ մթին եւ համառօտ, եւ նաեւ դէպքերն ի մի ձուլուած :

Արտաքին պատմութենէն դժուարութիւն չկայ խոսրովու մահուան պատմութեան դէմ : Պարսիկք արդէն 250ին կը խլրտէին, երբ Գաղղոս ինքնակալ եղաւ : Բայց քիչ մ'ետքն արդէն (յամի իբր 252) սկսաւ կերպապէս թշնամութիւնը Շապհոյ Ա. արքայից արքային կողմանէ, որ գրաւեց զՀայաստան եւ մերժեց զՏրդատ (Գ.) թագաւոր Հայոց (253 Յ. Ք.)<sup>1</sup>, ապա մտաւ Միջագետք եւ առաւ Մծրին ու Խառան, բայց չկրօցաւ առնուլ զՍուհա : Այսպէս ուրեմն Տրդատայ փախուսան եղած կ'ըլլայ յամին 253 Յ. Ք. :

Սակայն հոս կայ կնճռեալ դժուարութիւն մը : Զոնար այս դէպքը կը պատմէ այսպէս<sup>2</sup>.  
 “Առ սովաւ (Գաղղեաւ) սկսան խլրտել Պարսիկք որ հասին գրաւեցին զՀայաստան, ուստի փախսաւ արքայն (Հայոց) Տրդատ, ոչ ոքի՛ք նորմէն զարմար : Արդ թէ Զոնար ճիշդ պատմած է հոս՝ այս Տրդատը նոյն չէ Ագաթանգե-

<sup>1</sup> Զոնար, Ա. 27. “Մտին Պարսիկք յԱսիա, եղծեալ աւերեալ (καταστροφόμενοι) զՄիջագետս, եւ յԱսորիս եւս զիմէին խաղացեալք մինչեւ զԱնտիոք մինչեւ առնուլ եւս զայն որ ամենայն արեւելից մայր քաղաքաց էր, զմանս ի բնակչաց կոտորէին եւ զպլը խաղացողանէին ի գերութիւն, եւ առեալ աւար բազում յոյժ՝ ի բաց մերժէին անտիոք : Սակայն Զոնար, (Տարեգիրք, Ճ.Ք. 21) նոյնը պատմելով կը յիշէ յայտնապէս նաեւ Հայաստանի գրաւումը :

<sup>2</sup> Զոնար, Տարեգիրք, Ճ.Ք. 21. “Ηροζαιο δ' αὐθις ἐπὶ τοῦτον ἢ κίνησις τῶν Περσῶν, καὶ κατασχέθη παρ' αὐτῶν ἢ Ἀρμενία, τοῦ ταύτης βασιλείως Τηροδάτου φρυγόντος, τῶν δὲ ΠΑΙΔΩΝ ἐκείνων προσφέντων τοῖς Πέρσαις.

ղեայ Տրդատայ հետ, վասն զի այն մանուկ փա-  
խած կ'ըսուի, իսկ այս այր կատարեալ է եւ որդի  
ունի: Քայց եթէ այս այսպէս՝ ապա ուրեմն 253ին  
կար բողբոջին ուրիշ թագաւոր մը Հայոց. եւ  
որովհետեւ 217ին ալ ուրիշ Տրդատ մը գտանք,  
կրնայ հետեւցուիլ՝ թէ նոյն անձն է երկու տեղն  
ալ յիշուածը: Ըսով բովանդակ Խոսրովու ան-  
ձին վրայ պատմածներն այս անձին վրայ պէտք  
կ'ըլլայ առնուլ, եւ ըսել թէ կամ՝ Խոսրով ա-  
նուն թագաւոր մը չկայ եւ կամ՝ բողբոջին ու-  
րիշ դրից եւ ժամանակի մէջ է. նաեւ մեզի ծա-  
նօթ Տրդատայ պատմութիւնը շատ այլաձեւապ  
կ'ըլլայ, եւ այլ նման շատ են թագորութիւն-  
ներ պէտք կ'ըլլայ կուտել: Քարեբախտաբար  
ուրիշ կէտեր կան՝ որոնք յայսմ՝ Ագաթանգե-  
ղեայ կողմն են, այնպէս որ կը ստիպուինք ըսել  
թէ Չոնար կամ սխալած է կամ գոնեայ այլազգ  
պէտք է կարգալ իւր բնագիրը: Նախ մեծ կը-  
ռուան մըն է հոս Եղիշէի ակնարկութիւնը՝ որուն  
պատմական աղբիւրն յայսմ՝ Ագաթանգեղոս չէ,  
մանաւանդ թէ ըստ մասին հակառակ է Ագա-  
թանգեղեայ, եւ սակայն կը միարանի յայսմ՝ թէ  
«Նախնին մեր Տրդատիոս . . . է որչոյն-իւն փա-  
խուցեալ . . . սնաւ յերկրիդ Յունաց<sup>1</sup>»: Հայ ար-  
շակունի թագաւորաց մէջ կը գտնենք սովորու-  
թիւն մ'որով թոռան վրայ կը կրկնուի հաւուն  
անունը: Գիտենք Տրդատայ որդւոյն անունը՝  
Խոսրով, եւ այս երաշխաւոր է թէ Տրդատայ  
հայրն ալ նոյնպէս կ'անուանէր. որուն վկայ է՝

<sup>1</sup> Եղիշէ, տղ. Անեատ, 1859, էջ 55:

անկախ Ազաթանգեղեայ՝ նաեւ Բուզանդ<sup>1</sup>: Մա-  
նաւանդ թէ ժամանակակից արձանագրութեան  
մը վրայ ալ դրոշմուած կ'ուզուի գտնել Խոսրովայ  
անունը: Թէբէի արքունի շիրմաց արձանագրու-  
թեանց մէջ (C. I. Gr. 4821) կը յիշուի նաեւ  
ΧΟΣΡΟΗΣ ἈΡΜΕΝΙΟΣ ἸΔΩΝ ἘΘΑΥΜΑΣΑ.  
(Խոսրով Տայ յազգէ՝ տեսեալ զարմացայ:) Այս  
տողն մեր խնդրոյ տակ գտնուող Խոսրովայ վրայ  
առաւ Լըդրոն<sup>2</sup>, որուն համամիտ է եւ Կութ-  
շմիտ, որ կը կարծէ<sup>3</sup> թէ «Խոսրով իւր Վազարշ  
հօրմէն Սեպտիմոս Սեւերոսի քով պատանդ ու-  
ղարկուած էր, եւ անոր հետ 202ին Յ. Ք. այցելու-  
թեան ելաւ Մեմֆոնի սեան եւ Թէբէի այլ հնու-  
թեանց» . եւ այս առթիւ գրուած ըլլայ այս ար-  
ձանագրութիւնը: — Այսպէս նաեւ յայտ Վզա-  
թանգեղեայ աւանդութիւնը կը հաստատուի. եւ  
նաեւ Զոնարայ խօսքէն ծագած դժուարութիւնը  
բողբովին կը լուծուի, եթէ Կութշմիտի հետ  
Զոնարայ բնագրին τῶν δὲ ΠΑΙΔΩΝ = «Դ-  
ր-» ընթերցուածն, որուն վրայ կենդրոնացեալ  
է բովանդակ դժուարութիւնը, սխալ ընթեր-  
ցուած համարինք, կամ τῶν δὲ ΠΟΛΙΤΩΝ =  
«Իւր-» ընթերցուածէն աղաւաղեալ դնենք,  
որով նաեւ այս դժուարութիւնը կը ջնջուի:

Սակայն Ազաթանգեղեայ պատմութիւնը  
հոս մթին է եւ թերի: Եղիշէի յիշեալ մասին

<sup>1</sup> Բուզանդ, Գ. ԳԼ. Բ. տես քիչ մը վերջը, եւ նա-  
խարանութիւն:

<sup>2</sup> Letronne, Recueil des inscriptions Gr. et  
Lat. de l'Égypte. II, 311.

<sup>3</sup> Agath. էջ 49:

մէջ՝ որ բովանդակ չայոց կողմանէ առ ինքնա-  
կալն Յունաց թուղթ մ'ըլլալով՝ ճշդիւ այս  
խնդրոյս համար անզուգական յարդ ունի, գիտէ  
թէ Տրդատ փախաւ «ի հայրսոցան մարդասողող  
հօրէնքոց<sup>1</sup>» : Ուստի Պարսից արքային սատարու-  
թեամբ եղած այս գործոյն մէջ մասնակից էին  
նաեւ թագաւորին եղբարքն՝ թերեւս գահու-  
ակնկալութեամբ : Եւ որովհետեւ Տրդատ՝ որ  
«ի տղայութեան» փախուցեալ էր՝ Ռոմոսը կը  
կոչուի ի Զոնարայ, կրնանք ենթադրել իբրեւ  
հասանական՝ թէ Խոսրովու մահն անկէան հե-  
տեւութիւն չունեցաւ Հայաստանի բախտին  
նկատմամբ, այլ Տրդատ գահ ելաւ ի տղայու-  
թեան, եւ այս վիճակը տեւեց մինչեւ 253 Յ. Ք :

Պութիւն կը յաւելու թէ նաեւ Ղա-  
ղար Փարպեցի կը յայտնէ որ այս զիպաց առթիւ  
չայոց մէջ տարբեր աւանդութիւնք կային ար-  
դէն իւր ժամանակը : Բայց շփոթութիւն մըն է  
այս : Ղաղարայ Փարպեցւոյ յառաջաբանին<sup>2</sup> մէջ  
կը կարդանք. «Ընդ բազում ճառս մատենից  
առաջնոցն պատմագրացն չայոց անցի. յորոց ըստ  
յերկար քնթերցողութեան գտի ի նոցանէ զժա-  
մանակաց եւ զգարուց աշխարհիս չայոց բազ-  
մագիմի յեղափոխութիւնս, յստոյգ եւ յանսխալ  
կարգաւորութենէն առաջին գրոցն, զոր պատ-  
մեալ ծանոյց մեզ երանելին Ագաթմանգեղոս եւն, :  
Այս կտորը թարգմանուած է գաղղիերէն Ան-  
կլուայի հաւաքածոյին մէջ<sup>3</sup> ոչ շատ ճշգրութեամբ

<sup>1</sup> Հմմտ. վերը՝ էջ 34—35 :

<sup>2</sup> Ղաղար Փարպեցի, ապ. Ա. երեւ. 1873, էջ 4, 13 :

<sup>3</sup> Langlois, Collection, Tome II. Paris, 1869,  
էջ 259, § 2.

այսպէս. J'ai parcouru plusieurs livres des historiens anciens de l'Arménie, et, en les relisant en entier, j'ai trouvé chez eux, touchant les vicissitudes de notre pays, des récits qui diffèrent sensiblement de l'exacte et précise exposition du premier ouvrage composé par le bienheureux Agathange, personnage très-instruit, doué d'une science immense, véridique dans l'art oratoire etc. Եւ այս է Տիմն Կուժմիտի կարծեացը, որ Ճշդիւ այս տեղը կը նշանակէ իբրեւ աղբիւր՝ որմէ քաղած է իւր յիշեալ տեղեկութիւնը:

Ազաթանգեղոս չյիշելով Խոսրովու եղբարց դաւակցութեան մասնակցիլը, բովանդակը կու տայ Անակայ: Այս պարագայն իսկ կասկած տուած է թէ արդեօք Գրիգորի եւ Տրդատայ մանկութեան անցքերը ունին արդեամբք այն սերտ աղերսն իրարու հետ, ինչպէս Ազաթանգեղոս կը պատմէ: Ըստ Կուժմիտի հասկանալովն անպատմական է այս մասը: Ճշդիւ խօսելով դժուարութիւն մը չկայ, եւ ոչ ալ նշանաւոր փաստ մը՝ մերժելու Ազաթանգեղեայ այն խօսքը, որ ոչ միայն հոս՝ այլ եւ այլուր կը յեղեղէ Գրիգորի Անակայ մ'որդի ըլլալը<sup>1</sup>: Բայց որ եւ իցէ դիպաց մէջ ալ Ազաթանգեղոս հոս կրկնած է միայն Ե. դարու մէջ շայոց ծանօթ կարծիքը, որուն իբրեւ ապացոյց բաւ է յիշել Բուզանդայ մէկ խօսքը՝ որ ազատ է արդի Ազաթանգեղոսի ազդեցութե-

<sup>1</sup> Ազաթ. էջ 43, 4 եւ 102, 9 եւն:



նէն: Բուզանդ կը գրէ (ի մէջ այլոց)<sup>1</sup>. « Ի թագաւորութեանն Տրդատայ՝ որդոնն Խոսրովն, լուսաւորութեամբ հաճոյական սիրով . . . ծանօթութեամբ ի ձեռն Գրէգորէ՝ որդոնն Անիոյ, եւն »: Գարձեալ Գրիգորի ցեղին Արշակունի համարուիլն այնու ալ զարմանալի չէ, վասն զի նաեւ սերտ խնամութեան կապեր ունեցաւ հայ Արշակունի արքունեաց հետ. ինչպէս նաեւ՝ երբ այս երկու տոհմերն ալ սպառեցան՝ Արշակունի կը համարուէին Կամսարականք: Ազաթանգեղոս Գրիգորի վերայ նետուելուն գլխաւոր պատճառներէն մին ալ այս կը դնէ<sup>2</sup>. « Ոմն մատուցեալ ի նախարարացն սկսաւ խօսել եւ տալ տեղեկութիւն, եւ ասել այսպէս վասն նորա, թէ Ղասն զի չէ պարտ կենաց՝ վասն այնորիկ ոչ կամի կեալ եւ զլոյս տեսանել: Չի այսքան ժամանակք են՝ որ առ մեզ բնակեալ է եւ ոչ գիտէաք զսա. այլ դա է որդի Անակայ մահապարտի՝ որ սպան զհայր քո Խոսրով, եւ արար խաւար Հայոց աշխարհիս, եւն »: Կոյնպէս բոլորովին պատմական է Գրիգորի մանկութեան նկատմամբ եղած ակնարկութիւնը<sup>3</sup>, թէ ի Գամիրս սնած է եւ հոն աճած, որուն վկայ են բաց յայլեւայլ աւանդութեանց<sup>4</sup>, բովանդակ Հայոց նուիրապետու-

<sup>1</sup> Բուզանդ, Գ. զԼ. Բ, էջ, 4:

<sup>2</sup> Ազաթ. էջ 102, 1—15:

<sup>3</sup> Ազաթ. էջ 42, 20. « Իսկ որդի Պարթեւին որ ի կողմանս Յունաց դաղթեաց, սնանէր եւ ուսանէր ի Կեսարիա Կապադովկացւոց քաղաքին. եւ մերձաւորեալ զնա սնոց դայեակն երկիւղիւն քրիստոսի . . . որոյ անուն ծանաչէր Գրիգորիս: » — Էջ 639, 11. « Յառաջ մինչդեռ ի մանկութեան ատեն էր ամուսնացեալ, եւ երկու որդիս ստացեալ, որոյ առաջնոյն անուն ծանաչի Արթանէս եւն »:

<sup>4</sup> Հմմտ. Խոր. Բ. զԼ. 3. եւն:

Թեան պատմութիւնը Գ. եւ նաեւ Ե. դարումէջ, այնպէս որ զուր կը համարինք այս նկատմամբ այլ եւս հոս հետազօտութեանց ձեռք զարնել: Իսկ Տրդատայ մանկութեան անցից եւ իւր այլեւայլ քաջագործութեանց վրայ շատ բան կը գտնենք գրուած Խորենացւոյ եւ այլոց քով: Ազաթանգեղոս գիտէ միայն թէ «ուսեալ Տրդատէս առ կոմսի ումեմն Ղիկի(նի)անէս անուն կոչեցեալ»: Ապա կը պատմէ Տրդատայ մի քաջագործութիւնը, որով հայրենի գահը ձեռք ձգեց. ասոր վրայ քիչ մ'ետքը:

Շապհոյ Ա. Հայաստանի տիրելէն մինչեւ Տրդատայ նորէն ձեռք բերելը քանի մը տասնեակ տարի անցաւ: Այսչափ միջոցին վրայ բան չի գիտեր Ազաթանգեղոս, այլ լրկ թէ՛. «Ջերկիրն Հայոց այնուհետեւ եկեալ արքային Պարսից յիւր անուն զտեղիսն անուանէր. Եւ զզորսն Յռնոց փախստական առնէր. հալածական տանէին մինչեւ ի սահմանս Յունաց: Ահա ի սահմանս Հայաստանէն. եւ տեղւոյն անուն եղեալ Գրունս-փոսից առ տեղեան՝ որում Ոյծք կոչէին: Եւ զայլ մարդիկ երկրին խաղացոյց, եւ զաշխարհն յինքն գրաւեաց»:

Այս քանի մը տող ակնարկութիւնք կը ցուցնեն՝ թէ շատ ուշ ժամանակաւ մատենագրած է հեղինակը, ուստի ծանօթ է իրեն Հայաստանի մէջ նոյն ատեն դիպած իրաց մանրամասն պատմութիւնը, գէթ չի ցուցնէր տեղ մ'ալ իւր գրոց մէջ թէ ծանօթ է այն ամենայն իրեն:

<sup>1</sup> Ազաթ. էջ 42, 5-16.

Թէեւ ոչ այնչափ առատ՝ բայց գոնեայ բաւական ընդարձակ տեղեկութիւն կը գտնենք նաեւ հոս օտար պատմութեան մէջ: Շապհոյ Ա. 253ին Հայաստանի տիրելովն ի հարկէ պատերազմը լմնցած էր. եւ նոյն Շապուհ Միջագետքէն մտաւ յԱսորիս, առաւ եւ այրեց զԱնտիոք (յամի 258 Յ. Բ.): Հռոմէական նշանաւոր բանակ մը չկար իւր դէմն, եւ Պարսիկք արշաւեցին նաեւ Կիլիկիա եւ Կապպադովկիա: Վաղերիանոս՝ որ աճապարանօք նոյն տարին արեւելք եկաւ՝ հազիւ Անտիոքայ առմանէն ետքը հասաւ: Միայն Եգեսիա դէմ՝ դրաւ Պարսից քաջութեամբ: Բայց Վաղերիանոս չկրցաւ յաջողութեամբ գլուխ հանել պատերազմը, եւ Միջագետաց մէջ կրած մեծ պարտութեամբ նաեւ Պարսից ձեռքը գերի ինկաւ<sup>1</sup>, (260 Յ. Բ.) որ ամենամեծ անգթութեամբ վարուեցան իրեն հետ, եւ մեռաւ 269ին: Այս պատերազմին մէջ Շապհոյ կողմը կը գտնենք Հայոց թագաւոր մը՝ Արտաշատ (Գ.), ուստի Շապուհ 253ին Հայաստանի տիրելէն վերջը իւր կողմանէ դրած կ'երեւայ թագաւոր մը Հայոց. եւ Հայք Պարսից գերիշխանութեան տակն էին ցամն 260:

Տրեմելիզիոս Պողոտն կը յաւելու՝ թէ Հայոց Արտաւազդ թագաւորը նամակ մը գրեց առ Շապուհ, — ինչպէս նաեւ քանի մ'ուրիշ Շապհոյ դաշնակից արքայք (Բաղենոս թագաւոր

<sup>1</sup> Չապուհ, Ա. 36 եւն: Մարտի. Ա. 253, ԻԳ. 5: Լեթանիոս, Ճառ Գ. 6: Արտաշ. Վիկտոր, Վարք Վայսերաց, Լր: Տրեմելիզոս Պողոտն, Ի վաղեր. 3-7: Լաբանտիոս, de mort. persec. V: Migne, Patrologiae Cursus. Series Prima, VII, 202-3.

կատչաց [= Cadusiarum,] եւ Բեղսողոս անուն արքայ մը,) — որ մարդասիրութեամբ վարուի Վաղերիանոսի հետ: Թէ ո՞վ էր այս Արտաւազդն՝ ճշդիւ ըսել չենք կրնար: Հայրն Ալիշան<sup>1</sup> կ'ենթագրէ թէ Մանգուկունի Արտաւազդն է՝ որ զՏրդատ ի Յունաստան փախուց ազատեց ըստ Խորենացւոյ<sup>2</sup>. եւ այս պատճառաւ երկու Արտաւազդ կը զանազանէ, մին սոյն այս Տրեբեղղեայ յիշածը, որ մերթ Շապհոյ կողմնակից եւ մերթ հակառակ էր, միւսն Վուպիսկեայ յիշած<sup>3</sup> Արտաւազդ Ասորի կոչուածը, զոր կը համարի Շապհոյ հակառակորդ: Բայց կարծենք այս տեսութիւնը՝ թէ եւ ոչ խտտելի, բայց դժուարաւ ընդունելի է: Տրեբեղղեայ յիշած Արտաւազդն արդեամբք իւր նամակին մէջ յայտնապէս կողմնակից Շապհոյ կը դաւանի ինք զինքը: Վասն զի յիշեցրնելէն վերջը՝ թէ բոլոր աիւղերք՝ որ Հռոմայեցւոց իշխանութեան տակն էր, այս գործոյս վրայ վշտացած է, կը յաւելու<sup>4</sup>.

<sup>1</sup> Այբբանագր, Վենետ. 1890, էջ 374:

<sup>2</sup> Խոր. Բ. ԳԼ. հղ:

<sup>3</sup> Փղապետ Վուպիսկեայ, ի Պրորոս, 4:

<sup>4</sup> Տրեբեղղեայ Պրորոս, ի Վաղերիանոս Հայր եւ յՈրդի. 6: Այս կտորը հեռաբերական նշխար ըլլալով մեր հետմանս թաղաւորաց արքունի նամակագրութեան պատշաճ կը համարինք զնել հոս բովանդակը. Artabases, (կը գրէ Տրեբեղղեայ.) rex Armeniorum, talem ad Saporem epistolam misit: In partem gloriae venio: sed vereor, ne non tam viceris, quam bella saeveris. Valerianum et filius repetet, et nepos, et duces Romani, et omnis Gallia, et omnis Africa, et omnis Hispania, et omnis Italia, et omnes gentes, quae sunt in Illyrico, atque in Oriente, et in Ponto, quae cum Romanis consentiunt, aut Romanorum sunt. Unum ergo senem cepisti, et omnes gentes orbis terrarum infestissimas tibi fecisti; fortassis et nobis, qui auxilia misimus, qui vicini sumus, qui semper vobis inter vos pugnantibus laboramus.

« Զմի ոմն ծեր կալար, եւ զամենայն ազգս երկրի  
 թշնամիս քեզ արարեր, Մերեւոսեան Բեդեւան, որ ա-  
 րարեաց (չօրս) է Մեհեմեդ, որ Բեդեւանսն սահմանակից  
 էմ, որ Բեդեւանսն Բեդեւանսն է Բեդեւանսն Բեդեւանսն :  
 Նկատմամբ Վարդանիսիսի յիշած Արտաբասսիսին  
 (Artabasses Syrus) որ Հռոմայեցւոց կողմնակից  
 էր<sup>1</sup>, նախ չենք գիտեր թէ ինչ կը նշանակէ այն  
 Արտաբասսիս (Syrus) վերագիրը. եւ կարծենք կամ մի-  
 եւնոյն անձն է, կամ չէ արքայ Հայոց: Վասն զի  
 արդեամբք դժուար է ընդունիլ թէ Վաղերիա-  
 նու ժամանակ երկու Հայ թագաւորք կային նոյն  
 եւ մի անուամբ, երբ Հայաստան ամբողջ Պարսից  
 տակն էր միայն: Առաջին ենթադրութիւնը  
 դժուար է կարծենք ընդունիլ. վասն զի Հայաս-  
 տան Պարսից իշխանութեան տակ ըլլալով՝ իւր  
 գլուխն, որ Պարսից օգնութեամբ դահ իրաւ էր  
 (253էն վերջը), դժուարաւ կրնար Հռոմայեցւոց  
 օգնական ըլլալ: Ար մնայ վերջին ենթադրու-  
 թիւնը, այսինքն թէ իշխան մըն էր այն Միջա-  
 գետաց (Syrus) կամ ուրիշ կողման մը, որ իւր  
 զօրօք (որոնք Պարսիկ կ'անուանուին) կողմն ելաւ  
 Վաղերիանու: Բնականապէս այս ամենայն են-  
 թադրութիւն կը մնայ տակաւին:

Հաւանական է ենթադրել Արտաբասսիսի  
 Հետ, թէ Արտաբասսիս արքայն խոստովութեամբ մերձաւ-

<sup>1</sup> Պարսիսեան Վարդանիսի, ի Պարսիս, 4: Վաղերիանոս  
 կը գրէ նամակի մը մէջ Պարսիսի նկատմամբ թէ « Արարի  
 զնա արարուն, եւ ետու նմա դունդս վեց Սարակինոսաց, եւ  
 զօգնական զօրս Գաղղիացւոց յանձն արարի նմա, հանդերձ  
 չօրս Պարսից, շէր Արտաբասսիս Արտաբասսիս (cum ea  
 Persarum manu, quam nobis Artabasses Syrus manci-  
 pavit.)

որններէն էր՝ որոնք Պարսից սատարութեամբ սպանեցին զանիկայ, ինչպէս տեսանք, թերեւս լոկ դահակալութեան տենչով: այս կնթաղութեամբ՝ Արտաւազդ Խոսրովու եղբայրներէն ըլլալու է, եւ Տրդատայ «Տօրեղբայր», ինչպէս կ'անուանէ Եղիշէ Խոսրովու սպանողները:

Նոյն յարաբերութեան մէջ մնացին Հայր բաւական ժամակ: Հապճոյ յազթական արշաւանաց դէմն հազիւ առնող եղաւ Բաղխատոս, բայց մանաւանդ Որդենատոս Պաղմիրայ արքայն՝ Զենոբիայի սյրը, որ Եփրատական Ասորւոց մէջ պարտեց Հապճոյ բանակը, մտաւ Միջագետք ուր Մծբին եւ Խառան անձնատուր եղան, նա եւ հասաւ պաշարեց Տիղբոն մայրաքաղաքը (261 Յ. Ք.)<sup>1</sup>: Թէ արդեօք այս դէպքերն անմիջապէս ազդեցութիւն ունեցան Հայոց նկատմամբ, հասանական կ'երեւայ. գէթ քիչ մ'ետքը կը տեսնենք զՀայս բարեկամ Պաղմիրացւոց: Որդենատոս իւր արդեանց համար անուանեցաւ Կեսար, Աւգոստոս եւ Ինքնակալ, (264 Յ. Ք.) եւ արդէն յառաջ «Արքայ Պաղմիրայ» տիտղոսն առած էր: Հատ չանցաւ Գութք յարձակեցան ի Փոքր Ասիա, եւ Որդենատ մեռաւ անոնց դէմ՝ արշաւած ժամանակ (267 Յ. Ք.): Զենոբիա յաջորդեց Որդենատի, եւ իւր նշանաւոր դաշնակիցքն եղան Հայր ընդգէմ՝ Աւրեղեայ (270—275): Աւրեղիոս իւր նամակին մէջ կը գրէր՝ թէ<sup>2</sup> «Որդե-

<sup>1</sup> Տրեթեղբայր Պաղմիրայ, ի Պաղղիկոսոս, 1—18: Նոյն երեսուն բռնաւորք, 14, 17 եւն: Զենոբիայ, Ա. 39 եւն Զենոբ, Տարեգիրք, ժԲ. 23, 24:

<sup>2</sup> Տրեթեղբայր Պաղմիրայ, ի Պաղղիկոսոս, 29:

նատոս յաղթէր Պարսից եւ հասանէր մինչեւ ցՏիզբոն ի փախուստ խուճապեալ զՊարսիկս: Մարթ է ինձ հաստատել թէ այնչափ մեծարոյ է կինս (Չենոբիա) առ Արեւելեայս եւ առ Եգիպտացիս, մինչեւ զղողել Արաբացւոց, Սարակինոսաց եւ Հայոց<sup>1</sup>: Աւրեղիանոս ետ մղեց զՉենոբիա եւ անոր զօրավարը Չաբա, որոնք ի վերջոյ պաշարուեցան Պաղմիրայի մէջ (272 Յ. Ք.) Աւրեղեայ գրած թղթին պատասխան մը գրեց Չենոբիա, որմէ կ'իմանանք Հայոց բռնած դիրքը: Այս նամակիս մէջ ի մէջ այլոց կ'ըսուի<sup>2</sup>. «Սպասեմ օգնական զօրու ի Պարսից. Սարակինոսք ընդ մեզ են, Հայք ընդ մեզ են»: Բայց Աւրեղիանոս Չենոբիայի այս յոյսն ի դերեւ հանեց, վասն զի «Արգել զզօրս Պարսից որ առաքեալն էին յօգնականութիւն, եւ զգունդս Սարակինոսաց եւ զՀայոց կաշառեալ մերթ բռնութեամբ եւ մերթ մեղմով յինքն ձգէր զնոսա», ինչպէս կը գրէ Վոպիսկոս<sup>3</sup>: Սակայն Չենոբիայի հետ դեռ կային Հայք, վասն զի երբ Չենոբիա գերուեցաւ (273 Յ. Ք.) գերեաց մէջ կը յիշուին նաեւ Պարսիկք, Հայք եւ Սարակինոսք<sup>4</sup>: Աւրեղիանոս Պաղմիրա

<sup>1</sup> Անդ. քիւ մ'ետքը կը գրէ նոյն պատմագիրը. «Ըմպէր (Չենոբիա) բազում անգամ ընդ իշխանս, թէպէտ եւ ժուժկալ (sobria) էր. ըմպէր եւ ընդ Պարսիկս եւ ընդ Հայս, զի պարտեացէ զնոսա»:

<sup>2</sup> Փղա. Աւրեղիանոս, յԱւրեղիանոս, 27. Nobis Persarum auxilia non desunt, quae jam speramus: pro nobis sunt Saraceni, pro nobis Armenii.

<sup>3</sup> Անդ. 28. Auxilia, quae a Persis missa fuerant, intercept: et alas Saracenas Armeniasque corruptit, atque ad se, modo ferociter, modo subtiliter, transtulit.

<sup>4</sup> Անդ. «Իբրեւ ի շղթայս էր Չենոբիա եւ ընդ նմա (էին) Պարսիկք, Հայք եւ Սարակինոսք»:

առնելէն վերջը, բաց ի Գաւաւան, Սարճարանն  
անուաններէն՝ առաւ նաեւ Հայաստան (Armenia-  
cus), Պարթևաստան եւ Արթուրեան տիտղոսները<sup>1</sup> :  
Եւ Աւրեղիանու յաջորդ Տիտոս իւր խօսած  
ճառին մէջ՝ անոր նկատմամբ կ'ըսէ, թէ «Նա  
զՊարսիկս պանծացեալս պարտութեամբ վաղե-  
րիանու՝ պարտեաց, ի փախուստ դարձոյց եւ  
խուճապեաց : Նմա գրեա թէ իբրեւ գից իմն եր-  
կիր պագին . . . վիրք, Աղուանք, Հայք եւ ազգն  
Հնդկաց »<sup>2</sup> : Նաեւ Աւրեղիանու գնդին մէջ կը  
յիշուին 600 Հայք աղեղնաւորք<sup>3</sup>, ինչպէս նաեւ  
Տիտոսի բանակին մէջ կան Հայք աղեղնաւորք<sup>4</sup>,  
որ զանիկայ իշխեցող հրատարակեցին :

Ըստ Հ. Ղ. Վ. Ալիշանի<sup>5</sup> Հայոց մի մասին  
թագաւոր կարգեցաւ Վաթուրի Զենոբիայի որ-  
դին, որ իւր եղբարց հետ արդէն յառաջ հրա-  
տարակուած էր Աւգոստոս. դժբախտաբար չի  
նշանակուիր թէ ինչ աղբիւրէ քաղուած է այս  
տեղեկութիւնն՝ որ նշանաւոր կէտ մըն է  
այս ժամանակի կնճռեալ խնդիրները որոշե-  
լու : Բայց արդէն քիչ մ'ետքը Պրորոս՝ Վրամ  
Բ. արքայից արքային հետ դաշինք դրաւ Հայ-  
աստանի սահմաններուն վրայ (279 Յ. Ք.)<sup>6</sup> :

<sup>1</sup> Անդ, 30 :

<sup>2</sup> Նոյն, յԱւրեղիանոս, 41 :

<sup>3</sup> Անդ, 11. Վաղերիանու առ Աւրեղիոս գրած նա-  
մակին մէջ. «Առ քեզ են աղեղնաւորք 1 իւրիկեցիք 300,  
Հայք 600, Արարացիք 150, Սարակինոսք 200 եւն » :

<sup>4</sup> Տրեք. յԵրեսուն Բռնաւ. 32. Alii dicunt, ab  
Armeniis sagittariis, quos Maximinus, ut Alexandrinos,  
et oderat, et offenderat, Principem factum.

<sup>5</sup> Այբբար, էջ 374, ա. :

<sup>6</sup> Փղապետ Վաղեան, ի Պրորոս, 17 :



Մինեստիս՝ որ միեւնոյնը կը պատմէ, շիոթմամբ  
 կարինոս կը զնէ անուըն՝<sup>1</sup>, եւ կը յայտնէ նաեւ  
 թէ Հռոմայական բանակը Հայոց լեռանց՝ մէջ էր:  
 Իսկ Վուպիսկոս<sup>2</sup> Ներսէ՛՛հ կ'անուանէ Պարսից ար-  
 քայից արքայն՝ որ սակայն բաւական վերջը գահ  
 ելաւ (այսինքն՝ 293 Յ. Բ.):

Այս դաշանց մէջ անշուշտ Հայոց վիճակն  
 որոշուեցաւ, եւ Հայք Պարսից գերիշխանութե-  
 նէն ազատեցան: Այս միջոցին կը զնեն նաեւ ու-  
 մանք ի մերոց<sup>3</sup> Տրդատայ առաջին անգամ գահ  
 ելլելը. նոյնը կը կարծէ կուծշմիտ, որ կը յաւ-  
 ելու թէ՛ դասական մատենագիրք անշուշտ չէին  
 լուր՝ եթէ Հայոց թագաւորը վերստին կան-  
 գնելու համար Հռոմայեցիք ուրոյն եւ նոր պա-  
 տերազմ մղած ըլլային: Ստոյգ ալ է թէ Ոգե-  
 նատոսի յաղթութիւնքն, ինչպէս տեսանք, Հայ-  
 ոց բախտին համար մեծ նշանակութիւն ունե-  
 ցան: Մանաւանդ թէ կուծշմիտ Ագաթանգե-  
 ղեայ յիշած Գթաց արշաւանքը, որուն մէջ քաջ  
 հանդիսացաւ Տրդատ մենամարտելով եւ յաղ-  
 թելով Գթաց արքային, եւ այն պատճառաւ  
 թագ առաւ Հռոմայեցւոց կայսրէն ըստ Ագա-  
 թանգեղեայ<sup>4</sup>, այս արշաւանքը նոյն կը համարի

<sup>1</sup> Մինեստիս, Վասն թգր. գլ. Ժը: Այսպէս դատե-  
 ցին շատերն ի դիմնոց. այսպէս նաեւ կուծշմիտ:

<sup>2</sup> Անդ: Narseus կ'անուանուի արքայն, իսկ Պարսից  
 տեղ՝ երկու անգամ Պարթեւ գրուած է: — Շապուհայ Ա.  
 յաջորդեցին Որդիք Ա. (372), Վրատ Ա. (273), Վրատ  
 Բ. (276), Վրատ Գ. Ստեփանոս (293, 4 ամիս միայն),  
 Ներսէհ (293), Որդիք Բ. (302) եւ Շապուհայ Բ. (309—379.)  
 եւ ասոնց ժամանակը կ'իյնան Ագաթանգեղեայ պատմու-  
 թեան գէպերը:

<sup>3</sup> Հմմտ. Այրբար, էջ 374:

<sup>4</sup> Ագաթ. էջ 44—48:

այն յարձակման հետ Գթաց եւ այլ աղգաց, որոնց դէմ կռուեցաւ Ռդենատոս եւ մեռաւ (267 Յ. Ք.): Այլք նոյնը կը դնեն (ըստ Զենորայ Գլակայ) 286ին, երբ Գեոկղետիանոս կը կռուէր ընդդէմ Գերմանաց, Սարմատաց եւ Հռետաց: Սակայն թէ Ագաթանգեղեայ միտքն այս չէ, այլ թէ նոյն արշաւանքն Ասիոյ մէջ էր, կարծենք բաւական յայտնի է՝ սյնու մանաւանդ որ Տրդատ անաւ, կ'ըսէ, «ի կողմանս Յունաց», որով պէտք է Հռոմէական տէրութեան Արեւելից կողմն կամ Ասիա իմանալ, եւ այն «առ կոմսի ումեմն Ղիկի- (նի)անէս անուն»: Ամենայն իրաւամբք մտադիր կ'ընէ Վութշմիտ, թէ պէտք չկայ այս կոմսը նոյնացընել Ղիկինիանոսի՝ Վոստանդիանոսի կայսերակցին հետ, ինչպէս շատերը կարծեցին: Այսպէս ամենեւին արգելք մը չկայ 266—267ին գոթական արշաւանաց ատեն դնել այս դէպքերը, թէպէտ նաեւ ուրիշ նման ասպատակութիւնք պակաս չեն: Այսպէս կը գտնենք 269ին Յ. Ք. արշաւանք մը Գոթաց եւ ուրիշ բարբարոսաց, որոնք Հելլեսպոնտոսն անցնելով մինչեւ Յունաստան յառաջացան: Սակայն այս արշաւանքն Ասիոյ եզերքն հազիւ կը շօշափէր, ուր 266ին արշաւանաց ժամանակ Ղիւդիա, Բիւթանիա, Փոլիւզիա, Գաղատիա, նաեւ Գամիրք ողողուած էին. այնպէս որ աւելի հաւանական կ'երեւայ թէ այս արշաւանաց վրայ պէտք է առնուլ Ագաթանգեղեայ խօսքը, որուն մանրամասնութիւնքն ի հարկէ կրնան դիւրաւ չափազանցուած ըլլալ:

Խնդիր է թէ որ ժամանակին եւ որ արքային համարելու է Ագաթանգեղոսյ յիշածը՝ թէ սահմաններ հաստատեցին Պարսիկք Հռոմայ-յեցւոց դէմ՝ Կոնստանդինոպոլիս<sup>1</sup>։ Ժամանակին նայելով Շապուհ Ա. էր՝ որ զՏրդատ մերժելով Հայաստան գրաւեց, եւ սահմանները կրնար ճշդել փոսերով։ Բայց նկատելով այն պարագայն՝ որ Ագաթանգեղոս անգամ մը Արտաշէր յիշելով՝ ալ ուրիշ Պարսից թագաւորաց անունը չի յիշեր, այնպէս կը ցուցնէ թէ այս սահմաններ հաստատելն ալ Արտաշէրի կու տայ։ Այսպիսի սխալ անուանակոչութեան պատճառը կրնայ կարծուիլ այն՝ որ Գողթան երգոց մէջ յիշուած Արտաշէսն նոյնպիսի սահմաններ որոշել տուաւ (ըստ Խորենացւոյ<sup>2</sup>), թերեւս նոյնն ըրաւ նաեւ ուրիշ Արտաշէս մը (Գ.) որ նաեւ Արտաշէր կը կոչուէր, եւ մերձաւոր էր ժամանակաւ հեղինակին. ուստի եւ շիոթմամբ Արտաշէր պարսկին տուած է հոս Ագաթանգեղոս։ Ըստ իս՝ այս պարագայն կրնար պատահած ըլլալ նաեւ Պրոբոսի ժամանակ երբ Խաղաղութեան դաշինք դրուեցաւ։ Եւ արդեամբք ըստ Խորենացւոյ<sup>3</sup> Պրոբոս «բաժանէ զաշխարհս (Հայոց) սահմանագրութեամբ Կոնստանդինոպոլիս»։ Եւ որովհետեւ Խորենացի հոս փոխանակ Վրամ Բ. արքային Արտաշէր կը դնէ արքայից արքային անունը, կրնանք ըսել թէ այս դիպացս արձագանգ է նաեւ այն՝ զոր

<sup>1</sup> Ագաթ. էջ 42, 7—14.

<sup>2</sup> Խոր. Բ. ԳԼ. 84.

<sup>3</sup> Խոր. Բ. ԳԼ. 55.

Խորենացի կը յաւելլու Արտաշեսի սահման որոշելը պատմէլէն ետքը՝ թէ « Ընդ որ նախանձեալ Արտաշէս, որչա՛ն Սասանաց, զնոյն նման հրամայէ առնել եւ ի Պարսից աշխարհին եւ յիւր անունն անուանել, զի մի ես յիշեսցի անունն Արտաշեսի »<sup>1</sup>:

## 9.

Տրդատայ առաջին անգամ թագաւորելէն մինչեւ Հայոց քրիստոնէութեան դարձը, նոյնպէս կցկտուր եւ մթին է Ագաթանգեղոսի պատմութեան մէջ, որ կը գրէ՝ թէ 1. Այսրն օգնական զօրք տուաւ: 2. Տրդատ եկաւ եւ դտաւ Պարսիկները տիրած Հայաստանի: 3. Տրդատ յաղթեց եւ հայրենի տէրութիւնն յինքն գրաւեց<sup>2</sup>: Ապա վկայաբանութիւն մ'իւր գրոց մէջ հիւսելէն ետքը, կը գրէ՝ թէ 4. Տրդատ արշաւանաց մէջ էր ընդդէմ Պարսից՝ օգնութեամբ Հռոմայեցւոց, եւ Հոնաց բազմութիւն մ'ալ դաշնակից էր իրեն<sup>3</sup>: Գոյզն եւ անորոշ ակնարկութիւնք կ'ըլլան նաեւ այլուր:

<sup>1</sup> Հմտ. այս խնդրոյս նկատմամբ Կուլթլիտի կարծիքը, Agath. էջ 53:

<sup>2</sup> Ագաթ. էջ 48, 14. «Յայնժամ մեծացոյց յոյժ թագաւորն զՏրդատիոս . . . թագ կապեալ ի գլուխն նորա . . . եւ գումարեաց ի ձեռս նորա զօրս բազումս յօգնականութիւն նմա, եւ արձակեաց յիւրական աշխարհն Հայոց: . . . Խաղաց զնաց թագաւորն (Տրդատ) ի կողմանս Հայոց. եկն եզիտ անդ զօրս բազումս Պարսից՝ զի զաշխարհն յինքեանս գրաւեալ էին ի ծառայութիւն. զբազումս կոտորէր, եւ զբազումս փախստականս արարեալ ի կողմանս Պարսից արկանէր. եւ զհայրենեաց տէրութիւնն յինքն նուաճեաց, եւ զօրացաւ ի վերայ սահմանաց նորա»:

<sup>3</sup> Ագաթ. էջ 103, 16. «Իսկ թագաւորն Տրդատ զամենայն ժամանակս իւրոյ թագաւորութեանն աւերէր քանդէր գերկիրն Պարսից թագաւորութեանն. զաշխարհն Ասորեստանի աւերէր, եւ հարկանէր ի հարուածս անհնա-

Այս կէտերէն առաջին երեքը ցայսվայր ըստ ածնները կ'ականարկեն, թէ եւ ըստ ոմանց պէտք է զանոնք առնուլ 283 — 297 մղուած պատերազմաց վրայ: Իսկ չորրորդ կէտին մէջ համառօտութեամբ յիշուած են Կարոսի եւ Գաղերիոսի պատերազմները: Արդէն Պրոբոս Պարսից դէմ արշաւելու պատրաստութիւններ կը տեսնէր, երբ սպանուեցաւ (281 Յ. Բ.): Կարոս յաջողութեամբ մղեց սոյն արշաւանքը. մտաւ Միջագետք, միևնոյն մինչեւ Տիգրոն, բայց մեռաւ հոն հիւանդութեամբ կամ շանթահար ըստ ոմանց.<sup>1</sup> (սկիզբն 284 Յ. Բ.): Իւր որդին Նումերիանոս բանակն ետ դարձուց եւ սպանուեցաւ քիչ մ'ետքն, ինչպէս նաեւ Ապեր, եւ ինքնակալ եղաւ Գիողեթիանոս (284 Յ. Բ. 17 Սեպ.): Թերեւս Պարսիկք այս առթիւ բաւական զօրացան, եւ Հայոց գոնէ մի մասն իրենց տակն առին, այնպէս որ Տրդատ պէտք ունեցաւ երկրորդ անգամ գահը ձեռք ձգելու 287 ին՝ Գիողեթիանոս ձեռք: Այս տեսութիւնը բոլորովին կը ստուգուի նաեւ այլուստ, եթէ ճշմարտուի Կոնստանդինի գոյութիւնն եւ մղած պատերազմն ընդդէմ Հռոմայեցւոց, ինչպէս կը

րինս: . . . Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, եւ զՏոյակապ շքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր. հարկանէր ի հարուածս զթշնամիսն, եւ խնդրէր զքէնս վրիժուց իւրոց հայրենեացն. առնոյր աւար բազում ի կողմանցն Ասորոց, եւ թափեր կողոպուտ սաստիկս անհնարին ի նոցանէն: Արկանէր ի սուր զօրս Պարսից, եւ թափէր զկողոպուտ անհնարին. լինէր սուրբ սուրբ սուրբ ի նոյ զքէնս Յունաց. ի նոյնքն նոյնքն զքէնս նոյն. հանէր զքէնս Հունաց սուրբի յոյժ, եւ գերէր զկողմանս Պարսից:

<sup>1</sup> Փղատեան Արդիւն. ի Կարոս, Գ. 8: Եւրոպիան: Թ. 18, 19: Արեւ. Վիտորիան, Պամ. Կոստանթնուպ. 38: Չար, Տարեգիրք, ԺԲ. 30 եւն:

պատմեն խորենացի<sup>1</sup> եւ այլք՝ յենլով Եւսեբիոսի  
Քրոնիկոնին Հայ թարգմանութեան մի կէտին, որ  
սակայն սխալ ընթերցուած մըն է անշուշտ բառի  
մը կամ անուան<sup>2</sup>. գիտենք ալ որ կարինոս սպա-

<sup>1</sup> Խոր. Բ. զԼ. Հթ: խորենացի բոլոր դէպքերն  
Հոս շփոթեր է, եւ կը պատմէ սյուպէս. « Կարոս Հանդերձ  
որդւոյքն կառնեալ եւ Նոմեախանոսի թաղաւորեաց, եւ  
զօրածոցով եղեալ ետ ճակատ ընդդէմ Պարսից արքային,  
եւ յաղթեալ զարձաւ ի Հոռոմ: Վասն որոյ բազում ազգս  
ի սատարութիւն կալեալ Արտաշէի, թիկունս արարեալ  
զանապատն Տաճկաստանի, զարձեալ ետ ճակատ ընդ զօրս  
Հոռոմայեցոց կրկին՝ աստի եւ անտի Եփրատու, յորմէ  
սպանաւ Կարոս ի Յռինոյն (այլ օրինակ՝ ունին՝ ի Յոյնն):  
Նոյնպէս եւ կոռնիոս, որ ի վերայ կոռնիոյ շոքոս յան-  
դոս, ընդ որում եւ Տրդատ. եւ սատակեցաւ նա եւ զօրն,  
եւ մնացեալքն ի փախուստ զարձան: . . . Ընդ նոյն աւուրս  
ինի սպանեալ եւ Նոմեախանոս ի թրակէ, եւ փոխանոր-  
դեալ զթագաւորութիւնն Գիոկղէտիանոս,» եւն. Հմմտ. այս  
նկատմամբ նաեւ Այբբագր, 376, ծն. 2:

<sup>2</sup> Եւս. Քրոն. (Վենետ. 1818) Հար. Ա. էջ 302. « Ի Կա-  
րայ վախճանէն ի Միջագետս, Նոմեախանոսի առ նովա լինէր  
սպանանել ի թրակիս, եւ կարինոսի նոյնպէս ի կոռնիոյ  
պատերազմին:» Չայս օրինակած է եւ Սամուէլ Անեցի, որ  
կը գրէ « Կոռնակ սպարապետ մեծին Խոսրոզու Հօրն Տրդա-  
տայ՝ ասեն յերկարեալ զամս կենացն ՃԿ. . . սա եհար զԿա-  
րոս կայսր. եւ սպանաւ Կարոս որդւոյն իւրով ի պատե-  
րագմին:» Թէ Հոս Եւսեբեայ Հայ բնագիրն աղաւաղ է,  
յայտնի է նաեւ անկէ՝ որ սոյն կոորն շատ աւելի ընդար-  
ձակ եւ ճիշդ է Հերոնիմեան լատիներէն թարգմանութեան  
մէջ (Migne, Patrologiae cursus. Series prima. Tomus  
XXVII, p. 657) եւ սյուպէս է. Carus Narbonensis, cum  
omni Parthorum regione vastata Chochem et Ctesiphontem  
nobillissimas hostium urbes cepisset, super Tigrim castra ponens,  
fulmine ictus interiit. . . Carinus praelio victus apud Margum occiditur.  
Ապա ուրեմն ճշդիւ միարտն պատմութեան հետ: Չարմանք է որ Հ. Մ.  
Վ. Ա. Եւզերեան (Անդ, էջ 362 բ) կը ջանայ պաշտպան Հան-  
դիսանալ Հայ ընթերցուածին, մանաւանդ թէ փոխանակ  
Հայը վերկայած դնելու՝ կ'ուզէ ուղղել Հերոնիմեայ թարգ-  
մանութիւնը սխալ ընթերցմամբ, սյուպէս՝ ընդունելով  
որ յոյն բնագիրն մէջ Κορνάκης կամ Κορνάκος (Կոռնա-  
կայ) էր, իսկ Հերոնիմոս Κερωνός (շանթ) թարգմանած  
է: Բայց միտ դնելու էր որ նաեւ Սիւնիշուս պահած է մեղ  
սոյն կոորը, որուն մէջ նոյնպէս կը գտնենք Κάρος . . .  
κερανοῦ κατασκήφαντος . . . διαφθείρεται κτλ. Ճշդիւ  
հակասակը կը ստիպուէինք պնդել, եթէ չըլար միայն այն

նուեցաւ ի Միւսիա Գիողղետիանոսի դէմ կուռած  
 ժամանակ Մարգոս քաղաքին քով (285 Յ. Բ.):  
 Գիողղետիանոս արեւմուտք երթալէն վերջը հարկ  
 տեսաւ Պարսից դէմ արշաւել, բայց շատ երկար  
 արշաւանք մը չեղաւ. վասն զի Առամ Բ. ստի-  
 պուեցաւ խաղաղութիւն ընել այնու դաշամբ՝ որ  
 Տիգրիսի ասդին եղող երկիրները թողուց շո-  
 մայեցուց (286ին վերջը): Այսպէս Հայաստան ա-  
 զատեցաւ կրկին Պարսից զինուց ազգեցութենէն,  
 եւ Տրդատ ազատութեամբ յիւր դահն հաստա-  
 տուեցաւ ընդդէմ Պարսից (287 Յ. Բ.): Ճշգիւ  
 այս տարին է Գիողղետիանոսի երրորդ տարին,  
 յորում դահ ելած կը դնէ Խորենացի զՏրդատ,  
 որ զայն մեծաւ աշխատութեամբ եւ քննու-  
 թեամբ գտած կ'ըսէ (Բ. Գլ. ձբ.): Միաբան է  
 նաեւ Մարկեղոս Ամնիանոս, որ 295էն յառաջ  
 Հայաստան կը դնէ ազատ ի Պարսից եւ «հպա-  
 տակեալ հռոմէական իշխանութեան» : (ԻԳ. 5):

Ըստ Ագաթանգեղոսի Տրդատ հանգիստ  
 չունեցաւ, այլ Արքայից արքային դէմ ար-  
 շաւանաց մէջ էր 13 տարիէ աւելի<sup>1</sup>: Ըստ ին-  
 քեան դժուարութիւն մ'ալ չկայ այս պատմու-

պարագայն՝ որ շահաւոր ըլլալուն խօսքը կարոսի նկատ-  
 մամբ է, ուստի այս բառը բնագրին առաջին նախադասու-  
 թեան մէջ կը գտնուէր, իսկ կուռնակ կը գտնենք վերջը  
 այսինքն՝ հայ թարգմանութեան երրորդ նախադասութեան  
 մէջ: Բայց յամենայն դէպս կուռնակ աղաւաղութիւն մ'ը-  
 լալու է լին:

Ագաթ. 110, 7. «Չամենայն ամն ժամանակաց  
 իւրոց թագաւորն Տրդատ գոռացեալ ընդ Պարսից տե-  
 րութեանն, ինդրեաց զքէնս վրիժուց մարտից պատերազ-  
 մաց: Իսկ ի շուշ ամացն՝ որ եղև Գրիգորիոս ի վերապին,  
 էքրե- ու՛ էրէտոսան, է- էր մարտ սարէի խորնէն  
 Տրդատայ ընդ Պարսից թագաւորին զամենայն աւուրս կե-  
 նաց իւրոց.» եւ այլուր:

Թեան դէմ. վասն զի նաեւ խաղաղութեան կնքուելէն ետքն ալ կրնար Պարսից արքայն գլխաւ զՏրդատ եւ այս վերջինը մանր արշաւանքները ընել յԱտրպատական եւն: Այս կը հաստատուի նաեւ այնու՝ որ Մաքսիմիանոս յաղթանակ կատարած կը յիշուի Պարսից դէմ մղած պատերազմին (իւր 290 Յ. Ք.): Յայտնապէս թշնամութիւնը սաստկացաւ քիչ մ'ետքը: Վասն զի «նախ ինքն Ներսէ՛՛հ մտեալ գրաւեալ էր (295 Յ. Ք.) զՀայաստան՝ զհպատակեալն հռոմէական իշխանութեան<sup>1</sup>: Ներսէ՛՛հ բաց ի Հայաստան գրաւելէն՝ մտաւ նաեւ Միջագետք: Այսպէս հարկ է որ Տրդատ բոլորովին մերժուած ըլլայ հայրենի իշխանութենէն. եւ անշուշտ դիմած է կայսեր: Գաղերիոս աճապարեց սակաւաձեռն գնդով ճակատ տալու Ներսէ՛՛հի դէմ՝ կաղինիկեայ եւ կարրայի մէջ, բայց պարտեցաւ իւր անխոհեմութեամբ (296 Յ. Ք.): Գիոկղեաթիանոս շատ դժկամակութեամբ ընդունեցաւ զԳաղերիոս, որ սակայն նոր զօրք գումարելով եւ խոհեմութեամբ շարժելով՝ կատարեալ յաղթութիւն ստացաւ Ներսէ՛՛հի դէմ՝ երբ իւր բանակով Մեծ Հայք մտաւ, ուստի եւ անշուշտ իւր հեան ունէր եւ զՏրդատ: Այս ճակատին մէջ գերեցան Ներսէ՛՛հի կանայք եւ քօրք եւ որդիք,

<sup>1</sup> Մաքսիմիանոսի մասին. Ի. Գ. 5. «Etenim ut probabile argumentum ad fidem implendam scientiae suae id praetendebant, quod et Maximiano antehac Caesari cum Narseo Persarum rege jam congressuro, itidem leo et aper ingens trucidati simul oblatis sunt, et superata gente discessit incolumis: illo minimè contemplato, quod aliena petenti portendebatur exitium, et Narseus primus Armeniam Romano juri obnoxiam occuparat.



եւ այնպէս բեկաւ Պարսից զօրութիւնը՝ որ ոչ միայն ամենածանր պայմաններ յանձն առաւ Ներսէ՛՛հ,<sup>1</sup> (297 Յ. Բ.) այլ եւ այս խաղաղութիւնը տեւեց 40 տարի, մինչեւ 338, որ տարին Շապուհ Բ. յարձակեցաւ Մծբնայ վրայ:

Այս խաղաղութեամբ՝ որ նշանաւոր է պատմութեան մէջ՝ Հռոմայեցիք ետ առին շատ մ'երկիրներ, եւ Հայաստան բոլորովին ազատեցաւ Արեաց ազդեցութենէն<sup>2</sup>: Պետրոս Պատրիկոս, որ մանր ոճով կը պատմէ այս դաշնադրութիւնը, կ'ըսէ՝ [Թէ դաշանց կէտերն էին. « Հռոմայեցիք կայրին յարեւելս զԻնտիւեան Ծոփաց աշխարհաւ, զԱրլն հանդերձ կորդուօք եւ դաշխարհ Չարդիկեան, եւ Տիգրիս կացցէ սահման երկոցունց պետութեանց: Մահմանք Հայոց աշխարհին ձգեսցին մինչեւ ցամուրն Ծփնտա, ի սահմանս Մարաց, եւ արքայն Վրաց ի Հռոմայեցոց անցէ զնշանակս արքայութեանն: Մծբին եղիցի շահաստան՝ որ առ Տիգրիս գետով »<sup>3</sup>: Այսպէս

<sup>1</sup> Ի-ր-ր-դէ-ն, Պատմ. Հոմ. Ը. 24, 25: Զ-ն-ր, Տարեգիրք, Ժ. Բ. 31: Պե-ր-ր. Պ-ր-ր-ի-ն-ն. Բաց. 3 է. ն:

<sup>2</sup> Քաղերիոս իւր մէկ հրովարտակին մէջ առ Իւսերեաց (Պատմ. Եկեղ. Գիրք Ը. ԳԼ. Ժէ) բաց ի այլ անուններէ՝ կը կոչուի նաեւ Հայ-ի-ան (Armeniacus) եւ Ար-ի-ք-ի-ն-ի-ն:

<sup>3</sup> Պե-ր-ր. Պ-ր-ր-ի-ն-ն է- Մ-գ-ի-ր-ր-ն, Հատակոտորք, 3.

<sup>4</sup> *Ἦν δὲ τὰ κεφάλαια τῆς προεβδίας ταῦτα, ὥστε κατὰ τὸ ἀνατολικὸν κλίμα τὴν Ἰντηληνὴν μετὰ Σοφηνῆς καὶ Ἀρζανηνὴν μετὰ Καρδονηρῶν καὶ Ζαβδικηρῆς Ῥωμαίους ἔχειν, καὶ τὸν Τίγριον ποταμὸν ἐκατέρωθεν πολιτείας ὁροθεσίον εἶναι, Ἀρμενίαν δὲ Ζίνθα τὸ κάστρον ἐν μεθορίῳ τῆς Μηδικῆς κείμενον ὄρῳζειν, τὸν δὲ Ἰβηρίας βασιλεὺς τῆς οἰκείας βασιλείας τὰ σύμβολα Ῥωμαίους ὀφείλειν, εἶναι δὲ τόπον τῶν συναλλαγμάτων Νίσιβιν τὴν πόλιν παρακειμένην τῷ Τίγριδι. *Հմմտ. այս դաւառաց նկատմամբ՝ Այ-ր-ր-ր, 378, ծն. 1 էւ 2:**

ուրեմն ոչ միայն Տրդատ իւր գահն հաստատուեցաւ, այլ եւ ընդարձակուեցան իւր տէրութեան սահմանները (297 Յ. Ք.): Այս կէտը նշանաւոր է նաեւ այնու՝ որ Ագաթանգեղեայ մէջ յիշուած արշաւանքները ալ Տրդատայ այս ժամանակէն վերջն չեն կրնար ձգուիլ. եւ ասով ցուցուած կ'ըլլայ միանգամայն՝ թէ Ագաթանգեղեայ մէջ յիշուած Ղիկիանոսն չէ Աոստանդիանոսի գահակիցը, ինչպէս կ'ուզեն գրեթէ բոլոր հին եւ նոր քննիչք կարծել, եւ մերքն հաստատութեամբ սոյն Ղիկիանոսի քով սնած կ'ուզեն դնել զՏրդատ: Այո, Եւտրոպիոս<sup>1</sup> ճշդիւ սոյն պատերազմին մէջ նիզակակից կը դնէ Գաղերեայ Ղիկիանոս, որ դեռ չէր գահ ելած, եւ հազիւ 307ին կեսար անուանուեցաւ: Բայց ըստ Ագաթանգեղեայ՝ Տրդատ այս պատերազմներէն շատ յառաջ գահ ելած էր արդէն, վասն զի յայտնի կը պատմէ թէ 13 տարիէն աւելի արշաւանքներ ունեցաւ Տրդատ. որով նաեւ ըստ Ագաթանգեղեայ՝ Տրդատայ առաջին անգամ թագաւորելը Պրորոսի ատեն կ'իյնայ, եւ կը ստիպուինք այն Գթաց արշաւանքն Ոգենատոսի ատեն (266—267) եղածը համարել. եւ այսպէս այն Ղիկիանոսն չէ այս կայսրը:

Պետրոս Պատրիկիոս Մագիստրոս կը յիշէ թէ այս խաղաղութեան դաշանց կնքման համար Պարսից արքայից արքայէն պատգամաւոր առա-

<sup>1</sup> Եւտրոպիոս, յ. 4. Per hoc tempus a Galerio Licinius imperator est factus, Dacia oriundus, notus ei antiqua consuetudine, et in bello, quod adversus Narseum gesserat, strenuis laboribus et officiis acceptus.

բուած էին « Ափարբոս եւ Արքայկտ եւ Բարսարորոսս, » որոնց առաջինը « անձնապահապետ », եւ վերջինը « իշխան Սիւմի աշխարհին »<sup>1</sup>: Ասոնցմէ Արտաշէս հայկական կը հնչէ, բայց մանաւանդ Բարսարորոսս անշուշտ է = Արաղշապուհ, եւ Սէ-ժէ երկիրը = Սիւնիք<sup>2</sup>. որով Արաղշապուհ Սիւնեաց իշխան մը եւ թերեւս այլ ոմանք հայ իշխաններէն կողմնակից էին Ներսէսի: Ապա ուրեմն Տրդատայ այլեւայլ անգամ մերժուիլը գահէն ճշգիւ այնպէս եղած է՝ ինչպէս տեսնը Խոսրովու մահը: Գժբախտաբար Ագաթանգեղոսի առաջին գրոց մթին եւ հարեւանցի պատմութիւնը կը զլանայ մեզ այսպիսի մանրամասնութիւնները:

Տրդատայ բանակին մէջ կը յիշուին Հոն, բայց նաեւ աւելի կանուխ Խոսրովայ հետ կը գտնենք զանոնք: Կութշմիտ՝ որ ժամանակագրական վրիպակ կը համարի Հոնաց այսչափ կանուխ յիշուիլը, Տրդատայ բանակին մէջ Հոնաց գտնուիլը պատմական կը նկատէ<sup>3</sup>: Արդեամբք ալ Գգարու սկիզբները շատ յաճախ կը գտնենք Հոն անուն ազգն Հայոց հետ յարաբերութեան մէջ, եւ Բուզանդ Ս. Գրիգորիսի մահուան առթիւ կը պատմէ Հոնաց եւ այլ հիւսիսականաց արշաւանքը<sup>4</sup>: Ալ Գգարուն վեր-

<sup>1</sup> Անդ.՝ Ἀρξασθεις τῆ παρουσίᾳ Ἀρφαρόβα καὶ Ἀρχαπέτιον καὶ Βαρσάρωροσιν, ὧν ὁ μὲν ἔτερος ὑπαρχος ἦν πραιτωρίον, ὁ δὲ ἔτερος τὴν τοῦ Σνυμίον εἶχεν ἀρχήν.

<sup>2</sup> Հմմտ. նաեւ Այր-բ-դ, էջ 391, ճն. 1:

<sup>3</sup> Agath. S. 31 եւ յետոյ:

<sup>4</sup> Բուզանդ, Գ. գլ. Գ. էջ. 14, 10. « Յանդիման լինէր թագաւորին Մաղթաց, իշխանին բաղմութեան զո-

ջերը Հոնք նշանաւոր էին իրենց արշաւանօք, եւ իրենցմէ՝ մեծ զանգուած մը սկսաւ շարժիլ դէպ Եւրոպա. եւ յաջորդ դարուն կէսերն արդէն Գանուբեան ասիոնքներն ողողած էին: Բայց յամենայն դէպս՝ Ագաթանգեղեայ այս ակնարկութիւնք միշտ նշանաւոր կէտ մըն են այս հիւսիսական ազգաց պատմութեան լուսաւորութեան՝ որ տակաւին թերի է: Ըստ Ղակարտի՝<sup>1</sup> Հն ձեւը շատ հին չէ, այլ Ե դարու մէջ այս կերպն առած:

Տրդատայ քաջագործութեանց նկատմամբ պատմուածները ժողովրդական զրոյցներ կ'երեւան եղած, որոնք Ագաթանգեղեայ գրչին տակ կրնային մեծցած ըլլալ: Ագաթանգեղոս ամենայն գեղեցկութեամբ ոճոյ կը պատմէ՝<sup>2</sup> թէ ինչպէս Տրդատ Ա իկինիանոսի գնդին համար խարհայթայթեց քաղաքորմէն դուրս խոտերու բարդեր պահապան շէրով<sup>3</sup> մէկտեղ նետելով: Այս

րացն Հոնաց, շմտ. Գ. է (էջ 15, 20. եւ 17, 12.) եւ Գ. ԳԼ. Իե. (էջ 144, 30):

<sup>1</sup> Paul de Lagarde, Gesammelte Abhandlungen, Leipzig, 1866, S. 219.

<sup>2</sup> Ագաթ. 45, 22—46, 18. «Մինչդեռ գային գունդք զօրացն եւ Տրդատէս ընդ նմա (Աիկիանոս), դէպ եղև նոցա գալ մտանեւ ի նեղագոյն տեղի մի՝ յառուամէջս այդեստանւոյն, ի փողոցամէջս համբարոցացն՝ առ դրունս քաղաքին, քանզի զգրունս քաղաքին ակեալ էր. զի ժամ էր հասարակ գիշերոյ: Իբրև ոչ գտաւ խար երկվարաց զօրուն բազմութեան դարման կերակրոյ մինչև ի մէջ գիշեր, հայեցեալ անասնէին ի զուարափակ քաղաքորմի միով՝ զի խոտահամբար մթերեալ էր. եւ ոչ որ կարաց ձգել զձեռն իւր վասն տեղոյն բարձրութեան: Յայնժամ Տրդատէս ելեալ եւ իջեալ՝ հոսէր ընկնոյր բարդս բարդս ի մէջ զօրացն մինչ ի լիութիւն բաւականի: Նաեւ զհամբարոցանս է— (°) քաղաքն է շնոց. յայնկոյս որմոյն ընկնոյր ի մէջ զօրացն, եւ ինքն անդրէն ելեալ իջանէր:»

<sup>3</sup> Ագաթ. 46, 16. «Քաղաք է շնոց» ընթերցուածք զօրաց սխալ մըն է ի հարկէ՝ փոխանակ «քաղաքն է շնոց» գրելու, նոյնպէս անդէպ է «զհամբարոցանս է—» ընթեր-

առթիւ հռչակուելով իւր զօրութիւնը՝ Գթաց թագաւորին դէմ՝ մենամարտութեան կ'ելլէ շոմօնյեցւոց կայսեր զգեստութիւնով եւ կը յաղթէ կաշմրուսն հակառակորդին<sup>1</sup>: Իւր յաղթանդամ՝ հուժկուութիւնը կը նկարագրուի շատ կենդանի գոյներով<sup>2</sup>, եւ այն՝ նաեւ պատերազմաց մէջ. այսպէս՝ երբ պատերազմի մը մէջ «ի կողմանս Տաճկաց», խոցուած՝ իւր ասպազէնն ու զէնքերը կոնակը կապած լողալով կ'անցնի զԵփրատ<sup>3</sup>: Ամենէն աւելի գեղեցիկ կը նկարագրուի Տրդատայ հսկայական յոժը՝ որով 8 մեծ միապաղաղ քարեր Մասիսէն «ստանձնեալ», բերուի<sup>4</sup>: Այս եւ նման նկարագրութիւնք արդէն կը ցուցնեն թէ ինչ մեծամեծ զրոյցներ կազմուած

ցուածն, ուր անշուշտ «համարապան» վերադիրն «շանց» է: 2ու յոյնը շատ ուղղութեամբ ունի. (PL. § 19. p. 13. 18) ἀλλὰ καὶ τοὺς φυλάσσοντας κύνας πολλοὺς κτλ. (բազում շունս համարապանս):

<sup>1</sup> Ագաթ. 47, 20—48, 13:

<sup>2</sup> Ագաթ. 104, 2, 144, 18 եւն:

<sup>3</sup> Ագաթ. էջ 157, 19—158, 10. «Անուանի եղեալ քաջութեամբք առաւելոյր ի մարտս պատերազմացն, նաեւ յուղիմիանդան Յունաց հսկայազօր երեւեալ, բազում գործս արութեան եւ անդ ցուցեալ եւ ոչ սակաւ մղեալ պատերազմունս յայնչոյ» Եփրատ գետոյ ի կողմն Տաճկաց, ուր եւ կարեվէր խոցեալ ելանէր երիվարուն ի պատերազմէն. իսկ նորա առեալ զերիվարն, եւ զասպազէնն նորին եւ զիւր զառնազէնն առեալ կապեալ ի թիկունսն, ի վերայ մկանանցն ի լիւզանցանէր ընդ գետն Եփրատս», Յայտնի կ'երեւայ՝ որ այս կտորը Եւսեբեայ վերը յիշուած աղաւաղեալ մասին հետ՝ հիմն եղած են Առանակոյ պատերազմին յանապոհէն Տաճկացի առ խորենացւոյ (Բ. զԼ. հիշ):

<sup>4</sup> Ագաթ. էջ 576, 9 եւն. «Եւ թնօրեայ ծանապարհ կալեալ ի վեր ի բարձր լեռան Մասիս: Իւ անտի ի գլխոյ լեռնէն առեալ վէմս արատոյս, անտաշս, անկոփս, յաղթս, ծանունս, երկայնս եւ ստուարս, մեծամեծս, որ զմի մի ոչ լինէր հնար թէ եւ զիպելոյ բազմութեանց ի մարդկանէ՝ զայն շարժեալ, արդ առեալ սկայազօրն հսկարար զութարձանս՝ ի վերայ իւրոց թիկանցն զայն դնէր, ստանձնեալ բերեալ ի վկայարան սաճարաց» եւն:

էին անձի մը վրայ՝ որ իբրև ճշմարիտ Դե-յու-ն  
կը ներկայանայ ընթերցողաց: Առթիւ յայտ աւելի  
յառաջանալով՝ կը համարի թէ այս ամենայն  
ոչ այլ ինչ են՝ բայց Հայոց դիւցաբանական մէկ  
անձին վրայ պատմութեանը փոխուած եւ պատ-  
մական անձի մը վրայ առնուած: Արդէն, ինչպէս  
վերն յիշած ենք, այնչափ մեծ եւ վսեմ նկա-  
րագրութիւն կը գտնենք իւր վրայ, որ ահամայ  
հայ փոփոխները կը յիշենք, եւ անշուշտ հետի  
չենք ճշմարտութենէն՝ երբ հաստատենք՝ թէ  
Ազատանգեղոս այս կտորները (հարկաւ ոչ բառ  
առ բառ) քաղած է հայ փոփոխներէն, որոնց  
երգերը կը կազմէին տեսակ մը Հայկական Շու-  
նուէ: Կարծենք թէ Ազատանգեղոս բացայայտ  
ալ սոյնը կը խոստովանի, վասն զի կը գրէ (103,  
22.) « վասն այսորիկ պատշաճեցան բանքս այս  
ի Բն-իւրդէն, թէ իբրև զսէգն Տրդատ,  
որ սիգալով աւերեաց զթումբս գետոց, եւ ցա-  
մաքեցոյց իսկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց:  
վասն զի (կը յաւելու Ազատանգեղոս,) սէգ իսկ  
էր առ հանգերձ<sup>(6)</sup>, եւ այլ ուժով պնդութեան  
հաստատութեամբ բունն օտկերօք եւ յազմ  
մարմնով, քաջ եւ արի պատերազմող անհնա-  
րին, բարձր եւ լայն հասակաւ » եւն: Կարծենք  
թէ հոս « բանք կարգի առակաց » ասութիւնը կը  
նշանակէ այն երգերը՝ զոր մեր նախնիք նաեւ  
« բանք առասպելի », « առասպել », « վիպասա-  
նաց երգք », « վիպասանութիւն » եւ այլ անուա-  
նակոչութեամբ կը նշանակեն: Այս պարագայն  
անհամեմատ կը յաւելու սոյն գրոց այս մասն-

բուն արժէքն, թէպէտ եւ գրչին ուսուցիկ ոճը  
չէ սիրած մեզ նոյները բնիկ չափական ձեւով  
աւանդել, որչափ կ'երեւայ:

Ազատամեղեղայ առաջին գրոց մեծ մասը  
կը գրաւեն երկու որոշ մասեր Վիշաբեանի  
ուղղութեամբ, որք սոյն պատճառաւ ալ այնչափ  
պատմական մեծ արժէք չունին, վասն զի առա-  
ջին անգամն իսկ ընթերցողը կը տեսնէ՝ որ այն  
տեսակ վկայարանութիւններէն են, որոնք ըստ  
գոյացութեան միայն ճշմարտութիւնը կը պատ-  
մեն, կամ համառօտ ըսելով՝ չեն վերականգն-  
ւի: Այս մասերն են 1. Վիշաբեան-  
ի 2. Վ. Գրիգորի: 2. Վիշաբեան-  
ի 3. Տեղի 11. Գրիգորի: Այս վերջինը Բ  
գրոց մէջն է, բայց ի հարկէ ամենեւին կապ չունի  
նոյն ընթերցողի գրոց հետ, ուր նաեւ քանի մը  
վկայարանական կտորներ հիւսուած են. այսպէս  
Տրդատայ բժշկութեան եւ նման գէպեր: Բայց  
նաեւ այս մասերն հաւասար արժէք չունին:

Ս. Գրիգորի վկայարանութիւնը շատ աւելի  
պատմական տարր ունի իւր մէջ: Բողոքովն պատ-  
մական կը հնչէ սկզբնաւորութիւնը՝ «Յոր-  
մէն Տրդատայ արքայութեանն Հայոց մեծաց,  
խաղաքին եկին հասին յԵկեղեցաց գաւառ, ի  
գիւղն Երիզայ, ի մահեանն Անահատական, զի անդ  
զոհս մատուցեն. եւ իրրեւ կատարեցին զգործն  
անարժանութեան, իջին բանակեցան առ ամին  
գետոյն, զոր Գայլն կոչեն: Իրրեւ եկն եմուտ ի

<sup>1</sup> Ազատ. էջ 49, 13—50, 13:

խորան անդր եւ յընթրիս բազմեցաւ, եւ իբրեւ ընդ գինիս մտին, հրաման ետ թագաւորն Գրիգորի՝ զի պսակս եւ թաւ ոստս ծառոց նուէրս տարցի բագնին Անահտական պատկերին: Այլ նա ոչ առնոյր յանձն պաշտօնատար լինել զիցն երկրպագութեան<sup>1</sup>: Այս կտորը կը զնէ մեր առջեւ նաեւ անգին ակնարկութիւններ հեթանոս Հայոց սովորութեանց վրայ: Յաջորդ երկար հատածները<sup>2</sup>, Տրդատայ եւ Գրիգորի այս կամ՝ այն պատասխանը, Ս. Գրիգորի չարչարանաց մանրամասնութիւններն եւ նմանիք մասնաւոր նշանակութիւն մը չունին. վասն զի այսպիսիք հասարակաց ինչ կը համարուին շատ մը նոյն տեսակ գրութեանց: Նաեւ անուղղակի մանր տեղեկութիւններ շատ քիչ կան այս մասին մէջ: Ինչպէս սկիզբն՝ նոյնպէս նաեւ միայն վերջը պատմական դրոշմ կը կրէ, որ է այս հատածը<sup>3</sup>. « Հրաման տայր կապեալ ոտիւք եւ կապեալ ձեռօք եւ կապեալ պարանոցաւ խաղացուցանել զնա յԱյրարատ գաւառ, եւ տալ զնա ի դղեակ բերդին Արտաշատ քաղաքին, եւ իջուցանել ի վերապն ներքին որ անհնարին էր խորութեամբ, մինչեւ անդէն մեռցի: Եւ եղև նա յայնմ վերապի ամս երեքտասան »: Կը յաջորդէ ծանօթ պատմական հատածը՝ որ Տրդատայ ընդդէմ Պարսից ըրած արշաւանքները կը նկարագրէ<sup>3</sup>: Ս. Գրիգորի վերապ ձգուելուն այս պարզ պատմութիւնը, ինչպէս ըսինք՝ ընտիր աղբիւրէ մը կ'երևայ. բայց միայն

<sup>1</sup> Ագաթ. էջ 50, 14—101, 19 կամ մանաւանդ 103, 2:

<sup>2</sup> Ագաթ. էջ 103, 2—10:

<sup>3</sup> Ագաթ. էջ 103, 15—104, 26:



այսչափը, վասն զի սոյն պարզ դէպքը բաւական յաւելլուածներ առած է<sup>1</sup>, որոնք Ս. Գրոց մէջ Գանիէլի գուբ ձգուելուն պարագաներուն համեմատ ձեւուած են. այսպէս թէ կին մը՝ «հրաման առեալ յարհաւրաց»՝ «աւուր նկանակ մի արարեալ պատրաստական» վիրապ կը ձգէր, թէ նոյն տեղ «օձախառն բնակութիւն» մըն էր. եւ այլ նման պարագաներ:

Իսկ Տէպլեան նկատմամբ աւելորդ կը համարինք հոս խօսիլ, մանաւանդ որ վերն տեսանք՝ թէ այս հատածը Ե դարէն միայն կրնայ ըլլալ:

Սուազագոյն պատմական տարր ունի Հովհաննէս վկայաբանութիւնը, որ առաջին գրոց մէջ բոլորովին կղզիացեալ զիրք մ'ունի<sup>2</sup>, եւ իւր սկզբնաւորութեամբ եւ վերջաբանութեամբ նախընթաց եւ յաջորդ մասերուն հետ անկապ է. այնպէս որ երբ ԺԳ—ԺԹ հատածները դուրս ձգենք՝ եւ ոչ զոյգն ընդհատութիւն մը կ'ըլլայ Ագաթանգեղեայ գրոց<sup>3</sup>: Բայց նաեւ Բ. գրոց մէջ կան բաւական կտորներ՝ որ սերտ կապ ունին այս վկայաբանութեան հետ:

Արտաքին պատմութեան եւ նաեւ եկեղեցական հնախօսութեան հետ շատ միաբան չեն Հռիփսիմեանց պատմութեան մանրամասն պարագայք. այսպէս՝ թէ Գիողղէտիանոս, որ արդէն

<sup>1</sup> Ագաթ. էջ 105, 1—23. 176, 1—11. 179, 23—180, 9. 185, 24—186, 17 ե.ն.:

<sup>2</sup> Ագաթ. էջ 112, 18—163, 25:

<sup>3</sup> Բայց ինչպէս ուրիշ առթիւ ըսած ենք՝ կան քանի մը կտորներ ուրիշ աղբիւրներէ հիւսուած այս մասին մէջ, ինչպէս էջ 157, 19—158, 10 ե.ն.:

ինքնակալ չեղած ամուսնացած էր Արիսկեսայ Տետ,  
 քն ինդրած ըլլայ «ի քաղաքին Հոռոմայեցւոց»,  
 եւ այն՝ Բաղաթին «հոռոմաց արգելալանի» մէջ,  
 ուր Հոնիսիմէն էր «ի թագաւորական տոհմէ»  
 եւ այլն: Աոկ Շուշանայ պատմութեան համեմատ  
 ձուլուած է սոյն կուսին Հայաստանի մէջ ըրած-  
 ներուն պատմութիւնն եւ այլ հանգամանքն զոր  
 մի առ մի կրկանել աւելորդ կը համարինք: Այս  
 իսկ պատճառաւ՝ Հոնիսիմէնի վկայարանութեան  
 պատմական արժէքն «հասարակէ» ըստ Աութ-  
 շմիտի<sup>1</sup>, որ աւելի յառաջ երթալով կը համար-  
 ձակի ըսել՝ թէ Բաղաթին Տրդատայ եւ Նադինի  
 հարձին վրայ պատմուածը<sup>2</sup> հիմն է Հոնիսիմէայ  
 պատմութեան: Բայց կարծենք զժուար է զայս  
 ընդունիլ, մանաւանդ որ հեթանոս Նադինկան  
 վրայ Խորենացւոյ պատմածը տրամաչափապէս  
 հակառակ է Հոնիսիմէի տրուած նկարագրին.  
 եւ անընդունելի է՝ որ այնպէս կանուխ ժա-  
 մանակաւ այնչափ փոփոխուէին աւանդութիւնք,  
 մինչեւ վատահամբաւ հարձ մը ճշդիւ զգաստ  
 սրբուհւոյ փոխուէր եւ պաշտուէր. մինչդեռ մեր  
 նախնիք հեթանոսութեան ամենադոյզն հեռքերը՝  
 հեթանոսական զիւցազանց եւ նախահաւուց  
 վրայ եղած աւանդութիւնքն իսկ անհետ ընել  
 կը ճգնէին: Այս՝ թէ եւ Հոնիսիմէանց պատ-  
 մութիւնն անվաւերական եւ կեղծ պարագանե-  
 ըով հիւսուած է. բայց գոնեայ պատմական  
 նշոյլքներ պակսելու չեն անշուշտ անոր մէջ:

<sup>1</sup> Agath. էջ 58—60:

<sup>2</sup> Խոր. Բ. ԴԼ. ԿԳ:

Կարծենք դժուարութիւն մը չկայ ընդու-  
նելու թէ կուսանք ոմանք Հայաստան փախած  
ըլլան նոյն Հայրաճանաց առ թիւ Ասորիքէն կամ  
թերեւս ի Փոքր Հայոց եւ կամ մերձաւոր տե-  
ղերէն, թէպէտ ոչ այնչափ բազմութեամբ վա-  
նական կուսանաց՝ որոնք եկած ըլլան ի Հոռոմայ:  
“Ի Հոռոմայ” եկած կուսանք կրնային վրիպմամբ  
“Ի Հոռոմայ” փախած համարուիլ: Անհաւատալի  
է՛ թէ այս փախստեան պատճառն հայրաճանքն  
էր, եւ գիտենք ալ որ Մաքսիմիոս Գայա յա-  
րեւելս եւ Մաքսենտիոս ի Հոռոմ՝ դարանակալ էին  
կուսանաց անմեղութեան<sup>1</sup>: Ամենականութեամբ  
նակէ ի Հայս կը պատուէին կուսանք՝ որոնց անու-  
անքն ալ կը գտնենք ճշդիւ առ Բուզանդայ՝ ազատ  
Ագաթանգեղեայ ազգեցութենէն, որոնց “նա-  
խավկայ” կոչումն մեծ նշանակութիւն ունի: Այս  
կուսանաց վկայարանք իրօք գտնէ հինգերորդ  
դարուն սկիզբները կային<sup>2</sup>, եւ հինգերորդ դա-  
րուն վերջերը պէտք եղաւ նորոգուելու Ահհան  
Մամիկոնեանէն. եւ դամբանը կնքուած գտնուե-  
ցաւ կնքով Ս. Սահակայ՝ երբ է՝ դարուն սկիզբը  
Կոմիտաս կաթուղիկոս բացաւ զայն (ըստ Սե-  
բէոսի, Յովհ. Կաթուղիկոսի եւն), տեղեկութիւն  
մ՝որուն վրայ տարակուսելու կուուան մը չու-  
նինք գէթ առ այժմ: Մեծապէս կը նպաստէր

<sup>1</sup> Եւսեր. Արք. Կոստանդնուս, Ա. ԳԼ. 17, 17 եւն  
Ար կասկածիմ թէ մի գուցէ Եւսերեայ սոյն կտորներն ա-  
ռիթ տուած են հեղինակին կամ իւր աղբեր իրերն այս  
ձեւով պատմելու, թէեւ կուուան մը չունիմ պնդելու:

<sup>2</sup> Բուզանդ. Գ. ԳԼ. 47. “Սոյնպէս եւ ի գաւառն  
այրարատեան զնախավկայսն Քրիստոսի, ուր Գայիանէն եւ  
Հոսիփիմէն կային, իւրեանց հանդերձ գործակցօքն եւն:”

այս նիւթոյս՝ Գրէգոր Կեանքացոյն մէկ խօսքն իւր գրոց մէջ թէ « Գրիգոր՝ մեծ ի յաղթող նահատակս, որ եգիտ զնշխարս սրբոց վկայից կուսանացն Հռիփսիմեայ եւ Գայիանեայ եւ զՏրդատ . . . ամէր ի հաւատս »<sup>1</sup>: Բայց դժբախտաբար նորքննադատութիւնն այն մեծ հնութիւնը չի տար այս գրոց, որ 7<sup>2</sup> դարու գործք մըն է, եւ ոչ շատ արժանահաւատ<sup>2</sup>: Հանգերձ այսու՝ Հռիփսիմեանց պատմութիւնն Ագաթանգեղեայ գրոց երեւնալէն յառաջ ծանօթ էր Հայոց, եւ Ն դարուն վերջերը շատ աւելի յաւելուածներ եղած էին այս կուսանաց վարուց վրայ<sup>3</sup>: Ագաթանգեղեայ այս վկայաբանութեան ինչ ինչ անուղղակի յիշած մանր տեղեկութիւնքն ալ խոտելի չեն: Այսպէս նշանաւոր հատած մըն է հետեւեալը<sup>4</sup>. « Եկեալ մտանէին ի հնձանայարկս այգեստանոյն՝ որ ինչ շինեալ է նիւթոյ յարեւելոց ինտե. եւ կերակրէին ընչիւք իւրեանց ի վաճառաց քաղաքին . . . Բայց մի ո՞նէ ի նոցանէ ունէր որոտս որոտիւք որոտն՝ աւել ուլունս ապակեղէնս, եւ տալ գինս ընդ կերակրոց աւուրն պարենի ոտճիկ »:

Հռիփսիմեանց վկայաբանութեան կը յաջորդէ Տրդատայ խողադէմ ըլլալուն պատմութիւնը մանր հանգամանօք, որ նոյնպէս շատ քիչ

<sup>1</sup> Հմմտ. Acta Sanctorum, էջ 313, § 91, 92: Ճառ վան Հարց նիկիական ժողովոյ. Հրատ. Lipomanus, Tom. VI. p. 106 ff.

<sup>2</sup> Հմմտ. C. J. Hefele, Conciliengeschichte. Band I. Freiburg, 1873. S. 288.

<sup>3</sup> Հմմտ. Խորենացոյ ընծայուած ճառը « Պատմութիւն սրբոց Հռիփսիմեանց » (Վենետ. 1843, էջ 297—303):

<sup>4</sup> Ագաթ. էջ 123, 3—13:

պատմական տարր ունի, կամ լաւ եւս ըսելով՝  
 ժողովրդական զրոյց մըն է այլակերպեալ: Նա-  
 բուքողոնոսորի պատմութեան համեմատ ձեւուած  
 է Տրդատայ այս զրոյցը, զոր հեղինակը շատ  
 տեղ եւ շատ սաստիկ գոյներով կը նկարագրէ,  
 եւ մանրամասն՝ անոր աստիճանական բժշկու-  
 թիւնը: Աւելորդ է այս տեղ երկրորդել այս  
 նիւթոյս վրայ՝ ինչ որ վերն արդէն գրեցինք:  
 Ձի կրնար ուրացուիլ թէ մեծ արկած մը դիպած  
 ըլլալու է արքային, որմէ աղատած է զինքը  
 Գրիգոր բանտէն հանուած. բայց թէ ինչ էր  
 այն՝ չենք կրնար ըսել: Ոմանք Lycanthropie կը  
 համարին<sup>1</sup>, ուստի եւ հեղինակին գրչին տակ  
 միայն այնպէս անհետեւ կերպարանք առած:  
 Անհաւանական չէ այս. եւ սա ալ ստոյգ է որ  
 Խորենացի կը յիշէ նամակ մը Պարսից գրեալ առ  
 Հայս, ուր նիւթոսի կը կոչուի այս անցքը<sup>2</sup>:  
 Թերեւս եւս կամ վարդ անուն հիւանդութիւն  
 մը հիմն եղած է այս զրուցին. գոնեայ ստոյգ է  
 որ վարդի փոխուիլը նշան է ժողովրդական  
 զրուցի մը. վասնզի ըստ երանեան գաղափա-  
 րաց վարդն արքունի անասուն է, եւ արքայից  
 արքային կնիքը վարդ էր<sup>3</sup>, եւ անուանց բազմու-  
 թիւն մ'ալ նոյնը կը հաստատէ, այսպէս Վարազ,  
 Վարազ-Շապուհ, Վարազ-Վաղան, Վարազ-  
 դուխտ եւն: Ուստի եւ Վարազ-Տրդատ անունը

<sup>1</sup> Այբբար, էջ 379, ծ. 3 եւն:

<sup>2</sup> Խոր. Գ. դ. ծաւ. Հմմտ. Տիեզ. Պամ. Բ. 478:

<sup>3</sup> Բուզանդ, Գ. դ. ծգ. «Եւ բերել (Շապուհ) ըստ  
 օրինացն հաւատարիմ երգմանց թագաւորութեանն Պարսից  
 աղ, կնիքել վարդ նկարագրի արքանէս, եւ յղեաց:»

այս զըոյցէն չէ, այլ բնիկ երանեան գաղափարաց համեմատ է՝ ըստ Առթշմիտի:

Ամենէն աւելի խնդրական մասունք էին ասոնք: Մնացեալն՝ որ Բ. Գրոց մեծ մասը կը կազմէ՝ ինքնին երաշխաւոր է իւր վաւերականութեան: Հայոց դարձին պատմութեան այս մասն այնպէս մանրամասն տեղական գոյն ունի, այնչափ աշխարհագրական, հնախօսական, ազգաբանական տեղեկութեամբ հոծ է, որ մի առ մի քննել անհնարին է եւ երկարաձիգ ճառերու պէտք կ'ունենայ: Աստի կը շատանանք քանի մը գլխաւոր կէտերը շօշափելով:

Այս գրոց առաջին մասերը (մինչեւ հատուած ճԸ.) կը խօսի թագաւորին բժշկութեան, Հռիփսիմեանց վկայարանաց շինութեան, Գրիգորի տեսլան եւ նման իրաց վրայ: Ասոնց վրայ արդէն խօսեցանք: Յաջորդ հատածները՝ կը պատմեն մի առ մի Ս. Գրիգորի մեհեանները կործանելը թագաւորին հաւանութեամբ, այսպէս նախ Տիւր գից, Բարշիմնիայ, Արամազդայ, Նանէական եւ այլ գից բազմինները: Այս ամէն կտորներն անգին յարգ ունին. թէպէտ մէջ ընդ մէջ հիւսուած են դիւաց մարտնչելուն եւ նման նկարագրութիւններով, բայց այս մասերը՝ որ նոյն ժամանակուան ժողովրդեան կարծիքը կը ներկայացընեն՝ չեն կրնար խախտել այս կտորներու յարգը. նոյն իսկ ճշմարտապատումն Արիւն ճըզդիւ երբ բազնաց կործանումները կը պատմէ՝

<sup>1</sup> Արթ. էջ 582—594:

նոյն կերպով կը նկարագրէ: Միջանկեալ հատածներէն վերջը կը պատմուի թագաւորին եւ բանակին դունդագունդ մկրտուիլը մանրամասն<sup>1</sup>, թէեւ տեղ տեղ չափազանցուած<sup>2</sup>: Այս կէտերուն վրայ երկբայիլ չենք կրնար, եւ յաջորդ դարուն բովանդակ հայ պատմութիւնը երաշխաւոր է այս կէտերուն: Արնանք նաեւ յօտարաց վկայութեան առնուլ զԵւսերիսս՝ որ 311էն յառաջ քրիստոնեայ կը գնէ զՀայս, ինչպէս քիչ մ'ետքը կը տեսնենք: Թէ դարձն սկսած է թագաւորէն՝ կը վկայէ նաեւ Սողոմէնոս, որ կը գրէ<sup>3</sup>. «Գտի զՀայս կանուխ ժամանակօք (քան զՎիրս եւն) դարձեալս ի քրիստոնէութիւն: Զի ասին թէ Տրդատ՝ առաջնորդ այնր ազգի՝ աստուածանշան սքանչելեօք՝ որ եկին հասին ի վերայ տան իւրոյ՝ նախ ինքն լինէր քրիստոնեայ, եւ ապա արձակէր քարոզս տուեալ հրաման ամենայն հպատակելոց իւրոց նոյնպէս աստուածապաշտս գտանել յ եւն:

Շատ մանրամասն են Գրիգորի ձեռնագրութեան նկատմամբ պատմուածները<sup>4</sup>, (Կեսարիա

<sup>1</sup> Աղաթ. էջ 620, 14—622, 25 եւն:

<sup>2</sup> Այսպէս էջ 621, 23 եւ 623, 2 ըսուածը թէ «չուրեքարիւր բեր», (3,000,000) հոգի մկրտուեցան եօթն օրուան մէջ «յարբունական բանակէ» թէեւ ընդ այր եւ ընդ կին եւ ընդ մանուկ:

<sup>3</sup> Ս-ղ-ժ. Եկեղ. Պատմ. Գիրք Բ. ԳԼ. Ժ. 'Αρμενίους δὲ πάλιν πρότερον ἐπιθόμην χριστιανίσαι. λέγεται γὰρ Τηριδάτην τὸν ἡγούμενον τούτου τοῦ ἔθνους, ἐκ τινὸς παραδόξου θεοσιμείας συμβάσης περὶ τὸν αὐτοῦ εἶλον, ἅμα τε χριστιανὸν γένεσθαι, καὶ πάντας τοὺς ἀρχομένους ὑφ' ἐνὶ κηρύγματι προστάξαι ὁμοίως θρησκεύειν κτλ.

<sup>4</sup> Աղաթ. էջ 591, 15—618, 5:

ձեռնադրուիլն եւն,) որոնց վրայ արդէն խօսած ենք, որուն նաեւ վկայ է բովանդակ Հայոց նուիրապետութեան պատմութիւնը, Յուսկան Բ. գէպքը, եւն. խօսեցանք նաեւ Ղեւոնդիոսի առ Հայս գրած հրովարտակին վրայ<sup>1</sup>: Հոս կը յաւելունք միայն Գեղասիոսի Աիւզիկենացւոյ՝ Նիկիոյ ժողովոյն պատմագրին մէկ խօսքը<sup>2</sup>. «Ղեւոնդիոս Աեսարիայ Գամրաց, զարդ եկեղեցւոյն Աստուծոյ, ունէր իշխանութիւն եկեղեցեացն Գամրաց, Գաղատիայ, Պոնտոսի, Պամիլագոնիայ, Պողեմոնականն Պոնտոսի, Հայոց Մէջոց եւ Փոռոնն»: Ղեւոնդիոս արդեամբք հայրապետ էր Գ. դարուն առաջին կիսուն. սակայն թէ 304ին կամ նոյն ատեններն ինքն էր արդեամբք եպիսկոպոսապետ Գամրաց, ստոյգ չենք գիտեր. եւ այս պատճառաւ Աութշմիտ կը կարծէ՝ թէ հոս Ղեւոնդիոս անունը տարակուսական է, թէեւ ըստ ինքեան՝ շատ դժուարութիւն մը չկայ ընդունելու. գոնեայ ստոյգ գիտենք թէ իբր 314ին ներկայ էր Անկիւրիոյ ժողովոյն:

Բայց հոս կայ բաւական դժուարութիւն մը: Ագաթանգեղոս կը պատմէ<sup>3</sup> թէ Ս. Գրիգոր իւր հետ բերաւ «ի կողմանց Յունաց, ... նշխարս ինչ յոսկերացն մեծի մարգարէին երանեալ Մկրտչին Յովհաննու, եւ զսուրբ վկայն Քրիստոսի Ղեւոնդիոսն»: Եւ հրամայեց որ տօն կատարեն նաւասարդին: Բայց Ս. Աթանագինեայ վրայ շատ

<sup>1</sup> Հմմտ. էջ 83—84:

<sup>2</sup> Գիրք Բ. զԼ. իէ:

<sup>3</sup> Ագաթ. էջ 607, 14—611, 23. 623, 8—21 էւն.:



ինդիրք կան: Նախ ըստ ընտրելագոյն եւ հնագոյն աւանդութեան (այսպէս Բարեւ<sup>1</sup>) Աթանազինէս՝ արեւոյ՝ 17 Յուլիսի (ըստ ոմանց 302 Յ. Ք.): Ուստի եւ նշխարքն ի Հայս դժուարաւ կրնային բերուիլ. միայն նորագոյն աւանդութիւնն (առ Մետրափրաստեայ եւն) գլխատուած կը դնէ: Նաեւ Գրիգորի ձեռնադրուիլն նոյն իսկ այս թուէն յառաջ կ'ուզեն ոմանք դնել, որով աւելի դժուարութիւն կ'ելլէ: Այլ եւ բովանդակ Աթանազինեայ վկայաբանութիւնն անվաւեր կը համարին<sup>2</sup>, եւ ոմանք նաեւ շատ հին սուրբ մ'որուն վրայ շատ դիցարանական իրք կը պատմուին, այնպէս որ Աուծշմիտ՝ «քրիստոնէական կերպարանաց» տակ «որոշ պաշտպան դիք» մը կը նշմարէ: Առանց երկարագոյնս զբաղելու այս խնդրով՝ մենք լոկ կ'ըսենք որ Ագաթանգեղոս հոս հայկական հին աւանդութեան հետեւած է: Ս. Գրիգորի թոռն (ծն. իբր 312) Աթանազինէս կը կոչուի. ապա ուրեմն նոյն ատեն կը յարգէին Հայք այս սուրբը, ինչպէս ուղղութեամբ կը հետեւցընէ Աուծշմիտ. եւ արդեամբք ամենահին ժամանակն իսկ կը գտնենք այս տօնը:

Այս երկու դէպքերը — Հովիսիմեանք եւ Աթանազինէս — են որ կը ստիպեն Հայոց զարձը մինչեւ 304 ետ մղել. վասն զի ըստ Խորենացոյ<sup>3</sup> իբր 300ին դարձան Հայք. որուն համամիտ է ըստ իմիք ինքն իսկ Ագաթանգեղոս՝

<sup>1</sup> Աթանազինէս զ-Քրիստոնէս, գլ. իթ:

<sup>2</sup> Հմմտ. Acta Sanctorum. Julii Tomus IV. pp. 216 B—219 F.

<sup>3</sup> Խոր. Բ. գլ. ձբ, դա, եւն:

Տրդատայ իբր 14<sup>2</sup> տարին գնելով (յետ Պրոբոսի): Բայց միշտ Յ10էն յառաջ. եւ հոս Եւսեբիոս անգին պատմութիւն մը պահած է, այսինքն թէ Հայք քիչ մ'ետքը պատերազմ ունեցան ընդդէմ Մաքսիմիանայ Գայեայ Գրեգորիոսին համար (յետ աշնան Յ11 եւ նախ քան զաշուն Յ12 Յ. Բ.): Այս է Եւսեբեայ խօսքն՝ ըստ հայ թարգմանութեան<sup>1</sup>. « Հանդերձ այսոքիմբ յարեալ ի վերայ նորա անօրէն իշխանին պատերազմն՝ այն որ առ Հայսն եղև, արք որք ի սկզբանէ բարեկամք եւ օգնականք Հռոմոց էին, նորա Գրեգորիոսին էին, եւ զերկրպագութիւն Աստուծոյ Գրեգորիոսին պարտութիւնս Կարգեցին: Իսկ սոյն այս առեղի Աստուծոյ՝ կամէր նեղել զնոսա զի զոհեացն կոոց եւ դիւաց թշնամեաց, եւ փոխանակ բարեկամաց է մարտադրութիւնս յարայ զնոս ընդդէմ էր: . . . Արդ նա հանդերձ զբոս էրդ է պարտութիւնս նոր ընդ Հայսն էր՝ Կարգեցին: Զարմանքն այն է որ այս անգին պատմութեան՝ որ առաջին ծանօթ կրօնական պատերազմն է՝ հետքն անգամ չկայ առ Ազաթանգեղեայ, որ կ'ուզէ կարծուիլ իբրեւ հանարէս գրող: Աւրեմն Ազաթանգեղեայ նաեւ Բ. Գրոց պատմութիւնը

<sup>1</sup> Եւսեբ. Եկղ. Պատմ. Գիրք Թ. ԳԼ. Ը. (սպ. Վէնետ. 1877, էջ 688:) Յոյն բնագիրն է այսպէս. Τούτοις προσεπανίσταται τῷ τυράννῳ ὁ πρὸς Ἀρμενίους πόλεμος, ἄνδρας ἐξ ἀρχαίων φίλους τε καὶ συμμάχους Ῥωμαίων, οὓς καὶ αὐτοὺς χριστιανούς ὄντας καὶ τὴν εἰς τὸ θεῖον εὐσέβειαν διὰ σπονδῆς ποιουμένους ὁ θεομοσῆς εἰδῶλος θύειν καὶ δαίμοσιν ἐπαναγκάσαι πεπειραμένους ἐχθροὺς ἀντὶ φίλων καὶ πολεμίους ἀντὶ συμμάχων κατεστήσατο. . . Αὐτὸς μὲν οὖν περὶ τὸν πρὸς Ἀρμενίους πόλεμον ἅμα τοῖς αὐτοῦ στρατοπέδοις κατεπονείτο.

Թերի եւ հարե-անդի է, ինչպէս գտանք առաջին գիրքը: Յիշենք նաեւ որ Մաքսիմիանոս 313/ն տրուած հրովարտակին մէջ կը կոչուի Գեորգիան-հան է- Սարմարուհան, բայց ոչ Հայ-հան, որով 312/ն պատերազմին մէջ չարաչար պարտուելը կը հաստատուի<sup>1</sup>:

Ագաթանգեղոս մանրամասն կը պատմէ<sup>2</sup> Հայոց դարձը, եպիսկոպոսաց եւ քահանայից դրուիլն բովանդակ Հայոց մէջ, Արիստակիսի յաջորդ կարգուիլն եւն, որոնց վրայ պէտք չի մնար խօսելու եւ հաստատելու՝ թէ վաւերական պատմութիւն են, թէեւ տեղ տեղ կը գտնուին չափազանցութիւնք եւ անճշդութիւնք: Ապա կը պատմէ Աոստանդիանոսի յաղթութիւնն ընդդէմ իւր դահակցաց համառօտութեք<sup>3</sup>, որուն մէջ կը նշմարուին շիոթութիւնք, ինչպէս յիշեցինք վերը: Բայց մեծ նշանակութիւն ունի մեզի համար յաջորդ հատածը<sup>4</sup>, ուր կը պատմուի թէ Տրդատ եւ Գրիգոր Հռոմ գնացին Աոստանդիանոսի եւ Սեղբեստրոսի (լաւ եւս՝ Եւսեբիոսի) այցելութեան, եւ դաշնագրութիւն կնքուեցաւ Տրդատայ եւ Աոստանդիանոսի մէջ: Աուժմիտ<sup>5</sup> « բոլորովին առասպելական » կը համարի այս կտորը, եւ « եթէ կայ հոս պատմական հիմն, կ'ըսէ, այն միայն կ'ենայ ըլլալ որ հնագոյն Տրդատայ մը Հռոմ ըրած այցելութիւնն առ Ներո-

<sup>1</sup> Ե--. Եկեղ. Պատմ. Թ. 7Լ. Ժ:

<sup>2</sup> Ագաթ. էջ 618, 6—645, 20:

<sup>3</sup> Ագաթ. էջ 645, 21—649, 18:

<sup>4</sup> Ագաթ. էջ 649, 19—656, 6:

<sup>5</sup> Agath. S. 59—60:

նիւ (66 Յ. Գ.) աղօտ կերպով յիշատակուած է հոս<sup>1</sup> : — Սակայն ճշգիւ քննելով՝ կը գըտնենք որ 1. Հայք եւ Հռոմայեցիք 312ին պատերազմ՝ ունեցան, ուստի եւ անհրաժեշտ էր որ հին քարեկոթակն զիրքը նորոգուէր քաշմիք մը : 2. Թէ իրօք դաշինք գրուեցաւ՝ ստոյգ է : Վկայ է ասոր Վրթանիսի առ Աոստանդոս գրած թուղթն՝ որ կը յիշեցընէ « պայման ուխտի հօրն քո Աոստանդիանոսի, որ առ մերում թագաւորին Տրդատայ, եւն<sup>2</sup> : Նոյնը կը յիշեցընեն Հայք (450 Յ. Գ.) առ Թէոդոս Բ. գրուած թղթին մէջ, եւ Եղիշէ կը յաւելլու՝ թէ « բազում մատեանք (դիւանին) ի մէջ եկեալ ընթերցան, որ շնոյն ուխտ հաստատութեան իներքս գտանէին<sup>3</sup> : Հայք կը յիշեցընեն նաև՝ թէ իրենք « զհաստան որ ի Քրիստոս՝ ընկալեալ ի սուրբ եպիսկոպոսապետէն Հռովմայ<sup>4</sup> » որով կը հաստատուի նաև այն պարագայն թէ Ս. Գրիգոր ալ Տրդատայ հետ էր : Նկատելով Հայոց այս նամակին պարագաները՝ սոյն յիշատակութիւնն անհերքելի կոուան մը կ'ըլլայ այս խնդրոյս մէջ : 3. Առ այս առնուլ կ'ուզուի<sup>3</sup> Եւսեբեայ մէկ խօսքը, որ կ'ըսէ՝ թէ Աոստանդիանոս « առ քաշմիքն » որ առ նա եկին (յամի իրք 312) մարդասէր եւ առատաձեռն գտանէր<sup>3</sup> : Այս կէտը կրնայ ցուցընել նաև թէ յամին 312 եղաւ այս դաշնագրութիւնն. եւ արդեամբք մինչեւ սոյն տար-

<sup>1</sup> Խոր. Գ. 4Լ. 6 :

<sup>2</sup> Եղիշէ, Գիրք Գ. (տպ. Վ Ենեա. 1859) էջ 54—55 :

<sup>3</sup> Հմմտ. Հ. Յ. Գաթրճեան, Տիեզեր. Գամ. Բ. էջ 479 :

<sup>4</sup> Եւսեբ. Վարք Աոստանդիանոսի. Գիրք Ա. 4Լ. ԽԳ :

ւոյ վերջը Հոռմ էր Աոստանդիանոս. եւ ճշգրիւ  
այս ատեն էր Ե--ճէի-- Հոռմայ քահանայապե-  
տը<sup>1</sup>: 4. Ակայ է (ի մէջ այլոց) նաեւ Բուզանդ<sup>2</sup>,  
որ կը պատմէ թէ երբ Տիրան արքայ գերեցաւ  
ի Պարսից, Հայք զԱնդովկ եւ զԱրշաւիր զոկե-  
ցին կայսերմէ օգնութիւն խնդրելու, որ եւ յա-  
ջողեցաւ. եւ կը յաւելու՝ թէ «Մանաւանդ զի  
զուխան յիշեալ զգաշանցն կուրոց զերդմանցն  
Հաստատութեան (որ) Տիւրքո-Ֆեմէ ի մէջ  
կայսերն Աոստանդիանոսի եւ ի մէջ թագաւորին  
Տրդատայ եղեալ էր»։ Այս ամենայն դաշնոյ  
գոյութիւնը կը ցուցնէ. բայց ի հարկէ ասկէ  
ուղղակի ցուցուած չ'ըլլար թէ Տրդատ անձմէ  
Հոռմ գնաց դաշնագրութեան. մանաւանդ որ  
Բուզանդայ «Տիւրքո-Ֆեմէ» բառն այլեւայլ  
ենթագրութեանց հիմն կրնայ ըլլալ։ — Պէտք  
չկայ ըսելու՝ որ այժմ Ագաթանգեղեայ ա-  
նուամբ գտնուող Դաշնոյ Բողոք սուտանուն  
գրութիւն մըն է, եւ շատ ուշ եւ շատ տգէտ  
գրչի տգեղ գործ։

Թէպէտ պատմութեան համար մեծ ար-  
ժէք կ'ունենայ բայց ըստ ժամանակագրութեան  
վերը դրուած 312 տարւոյն անմիաբան կ'ըլլայ  
այն «վաւերական վկայութիւնը», զոր Այրա-  
րատայ հեղինակը<sup>3</sup> կը կարծէ «զանխուլ ի յոր-  
վից եւ կամ յամենեցուն մնացեալ». եւ սակայն  
յետ Բարոնիոսի նաեւ Ստիլգինկ քննած է զայն

<sup>1</sup> Հմմտ. էջ 64—65։

<sup>2</sup> Բողոք, Գ. ԳԼ. Իա. (տպ. Վէնետ. 1832, էջ 55, 1.)

<sup>3</sup> Այրարատ, էջ 388։

եւ անհաւանական գտած<sup>1</sup>: Թէոդոսական օրի-  
 նագրոց մէջ կայ հրաման մը կոստանդեայ իւր  
 Փոքր Ասիոյ կուսակալին, որ «Արշակայ Հայոց Ար-  
 շակն» տրուին երթեւեկութեան սուրհանդակ-  
 ներ, եւ տրուած է այս հրամանն ի կոստանդու-  
 պոլիս: Սակայն ստորագրութիւնն է՝ թէ տրուած  
 է կոստանդուպոլիսէն Լեւոնի անունով: Հիշուած  
 ժամանակ, որ է 315 Յ. Ք: Առանց հետազո-  
 տել ուղեկու այս հետաքրքրական՝ բայց ստուգիւ-  
 չող հրովարտակը, կ'ըսենք լոկ որ՝ եթէ  
 ստուգիւ վաւերական է գէթ թուականը՝ շատ  
 նշանաւոր է, եւ կը ստիպուինք այս թիւը գնել  
 իբր ժամանակ դաշանց: Բայց առ այժմ ոչ  
 կոստանդուպոլիս կը համաձայնի այս ժամանա-  
 կին, ո՛չ Արշակ, եւ ո՛չ այլ պարագայք: Չի  
 կրնար ըսուիլ՝ թէ Արշակ արքայ էր Փոքր Հայոց,  
 որ հռոմեական նահանգ էր, եւ կոստանդիանոսի  
 եղբորորդին Աննիբէռնի արքայ գրուած էր հոն:  
 Նոյնպէս խնդրական կը մնայ վիկտոր Պորզիոսի  
 եւ այլոց յիշածը՝ թէ Տրդատ անուն հայ թա-  
 գաւորը պղնձեայ արձաններ պարգեւ տարած է  
 ի Հռոմ, զոր անանուն հեղինակ մը Ե դարու կը  
 յիշէ՝ Equum Tiridatis Regis Armeniorum գրե-  
 լով<sup>2</sup>: Սակայն հոս (առանց ուրիշ խնդրոց մէջ  
 մանկելու) խնդիր է թէ որ Տրդատը պէտք է են-  
 թագրել: Եթէ հաստատուի ստուգութեամբ սոյն  
 այս Տրդատայ վրայ, որոշիչ կէտ մ'ալ այս  
 կրնայ ըլլալ: — Առ այժմ կարծենք թէ վերն

<sup>1</sup> Հմտ. Acta Sanctorum, Septemb. Tom. VIII, p. 314—315, § 99.

<sup>2</sup> Հմտ. Այբբանագր., էջ 388, ճն. 3:

ըսուածները բաւական են ցուցընելու՝ թէ դաշինք դրուեցաւ, եւ թէ այն իբր 312ին վերջերն էր:

Հուսկ յետին նշանաւոր կէտն է Ագաթանգեղոսյ պատմութեան՝<sup>1</sup> Արիստակէսի Նիկիոյ ժողովոյն ներկայ գտնուիլը: Այս կտորն ալ կը հաստատուի նոյն իսկ ժողովոյն արձանագրութիւններէն<sup>2</sup>, ուր թէպէտ եւ շիտթ ընթերցուածք կան ճշգիւ սոյն տեղը, բայց որոշ կը կարգացուին՝ «Արիստակէս Հայոց Մեծաց», եւ «Արսապիոս Ծովաց», որ նոյն կը կարծուի Արիստակէսին հետ՝ զոր կը յիշէ Ագաթանգեղոս<sup>3</sup>: Այս վերջին կէտին հաստատուիլը շատ մեծ արժէք ունի մեզ համար:

Տրդատայ եւ Գրիգորի մահուան վրայ մանրամասն տեղեկութիւն չի տար Ագաթանգեղոս: Ուստի եւ մէք հոս զանց կ'առնենք այս խնդիրը, որուն վրայ ուրիշ առթիւ կ'ուզենք խօսիլ: Շատ գեղեցիկ նիւթ կը մատակարարեն 338ին եւ յաջորդ տարիներուն պատերազմաց համար Ս. Եփրեմայ Երէմ Գրիգորի կողմէն կողմէն բանաստեղծութիւնքն՝ որոնց մէջ բաւական բան կայ Միջագետաց եւ Հայաստանի հարաւային մասանց վրայ<sup>4</sup>:

<sup>1</sup> Ագաթ. էջ 656, 7—660, 8:

<sup>2</sup> Հմմտ. Mansi, II, 699, եւ 694.

<sup>3</sup> Ագաթ. էջ 630, 15: Հմմտ. Տիեզեր. Պատմ. Բ. էջ 480:

<sup>4</sup> S. Ephraemi Carmina Nisibena, ed. G. Bickel, Lipsiae, 1866, մանաւանդ Երգ Ժ. Ժ. Գ. Ժ. Գ. Եւն:

Յայս վայր վերջին գրոց քննութեան և քննութիւնն ընդարձակ տեղւոյ պէտք ունի: Բաց աստի՛ եթէ նաեւ որեւէ պատմական արժէք չունենար սոյն մատեանը՝ նոյն տեղեկութեանց մեծագոյն մասն իւր արժէքը չէր կորսնցըներ. վասն զի որեւէ հեղինակ գոնեայ իւր ժամանակին համագամանաց համեմատ կը գրէ: Այսպէս՝ տեսանք որ Հռիփսիմեանց պատմութիւնն ըստ գոյացութեան լոկ ընդունելի է. սակայն երբ կը կարդանք՝<sup>1</sup> [Թէ Պայիանէ նահատակուեցաւ քաղաքին հարաւակողմն, «ընդ կողմն պողոտային՝ որ հանէր ի Մեծամօրի կամուրջն. ի որեղևն յայն՝ որ սոփոր էին սպանանել զսփեայն մահապարտ», ի ճախճախուտ տեղի մի մօտ ի պարկէն քննն՝ որ շորջ քայր զսպանն, եւն. այս տեղեկութիւն մըն է՝ որ միշտ իւր յարգն ունի:

Այս մանր տեղեկութեանց ճշդութեանն երաշխաւորութիւն մ'ալ է միաբանութիւնն ուրիշ հայ մատենագրաց հետ, այնպէս որ դիցանուանց, բագնաց, լերանց եւ քաղաքաց եւ նմանեաց տեղեկութիւնք ճշդիւ միաբան են այլոց հետ, եւ զիրար փոփոխակի կը լրացընեն ու կը հաստատեն: Թողլով ուրիշները՝ հոս յիշենք Բուզանդայ քանի մ'ակնարկութիւնքն միայն. իսկ քանի մը հասն ալ արդէն յընթացս գրութեանս յիշեցինք:

<sup>1</sup> Աղաթ. էջ 161, 7—14:



Ագաթանգեղոս կը գրէ՝<sup>1</sup> թէ Տրդատ շատ մեծամեծ կալուածներ պարգևեց եկեղեցւոյ, եւ այն՝ « չորս չորս հողս յամենայն յագարակ տեղիս. իսկ յաւանան եւթն եւթն երդոյ հող ի ծառայութիւն սպասաւորութեան եկեղեցւոյ »: Նոյնը գիտէ Բուզանդ<sup>2</sup>, որ Պապայ նկատմամբ կը պատմէ՝ թէ « հատ եւս յարքունիս Պապ թագաւոր զհող եկեղեցւոյն, զոր տուեալ էր թագաւորին Տրդատայ առ մեծաւ Գրիգորիւ քահանայապետիւ ի սպաս պաշտաման եկեղեցւոյն ընդ ամենայն երկիրն Հայոց: Զի յեւթն հողոյն զհինգն հատանէր յարքունիս, եւ զերկուան միայն թողոյր՝ երկուս հողս »: Ճշգիւ ինչպէս կը պատմէ Ագաթանգեղոս Ս. Գրիգորի ձեռնադրութիւնը՝ նոյնպէս կը գտնենք սովորութիւն եղած Հայոց քով<sup>3</sup>, այնպէս որ ասով երաշխաւորութիւն կ'առնու Ագաթանգեղեայ այդ մասերուն նկարագրութիւնը: Գատ անուն իշխանն՝ որ « կարապետ արքային » էր<sup>4</sup>, կը գտնենք առ Բուզանդայ իբրեւ Հաշտենից իշխան. գոնեայ կը կարծենք որ նոյն անձն է այս երկու տեղ յիշուողը, թէեւ հաստատուն կուուան չունինք: Բայց Գատայ ընկերն « Արտաւազդ, որ սպարապետն էր ամենայն զօրացն Հայոց մեծաց<sup>5</sup> », կը

<sup>1</sup> Ագաթ. էջ 624, 8—16:

<sup>2</sup> Բուզ. Ե. ԴԼ. Լա. (տայ. Վ. Ենեւ. 1832, էջ 230, 35—231, 31)

<sup>3</sup> Հմմտ. Բուզանդ, Գ. ԴԼ. Ժբ: Գ. ԿԼ. Ժգ եւ Ժէ: Գ. ԴԼ. Դ:

<sup>4</sup> Ագաթ էջ 641, 9—10: Հմմտ. Բուզանդ. Գ. ԴԼ. Թ, էջ 21, 17:

<sup>5</sup> Ագաթ. էջ 641, 5—7.

յիշուի Բուզանդայ քով, որ Հայոց սպարապետը  
 « զԱշէ որդի Արտաւազդայ, զնահապետ մամի-  
 կոնեան տոհմին » կը յիշէ<sup>1</sup> : Արիստակիսի եւ  
 Արթանիսի նկատմամբ Ագաթանգեղեայ գրած-  
 ները<sup>2</sup> գիտէ եւ Բուզանդ. այսպէս՝ թէ Արիս-  
 տակէս թէեւ կրտսեր, « կանխաւ եհաս յաթոռ  
 հայրենի », եւ թէ էր « կուսան սուրբ ի մանկու-  
 թենէն » . թէ ներկայ էր Նիկիոյ ժողովին, « ի  
 Հայոց էր անդ Արիստակէս, որդի Գրիգորի սքան-  
 չելոյ՝ առաջին կաթողիկոսին Հայոց մեծաց<sup>3</sup> » .  
 Թէ Արթանէս նախ ամուսնացեալ էր, եւ ապա  
 իւր եղբօր (Արիստակէսի) յաջորդեց եւն<sup>4</sup> : Կար-  
 ծեմ՝ նոյն Աղբիանոսն է, զոր Ագաթանգեղոս  
 կը յիշէ ձեռնագրուած ի Ս. Գրիգորէ, որ եւ  
 « ապա կողմանցն եփրատական գետոյն լինէր  
 վերակացու<sup>5</sup> », եւ որուն համար կը գրէ Բու-  
 ղանդ<sup>6</sup> թէ « զՀահակ ոմն անուն ի տոհմէ զա-  
 ւակին Աղբիանոս եպիսկոպոսին », որ հաշտարար  
 առաքուեցաւ Մանաւաղենից եւ Որդունեաց  
 մէջ, եւ Մանաղկերտոյ եպիսկոպոս կը կոչուի<sup>7</sup> :  
 Ըստ Ագաթանգեղեայ՝ Հայոց սահմանքն, ուր  
 տարածեց Ս. Գրիգոր իւր քարոզութիւնը՝ այս-  
 պէս կը կազմուէին.<sup>8</sup> « ի Սատաղացոց քաղաքէն

<sup>1</sup> Բուզ. Գ. ԳԼ. Գ. էջ 9, 25 :

<sup>2</sup> Ագաթ. էջ 639—657 :

<sup>3</sup> Բուզանդ. Գ. ԳԼ. Բ. Գ. եւ Ժ :

<sup>4</sup> Բուզանդ. Գ. ԳԼ. Բ. Գ. եւ Գ. եւն :

<sup>5</sup> Ագաթ. էջ 630, 6. 650, 11 :

<sup>6</sup> Բուզ. Գ. ԳԼ. Ժէ :

<sup>7</sup> Բուզ. Գ. ԳԼ. Գ. էջ 9—10 : Յուսիկ Բ. էր  
 « ի զաւակէ Աղբիանոս եպիսկոպոսին Մանաղկերտոյ » (Ե.  
 ԳԼ. Իթ.), նոյնպէս Զաւէն (Զ. ԳԼ. Բ.) եւ Ասպուրակ (Զ.  
 ԳԼ. Դ) :

<sup>8</sup> Ագաթ. էջ 627, 20—628, 14 :

մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ  
 Կաղարջօք, մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց,  
 մինչև ի դրունս Ալանաց, մինչև ի սահմանս  
 Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայութեանն  
 Հայոց. եւ յԱմդացւոց քաղաքէն մինչև առ  
 Մծբին քաղաքաւ, քերէր առ սահմանօքն Ա-  
 սորոց, առ Նոր-Շիրական երկրաւ, եւ առ Կոր-  
 դօք մինչև յամուր երկիրն Մարաց, մինչև առ  
 տամբն Մահքրտան իշխանին, մինչև յԱտրպա-  
 տական<sup>1</sup> : Ճշդիւ այս սահմանները գիտէ եւ Բու-  
 զանդ, որ Հայոց Մեծաց լայնութիւնը «մինչև ի  
 փոքր քաղաքիկն Սատաղու եւ մինչև ի Գանձակ  
 սահմանս ատրպատական<sup>2</sup>», ասութեամբ<sup>1</sup> կը նշա-  
 նակէ, եւ Ճշդիւ Հայոց սահմանակողմերը կը դնէ  
 Ատրպայական Հայոց, Նոշիրական աշխարհ,  
 Կորդուք եւ Մարաց կողմանք, Արձախ եւ Կասքք  
 մինչև ի Փայտակարան քաղաք եւն<sup>2</sup> : Կարծենք  
 թէ Ագաթանգեղեայ<sup>3</sup> «առ տամբն Մահքրտան  
 իշխանին», խօսքին մէջ շատ ուղիղ չէ պահուած  
 անունը : Բուզանդ<sup>4</sup> «բղեաշին . . . Մահէր Գան»,  
 կը գրէ : Նշանաւոր է որ երկուքն ալ Աղձնեաց  
 բղեշխին «մեծ», տիտղոսը կու տան<sup>5</sup>, թէ եւ  
 Բուզանդ նաեւ Մանաճիհր Ռշտունեաց իշխանը  
 նոյնպէս կ'անուանէ<sup>6</sup> : Ոչ այնչափ աղօտ յիշա-  
 տակութիւն մըն է մեծին Խոսրովու պատերազմաց  
 ընդդէմ՝ Արտաշէի՝ Բուզանդայ Արշակ արքային

<sup>1</sup> Բուզ. Գ. ԳԼ. է, էջ 16, 10—11 :

<sup>2</sup> Հմմտ. Բուզ. Գ. ԳԼ. ծ. եւ Ե. ԳԼ. Ը—ԺԹ :

<sup>3</sup> Ագաթ. էջ 628, 11 :

<sup>4</sup> Բուզ. Գ. ԳԼ. ծ. էջ 159, 13 :

<sup>5</sup> Ագաթ. էջ 596 : 23 : — Բուզանդ, Գ. ԳԼ. Ժ :

<sup>6</sup> Բուզ. Գ. ԳԼ. Ժ. էջ 24, 2 :

բերան դրած խօսքը,<sup>1</sup> թէ « Աչ թողից քեզ եւ որդւոց քոց շէրէ՛ք նախնեաց իմոց եւ զմահն Արտեանայ արքայի »: Վերջապէս Սգաթանգեղեայ<sup>2</sup> գիտենք որ Տարօնոյ Հայոց Վահէվահեան մեհեանը, որ Վահագնայ նուիրեալ էր, « ի մնարս լերին . . . որ հանդէպ հայի ի մեծ լեառն Տաւրոս », կործանուեցաւ, եւ շինուեցաւ հօն առաջին եկեղեցի. « զի նախ անդ արար սկիզբն շինելոյ եկեղեցեաց ». եւ հօն մկրտուեցաւ բազմութիւն (« ինն եւ տասն բեր », ըստ Ագաթանգեղեայ), եւ հօն կանգնեցաւ սեղան ի վկայարան Ս. Յովհաննու, եւ հրամայեցաւ որ յիշատակը տօնուի, « որ եւթն էր Սահմի ամսոյ ». բայց կը յիշուի նաեւ՝ թէ բուն Նաւասարդօրը կը տօնուէին Ս. Յովհաննէս եւ Ս. Աթանագինէս<sup>3</sup>: Այս ամէնը կը հաստատէ Բուզանդ, որ նոյն եկեղեցին կը յիշէ յաճախ, եւ կը կոչէ<sup>4</sup> « յառաջին եւ ի մայրն եկեղեցեացն Հայոց, որ էր յերկրին Տարօնու, ուր նշանօք եղլլօք կործանեցան Բագինք Գեղեցիցն յայնժամ »<sup>5</sup> վաղ եւս առ մեծան քահանայապետան Գրիգորիւ: Սուրբ յայտնի կը նկարագրուի նոյն « մեծն եւ նախ զառաջին եկեղեցին », « մայր եկեղեցեացն ամենայն Հայաստանեաց »<sup>6</sup>. եւ թէ « յառաջ նախ անդ շի-

<sup>1</sup> Բուզ. Գ. ԳԼ. ծգ. (էջ 167, 24:) Հմմտ. էջ 168, 19—21 եւ Գ. ԳԼ. ի. էջ 50, 27:

<sup>2</sup> Ագաթ. էջ 606, 9—611, 23:

<sup>3</sup> Ագաթ. էջ 623, 8—21:

<sup>4</sup> Բուզ. Գ. ԳԼ. Գ. էջ 7—8:

<sup>5</sup> Ուստի եւ ծանօթ են Բուզանդոյ Ագաթ. էջ 608—610 պատմածները: — Հմմտ. Գ. ԳԼ. Գ. էջ 74, 36:

<sup>6</sup> Բուզ. Գ. ԳԼ. ծգ. 36, 17 եւն:

նեալ էր զսուրբ եկեղեցին, եւ ուղղեալ սեղան  
յանուն տեառն: Նոյնպէս ի ներքոյ քան զնա  
մարգարէանոցն Յովհաննու, եւն: Կը յիշուի  
նոյնպէս թէ յԱշտիշատ էր այս եկեղեցին<sup>1</sup>, եւ  
թէ Տրդատ պարգեւած էր այն հողերը<sup>2</sup>: Աւելի  
որոշ կը նկարագրուի նոյն տեղը<sup>3</sup> «ի ներքոյ  
սարգարչոյ մեծնարեղոյն շէրիւն»<sup>4</sup>, որ է այդ դէպ  
յանդէման լեռին մեծի որոմ Յուլն անուանեալ էր  
դան, եւն: Այս նախադասութիւնն՝ որ կարծես  
բառ առ բառ նոյն է Ագաթանգեղեայ հետ՝ շատ  
նշանաւոր է նաեւ այնու՝ որ փոխանակ Տուրոսի  
(առ Ագաթանգեղեայ) Յուլ կը գտնենք, եւ զայս  
իբր ցուցումն կ'առնուն Բուզանդայ գիրքը յու-  
նարէնէ թարգմանուած համարողները<sup>5</sup>: Աւեր-  
ջապէս կը յիշուի նաեւ թէ հոն մկրտուեցան  
«աշխարհազօր բազմութիւն» ի Ս. Գրիգորէ<sup>6</sup>, եւ  
թէ արդեամբք Նաւասարդի օրը կը տօնուէր Ս.  
Յովհաննու տօնը<sup>7</sup>:

<sup>1</sup> Բուզ. Գ. ԳԼ. ԺԹ. էջ 48, 1:

<sup>2</sup> Բուզ. Գ. ԳԼ. ԺԳ. էջ 114, 33:

<sup>3</sup> Բուզ. Գ. ԳԼ. ԺԳ. էջ 38, 3—6:

<sup>4</sup> Անգ. էջ 37, 12 կը գրուի նաեւ «կործանեաց (Ս. Գրիգոր) զբազինս մեհենիցն շերակեայ՝ այսինքն Ա-  
հագնի. որում տեղոյ Աշտիշատն կարգացեալ»:

<sup>5</sup> Հմմտ. Արշակունի, 1890. Թ. 6, էջ 7 է. «Հայերէն  
թարգմանութիւնը այնքան «որոշ» է, որ եթէ չենք սխալ-  
ուումք՝ որքան Տարրոս լեռան անունն անգամ թարգմանում  
է Յուլ լեռուն (եր. 38. դպր. Գ. ԳԼ. ԺԳ. 1)», Արդարեւ Յուլ է  
= Ταύρος. բայց թէ Յուլ անունը չէ արդիւնք անմտա-  
գրութեան եւ «որոշ» թարգմանութեան՝ յայտնի է նաեւ  
անկէ՝ որ ուրիշ երկու տեղ ալ Յուլ լեռան անունը  
կը գտնենք (Գ. ԳԼ. է. Ը. էջ 16, 30 եւ 18, 10): Յուլ  
անունը ժողովրդական եւ ռամկին ծանօթ թարգմանու-  
թիւն մըն է լեռան անունն: Յուլ անունն նախարարութիւն  
մ'ալ կը յիշուի Գահնամակին մէջ, (Հմմտ. Այբբագր. էջ  
431.) որ ըստ Հ. Ալիշանի՝ «Թուի իշխան կողմանց Տարրոսի»:

<sup>6</sup> Բուզ. Գ. ԳԼ. ԺԳ. էջ 42—43:

<sup>7</sup> Բուզ. Գ. ԳԼ. ԺԵ. էջ 117, 34—36:

Այս եւ նոյնպիսի այլ շատ նմանութիւնք եւ միաբանութիւնք կը ցուցնեն՝ թէ որչափ մեծ յարգ ունին Ազաթանգեղեայ այս մանր տեղեկութիւնքն. եւ զայն իբր բոլորովին վստահելի աղբիւր մեր առջեւ կը դնեն: Իսկ մեր այս պատմական հետազոտութեան հետեւութիւնն այս կ'ըլլայ՝ թէ Ազաթանգեղոս ունի պատմական ներքին արժէք, բայց այս արժէքն ամէն մասին համար հաւասար չէ: Առաջին գիրքը թէ եւ պատմական, բայց լի է շատ մթութեամբ, այնպէս որ Առթւածիտ (էջ 60) «այլակերպեալ պատմութիւն» կը կոչէ. իսկ նոյն առաջին գրոց վերջին մասերն՝ որ Հռիփսիմեանց եւ Գրիգորի վկայաբանութիւնք են եւ Տրդատայ վարուց քանի մը նկարագրութիւնք, պատմական շատ քիչ յարգ ունին, կամ ըստ Գրիգորի միայն: Իսկ Բ. գիրքը (Առթւածիտի ուրոյն գիրք Նշառելով) շատ աւելի պատմական եւ բոլորովին վստահելի աղբիւր է, քանի մը վկայաբանական մանր կտորներն ի բաց առեալ: Արդապետութիւնն ունի նաեւ մեծ վարու քրիստոնեայ Հայոց:

Սակայն մեր ձեռքն հասած Ազաթանգեղոսը բաւական այլայլութիւն կրած է յընթացս ժամանակաց: Չեռագրաց ցուցուցած տարբերութիւնք ըստ Բ. գրքի է նշանաւոր են. նաեւ պատմական նշանակութիւն ունին շատերը, ոչ միայն յաւելուածներ ու պակասներ ունենալով, այլ նաեւ անուանց եւ պարագայից ընթերցուածոց այլեւայլութեամբ, զորոնք քննել չէ տեղ-

ւոյս: Սակայն նաեւ Բաղարբեւ Ազաթանգեղոսը մեր ձեռքը բաւական այլայլութեամբ եւ տարբերութեամբ հասած է: Այսպէս Խորենացի շատ անգամ յիշելով զԱզաթանգեղոս<sup>1</sup> կը գրէ անգամ մ'ալ Նունէի համար<sup>2</sup> թէ «Քարոզեաց ի Կղարջաց . . . մինչեւ ի սահմանս Մարքթաց, որդէս ուսուցանէ թէ Աբրահամիցն»: Ազաթանգեղեայ մէջ բառ մ'ալ չկայ Նունէի վրայ. ապա ուրեմն Խորենացւոյ տեսած Բաղարբեւ Ազաթանգեղոսն ունէր տարբերութիւններ: Ընդհակառակն Ղազար Փարպեցի<sup>3</sup> մեծաւ գովութեամբ յիշելով զԱզաթանգեղոս՝ կը դնէ նաեւ նոյն գրոց բովանդակութիւնը ճշգիւ նման մեր ունեցածին հանդերձ վարդապետութեամբ. գոնէ չի ցուցնէր դէպք մը կամ պարագայ մը զբռնող չգտնենք այժմու բնագրին մէջ: Սխալմամբ Յովհաննու Ասկերբերանի ընծայուած «Ներբողեալ տապեւ Եղիշէ վարդապետութեան Ս. Գրեթորէ» ճառն<sup>4</sup> նշանաւոր է այս կողմանէ. վասն զի սուտանուն հեղինակը արդի Ազաթանգեղոսի բովանդակութիւնն այնպէս ճշգիւ իւր գրութեան մէջ հիւսեր է, որ եւ ոչ նշանախեց մ'անգամ տարբեր կը գտնենք նոր բնագրէն: Եթէ արդեամբք յունարէնէ թարգմանուած է այս ճառը<sup>5</sup>,

<sup>1</sup> Խոր. Բ. ԳԼ. ԿԷ, ՀԳ, ՀԹ, Ա, ԱԳ. Եւն:

<sup>2</sup> Խոր. Բ. ԳԼ. ԱԳ. (էջ 171, 321)

<sup>3</sup> Ղազար. Փարպ. Պատմ. 1873, Թոջր. էջ 4-6:

<sup>4</sup> Տղապրեալ ի Սեթեթ շախմատ, Հատ. Գ. Ե. Ուրբ. Մեթ. Է Պարտ. Հար. Բ. էջ 792-826: Նոյն տարին նաեւ իբրեւ յաւելուած ճորտագի, (Հար. Գ. 33 էջը լոյս տեսաւ): Աւելի կանոն ի Կ. Պոլիս, 1734:

<sup>5</sup> Ճառին վերջը կայ յիշատակարան՝ «Ի թուականիս ՇՂ թարգմանեցաւ ճառս ի յունականէն ի մերս, ի ձեռն

Տեղինակին առջեւն էր յոյն թարգմանութիւնը. որուն թարգմանութեան տարին ըստ Կութշմիտի ըլլալու է 555—622 կամ մանաւանդ 591 թուականը<sup>1</sup>: Սակայն նոյն իսկ այս թարգմանութիւնը շատ տարբերութիւններ, ուրոյն ընթերցուածներ, համառօտութիւններ եւ նաեւ յաւելուածներ ունի: Բովանդակ վարդապետութիւնը զեղչած է թարգմանիչը, բայց շատ անյաջող կերպով, վասն զի Ա. գրոց վերջաւորութիւնն «Սկսցուք շնորհօքն քրիստոսի պատմել» եւն. օրինակած է ճշդիւ, եւ կցած է Գ. գրոց սկիզբը՝ «Արդ եկայք, եղբարք», եւն. բոլորովին անկապ: Յառաջաբանն այնպէս համառօտ է՝ որ կրնանք ըսել՝ թէ կը պակսի: Ընդհակառակն Արտաւանայ եւ Սասանայ պատմութեանց մէջ ՔՅ հարաջ<sup>2</sup> մ'աւելի ունի, որ մանրամասն կը պատմուի այնպիսի պարագաներով եւ ոճով, որ դժուարաւ կրնայ մեր արդի Ագաթանգեղայ խմբագրողին գրչէն ըլլալ: Ընդարձակ Վկայաբա-

Արթահամու Ղաամատիկոսի ի հին եւ յեղծած օրինակաց. իսկ յարմարեցաւ ըստ բանից դպրութեան եւ բառից՝ յիմոյ նուաստութենէ՝ Ներսիսէ, հրամանաւ Տեառն իմոյ եւ հարազատի՝ Գրիգորիսի Հայոց Կաթողիկոսի, եւն: Լատիներէն թարգմանութիւնը կայ առ Montfaucon, Opera S. Chrysostomi, Tom. XII. p 822 sq: — Հմմտ. այս ճառին նկատմամբ Acta Sanctorum, Sept. VIII, p. 307. § 59—62.

<sup>1</sup> Հմմտ. Հայ թարգմանութիւնն ի Բաղշմէլոյ, 1878, էջ 301—302: Այն որ Հայ բնագրին հարթ ամիսը (էջ 163, 22) յոյնը «Եպիտիմի» թարգմանած է. եւ «հարթ» (էջ 611, 6) ամիսը՝ «Եպիտիմի», առիթ տուած է Լակարոսի (Gesammelte Abhandlungen, Leipzig, 1866, S. 179, N. 1) կարծելու թէ հայ բնագիրը 1084էն զտրջն առած է այս ձեւը, վասն զի ամոնց այս համեմատութիւնն է ըստ տոմարի Յովհաննու Սարկաւազի. սակայն առաջը միտ զնեւը՝ որ յոյն թարգմանին է նոյն համեմատութիւնն ընողը:

<sup>2</sup> Հայ. թրգմ. Բաղշմէլոյ, 1878, էջ 302—304 եւ Հայկական հին Գպր. գլոմ. Հտը Ա. էջ 184—191, եւն:



նախնիքն Ս. Գրիգորի ունի Մեթոքստիս, եւ կայ ուրիշ մ'ալ լատիներէն լեզուաւ, զոր ոմանք Մետափրաստէսի քաղուածոյքէն աւելի հնագոյն կը համարին<sup>1</sup>: Մեծ նշանակութիւն կրնայ ունենալ բնագրաբնութեան համար Ագաթանգեղեայ վրացերէն թարգմանութիւն մը եթէ ստոյգ է, զոր Լանկլուա գտած կը հրատարակէ<sup>2</sup>: Բաղձալի է որ թէ այս ամենայն եւ թէ այլ որեւէ աղբերաց եւ հայ բնագրին ձեռագրաց մանր բաղդատութեամբ հրապարակելէ Ագաթանգեղեայ մատենանր որուն համար շատ ժամանակի եւ ձգանց պէտք կայ:

<sup>1</sup> Հմմտ. Acta Sanctorum, Sept. VIII, p. 306, § 56 եւն: Հմմտ. նաեւ վերը էջ 24 ծն. 1. ուր գրուած մթին ծանօթութիւնն ըստ այսմ պէտք է իմանալ:

<sup>2</sup> Langlois, Collection, I, p 194. Իբր թէ Աթոս լեռան վրայ դանուղ Իվերոն վանաց ձեռագրաց ցուցակին մէջ գտած է, զոր կազմած է 1836ին Հ. Հիլարիոն եւ Պրոսէ թարգմանած: Այս ձեռագրաց ցուցակն հրատարակուած է Ի թերթին Journal Asiatique, VI Série, Tome IX (1867), էջ 331—351. ուր թիւ Գ. նշանակուած Յայնապետի N. 15 կտորն է «Վարք Ս. Գրիգորի» եւ նշանակուած է թէ Ագաթանգեղեայ թարգմանութիւնն է վրացերէն:

